

Հարգելի՛ ընթերցող,

**Արցախի Երիտասարդ Գիտնականների և Մասնագետների Միավորման (ԱԵԳՄՄ)** նախագիծ հանդիսացող **Արցախի Էլեկտրոնային Գրադարանի** կայքում տեղադրվում են Արցախի վերաբերյալ գիտավերլուծական, ճանաչողական և գեղարվեստական նյութեր՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով: Նյութերը կարող եք ներբեռնել **ԱՆՎՃԱՐ**:

Էլեկտրոնային գրադարանի նյութերն այլ կայքերում տեղադրելու համար պետք է ստանալ ԱԵԳՄՄ-ի թույլտվությունը և նշել անհրաժեշտ տվյալները:

Շնորհակալություն ենք հայտնում բոլոր հեղինակներին և հրատարակիչներին՝ աշխատանքների էլեկտրոնային տարբերակները կայքում տեղադրելու թույլտվության համար:



Уважаемый читатель!

На сайте **Электронной библиотеки Арцаха**, являющейся проектом **Объединения Молодых Учёных и Специалистов Арцаха (ОМУСА)**, размещаются научно-аналитические, познавательные и художественные материалы об Арцахе на армянском, русском и английском языках. Материалы можете скачать **БЕСПЛАТНО**.

Для того, чтобы размещать любой материал Электронной библиотеки на другом сайте, вы должны сначала получить разрешение ОМУСА и указать необходимые данные.

Мы благодарим всех авторов и издателей за разрешение размещать электронные версии своих работ на этом сайте.

Dear reader,

**The Union of Young Scientists and Specialists of Artsakh (UYSSA)** presents its project - **Artsakh E-Library** website, where you can find and download for **FREE** scientific and research, cognitive and literary materials on Artsakh in Armenian, Russian and English languages.

If re-using any material from our site you have first to get the UYSSA approval and specify the required data.

We thank all the authors and publishers for giving permission to place the electronic versions of their works on this website.

### Մեր տվյալները – Наши контакты - Our contacts

Site: <http://artsakhib.am/>

E-mail: [info@artsakhib.am](mailto:info@artsakhib.am)

Facebook: <https://www.facebook.com/www.artsakhib.am/>

ВКонтакте: <https://vk.com/artsakhelibrary>

Twitter: <https://twitter.com/ArtsakhELibrary>

**Ա. Վ. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ**

**ՄԻԱԿՈՂՄԱՆԻ  
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ  
ԾԱԳՈՂ ՊԱՐՏԱԿՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

Ստեփանակերտ - 2007



Անատոլի Վլադիմիրի Թադետոյանը ծնվել է 1980թ. Ասկերանի շրջանի Ավետարանոց գյուղում: 1997թ. ոսկե մեդալով ավարտել է Ավետարանոցի միջնակարգ դպրոցը: Նույն տարում ընդունվել է Արցախի պետական համալսարանի իրավաբանական բաժինը եւ կարմիր դիպլոմով ավարտել 2001թ.:

Նույն թվականին ընդունվել է ԱրՊՀ իրավագիտության մագիստրատուրան: «Քաղաքացիները որպես քաղաքացիական իրավունքի սուբյեկտներ» թեմայով պաշտպանել է մագիստրական թեզ եւ ստացել մագիստրոսի աստիճան:

2003-2006 թ.թ. սովորել է ԱրՊՀ իրավագիտության ասպիրանտուրայում: 2003թ.-ից աշխատում է Սյունիքի մարզի առաջին ատյանի դատարանում որպես դատավորի օգնական:

Երեւանի պետական համալսարանի իրավաբանական ֆակուլտետի քաղաքացիական իրավունքի ամբիոնում «Հրապարակային մրցույթի իրավական կարգավորումը» թեմայով պաշտպանում է իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսություն:

«Միակողմանի գործողություններից ծագող պարտավորությունների հասկացությունը եւ տեսակները», «Պարզեւ վճարելու հրապարակային խոստում», «Առանց հանձնարարության, ի շահ ուրիշի գործողություններից ծագող պարտավորություններ», «Մրցութային պարտավորության մի քանի հարցեր», «Հրապարակային մրցույթի կազմակերպումը եւ անցկացումը», «Մրցութային աշխատանքների եւ այլ արդյունքների գնահատումը» վերնագրերով իրապարակված գիտական հոդվածների հեղինակ է:

## ԹԱԴԵԿՈՍՅԱՆ ԱՆԱՏՈՒԻ ՎԼԱԴԻՄԻՐԻ

### ՄԻԱԿՈՂՄԱՆԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ԾԱԳՈՂ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«ԴԻԶԱԿ ՊԼՅՈՒՄ» իրատարակչություն  
Ստեփանակերտ - 2007

ՀՏԴ 347  
ԳԱԴ 67.99 (2) 3  
Թ 140

Գրախոսներ՝ ԼԴՀ Գերագույն դատարանի նախագահ Վ.Խ.Հովսեփյան  
ԼԴՀ Գերագույն դատարանի դատավոր, ԱրԴՀ փիլիսոփայության  
և իրավունքի ամբիոնի դասախոս Շ.Ս.Օհանյան

Խմբագիր՝ իրավաբանական գիտությունների  
դոկտոր, պրոֆեսոր Գ.Հ.Ղարախանյան

Թաղևոսյան Անատոլի Վլադիմիրի  
Թ 140 Միակողմանի գործողություններից ծագող պարտավորություն-  
ներ: «ԴԻՋԱԿ ՊԼՅՈՒՄ» հրատարակչություն, Ստեփանակերտ,  
2007, 160 էջ:

Մենագրությունում լուսաբանվում են պարտավորության հասկացությունը  
և ծագման հիմքերը, պարտավորությունների դասակարգումը, միակողմանի  
գործողություններից ծագող պարտավորությունների երեք տեսակները՝  
պարզ վճարելու հրապարակային խոստումը, հրապարակային մրցույթը և ա-  
ռանց հանձնարարություն, ի շահ ուրիշի գործողությունները, բացահայտվում  
դրանց առանձնահատկությունները, վեր հանվում քաղաքացիաիրավական  
այդ ինստիտուտների զարգացման օրինաչափությունները:

Մենագրությունը կարող է օգտակար լինել դասախոսների, ասպիրանտնե-  
րի, իրավաբանական ֆակուլտետների և ԲՈՒՀ-երի ուսանողների, դատական  
մարմինների աշխատողների, ինչպես նաև հրապարակային մրցույթ կազմա-  
կերպելու և անցկացնելու հարցերով զբաղվող անձանց համար:

ԳԱԴ 67.99 (2) 3

ISBN 978-99941-812-9-2

© Ա. Վ. Թաղևոսյան, 2007թ.

«ԴԻՋԱԿ ՊԼՅՈՒՄ» հրատարակչություն  
ք. Ստեփանակերտ - 2007թ.

## ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Աշխատությունը նվիրված է Հայաստանի քաղաքացիական իրա-  
վունքի կարևորագույն ինստիտուտներին՝ պարզ վճարելու հրապար-  
ակային խոստումնա, հրապարակային մրցույթին և առանց հանձնա-  
րարության, ի շահ ուրիշի գործողություններին, որոնք իրենց ամբող-  
ջությամբ կազմում են ՀՀ քաղաքացիական օրենսգրքի ութերորդ բա-  
ժինը՝ միակողմանի գործողություններից ծագող պարտավորությու-  
նները:

Աշխատության մեջ հեղինակը տալիս է պարտավորության հասկա-  
ցության գիտական սահմանումը, ներկայացնում պարտավորություն-  
ների դասակարգումը, դասակարգման նշանակությունն ու խնդիրնե-  
րը, վեր է լուծում պարտավորությունների ծագման հիմք հանդիսացող  
իրավաբանական փաստերը, վեր հանում միակողմանի գործողու-  
թյուններից ծագող պարտավորության տեղն ու դերը պարտավորա-  
կան իրավունքի համակարգում, խորությամբ հետազոտում առաջին  
անգամ Հայաստանի քաղաքացիական օրենսդրության կարգավիճ-  
ման առարկա հանդիսացող պարզ վճարելու հրապարակային խոս-  
տումը, նրա հիման վրա ծագող պարտավորությունը, այդ պարտավո-  
րության տարրերն ու ծագման հիմքերը:

Մենագրության մեջ հեղինակը բազմակողմանիորեն գիտական ու-  
սումնասիրության է ենթարկել հրապարակային մրցույթի քաղաքա-  
ցիաիրավական ինստիտուտը՝ ներկայացնելով մրցույթի և մրցութային  
պարտավորության հասկացությունները, վեր է լուծել մրցութային  
պարտավորության ծագման հիմքերը, պարտավորության տարրերը,  
մրցույթի հայտարարելու պարտադիր և ֆակուլտատիվ պայմանները,  
մրցույթի պայմանները փոփոխելը և մրցույթը վերացնելը, մրցութային  
աշխատանքները գնահատելը, պայմանագիր կնքելու իրավունքով  
մրցույթի առանձնահատկությունները:

Աշխատության վերջին գլխում հանգամանորեն ուսումնասիրվում է  
առանց հանձնարարության, ի շահ ուրիշի գործողություններից ծագող  
պարտավորությունը, վեր են լուծվում պարտավորության տարրերը,  
ներկայացվում ի շահ ուրիշի կատարվող իրավաբանական գործողու-  
թյունների առանձնահատկությունները:

Թեման արդիական է, նրանում ներկայացված հիմնախնդիրների  
լուծումը հրատապ, ինչն իր արտացոլումն է գտել Ա.Թաղևոսյանի՝  
գրախոսվող աշխատության մեջ քաղաքացիական օրենսդրության  
կատարելագործմանն ուղղված եզրակացություններում և առաջար-

կույթուններում:

Հեղինակը գիտականորեն հիմնավորում է վիճահարույց հարցեր՝ կապված պարտավորության հասկացության, պարտավորությունների դասակարգման, միակողմանի գործողություններից ծագող պարտավորությունները խմբերի բաժանելու, մրցութային պարտավորության հասկացության, մրցութային պարտավորական իրավահարաբերության ծագման պահի, փակ մրցույթի հրապարակային բնույթի, մրցութային աշխատանքների գնահատման մասին որոշում ընդունելու հետև և այլն:

Աշխատանքում տրվել է գործող քաղաքացիական օրենսդրության պահանջները բավարարող գիտության, գրականության և արվեստի բնագավառներում հրապարակային մրցույթ հայտարարելու օրինակելի ձև, որը գործնական մեծ հետաքրքրություն կարող է ներկայացնել մրցույթ կազմակերպելու և անցկացնելու հարցերով զբաղվող քաղաքացիների և կազմակերպությունների համար:

Աշխատության ձևավորման համար հեղինակը հիմք է ընդունել ինչպես ռուս քաղաքացիագետների՝ Օ.Ս.Իոֆֆեի, Վ.Ն.Սմիրնովի, Վ.Ա.Ռախմիլովիչի, Ա.Բ.Չեգորայտիսի, Վ.Ս.Տոլստոյի, Օ.Ա.Կրասավչիկովի, Մ.Մ.Ազարկովի, Ս.Ս.Ալեքսեյևի, Բ.Բ.Չերեպայինի, Ռ.Սավալայեի, Ա.Ն.Գուևի, Ի.Բ.Նովիցկու, Լ.Ա.Լունցի, այնպես էլ հայ ցիվիլիստների՝ Գ.Հ.Ղարախանյանի, Տ.Կ.Բարսեղյանի, Վ.Նազարյանի և ուրիշների մենագրությունները կամ նրանց խմբագրությամբ աշխատություններն ու գիտական հոդվածները:

Աշխատությունն ունի գիտագործնական մեծ նշանակություն. կարող է օգտակար լինել ուսանողների, մագիստրանտների, ասպիրանտների, դասախոսների, քաղաքացիական իրավունքի գիտությամբ զբաղվողների, ինչպես նաև մեծ հետաքրքրություն ներկայացնել դատավորների, փաստաբանների, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններում աշխատող անձանց, այդ թվում նաև հրապարակային մրցույթ կազմակերպելու և անցկացնելու հարցերով զբաղվող քաղաքացիների ու կազմակերպությունների համար:

Մենագրությունը օգտակար կլինի նաև ԲՈՒՀ-երի իրավաբանական ֆակուլտետներում Հայաստանի քաղաքացիական իրավունքի դասընթացի դասավանդման համար:

ԼՂԿԳԵՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱՐԱՆԻ  
ՆԱԽԱԳԱՀ Վ.Խ.ՀՈՎՍԵԹՅԱՆ

## ԱՌԱՋԱԲԱՆ

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կողմից 1998թ. մայիսի 5-ին ընդունված և 1999թ. հունվարի 1-ից գործողության մեջ դրված Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի /այսուհետ՝ Քաղ. օր./ ութերորդ բաժինը նվիրվել է միակողմանի գործողություններից ծագող պարտավորություններին: Քաղ. օր. նշված բաժնում ընդգրկվել են միակողմանի գործողություններից ծագող պարտավորությունների երեք տեսակներ՝ պարզև վճարելու հրապարակային խոստումը /Քաղ. օր. 57 գլուխ/, հրապարակային մրցույթը /Քաղ. օր. 58 գլուխ/ և առանց հանձնարարության, ի շահ ուրիշի գործողությունները /Քաղ. օր. 59 գլուխ/:

Միակողմանի գործողություններից ծագող պարտավորությունները Հայաստանում համակարգված տեսքով օրենսդրորեն առաջին անգամ են կարգավորվում: Նշված պարտավորություններից հրապարակային մրցույթը նախատեսված է եղել Հայկական ԽՍՀ 1964թ. քաղաքացիական օրենսգրքով /442-446 հոդվածներ/, որն անվանվում էր մրցանակաբաշխություն: Սակայն, հրապարակային մրցույթն իր բնույթով և թվանդակությամբ որոշակիորեն տարբերվում է մրցանակաբաշխությունից:

Նախկինում մրցանակաբաշխություն կարող էին հայտարարել այն հայտարարելու հատուկ իրավասույթնություններով օժտված կազմակերպությունները /Հայկ. ԽՍՀ 1964թ. քաղ. օր. 442 հոդվ. 1-ին կետ/: Ներկայումս օրենսդիրն ընդլայնել է հրապարակային մրցույթ հայտարարելու իրավասություն ունեցող անձանց շրջանակը և այդ հարցում որևէ սահմանափակում չի նախատեսել /Քաղ. օր. 1043 հոդվ. 1-ին կետ/: Բացի այդ, Հայկական ԽՍՀ 1964թ. քաղաքացիական օրենսգրքը մրցանակաբաշխությունը վերացնելու հնարավորություն չէր նախատեսում: Այնինչ, Հայաստանի Հանրապետության գործող քաղաքացիական օրենսգրքի 1044 հոդվածը նվիրված է մրցույթի պայմանները փոփոխելուն և մրցույթը վերացնելուն:

Միակողմանի գործողություններից ծագող պարտավորությունների մյուս երկու տեսակները՝ պարզև վճարելու հրապարակային խոստումը և առանց հանձնարարության, ի շահ ուրիշի գործողությունները նախկին օրենսդրության կարգավորման առարկա չեն հանդիսացել: Ընդ որում, նախկին օրենսդրությամբ նախատեսված էր միակողմանի գործողություններից ծագող պարտավորության միայն մեկ տեսակ՝ օրենսդրության սեփականությունը սպառնացող վտանգից փրկելը:

/Հայկ. ԽՍՀ քաղ. օր. 474 հոդվ./, որն էլ ԽՍՀՄ կազմալուծման և սոցիալիստական սեփականության վերացման հետ կորցրել է իր արդիականությունը:

Ներկայումս միակողմանի գործողություններից ծագող պարտավորությունները գիտական հետազոտության մեծ անհրաժեշտություն են ձեռք բերել:

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական իրավունքի և նրա ենթաճյուղը հանդիսացող պարտավորական իրավունքի, այդ թվում՝ միակողմանի գործողություններից ծագող պարտավորությունների ուսումնասիրության վիճակը մեծամասամբ կապված է խորհրդային /1922-1991թ.թ./, հետխորհրդային /1991-1999թ.թ./ և արդի ժամանակաշրջանի /1999թ.-ից հետո/ քաղաքացիական իրավունքի ուսումնասիրության վիճակի հետ: Ժամանակակից հայկական քաղաքացիական իրավունքի զարգացմանը նպաստել են ռուսական և ֆրանսիական քաղաքացիական իրավունքի գիտական ձեռքբերումներն ու առաջընթացը:

Ի շահ ուրիշի գործելու /negotiorum gestio/ միակողմանի գործողությունից ծագող պարտավորությունը հայտնի է եղել դեռևս Հռոմեական մասնավոր իրավունքին: Ուրիշի գործերը վարելու ինստիտուտի մասին իր աշխատության մեջ անդրադարձել է ֆրանսիացի քաղաքացիագետ Ժ.Մորանդյերը, նշելով որ նշված ինստիտուտը Ֆրանսիայում կիրառվում էր 18-րդ դարից ի վեր<sup>1</sup>:

Խորհրդային խոշոր քաղաքացիագետ Օ.Ս.Իոֆֆեն իր «Պարտավորական իրավունք» աշխատության մեջ ընդհանրացված ձևով ներկայացրել է միակողմանի գործողություններից ծագող պարտավորությունները, բացահայտել պարտավորական իրավահարաբերությունների ծագման և զարգացման գործընթացում միակողմանի գործողությունների դերը, անդրադարձել միակողմանի գործողություններից ծագող պարտավորությունների առանձին տեսակներին, տվել նրանց ընդհանուր բնութագրական հատկանիշները և դրանք սահմանազատել միմյանցից: Տեսական գրականության մեջ առաջին անգամ Օ.Ս.Իոֆֆեն անդրադարձել է պարզե վճարելու հրապարակային խոստումից ծագող պարտավորությանը՝ սահմանելով նրա հասկացությունը, ներկայացնելով պարտավորության ծագման հիմքերը և բովանդակությունը<sup>2</sup>: Ի դեպ, ԽՍՀՄ նախկին հանրապետություններից /բացա-

1. Տես Жюльен де ла Морандьер. Гражданское право Франции. Т. 2. М., 1960, 473-475 էջերը:

2. Տես Иоффе О. С. Обязательственное право. М., 1975, 781-783 էջերը:

ռությամբ Մոլդովական ԽՍՀ/ և ոչ մեկի քաղաքացիական օրենսդրությամբ պարզե վճարելու հրապարակային խոստումը նախատեսված չի եղել:

Մրցութային պարտավորությունը հետազոտվել է խորհրդային հայտնի քաղաքացիագետների՝ Վ.Ն.Սմիրնովի, Վ.Ա.Ռախմիլովիչի, Ա.Բ.Զեգորայտիսի, Վ.Ս.Տոլստոյի, Օ.Ս.Իոֆֆեի, Օ.Ա.Կրասավչիկովի և ուրիշների կողմից:

Միակողմանի գործարքների քաղաքացիական կարգավորման առանձնահատկություններն ուսումնասիրել է Ս.Ս.Ալեքսեյևը<sup>3</sup>:

Հայրենական քաղաքացիական իրավունքում մրցանակաբաշխության ինստիտուտն ուսումնասիրել է ղզցենոտ Տ.Բարսեղյանը<sup>4</sup>:

Հայաստանի Հանրապետության 1998թ. քաղաքացիական օրենսդրության հիման վրա պրոֆեսոր Գ.Ղարախանյանը ուսումնասիրել և մանրամասնորեն ներկայացրել է միակողմանի գործողություններից ծագող պարտավորությունները, նրանց պատմությունը և տեսակները, բացահայտել նշված պարտավորությունների տեղն ու դերը պարտավորական իրավունքի համակարգում<sup>5</sup>:

Մենք նպատակ ենք դրել խորը գիտական ուսումնասիրության ենթարկել միակողմանի գործողություններից ծագող պարտավորությունները, քանի որ իրավաբանական գրականության մեջ այս ինստիտուտը գիտական հատուկ հետազոտության չի ենթարկվել:

Հեղինակը, մատնանշելով թեմային առնչվող հասկացությունների պատմական ակունքները, ներկայացնելով դրանց իրավական իմաստն ու լեզվաբանական ստուգաբանությունը, նոր իրավամտածողության տեսանկյունից փորձ է անում մեկնաբանել վիճահարույց որոշ հարցեր՝ կապված պարտավորության հասկացության, պարտավորությունների դասակարգման, միակողմանի գործողություններից ծագող պարտավորությունները պարտավորության այլ տեսակներից /անկիմն հարստացումից և վնաս պատճառելուց ծագող պարտավորություններից/ սահմանազատելու, պարզե վճարելու հրապարակային խոստման և մրցութային պարտավորության ծագման հիմքերի հետ:

1. Տես Алексеев С. С. Обязательные сделки в механизме гражданского регулирования. Сборник научных трудов. Вып. 13. Свердловск. 1970:

2. Տես Հայկական ՍՍՀ քաղաքացիական իրավունք: Հատոր 2, ԵՊՀ հրատարակչություն, Եր., 1982:

3. Տես Հայաստանի Հանրապետության քաղաքացիական իրավունք: Երկրորդ մաս, Կր., 2001:

Աշխատության մեջ նորովի է մեկնաբանվել մրցութային պարտավորության հասկացությունը, վերլուծվել են մրցութային պարտավորության ծագման հիմք հանդիսացող իրավաբանական փաստերը, ցույց են տրվել մրցույթ հայտարարելու պարտադիր և ֆակուլտատիվ պայմանները, իրապարակային մրցույթը փոփոխելու և այն վերացնելու կարգն ու ժամկետները, այդ պահանջները խախտելու իրավական հետևանքները:

Հանգամանորեն հետազոտվել է առանց հանձնարարության, ի շահ ուրիշի գործողություններից ծագող պարտավորությունը, բացահայտվել տվյալ պարտավորության առաջացման նախադրյալները, ներկայացվել այդ պարտավորությունն այլ պարտավորություններից /հանձնարարության, կապալի, գույքի հավատարմագրային կառավարման և այլ պայմանագրային պարտավորություններից/ սահմանազատող պայմանները:

Աշխատության մեջ փորձ է արվում նաև գիտականորեն հիմնավորված ձևով սահմանազատել պարտավորությունների ծագման հիմք հանդիսացող միակողմանի գործողությունները և միակողմանի գործարքները:

## ԳՆՈՒՆ 1. ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ, ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՂԱՍՎԱՐԳՈՒՄԸ ԵՎ ԾԱԳՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ

### § 1. Պարտավորության հասկացությունը

Պարտավորական իրավունքը հանդիսանում է քաղաքացիական իրավունքի առավել խոշոր ենթաճյուղը: Նրանում բովանդակող իրավական նորմերը կարգավորում են հասարակական հարաբերությունների ընդարձակ շրջանակ՝ կապված սեփականության իրավունքով գույք ձեռք բերելու, գույքը վարձակալության հանձնելու, քաղաքացիների բնակարանային պահանջմունքները բավարարելու, արտադրական և սոցիալ-մշակութային օբյեկտներ կառուցելու, բեռների, ուղևորների և ուղեբեռների փոխադրման, ծառայությունների մատուցման, վարկերի և հաշվարկների, ապահովագրության, համատեղ գործունեության, գիտության, գրականության և արվեստի ստեղծագործությունների օգտագործման, քաղաքացիների կյանքի, առողջության և գույքի, իրավաբանական անձանց գույքի պաշտպանության, առանց հանձնարարության, ի շահ ուրիշի գործողություններ կատարելու, իրապարակային մրցույթ կազմակերպելու և այլնի հետ: Պարտավորական իրավունքի միջոցով իրականացվում է իրերի և այլ նյութական բարիքների փոխանցում արտադրության ոլորտից բաշխման ոլորտը, վերջինից էլ՝ արտադրության կամ անձնական սպառման ոլորտը: Ն.Դ.Եզրովի պատկերավոր արտահայտությամբ պարտավորական իրավունքն իրենից ներկայացնում է «արյունատար» համակարգ, որի օգնությամբ քաղաքացիաիրավական «օրգանիզմում» տեղի է ունենում նյութափոխանակություն<sup>1</sup>:

Գույքի փոխանցման, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման, դրամի վճարման կամ որոշակի գործողություններ կատարելուց ձեռնպահ մնալու հետ կապված հասարակական հարաբերություններն ընդունված է անվանել պարտավորական հարաբերություններ, իսկ այդ հարաբերությունները կարգավորող իրավական նորմերի համակցությունը՝ պարտավորական իրավունք<sup>2</sup>:

1. *Տես Գրիչձայսկոե իրավ. Գ. 1. Սլոբոցկոե ընդ. Յ. Կ. Կոլոտոյ, Ա. Ս. Սերգեև, Մ., 1999, էջ 471:*

2. *Տես Բարսեղյան Ս. Կ. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական իրավունք, ստացին մաս, Եր., 2000, էջ 386:*

Ֆրանսիացի քաղաքացիագետ Ռ.Սավատյեն նշում է, որ պարտավորական իրավունքի տեխնիկայի միջոցով մարդն ստեղծում է այս կյանքը և կարգավորում այն իր պահանջմունքներին համապատասխան<sup>1</sup>:

Ներկայումս ազատ շուկայական հարաբերությունների ձևավորման և զարգացման պայմաններում պարտավորությունները բավականին լայն կիրառման անհրաժեշտություն են ձեռք բերել: Մասնավորապես, պարտավորությունները միջնորդավորում են կազմակերպությունների միջև արտադրության և սպառման հետևանքով առաջացող տնտեսական կապերը: Իրենց նյութական և հոգևոր պահանջմունքները բավարարելու նպատակով քաղաքացիները պարտավորական իրավահարաբերությունների մեջ են մտնում կազմակերպությունների և միմյանց հետ: Պարտավորությունների միջոցով հասարակությունն օգտագործում է գիտության, գրականության և արվեստի ստեղծագործությունները: Պարտավորությունների միջոցով պետությունը, պետական և մյուս կազմակերպությունները, ինչպես նաև քաղաքացիները տնօրինում են իրենց սեփականությունը:

Պարտավորական իրավունքով կարգավորվող բազմաթիվ հարաբերություններն ընդգրկվում են «տնտեսական շրջանառության հարաբերություններ» հասկացության մեջ: Տնտեսական շրջանառության բոլոր հարաբերությունների համար ընդհանուրը հանդիսանում է այն, որ նրանք, այսպես թե այնպես, կապված են իրերի, դրամի, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման ձևով արտահայտված նյութական բարիքների փոխանցման հետ: Այսպես, առուծախի դեպքում վաճառված իրը վաճառողից անցնում է գնորդին: Կապալի պայմանագրով կապալառուի կողմից կատարված արդյունքները փոխանցվում են պատվիրատուին: Վարձակալության դեպքում գույքը վարձատուից անցնում է վարձակալին ժամանակավոր տիրապետման ու օգտագործման իրավունքով: Հանձնարարության պայմանագրով հանձնակատարի գործողությունների արդյունքում գույքային իրավունքներն ու պարտականությունները փոխանցվում են հանձնարարողին: Առանց հանձնարարության, ի շահ ուրիշի գործողություններից ծագած իրավունքները և պարտականությունները հետտորից անցնում են դոմինուսին՝ վերջինիս կողմից հավանություն տալու պահից: Ռոշայի արդյունքի հասնելու համար պարզե վճարելու հրապարակային խոստման դեպքում պարզեն այն խոստացող անձից փոխանցվում է այդ արդյունքին հասած անձին և այլն:

1. *Տե՛ս Սավատյե Ր. Теория обязательств. М., 1972, էջ 35:*

Դրա հետ միասին նյութական բարիքների ցանկացած փոխանցում չէ, որ միջնորդավորվում է տնտեսական շրջանառության հարաբերություններով: Օրինակ, տնային տնտեսության ոլորտում նույնպես տեղի է ունենում նյութական բարիքների փոխանցում ընտանիքի մի անդամից մյուսին: Ընդ որում, նյութական բարիքների այդպիսի փոխանցումը չի առաջացնում տնտեսական շրջանառության հարաբերություններ: Տնտեսական շրջանառության հարաբերություններով միջնորդավորվում են միայն այնպիսի նյութական բարիքներ, որոնք ընդունում են ապրանքային ձև: Դրա համար տնտեսական շրջանառության հարաբերություններ ասելով պետք է հասկանալ այն հարաբերությունները, որոնք որոշվում են նյութական բարիքների ապրանքային փոխանցման գործընթացում:

Հենց այդ հարաբերություններն էլ կազմում են պարտավորական իրավունքի առարկան:

Որպես քաղաքացիական իրավահարաբերության յուրահատուկ տեսակ, պարտավորություններն օժտված են հետևյալ առանձնահատկություններով.

1/ պարտավորությունները միջնորդավորում են գույքի կամ գույքային բնույթ ունեցող աշխատանքի այլ արդյունքների փոխանցման գործընթացը: Դրա համար էլ պարտավորությունները միշտ էլ հանդես են գալիս որպես գույքային քաղաքացիական իրավահարաբերություններ: Նշված հատկանիշով էլ պարտավորությունները սահմանազատվում են անձնական ոչ գույքային քաղաքացիական իրավահարաբերություններից.

2/ պարտավորությունների միջոցով գույքը կարող է փոխանցվել միայն խստորեն որոշված, այլ ոչ թե ընդհանրապես բոլոր երրորդ անձանց: Այսինքն՝ պարտավորությունները միշտ էլ առաջանում են կոնկրետ սուբյեկտների միջև: Հետևաբար, նրանք կրում են հարաբերական բնույթ: Դրանով էլ հենց պարտավորությունները տարբերվում են քաղաքացիական բացարձակ գույքային իրավահարաբերություններից, մասնավորապես, սեփականության իրավահարաբերություններից: Սակայն նշված իրավահարաբերությունների այդպիսի սահմանազատումը, ինչպես նշում է Օ.Ս.Իռֆֆեն, հիմնվում է միայն այդ իրավահարաբերությունների սուբյեկտիվ կազմի վրա՝ չչոշափելով ո՛չ տվյալ իրավահարաբերությունների բովանդակությանը, ո՛չ էլ՝ օբյեկտին վերաբերող առանձնահատկությունները<sup>1</sup>.

1. *Տե՛ս Իոֆֆե Օ. Ս. Обязательственное право. М., 1975, էջ 5:*



3/ եթե սեփականության իրավունքի իրավաբանական օբյեկտը հանդիսանում է պարտավոր անձի պասիվ վարքագիծը, ապա գույքի փոխանցում միջնորդավորող պարտավորություններում օբյեկտը միշտ էլ հանդիսանում է պարտապանի որոշակի ակտիվ դրական գործողությունները:

4/ եթե սեփականության իրավահարաբերության իրավաբանական բովանդակության համար կարևոր նշանակություն ունի այն, որ իրավագոր անձն իրավունք ունի պարտավոր անձից պահանջել դրսևորելու որոշակի վարքագիծ, ապա պարտավորական իրավահարաբերությունում իրավագոր անձն իրավունք ունի պարտավոր անձից պահանջել իրեն փոխանցելու որոշակի նյութական բարիքներ, իսկ վերջինս պարտավոր է կատարել իր պարտականությունը:

Իրավական կարգավորման արդյունքում տնտեսական շրջանառության հարաբերություններն ստանում են իրավական ձև և վեր են ածվում պարտավորական իրավահարաբերությունների: Քաղաքացիական իրավունքում պարտավորական իրավահարաբերություններին ընդունված է անվանել պարտավորություններ:

Պարտավորությունները սերտորեն կապված են սեփականության իրավահարաբերությունների հետ և իրական կյանքում նկատվում է նրանց մշտական փոխգործողությունը: Սեփականատիրոջ կողմից տնօրինման իրավագորությունների իրացումը հանգեցնում է պարտավորական իրավահարաբերությունների ծագմանը, իսկ պարտավորությունների կատարումը հաճախ առաջացնում է սեփականության իրավունքներ: Այսպես, իրականացնելով տնօրինման իր իրավագորությունը, սեփականատերը կնքում է առուծախի պայմանագիր, որից սեփականատիրոջ /վաճառողի/ և գնորդի միջև ծագում է պարտավորություն: Գնորդը, պարտավորությամբ ընդունելով իրը վաճառողից, դառնում է նրա սեփականատերը և սեփականության հարաբերությունների մասնակիցը:

Պրա հետ միասին սեփականության հարաբերության և պարտավորության միջև առկա են էական տարբերություններ: Սեփականության հարաբերությունները միջնորդավորում են նյութական բարիքների սեփականացման գործընթացը և դրա ուժով կրում են բացարձակ բնույթ: Մինչդեռ, պարտավորությունները միջնորդավորում են նյութական բարիքների փոխանցման գործընթացը մի անձից մյուսին և դրա համար էլ միշտ սահմանվում են խստորեն որոշված անձանց միջև, այսինքն՝ կրում են հարաբերական բնույթ:

Պարտավորությունը պարտականություններ չի ստեղծում որպես

կողմ չմասնակցող անձանց /երրորդ անձանց/ համար /Քաղ. օր. 346 հոդվ. 3-րդ կետ/: Այսպես, առուծախի պարտավորությունը ծագում է կոնկրետ վաճառողի և կոնկրետ գնորդի միջև: Օրենքով, այլ իրավական ակտերով կամ կողմերի համաձայնությամբ նախատեսված դեպքերում պարտավորությունը կարող է կողմերից մեկի կամ երկուսի նկատմամբ իրավունքներ ստեղծել երրորդ անձանց համար:

Ինչպես ցանկացած իրավահարաբերությունում, պարտավորությունում ևս մասնակցում են երկու կողմեր՝ իրավագոր և պարտավոր: Նյութական բարիքների փոխանցումն անհնար է առանց ակտիվ գործողությունների: Պարտավորական իրավահարաբերության իրավագոր կողմն իրավունք ունի պարտավոր կողմից պահանջել կատարելու որոշակի ակտիվ գործողություններ: Օրինակ՝ վարձակալության պարտավորությունում վարձատուրն իրավունք ունի սահմանված ժամկետի ընթացքում պահանջել վերադարձնելու վարձակալության հանձնված գույքը, իսկ վարձակալը պարտավոր է այդ ժամկետում վերադարձնել վարձատուի գույքը, մրցութային պարտավորությունում մրցույթի պայմաններով հաղթող ճանաչված մասնակիցն իրավունք ունի մրցույթի կազմակերպչից պահանջելու մրցանակը /պարգև/, իսկ վերջինս պարտավոր է այն փոխանցել նշված մասնակցին: Ի դեպ, սեփականության հարաբերություններում իրավագոր կողմը /սեփականատերը/ կարող է պահանջել պարտավոր կողմից ձեռնպահ մնալու որոշակի գործողություններ կատարելուց:

Պարտավորությունում իրավագոր կողմին պատկանող սուբյեկտիվ իրավունքն ընդունված է անվանել պահանջի իրավունք, իսկ իրավագոր անձը՝ պարտատեր: Պարտավորությունում պարտավոր կողմն անվանվում է պարտապան, իսկ նրա վրա դրված պարտականությունը՝ պարտք: Եթե պարտավորությունում կողմերից յուրաքանչյուրը պարտականություն է կրում հօգուտ մյուս կողմի, ապա նա համարվում է այդ կողմի պարտապանն այն բանում, որ պարտավոր է կատարել նրա օգտին, և միաժամանակ նրա պարտատերն այն բանում, որ իրավունք ունի նրանից պահանջել: Այսպես, առուծախի պարտավորությունում վաճառողը հանդիսանում է պարտապան գնորդի առջև, քանի որ պարտավոր է նրան տալ վաճառված իրը, և միաժամանակ հանվես է գալիս գնորդի պարտատերը, քանի որ իրավունք ունի նրանից պահանջել վաճառված իրի դիմաց վճարը, պարզ վճարելու հրապարակային խոստումից ծագող պարտավորությունում պարզ խոստալուը համարվում է պարտապան, քանի որ պարտավոր է պարզիկ խոստարարության մեջ նշված գործողությունը կատարած անձին վճա-

րել խոստացված պարգևը, իսկ այդ անձը համարվում է պարտատեր, քանի որ իրավունք ունի պահանջել պարգևն այն խոստացածից:

Պարտապանի գործողությունները հանդես են գալիս որպես պարտավորության օբյեկտ: Այսպես, կապալառուի կապալային աշխատանքների կատարման և դրանք պատվիրատուին հանձնելու հետ կապված գործողությունները կազմում են կապալային պարտավորության օբյեկտը, իսկ առանց հանձնարարության, ի շահ ուրիշի կատարված գործողությունները համարվում են առանց հանձնարարության, ի շահ ուրիշի միակողմանի գործողություններից ծագող պարտավորության օբյեկտը:

Օ.Ս.Իոֆֆեն տարբերում է պարտավորական իրավահարաբերության երկու օբյեկտ՝ իրավաբանական և նյութական: Ըստ նրա, պարտավորական, ինչպես և ցանկացած այլ քաղաքացիական իրավահարաբերության իրավաբանական օբյեկտը հանդիսանում է պարտավոր անձի որոշակի վարքագիծը: Այստեղ խոսքն առաջին հերթին վերաբերվում է դրական գործողություններին /ակտիվ վարքագծին/, իսկ պասիվ վարքագիծը /որոշակի գործողություններ կատարելուց ձեռնպահ մնալը/ կարող է հանդես գալ միայն որպես պարտապանի կողմից կատարվող ակտիվ գործողությունների լրացում կամ հետևանք:

Ինչ վերաբերվում է նյութական օբյեկտին, ապա մի շարք պարտավորություններում այն ընդհանրապես բացակայում է: Օրինակ՝ որոշ աշխատանքների կատարման կամ ծառայությունների մատուցման պայմանագրային պարտավորություններ չունեն նյութական օբյեկտ: Իսկ առանձին պարտավորություններ ունեն միայն նյութական օբյեկտ, օրինակ, գույքի պահատվության անհատույց պայմանագիրը: Պրանց հետ մեկտեղ գոյություն ունեն պարտավորություններ, որոնք ունեն և՛ իրավաբանական, և՛ նյութական օբյեկտ: Այսպես, առուծախի պայմանագրում գույքի փոխանցման վաճառողի գործողությունները և գույքի դիմաց դրամ վճարելու գնորդի գործողությունները կազմում են առուծախի պայմանագրային պարտավորության իրավաբանական օբյեկտը, իսկ փոխանցվող գույքը և դրա դիմաց վճարվող դրամական գումարը՝ նյութական օբյեկտը<sup>1</sup>:

Պարտավորության բովանդակությունն են կազմում այն իրավունքների և պարտականությունների ամբողջությունը, որոնք ձեռք են բերում պարտավորության կողմերը՝ պարտատերն ու պարտապանը:

1. Տես Օ.Ս.Իոֆֆեի նշված աշխատությունը, 13-14 էջերը:

Այսպես, առուծախի պայմանագրային պարտավորությունում գնորդը ձեռք է բերում վաճառողից գույքը պահանջելու իրավունք և միաժամանակ ստանձնում է գույքի դիմաց նրա գինը վճարելու պարտականություն, իսկ վաճառողը՝ գնորդից գույքի դիմաց պայմանավորված գինը պահանջելու իրավունք և միաժամանակ՝ գույքը գնորդին հանձնելու պարտականություն: Առանց հանձնարարության, ի շահ ուրիշի գործողություններից ծագող պարտավորությունում շահագրգռված անձի օգտին գործող անձը ձեռք է բերում իր կրած անհրաժեշտ ծախսերը և այլ իրական վնասը շահագրգռված անձի կողմից հատուցելու իրավունք և միաժամանակ ստանձնում է շահագրգռված անձին իր կատարած գործողությունների համար հաշվետվություն ներկայացնելու պարտականություն:

Պարտատիրոջ պահանջի իրավունքը և պարտապանի պարտականությունը կազմում են պարտավորական իրավահարաբերության բովանդակությունը:

Այսպիսով, պարտավորությունը նյութական բարիքների ապրանքային փոխանցում միջնորդավորող հարաբերական, գույքային իրավահարաբերություն է, որում մի անձը /պարտապանը/ մյուս անձի /պարտատիրոջ/ պահանջով պարտավոր է կատարել որոշակի նյութական բարիքներ վերջինիս փոխանցելու գործողություններ: Սա պարտավորության գիտական բնորոշումն է:

Ի տարբերություն պարտավորության բերված դոկտրինալ /գիտական/ բնորոշման՝ նրա լեզու /իրավական/ բնորոշումը ձևակերպված է Քաղ. օր. 345 հոդվածում հետևյալ կերպ. «Պարտավորության ուժով մի անձը /պարտապանը/ պարտավոր է մեկ այլ անձի /պարտատիրոջ/ օգտին կատարել որոշակի գործողություններ, այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը»:

Այս բնորոշման թերությունը կայանում է նրանում, որ այն գործնականում թույլատրում է «պարտավորություն» հասկացության տակ մտնել ցանկացած հարաբերական իրավահարաբերություն: Պա միջ էր հանդիսացել մի շարք հեղինակների համար հաստատելու, որ պարտավորությունը ոչ թե քաղաքացիաիրավական, այլ իրավունքի տարբեր ձյուղերի կողմից օգտագործվող հասկացություն է: Այստեղից կարելի է եզրակացնել, որ գոյություն ունեն աշխատանքային, ֆինանսական, վարչաիրավական, տնտեսական, ներստեսական և այլ

պարտավորություններ:

Ի դեպ, պարտավորությունը, որպես գիտական հասկացություն, իմաստ և նշանակություն ունի միայն այն ժամանակ, երբ այն քննարկվում է որպես ապրանքադրամային հարաբերությունները միջնորդավորող յուրահատուկ իրավական ձև: Հակառակ դեպքում պարտավորությունը դառնում է այլ գիտական հասկացություն՝ «հարաբերական իրավահարաբերություն», որն իրականում հանդիսանում է միջձյուղային հասկացություն:

Պարտավորության առանձնահատկություններից մեկն էլ իրավագոր կողմին /պարտատիրոջը/ պատկանող պահանջի իրավունքն է: Ընդ որում, այդ հատկանիշը հատուկ է ցանկացած իրավահարաբերության: Այսպես, սեփականատիրոջը պատկանող սուբյեկտիվ իրավունքը նրան հնարավորություն է տալիս շրջապատի անձանցից պահանջել ձեռնպահ մնալու իրեն պատկանող գույքը տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու սեփականատիրոջ իրավագորությունների իրականացմանը խոչընդոտող ցանկացած գործողություն կատարելուց: Ցանկացած իրավահարաբերությունում իրավագոր կողմը կոչվում է այդպիսին, քանի որ իրավունք ունի պահանջել պարտավոր կողմից դրսևորելու համապատասխան վարքագիծ: Առանձին տեսակի իրավահարաբերությունների յուրահատկությունը արտահայտվում է նրանում, որ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու, իրեն որոշակի նյութական բարիքներ փոխանցելու հետ կապված, որոշակի գործողություններ: Հենց այս առանձնահատկությունն էլ իր արտահայտությունն է գտնել պարտավորության վերոհիշյալ դոկտրինալ բնորոշման մեջ:

Ցանկացած պարտավորություն այս կամ այն ձևով միջնորդավորում է նյութական բարիքների փոխանցում: Այն չի կարող հանգեցնել պարտապանի պասիվ վարքագծին: Նյութական բարիքների փոխանցման համար պարտապանը պարտավոր է կատարել որոշակի ակտիվ գործողություններ: Այդ դեպքում նա կարող է պարտավորվել ձեռնպահ մնալու նրա ակտիվ գործողություններին ուղեկցող, այլ ոչ թե նրանց փոխարինող որոշակի գործողություններ կատարելուց: Որոշակի գործողություններ կատարելուց ձեռնպահ մնալը չի դասվում պարտավորության էական հատկանիշների թվին: Դրա համար էլ, մեր կարծիքով, պարտավորության հասկացության բնորոշման մեջ պետք է քաջակալի նշում այդ մասին:

Իրավաբանական գրականության մեջ արտահայտվում է կարծիք

ոչ գույքային պարտավորությունների գոյության մասին<sup>1</sup>: Որպես օրինակ, նշվում է որևէ անձի կողմից փաստաբանի հետ անհատույց պայմանագիր կնքելը դատարանում իր շահերը պաշտպանելու համար այն պայմանով, որ եթե փաստաբանը չկատարի իր վրա դրված պարտականությունները, ապա պետք է հատուցի վստահորդի կրած ծախսերը: Օ.Ս.Իոֆֆեի կարծիքով, այդ դիրքորոշման կողմնակիցների կողմից անհատույց պայմանագրերի կամ առանձին ոչ գույքային պարտականությունների վերաբերյալ բերված օրինակները համոզիչ չեն, այնպես որ ամբողջությամբ չեն փոխում պարտավորության գույքային բնույթը, որը, այսպես թե այնպես, միշտ կապված է այս կամ այն ձևով որոշակի նյութական բարիքների փոխանցման հետ<sup>2</sup>:

## § 2. Պարտավորությունների դասակարգման հասկացությունը և նշանակությունը

Քաղաքացիական շրջանառության մասնակիցների միջև ծագող բազմաթիվ և տարատեսակ պարտավորական իրավահարաբերությունների առկայության պայմաններում կարևոր նշանակություն է ձեռք բերում նրանց դասակարգումը:

Դասակարգման տակ ընդունված է հասկանալ իրերի, առարկաների, փաստերի բաժանումը խմբերի /դասերի/՝ ըստ դասակարգվող օբյեկտների ընդհանուր /էական/ հատկանիշների, որի արդյունքում յուրաքանչյուր դաս /խումբ/ ունենում է իր մշտական, որոշակի տեղը<sup>3</sup>:

Պարտավորությունների դասակարգումը ենթադրում է ոչ միայն նրանց եզակիությունը, այլև ճիշտ ընտրված դասակարգման չափանիշների վրա հիմնված տարանջատումը: Որպես այդպիսի չափանիշ, կարող են ծառայել պարտավորության այն հատկությունները, որոնք առավել զգալի ազդեցություն են ունենում նրանց իրավական կարգավորման բնույթի վրա: Այդպիսի հատկությունները թույլատրում են պարտավորությունները դասակարգել որոշակի համակարգով:

Պարտավորությունների գիտականորեն հիմնավորված համակարգն ամենից առաջ կարևոր նշանակություն ունի նրանց վրա դրված իրավական կարգավորման համար: Այն թույլ է տալիս նորմատիվ նյութը կենտրոնացնել պարտավորական իրավունքի տարբեր կառուց-

1. См. Носицкий И. Б., Лунц Л. А. Общее учение об обязательстве. М., 1950 էջ 58:

2. См. О. У. Иоффеի նշված աշխատությունը, 14-15 էջերը:

3. См. Устаиов Г. И. Учебник логики. М., 1946, էջ 117:

վածքային ստորաբաժանումներում այնպիսի ձևով, որ իրենց բնույթով եզակի պարտավորական հարաբերությունները կարգավորվեն իրավունքի միևնույն նորմերով: Եվ ընդհակառակը, առավել էական հատկանիշներով իրարից տարբերվող պարտավորական հարաբերությունները կարգավորվում են իրենց բովանդակությամբ տարբեր իրավական նորմերով: Այսպես, բոլոր պարտավորությունների համար ընդհանուր հատկությունները թույլ են տալիս առանձնացնելու պարտավորական իրավունքի ընդհանուր մասը, որը բաղկացած է այնպիսի իրավական նորմերից, որոնք հավասարապես կիրառվում են բոլոր պարտավորությունների նկատմամբ /Քաղ. օր. 345-435 հոդվածներ/:

Պարտավորական իրավունքի ընդհանուր մասի նորմերը նախատեսում են բոլոր պարտավորությունների ծագմանը, կատարմանը, կատարման ապահովմանը, չկատարման և ոչ պատշաճ կատարման համար պատասխանատվությանը և պարտավորությունների դադարմանը վերաբերող դրույթներ:

Պարտավորությունների որոշ տեսակների առանձնահատկությունները կանխորոշում են պարտավորական իրավունքի ներքին կառուցվածքային ստորաբաժանումների գոյությունը, որը կազմում է պարտավորական իրավունքի հատուկ մասը: Պարտավորական իրավունքի հատուկ մասում նախատեսված և կարգավորված են ինչպես պայմանագրերից բխող, այնպես էլ պայմանագրերից չբխող պարտավորությունները /Քաղ. օր. 436-1099 հոդվածներ/:

Պարտավորությունների դասակարգումը կարևոր նշանակություն է ձեռք բերում նաև իրավակիրառ գործունեության համար: Այն թույլ է տալիս հստակ սահմանազատելու պարտավորության մի տեսակը մյուսից և նրանց նկատմամբ կիրառելու համապատասխան միասեռ իրավական նորմեր: Պարտավորական իրավունքի ուսումնասիրումը նույնպես մեծապես հեշտանում է, եթե այն իրականացվում է պարտավորությունների գիտական հիմնավորված դասակարգման հիմքի վրա:

Պարտավորությունների ընդհանուր դասակարգմանը հանգում է նրանց բաժանումը կարգավորիչ /ռեգուլյատիվ/ և պահպանական պարտավորությունների: Առաջին խումբն իր մեջ ընդգրկում է այն պարտավորությունները, որոնք իրավաբանորեն միջնորդավորում են բնականոն տնտեսական հարաբերություններ /առուծախ, կապալ, փոխադրումներ, ծառայությունների մատուցում, հրապարակային մրցույթ

և այլն/: Երկրորդ խումբն ընդգրկում են այն պարտավորությունները, որոնք ծագում են, երբ նյութական բարիքների փոխանցումը և որոշակի անձանց կողմից այս կամ այն ոլորտում նրանց ամրագրումը համարվում են խախտումներ: Այսինքն՝ պահպանական պարտավորություններն օրենքով չթույլատրվող գործողություններ կատարելու հետևանքով առաջացող հարաբերություններ են: Այդպիսիք, մասնավորապես, վնաս պատճառելուց և անհիմն հարստացումից ծագող պարտավորություններն են:

Կան նաև այնպիսի պարտավորություններ, որոնք կարելի է քննարկել որպես յուրահատուկ կարգավորիչ /ռեգուլյատիվ/ և պահպանական պարտավորությունների խառնույթ: Ղրանց տեղն իրավական համակարգում որոշվում է՝ կախված նրանից, թե իրենց հիմնական բովանդակությամբ պարտավորությունների որ խմբին են մոտիկ: Այդպիսիք են, օրինակ, ապահովագրական պարտավորությունները:

Պարտավորությունների համակարգը նպատակահարմար է կառուցել հետևողականորեն իրականացվող բազմաստիճան դասակարգման հիման վրա՝ Այդ դեպքում յուրաքանչյուր առանձին վերցված դասակարգման աստիճանի նկատմամբ անհրաժեշտ է օգտագործել եզակի դասակարգման չափանիշ, որը թույլ կտա բացահայտել պարտավորական իրավահարաբերություններում առավել էական տարբերությունները: Ղրան համապատասխան բոլոր պարտավորությունները բաժանվում են երկու տիպի: Ղրանցից յուրաքանչյուրի ներսում պարտավորությունները բաժանվում են առանձին խմբերի: Պարտավորությունների յուրաքանչյուր խումբ բաղկացած է պարտավորությունների առանձին տեսակներից: Իսկ պարտավորությունների տեսակները բաժանվում են ենթատեսակների և ձևերի:

Չստ ծագման հիմքի՝ բոլոր պարտավորությունները բաժանվում են երկու խմբի՝ պայմանագրային և արտապայմանագրային: Պայմանագրային պարտավորությունները ծագում են պայմանագրի կնքման կլման վրա, իսկ արտապայմանագրային պարտավորությունների ծագման հիմքում ընկած են այլ իրավաբանական փաստեր՝ վնաս պատճառելը, ուրիշի գույքին սպառնացող վնասը կանխելը, անհիմն կերպով այլ անձի հաշվին գույք ձեռք բերելը կամ խնայելը, հրապարակային մրցույթ հայտարարելը և այլն: Բոլոր պարտավորությունները կրկու խմբի բաժանման նշանակությունը կայանում է նրանում, որ պայմանագրային պարտավորությունների բովանդակությունը որոշ-

1. Տես Բարսեղյան Ս. Կ., *Նշված աշխատությունը*, էջ 387:

2. Տես Ա. Պ. Սերգեյևի, Յու. Կ. Տոլստոյի խմբ. *Նշվ. աշխ.*, էջ 475:

վում է ոչ միայն օրենքով, այլև՝ պարտավորությանը մասնակցող անձի համաձայնությամբ: Արտապայմանագրային պարտավորությունների բովանդակությունը կախված է միայն օրենքից կամ պարտավորության կողմերից մեկի կամ քից և օրենքից: Պայմանագրային պարտավորությունների իրավաբանական ընդհանրությունը թույլ է տալիս բազմաթիվ և տարատեսակ բոլոր պայմանագրային պարտավորությունների նկատմամբ հավասարաչափ կիրառել իրավունքի նշանակալի քանակի ընդհանուր նորմեր: Այդ իրավական նորմերի համակցությունը կազմում է պայմանագրային իրավունքի ընդհանուր մասը /Քաղ. օր. 436-469 հոդվածներ/:

Ինչպես պայմանագրային, այնպես էլ արտապայմանագրային պարտավորություններն իրենց հերթին ստորաբաժանվում են պարտավորությունների խմբերի: Այսպես, պայմանագրային պարտավորությունների սահմաններում, նրանց կողմից միջնորդավորվող նյութական բարիքների փոխանցման բնույթից կախված, առանձնացվում են գույքի իրացման պարտավորություններ, գույքը ժամանակավոր տիրապետման և օգտագործման հանձնելու պարտավորություններ, աշխատանքների կատարման պարտավորություններ, փոխադրման պարտավորություններ, ծառայությունների մատուցման պարտավորություններ, հաշվարկային և վարկային պարտավորություններ, ապահովագրական պարտավորություններ, համատեղ գործունեությունից ծագող պարտավորություններ, խառը պարտավորություններ:

Իրավաբանական գրականության մեջ պայմանագրային են համարվում նաև այն պարտավորությունները, որոնք ծագում են այլ իրավաչափ գործողություններից՝ վարչական ակտերից, միակողմանի գործարքներից՝:

Ընդ որում, իրավաբանական մեկ այլ գրականության մեջ նշվում է, որ միակողմանի գործողություններից, այդ թվում նաև միակողմանի գործարքներից ծագող պարտավորությունները համարվում են արտապայմանագրային պարտավորություններ<sup>2</sup>:

Ինչպես կարելի է միակողմանի գործարքը համարել պայմանագիր, իսկ միակողմանի գործարքից ծագող պարտավորությունը՝ պայմանագրային պարտավորություն: Ցանկացած պայմանագիր գործարք է, մինչդեռ ամեն մի գործարք պայմանագիր չէ:

1. Տես, օրինակ, Բարսեղյան Ս.Կ., 2000թ. խմբ. նշվ. աշխ., էջ 392:

2. Տես Ա. Պ. Սերգեյևի, Յու. Կ. Տոլստոյի խմբ. նշված աշխատությունը, էջ 476:

Մենք բաժանում ենք այն հեղինակների կարծիքը, որ միակողմանի գործողություններից ծագող պարտավորությունները դասվում են արտապայմանագրային պարտավորությունների թվին:

Այսպես, արտապայմանագրային պարտավորությունները կարելի է բաժանել երկու խմբի՝

1/ միակողմանի գործողություններից ծագող պարտավորություններ.

2/ պահպանական պարտավորություններ /լինաս պատճառելու և անհիմն հարստացման հետևանքով ծագող պարտավորություններ/:

Այս կամ այն խմբի մեջ մտնող պարտավորությունները բնութագրվում են նրանց ընդհանուր իրավական կարգավորումը կանխորոշող տնտեսական ընդհանրությամբ: Օրինակ՝ այդպիսին են գույքի իրացման պարտավորությունները՝ առուծախը, փոխանակությունը և ռենտան, որոնք ենթարկվում են մի ամբողջ շարք ընդհանուր կանոնների:

Առանձին խմբերի մեջ մտնող պարտավորություններին միավորող ընդհանուր հատկանիշների հետ մեկտեղ նրանք բնութագրվում են իրենց հետագա դասակարգումը ենթադրող որոշակի տարբերություններով: Այս կամ այն խմբի սահմաններում, կախված տնտեսական բովանդակությունից, տարբերվում են պարտավորությունների առանձին տեսակները: Այսպես, աշխատանքների կատարման պարտավորությունների մեջ մտնում են կապալի, կենցաղային կապալի, շինարարական կապալի, նախագծային և գիտահետազոտական աշխատանքների կատարման կապալի և այլ պարտավորություններ: Միակողմանի գործողություններից ծագող պարտավորությունների խմբի մեջ մտնում են պարզ վճարելու հրապարակային խոստումից, հրապարակային մրցույթից և առանց հանձնարարության, ի շահ ուրիշի գործողություններից ծագող պարտավորությունները:


Պարտավորությունների առանձին տեսակներն իրենց հերթին կարող են հանդես գալ տարբեր ձևերով, կամ էլ բաժանվել տարբեր ենթատեսակների: Պարտավորությունների դասակարգումն առանձին ձևերի իրավական նշանակություն ունի այն ժամանակ, երբ այս կամ այն տեսակի պարտավորական իրավահարաբերության սահմաններում նրա առանձնահատկությունները ձեռք են բերում արտահայտման ձև: Օրինակ՝ մանրածախ առուծախը կարող է ընդունել ապառիկ առուծախի, նախնական պատվերով առուծախի, ինքնասպասարկման կարգով առուծախի և այլ ձևեր:

Պարտավորության կոնկրետ տեսակը կարող է ներկայացվել տալի-

բեր ենթատեսակներով, եթե տվյալ տեսակի սահմաններում առանձնահատկությունները ձեռք են բերում պարտավորական իրավահարաբերությունների բովանդակություն: Այսպես, տրանսպորտային միջոցների վարձակալության պարտավորությունում տարբերվում են նրա երկու ենթատեսակները՝

- 1/ տրանսպորտային միջոցների վարձակալություն դրա կառավարման և տեխնիկական շահագործման ծառայությունների մատուցմամբ.
- 2/ տրանսպորտային միջոցների վարձակալություն առանց կառավարման և տեխնիկական շահագործման ծառայությունների մատուցման:

Պարտավորությունների դասակարգման բազմաստիճան համակարգը լավ պատկերացնելու համար ներկայացնում ենք հետևյալ աղյուսակը.



### § 3. Պարտավորությունների դասակարգման խնդիրները

Պարտավորությունների դասակարգման հարցը գրականության մեջ վիճահարույց է: Ոչ հաճախ պարտավորությունների դասակարգումն իրականացվում է առանձին տեսակի պարտավորական իրավահարաբերություններն այլ պարտավորություններից տարանջատելու ճանապարհով: Օրինակ՝ բաժանվում են պայմանագրային և արտապայմանագրային, միակողմանի և փոխադարձ, պարզ և բարդ, այլընտրանքային և ֆակուլտատիվ, գլխավոր և լրացուցիչ պարտավորություններ և այլն<sup>1</sup>:

Պարտավորությունները դասակարգվում են տեսակների՝ ելնելով նրանց ծագման հիմքերից, կողմերի իրավունքների և պարտականությունների բնույթից /պարտավորության բովանդակությունից/, պարտավորությունների փոխկապակցվածությունից, պարտավորության և սուբյեկտի կապից<sup>2</sup>:

Իրավաբանական գրականության մեջ, նշված հատկանիշներից ելնելով, տարբերվում են պայմանագրային և արտապայմանագրային, պարզ, բարդ և երկընտրելի, դրական կամ բացասական գործողությամբ կատարվող, գլխավոր և լրացուցիչ, անձնական բնույթի պարտավորությունները<sup>3</sup>:

Պարտավորությունների դասակարգման այս խմբերից անդրադառնանք դրական կամ բացասական գործողությամբ կատարվող պարտավորություններին:

Դրական գործողությամբ կատարվող են համարվում այն պարտավորությունները, որոնցով պարտապանը պարտավոր է պարտատիրոջ օգտին կատարել որոշակի ակտիվ գործողություն, օրինակ՝ հանձնել գույք, վճարել դրամ, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն:

Բացասական գործողությամբ կատարվող են համարվում այն պարտավորությունները, որոնցով պարտապանը պարտավորվում է ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց: Այսինքն՝ այդպիսի պարտավորություններով պարտապանը պարտավորվում է

1. *Տե՛ս Советское гражданское право. Т. 1. Учебник под ред. В.П.Грибанова, С.М.Корнеева, М., 1979, 442-446 էջերը:*  
 2. *Տե՛ս Բարսեղյան Տ.Կ. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական իրավունք, առաջին մաս, Եր., 2004, էջ 368:*  
 3. *Տե՛ս նույն տեղում, 367-371 էջերը:*

չկատարել որոշակի գործողություն: Իրական կյանքում բացասական գործողությամբ կատարվող պարտավորության օրինակ է համարվում հեղինակի և հրատարակչության միջև կնքված պայմանագիրը, որում հատուկ պայման է դրվում, որ քանի դեռ գործում է այդ պայմանագիրը, հեղինակն իրավունք չունի այդ նույն ստեղծագործությունը հանձնել մեկ այլ հրատարակչության:

Մեր կարծիքով, պարտավորությունները դրական գործողությամբ կատարվող և բացասական գործողությամբ կատարվող պարտավորությունների դասակարգելը նպատակահարմար չէ:

Ինչպես հասկանալ «բացասական գործողություն կատարել» բառակապակցությունը, քանի որ գործողություն կատարելը հանգում է պարտապանի ակտիվ վարքագծին: Ինչ վերաբերվում է պասիվ վարքագծին /որոշակի գործողություններ կատարելուց ձեռնպահ մնալուն/, ապա այն կարող է հանդես գալ միայն որպես պարտապանի ակտիվ գործողությունների լրացում կամ հետևանք: Այսպես, վերը նշված օրինակում հեղինակի կողմից իր ստեղծագործությունը մեկ ուրիշ հրատարակչությանը հանձնելուց ձեռնպահ մնալը չի կարելի դիտել որպես ինքնուրույն պարտավորություն, քանի որ այն բխում է հեղինակի և հրատարակչության միջև կնքված պայմանագրից ծագող պարտավորությունից և հանդես է գալիս որպես այդ պարտավորության լրացում: Ուստի, որոշակի գործողություններ կատարելուց ձեռնպահ մնալը չպետք է համարել պարտավորության ինքնուրույն տեսակ:

Պարտավորությունների վերը նշված դասակարգումն ի վիճակի է որոշել միայն մասնավոր հարցեր՝ կապված պարտավորությունների մի խումբը մյուսից կամայականորեն ընտրված հատկանիշով սահմանազատելու հետ և չի կազմում պարտավորությունների միասնական համակարգ, որը կարելի կլինի օգտագործել օրենսդրության համակարգման դեպքում: Քաղաքացիագետների մեծամասնությունը ձգտում է դասակարգել պարտավորությունների համակարգն ամբողջությամբ: Այդ պատճառով էլ նրանք օգտագործում են տարբեր չափանիշներ: Այսպես, Օ.Ա.Կրասավիկովը, որպես դասակարգման չափանիշ, օգտագործում է պարտավորական իրավահարաբերությունների ուղղվածությունը<sup>1</sup>: Մ.Վ.Գորդոնը պարտավորությունների դասակարգման հիմքում դնում է խառը իրավաբանական և տնտեսական չափանիշներ<sup>2</sup>:

1. Стн Красавчиков О.А. Система отдельных видов обязательств //Советская юстиция, 1960, N 5, 42-43 էջերը:

2. Стн Гордон М.В. Система договоров в советском гражданском праве. М., 1954, էջ 84:

Վերը նշված պարտավորությունների դասակարգման վերաբերյալ հեղինակների կողմից առաջարկված չափանիշների հիման վրա բաժանված պարտավորությունների տեսակներն օժտված չեն անհրաժեշտ իրավական ընդհանրությամբ: Դա նաև զարմանալի չէ, քանի որ պարտավորական իրավահարաբերությունների բազմաթիվությունն ու բազմազանությունը թույլ չեն տալիս նրանց տեղադրել դասակարգային մեկ շարքում: Դրա համար, մեր կարծիքով, ավելի նախընտրելի է պարտավորությունների բազմաստիճան դասակարգման վրա հիմնված վերը բերված պարտավորությունների համակարգը:

#### § 4. Պարտավորությունների ծագման հիմքերը

Ինչպես ցանկացած քաղաքացիական իրավահարաբերություն, պարտավորությունը ևս ծագում է որոշակի իրավաբանական փաստերի հիման վրա, որոնք ընդունված է անվանել պարտավորությունների ծագման հիմքեր: Պարտավորական իրավահարաբերությունների ծագման հիմքում կարող են ընկած լինել տարատեսակ իրավաբանական փաստեր: Դրա հետ մեկտեղ պարտավորությունների ծագման թուր հնարավոր հիմքերի մեջ Քաղաքացիական օրենսգրքը հատուկ առանձնացնում է պայմանագիրը /Քաղ. օր. 436 հոդվ. 1-ին կետ/<sup>1</sup>:

Պայմանագրերի հետ մեկտեղ պարտավորությունների ծագման հիմք են հանդիսանում նաև միակողմանի գործարքները: Այս դեպքում քաղաքացիական իրավունքի սուբյեկտը միակողմանի կամաարտահայտությամբ կա՛մ տնօրինում է իր սուբյեկտիվ իրավունքը, կա՛մ ստանձնում է սուբյեկտիվ պարտականություն՝ դրանով իսկ պարտավորական հարաբերության մյուս կողմին օժտելով համապատասխան սուբյեկտիվ իրավունքով<sup>2</sup>: Այդպիսի միակողմանի գործարքների թվին են դասվում պարզ վճարելու հրապարակային խոստումը, հրապարակային մրցույթ հայտարարելը, ինչպես նաև օրենքով նախատեսված, այնպես էլ՝ չնախատեսված, բայց նրան չհակասող այլ գործարքներ:

Պայմանագրերի հետ մեկտեղ միակողմանի գործարքները թույլատրում են իրավաբանորեն ապահովելու ապրանքադրամային հարաբերությունների մասնակիցների համար անհրաժեշտ անկախություն և

1 Պայմանագիրը, որպես պարտավորությունների առաջացման գլխավոր հիմք, դուրս է մեր ուսումնասիրության շրջանակից:

2. Стн Черепанин Б.Б. Правопреимство по советскому гражданскому праву. М., 1962, էջ 29:

ինքնուրույնություն<sup>1</sup>:

Պարտավորությունների ծագման հիմքում կարող են ընկած լինել նաև իրավաբանական անձանց և քաղաքացիների գործողությունները: Ընդհանրապես, գործողությունները լինում են իրավաչափ և ոչ իրավաչափ:

Ոչ իրավաչափ գործողությունների կատարումը տնտեսական շրջանառության ոլորտում խոչընդոտում է նրա բնականոն զարգացմանը: Նշված գործողություններից առաջացած բացասական /նեգատիվ/ հետևանքների որոշման նպատակով օրենքը նրանց հետ կապում է հատուկ տեսակի պարտավորության ծագում: Այսպես, Քաղ. օր. 1058 հոդվածի ուժով քաղաքացու կյանքին կամ գույքին, ինչպես նաև իրավաբանական անձի գույքին պատճառված վնասը լրիվ ծավալով ենթակա է հատուցման վնասը պատճառած անձի կողմից: Որպես այդպիսի պարտավորության ծագման հիմք՝ հանդես են գալիս ոչ իրավաչափ գործողությունները /դելիկտները/: Այդ պատճառով էլ ոչ իրավաչափ գործողություններից ծագող պարտավորություններն իրավաբանական գրականության մեջ ընդունված է նաև անվանել դելիկտային պարտավորություններ<sup>2</sup>: Լատիներեն «delictum» բառը թարգմանաբար նշանակում է իրավախախտում: Պրոֆ. Գ. Ղարախանյանը նման պարտավորությունն անվանում է «իրավախախտումից բխող պարտավորություն», «անթույլատրելի գործողությունների հետևանքով ծագող պարտավորություն»<sup>3</sup>: Չնայած դելիկտային պարտավորությունները ծագում են ոչ իրավաչափ գործողություններից, սակայն իրականում նրանք ուղղված են իրավաչափ արդյունքին՝ տնտեսական շրջանառության մասնակիցների գույքային դրության վերականգնմանը: Այդպիսի արդյունքին հասնելուն են ուղղված նաև անհիմն հարստացման հետևանքով ծագող պարտավորությունները: Քաղ. օր. 1092 հոդվածի ուժով անձը, ով առանց օրենքով, այլ իրավական ակտերով կամ գործարքով սահմանված հիմքերի ուրիշ անձի /տուժողի/ հաշվին ձեռք է բերել կամ խնայել է գույք, պարտավոր է վերջինիս վերադարձնել անհիմն ձեռք բերած կամ խնայել գույքը /անհիմն հարստացումը/: Այսինքն՝ ուրիշի /տուժողի/ հաշվին անհիմն ձեռք բերելու կամ խնայելու կապակցությամբ պարտավորություն է առաջանում տուժողի և անհիմն հարստացող անձի միջև:

1. Ств Алексеев С.С. Односторонние сделки в механизме гражданского-правового регулирования. Сборник ученых трудов. Вып. 13, Свердловск. 1970, էջ 63:

2. Ств Смирнов В.Т., Собчак А.А. Общее учение о деликтных обязательствах в советском гражданском праве, Л., 1983:

3. Ств Հայաստանի Հանրապետության քաղաքացիական իրավունք, երկրորդ մաս, եր., 2001, էջ 596:

Պարտավորական իրավահարաբերությունների հիմքում կարող են ընկած լինել նաև քաղաքացիների և իրավաբանական անձանց իրավաչափ գործողությունները: Օրինակ՝ Քաղ. օր. 59 գլխում ամուսնագրված կանոններին համապատասխան առանց հանձնարարության, մասնավորապես, ուրիշի անձին կամ գույքին սպառնացող վնասը կանխելու նպատակով ի շահ ուրիշի գործող անձը որոշակի պայմանների առկայության դեպքում ձեռք է բերում իր կողմից կրած անհրաժեշտ ծախսերը և այլ իրական վնասը հատուցելու իրավունք: Տվյալ դեպքում պարտավորությունը ծագում է վնասը կանխելուն ուղղված իրավաչափ գործողություններից: Ընդ որում, այդ գործողությունները չեն հանդիսանում գործարքներ կամ վարչական ակտեր<sup>4</sup>: Այդ պատճառով էլ դրանք դասվում են քաղաքացիների և իրավաբանական անձանց այլ գործողությունների թվին: Այդ դեպքում Քաղաքացիական օրենսդրությունը նախատեսում է պարտավորությունների ձևավորման հնարավորություն քաղաքացիների և իրավաբանական անձանց այնպիսի գործողություններից, որոնք ուղղակիորեն նախատեսված չեն օրենքով և այլ իրավական ակտերով, սակայն Քաղաքացիական օրենսդրության ընդհանուր սկզբունքների ուժով առաջացնում են քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ /Քաղ. օր. 10 հոդվ. 1-ին կետ/:

Ցիվիլիստիկական գրականության մեջ նշվում է, որ առանց հանձնարարության, ի շահ ուրիշի գործողություն կատարելը միակողմանի գործարք է, քանի որ նրանում բացակայում է պայմանագրի էական հատկանիշը՝ երկու կամ ավելի կողմերի առկայությունը<sup>5</sup>:

Պարտավորական իրավահարաբերություններ կարող են ծագել նաև իրավաբանական դեպքերից, այսինքն՝ այնպիսի իրավաբանական փաստերից, որոնք մարդկանց կամքից կախված չեն:

Ամենից առաջ դեպքերը հանգեցնում են ոչ թե պարտավորության ծագմանը, այլ միայն տվյալ պարտավորության սահմաններում որոշակի իրավունքներ և պարտականություններ են ստեղծում կողմերի կամար: Այսպես, ապահովագրական դեպքի՝ ջրհեղեղի վրա հասնելն ապահովագրողի մոտ պարտականություն է առաջացնում վճարելու ապահովագրական հատուցում այն անձին, որի գույքը ապահովագրված է եղել ջրհեղեղից, իսկ վերջինիս մոտ ծագում է ապահովագրողից այդպիսի հատուցում պահանջելու իրավունք:

1. Ств У. У. Убергелі, Зн. У. Տոլստոյի խմբ. նշված աշխատությունը, հատոր 1, էջ 482:

2. Ств Гусев А.Н. Гражданское право. Учебник в трех томах. Т.2. М., 2003, էջ 298:



Բացի նշված հիմքերից, պարտավորությունները կարող են ծագել վարչական և դատական ակտերից, ինչպես նաև մի քանի իրավաբանական փաստերի համակցությունից /բարդ իրավաբանական կազմ/: Պարտավորությունների ծագման հիմք հանդիսացող այս իրավաբանական փաստերը /փաստերի համակցությունը/ նույնպես մեր ուսումնասիրության շրջանակից դուրս են: Այդ իսկ պատճառով մանրամասն դրանց չենք անդրադարձնում:

Այսպիսով, պարտավորությունները ծագում են պայմանագրերից, միակողմանի իրավաչափ գործողություններից, միակողմանի գործարքներից, քաղաքացիների և իրավաբանական անձանց այլ գործողություններից, վնաս պատճառելուց և անհիմն հարստացումից, վարչական և դատական ակտերից, մի քանի իրավաբանական փաստերի համակցությունից /բարդ իրավաբանական կազմից/ և այլն:

Պարտավորությունների ծագման հիմքերի այս բազմազանության մեջ անհրաժեշտ է առանձնացնել միակողմանի իրավաչափ գործողությունները:

Միակողմանի իրավաչափ գործողությունները կարող են կատարվել ամենատարբեր նպատակներով՝ ուրիշի գույքին, կյանքին կամ առողջությանը սպառնացող վնասը կանխելու, կորած իրը գտնելու, աշխատանքների կամ այլ արդյունքների շրջանակից լավագույնն ընտրելու և այլն:

Նշված միակողմանի գործողությունները կարող են կատարվել ինչպես քաղաքացիների, այնպես էլ իրավաբանական անձանց կողմից: Դրանք կարող են կրել ոչ միայն փաստական, այլև իրավաբանական բնույթ: Որպես միակողմանի փաստական գործողությունների օրինակներ կարելի է նշել՝ սեփականատիրոջ բացակայությամբ նրան պատկանող կենդանիների նկատմամբ հոգ տանելը, պարզև վճարելու հրապարակային հայտարարության հիման վրա ուրիշի գույքը գտնելուն ուղղված գործողությունները, ուրիշի գույքին, կյանքին կամ առողջությանը սպառնացող վնասը կանխելուն ուղղված գործողությունները և այլն: Միակողմանի իրավաբանական գործողություններ են այլ անձի համար անհրաժեշտ գույքի օտարման նպատակով առանց նրա հանձնարարության գործարքներ կնքելը և կատարելը, երրորդ անձանց հանդեպ ունեցած այլ անձի պարտավորությունները կատարելը, պարզև վճարելու հրապարակային խոստում տալը, հրապարակային մրցույթ հայտարարելը և այլն:

Վերը նշված հիմքերից ծագում է պարտավորությունների նոր խումբ՝ միակողմանի գործողություններից ծագող պարտավորությունները:

## ՉԼՈՒՄ 2. ՄԻԱԿՈՂՄԱՆԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ԾԱԳՈՂ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ, ՊԱՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՏԵՍԱԿՆԵՐԸ

### § 1. Միակողմանի գործողություններից ծագող պարտավորության պատմությունը

Պարտավորական հարաբերությունները գույքի փոխանցման, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման, դրամի վճարման կամ որոշակի գործողություններ կատարելուց ձեռնպահ ունալու հետ կապված հասարակական հարաբերություններ են: Այդ հասարակական հարաբերությունները կարգավորվում են քաղաքացիական իրավունքի նորմերով: Պարտավորական հարաբերությունները նաև քաղաքացիաիրավական հարաբերություններ են: Որպես քաղաքացիաիրավական հարաբերություններ, պարտավորությունները ձևավորվում են քաղաքացիական իրավունքի սուբյեկտների՝ քաղաքացիների, իրավաբանական անձանց, պետության և տեղական ինքնակառավարման /մունիցիպալ/ մարմինների միջև:

Ինչպես քաղաքացիական իրավաբարաբերությունները, այնպես էլ պարտավորություններն ունեն իրենց ծագման հիմքերը: Պարտավորությունները կարող են առաջանալ միայն որոշակի իրավաբանական վստահի կամ մի քանի իրավաբանական փաստերի, այսպես կոչված, բարդ իրավաբանական կազմի առկայության դեպքում: Պարտավորությունների ծագման հիմքերը, և որ նույնն է՝ քաղաքացիական իրավունքների և պարտականությունների ծագման հիմքերը բազմաթիվ են, որոնք կարող են նախատեսված լինել ինչպես օրենքով, այնպես էլ նախատեսված չլինել օրենքով, բայց և չհակասել քաղաքացիական օրենսդրության ընդհանուր սկզբունքներին և իմաստին /Քաղ. օր. 10 հոդվ./: Այսպես, պարտավորությունները կարող են ծագել պայմանագրերից, վարչական և դատական ակտերից, վնաս պատճառելուց և անհիմն հարստացումից, ինչպես նաև անձանց միակողմանի գործողություններից և այլն:

Քաղաքացիաիրավական պարտավորությունների մեծամասնությունը ծագում է պայմանագրերից: Պարտավորությունների ձևավորման այդպիսի միջոցը մեծամասամբ համապատասխանում է տնտեսական շրջանառության զարգացման արդի պահանջմունքներին: Պարտավորությունները կարող են ծագել ոչ միայն պայմանագրերից,

այլ նաև իրավաբանական այլ փաստերից: Պարտավորությունները կարող են առաջանալ անձանց իրավաբանական, նաև փաստական գործողություններից: Որոշ պարտավորություններ էլ առաջանում են քաղաքացիական շրջանառության մասնակիցների միակողմանի գործողություններից, որոնք կատարվում են տարբեր նպատակներով: Այդ միակողմանի գործողություններն այնքան բազմազան են, որ օրենսդիրը դրանք առանձնացրել է երեք խմբի՝ պարզե վճարելու հրապարակային խոստում /Քաղ. օր. 1041-1042 հոդվածներ/, հրապարակային մրցույթ /Քաղ. օր. 1043-1047 հոդվածներ/ և առանց հանձնարարության, ի շահ ուրիշի գործողություններ /Քաղ. օր. 1048-1057 հոդվածներ/: Քաղաքացիաիրավական այս երեք ինստիտուտները կազմում են ՀՀ քաղաքացիական օրենսգրքի ութերորդ բաժինը:

Միակողմանի գործողություններից ծագող պարտավորություններին Հայաստանի քաղաքացիական օրենսդրության մեջ առաջին անգամ է այսքան լայն տեղ տրվել:

Այսպես, Հայկական ԽՍՀ 1923թ. քաղաքացիական օրենսգրքի 269 հոդվածով միայն սահմանված էր, որ «Փոխանորդի գործողությունները փոխանորդյալի համար ստեղծում են անմիջական իրավունքներ և պարտականություններ, եթե այդ գործողությունները կատարվել են լիազորագրի համաձայն կամ *հետագայում փոխանորդյալն իր հավանությունը տվել է*»:

1961թ. ԽՍՀ միության և միութենական հանրապետությունների քաղաքացիական օրենսդրության հիմունքներում և Հայկական ԽՍՀ 1964թ. քաղաքացիական օրենսգրքում միակողմանի գործողություններից ծագող պարտավորությունները ներկայացված էին շատ համառոտ: Միութենական օրենք Հիմունքներում ամրագրված էր միայն այդպիսի պարտավորությունների մեկ տեսակ՝ սպառնացող վտանգից սոցիալիստական սեփականությունը փրկելու հետևանքով ծագող պարտավորությունը: Հայկական ԽՍՀ քաղ. օր. 472 հոդվածի համաձայն սոցիալիստական սեփականությունը փրկելիս քաղաքացու կրած վնասը ենթակա է հատուցման սոցիալիստական այն կազմակերպության կողմից, որի գույքին սպառնում էր վտանգը: Նշված պարտավորությունը ծագում էր միայն սոցիալիստական սեփականությունը փրկելիս: Վերոնշյալ պարտավորության ճակատագիրը կանխորոշված էր մեր երկրի սոցիալ-տնտեսական կառույցների արմատական ձևա-

1. Տես Հայաստանի Հանրապետության քաղաքացիական իրավունք, երկրորդ մաս, Եր. 2001, էջ 589:

վորումով: Ինչպես սոցիալիստական սեփականությունը, այնպես էլ սոցիալիզմի մյուս իդեալական գաղափարները դարձել են պատմական արժեքներ, իսկ պետական սեփականությունը կորցրել է իր աստվածաբանական դիրքը և ներկայումս սեփականության այլ ձևերի հետ պաշտպանվում է հավասարապես: Դրա համար էլ ՀՀ գործող քաղաքացիական օրենսգրքում համանման նորմեր չկան:

Հայկական ԽՍՀ 1964թ. քաղաքացիական օրենսգրքում միակողմանի գործողություններից ծագող պարտավորություններին ավելացել է մրցանակաբաշխությունը, որին նվիրված էր Օրենսգրքի 40-րդ գլուխը՝ 442-446 հոդվածներով: Բացի դրանից, նույն օրենսգրքի «Ներկայացուցչություն և լիազորագիր» գլխի 63 հոդվածը նախատեսում էր չլիազորված անձի կողմից կամ լիազորությունների սահմանազանցումով գործարք կնքելու հետևանքները:

Օ.Ս.Իոֆֆեի կարծիքով, քանի որ պարտավորություններ առաջացնող միակողմանի գործողություններն իրավաչափ են և ունեն իրավաբանական ուղղվածություն, ապա իրենցից ներկայացնում են քաղաքացիաիրավական միակողմանի գործարքներ:

## § 2. Միակողմանի գործողություններից բխող պարտավորության հասկացությունը և ծագման հիմքերը

Միակողմանի գործողություններից ծագող պարտավորությունը պարտավորության մյուս տեսակներից առանձնացնելու, տվյալ պարտավորության տեղը քաղաքացիական իրավունքի համակարգի մեջ որոշելու համար անհրաժեշտ է պարզել քննարկվող պարտավորության ծագման հիմքը:

Պարտավորական իրավահարաբերությունների ծագման հիմքի նշանակությունը դժվար է գնահատել՝ նրա իրավական բնույթը վերլուծելու համար: Մ.Մ.Ազարկովի կարծիքով պարտավորության ծագման հիմքը հանդիսանում է յուրաքանչյուր կոնկրետ պարտավորության անհատականացնող պայմանը<sup>2</sup>: Այս կարծիքի ճշտությունն ակնհայտ է հատկապես այն դեպքերում, երբ այս կամ այն անձանց միջև գոյություն ունեն, ըստ ծագման հիմքի, միմյանցից տարբերվող, բայց իրենց բովանդակությամբ միասեռ պարտավորություններ: Մ.Մ.Ազարկովը նշել է նաև, որ պարտավորությունների ծագման հիմքը որոշում է նրա

1 Տես *Иоффе О. С. Обязательственное право. М., 1975, էջ 778:*

2 Տես *Азарков М. М. Обязательство по советскому гражданскому праву. М., 1940, էջ 24:*

բնույթը<sup>1</sup>: Դրանով էլ հենց բացատրվում է միակողմանի գործողություններից ծագող պարտավորությունների առանձնացումը պարտավորությունների մյուս տեսակներից: Նշված խմբի պարտավորությունները չեն կարող առանձնացվել որևէ այլ հիմքով, օրինակ, նյութական բարիքների բազմազանության, տնտեսական բովանդակության կամ իրավաբանական ուղղվածության հիմքերով: Բացի դրանից, միակողմանի գործողություններից ծագող պարտավորությունների օգնությամբ երբեմն կարելի է հասնել այնպիսի արդյունքի, որը ոչնչով չի տարբերվում պարտավորությունների մյուս տեսակների հետևանքով ստացված արդյունքից: Այսպես, առանց հանձնարարության, ի շահ ուրիշի գործողություններ կատարելը կարող է հանգեցնել նույն արդյունքի, ինչպիսին՝ կողմերի միջև կնքված պայմանագիրը<sup>2</sup>: Այդ տեսակետից նշված բոլոր պարտավորությունները միավորող գլխավոր պայման է ծառայում հենց նրանց ծագման հիմքը, ինչպիսիք հանդիսանում են միակողմանի գործողությունները:

Քննարկվող պարտավորությունների ծագման համար ամենից առաջ հիմք են հանդիսանում այն միակողմանի գործողությունները, որոնք կատարվում են որոշակի իրավական հետևանքներ առաջացնելու հատուկ մտադրությամբ, այսինքն՝ հանդիսանում են գործարքներ: Սակայն, քննարկվող պարտավորության հիմք կարող են լինել ոչ թե բոլոր գործարքները, այլ միայն միակողմանի գործարքները: Այսինքն՝ այն գործարքները, որոնք կնքման համար բավարար է միայն մեկ անձի կամահայտնությունը: Ընդ որում, ոչ բոլոր միակողմանի գործողություններն են հանդիսանում միակողմանի գործարքներ: Այդ իսկ պատճառով անհրաժեշտ է սահմանազատել միակողմանի գործողությունը միակողմանի գործարքից: Ընդհանրապես, գործողությունն անձի ակտիվ վարքագիծն է: Միակողմանի գործողությունը մեկ կողմի կամքով կատարվող գործողությունն է: Գործողությունները կարող են կրել ոչ միայն փաստական, այլև իրավաբանական բնույթ: Մինչդեռ, գործարքն անձի կամային նպատակաուղղված միակողմանի գործողությունն է, որն ուղղված է քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ /քաղաքացիական իրավաբարբերություններ/ առաջացնելուն, փոփոխելուն և դադարեցնելուն: Քաղ. օր. 290 հոդվածի 3-րդ կետի համաձայն օրենքին, այլ իրավական ակտերին կամ կողմերի համաձայնությանը համապատասխան միակողմ գործարք կնքելու համար անհրաժեշտ և բավարար է մեկ կողմի կամքի արտահայտու-

թյունը: Այստեղից հետևում է, որ «գործողությունը», մասնավորապես, «միակողմանի գործողությունը» ավելի լայն հասկացություն է, քան «միակողմանի գործարքը»: Այլ կերպ ասած՝ ցանկացած միակողմանի գործարք միակողմանի գործողություն է, իսկ ցանկացած միակողմանի գործողություն միակողմանի գործարք չէ: Այսպես, առանց տանտիրոջ գիտության կամ նրա հանձնարարության հարևան տան հրդեհը մարելը համարվում է միակողմանի փաստական գործողություն: Մինչդեռ, նշված գործողությունը միակողմանի գործարք չէ: Կամ՝ մրցույթ հայտարարելը միակողմանի գործարք է, իսկ մրցույթին աշխատանք կամ այլ արդյունք ներկայացնելը՝ միակողմանի փաստական գործողություն:

Բացի դրանից, միակողմանի փաստական գործողություն կարող է կատարել ցանկացած, այդ թվում՝ դատարանի վճռով անգործունակ ճանաչված անձը: Սակայն, միակողմանի գործարք կնքել և կատարել կարող է միայն գործունակ անձը: Անգործունակ անձի կնքած գործարքն առ ոչինչ է /Քաղ. օր. 307 հոդվ./:

Ըստ պրոֆեսոր Գ.Ղարախանյանի, միակողմանի գործարքները լինում են հիմնական և օժանդակ: Հիմնական են համարվում այն գործարքները, որոնք առաջացնում են իրավունքներ և պարտականություններ: Իսկ օժանդակ համարվում են այն միակողմանի գործարքները, որոնք փոփոխում և դադարեցնում են իրավահարաբերությունները, բայց նոր իրավունքներ և պարտականություններ չեն առաջացնում<sup>3</sup>:

Ընդհանրապես, միակողմանի գործարքներ են հանդիսանում պարզ և վճարելու հրապարակային խոստում տալը, հրապարակային մրցույթ հայտարարելը, մրցույթը վերացնելը կամ մրցույթի պայմանները փոփոխելը, աշխատանքների գնահատման մասին որոշում ընդունելը, աճուրդի կամ մրցույթի ձևով սակարկություններ կազմակերպելը, մուրհակ կազմելը, չեկ տալը, առանց հանձնարարության, ի շահ ուրիշի կնքված գործարքները, կտակը, ժառանգությունից հրաժարվելը, կտակային հանձնարարականը և այլն: Պրոֆեսոր Վ.Նազարյանի կարծիքով միակողմ գործարք է համարվում նաև լիազորագիրը, որից ծագում է նրանում նշված անձի իրավունքը՝ հանդես գալու լիազորագիր տվող անձի /լիազորողի/ անունից: Ըստ նրա, պայմանագիր կնքելու տուջարկը /օֆերտան/ և այն ընդունելու պատասխանը /ակցեպտը/ նույնպես հանդիսանում են միակողմանի գործարքներ<sup>4</sup>:

1. Տե՛ս Հայաստանի Հանրապետության քաղաքացիական իրավունք: Երկրորդ մաս, Կր., 2001, էջ 573:

2. Տե՛ս «Օրենք և իրականություն» իրավաբանական-լրագրողական հանդես ամսագրի 2001թ. մարտ ամսվա համարը:

1. Տե՛ս Մ.Մ.Ազարկովի նշվ. աշխ., էջ 24:

2. Տե՛ս Исаффе О. С. Обязательственное право. М., 1975, էջ 777:

Վ.Ն.Սմիռնովը նշում է, որ հայտարարված մրցույթում մասնակցելու որոշում ընդունած հեղինակի ստեղծագործական գործունեությունն ունի որոշակի իրավական բնույթ: Մրցույթին մասնակցելու հեղինակի որոշումը, որն արտահայտվել է որևէ օբյեկտիվ ձևով, և մրցույթի պայմաններով սահմանված առաջադրանքի կատարմանն ուղղված նրա ստեղծագործական գործունեության փաստն ինքը ոչ այլ ինչ է, եթե ոչ տարբեր ձևով արտահայտված գործարքում մասնակցություն ունենալու հեղինակի կամք<sup>1</sup>: Դրա հետ կապված ինքը՝ ստեղծագործական գործունեությունը կարող է որակվել որպես իրավահարաբերություն առաջացնելուն ուղղված գործողություն: Քանի որ տվյալ դեպքում գործ ունենք մեկ անձի կամահայտնության հետ, ուստի այդպիսի գործողությունը, ըստ Վ.Ն.Սմիռնովի, պետք է դիտել որպես միակողմանի գործարք<sup>2</sup>: Մրցույթի հայտարարության ժամանակ մրցույթի կազմակերպչի կամահայտնության առկայությունը տվյալ դեպքում չի նշանակում փոխադարձ գործարքի կատարում, քանի որ «պայմանագիրը չի հանդիսանում երկու միակողմանի գործարքների միագումար, բայց իրենից ներկայացնում է երկու կամ ավելի անձանց միասնական կամահայտնություն»<sup>3</sup>:

Բ.Բ.Չերեպախինի կարծիքով միակողմ գործարքի միջոցով քաղաքացիական իրավունքի սուբյեկտը միակողմանի կամահայտնությամբ կամ իրականացնում է իր սուբյեկտիվ իրավունքը, կամ ստանձնում է սուբյեկտիվ պարտականություն՝ դրանով իսկ պարտավորական հարաբերության մյուս մասնակցին օժտելով համապատասխան սուբյեկտիվ իրավունքով<sup>4</sup>:

Կարելի է հետևություն անել, որ միակողմանի գործողություններից ծագող պարտավորությունները բնութագրվում են երկու հիմնական հատկանիշներով՝

1/ միակողմանի պայմանական գործարքով՝ որպես գլխավոր իրավաստեղծ փաստի,

2/ այդ գործարքի իրացման համար իրավաբանական կազմի անհրաժեշտությամբ:

1. *Տե՛ս Տմիրնով В. Н. Конкурс в советском гражданском праве. Л., 1964, էջ 20:*

2. *Տե՛ս նույն տեղում, էջ 21:*

3. *Տե՛ս նաև Красавчиков О. А. Юридические факты в советском гражданском праве. Госториздат, М., 1958, էջ 113:*

4. *Տե՛ս Черепяхин Б. Б. Правопреемство по советскому гражданскому праву. М., 1962, էջ 29:*

Ինչպես միակողմանի գործարքը, այնպես էլ իրավաչափ նպատակաուղղված փաստական գործողություններն ինքնին չեն առաջացնում պարտավորաիրավական հարաբերություններ, այլ այդպիսիք կարող են առաջացնել իրավաբանական այլ փաստերի հետ համատեղ<sup>1</sup>: Արդյունքում ձևավորվում է բարդ իրավաբանական կազմ, որի առանձին տարրերը կարող են նույնիսկ գործարքներ չլինել: Այդ կազմի մեջ մտնող իրավաբանական փաստերը կարող են ինչպես գործարքի հետևանք լինել, այնպես էլ նախորդել նրան: Այսպես, պարզև մշակված հրապարակային խոստումը միակողմանի գործարք է, իսկ խոստման հայտարարության մեջ պայմանավորված արդյունքին հասնելը՝ միակողմանի փաստական գործողություն: Ի դեպ, համապատասխան պարտավորություն ծագում է նշված երկու իրավաբանական փաստերի /բարդ իրավաբանական կազմի/ միաժամանակյա առկայության դեպքում:

Միայն մրցույթի մասին հայտարարության՝ որպես միակողմանի գործարքի, առկայությունը մրցութային իրավահարաբերություն, առավել ևս՝ մրցութային պարտավորական իրավահարաբերություն առաջացնել չի կարող: Մրցույթի հայտարարության հիման վրա որևէ մասնակցի կողմից աշխատանք ներկայացնելու դեպքում այդ մասնակցի և մրցույթի կազմակերպչի միջև առաջանում է մրցութային իրավահարաբերություն: Իսկ երբ այդ աշխատանքը մրցույթի հայտարարության պայմաններով քննարկվում և գնահատվում է, ապա գնահատման մասին որոշում ընդունվելու պահից աշխատանքի հեղինակի և մրցույթի կազմակերպչի միջև ծագում է մրցութային պարտավորական իրավահարաբերություն: Փաստորեն, մրցութային պարտավորական իրավահարաբերության հիմքում ընկած է բարդ իրավաբանական կազմը, որն իր մեջ ընդգրկում է միմյանց փոխպայմանավորող, միակողմանի գործողություններ հանդիսացող երեք իրավաբանական փաստեր՝ մրցույթի մասին հայտարարությունը, մրցութային աշխատանք ներկայացնելը և այդ աշխատանքի գնահատման մասին որոշում ընդունելը: Այդ փաստերից յուրաքանչյուրի բացակայությունն ինքնուրուիքյան բացառում է մրցութային պարտավորական իրավահարաբերության առաջացման հնարավորությունը:

Հնարավոր է այնպիսի իրավիճակ, երբ, մինչև պարտավորությունների ծագումը, նրա ապագա մասնակիցները կնքեն ինչպես միակողմանի, այնպես էլ երկկողմանի բնույթի մի շարք գործարքներ: Ի դեպ,

1. *Տե՛ս Օ.Ս.Իոնֆեի նշված աշխատությունը, էջ 779:*

դրանից չի հետևում, որ պարտավորությունը ծագում է բարդ իրավաբանական կազմից, որի տարրն է համարվում նշված գործարքներից յուրաքանչյուրը: Այսպես, պայմանագրի կնքումը կատարվում է մեկ անձի ակցեպտի և իրեն հասցեագրված մեկ այլ անձի օֆերտայի հիման վրա: Արդյունքում նշված անձանց միջև ծագում է պարտավորություն: Չի կարելի համարել, որ տվյալ պարտավորության ծագման հիմք է հանդիսանում բարդ իրավաբանական կազմը՝ իր մեջ ընդգրկելով օֆերտան և ակցեպտը: Ինչպես իրավագիտորեն նշել է Ս.Ս.Ալեքսեյևը՝

«Իրավաբանական հետևանքները, որոնց ուղղված են օֆերտան և ակցեպտը, օժտված են ինքնուրույն իրավական նշանակությամբ, շոշափելով քաղաքացիաիրավական պայմանագրի կնքման հետ կապված հարաբերությունները, նրանք գոյություն են ունենում այնքան ժամանակ, քանի դեռ վերջինս կնքված չէ: Երբ որ պայմանագիրը կնքվի, միակողմանի գործարքները, կապված նրանց կնքման հետ, կլանվում են պայմանագրի մեջ»:

Այսպիսով, այս կամ այն միակողմանի գործարքը ծառայում է որպես պարտավորության ծագման հիմք, այն հետագայում կարող է նաև գոյություն ունենալ տվյալ գործարքի բացակայության դեպքում: Եթե դա չկա, ապա լավագույն դեպքում խոսք կարող է լինել միայն տվյալ գործարքից անկախ գոյություն ունեցող պարտավորական իրավահարաբերությունների իրացման մասին:

Այս բոլորից հետևում է, որ միակողմանի գործողություններից ծագող պարտավորությունները բնութագրվում են հետևյալ հատկանիշներով.

1/ նշված պարտավորությունները կազմում են արտապայմանագրային պարտավորությունների առանձին խումբ.

2/ ծագում են միակողմանի գործարքների ու միակողմանի իրավաչափ փաստական գործողությունների համակցությունից՝ բարդ իրավաբանական կազմից:

**Այսպիսով, միակողմանի գործողություններից ծագող պարտավորությունը միակողմ գործարքների ու միակողմանի իրավաչափ փաստական գործողությունների համակցության հիման վրա առաջացող արտապայմանագրային պարտավորություն է:**

1. Ств А.А. Алексеев С. С. Односторонние сделки в механизме гражданско-правового регулирования. Сборник научных трудов. Вып. 13, Свердловск. 1970, 59-60 էջերը:

### § 3. Միակողմանի գործողություններից ծագող պարտավորությունների տեսակների համառոտ բնութագիրը

Իրավաբանական գրականության և քաղաքացիական օրենսդրության մեջ միակողմանի գործողություններից ծագող պարտավորությունները բաժանվում են տեսակների:

Պրոֆեսոր Օ.Ս.Իոֆֆեն առանձնացնում էր միակողմանի գործողություններից ծագող պարտավորությունների երեք տեսակ՝

ա/ առանց հանձնարարության ուրիշի գործերը վարելը.

բ/ կտակային հրաժարականը /լեգատ/.

գ/ պարզ վճարելու հրապարակային խոստումը:

Ոնդ որում, նա մրցույթը համարում էր պարզ վճարելու հրապարակային խոստման տարատեսակ:

Ներկայումս միակողմանի գործողություններից ծագող պարտավորություններն իրավամտածողության նոր տեսանկյունից են դիտարկվում: Նշված պարտավորությունները դասվում են արտապայմանագրային պարտավորությունների տիպին և կազմում են պարտավորական իրավահարաբերությունների նոր խումբ՝ իրենց մեջ ընդգրկելով այդպիսի պարտավորությունների երեք տեսակ՝ պարզ վճարելու հրապարակային խոստում, հրապարակային մրցույթ և առանց հանձնարարության, ի շահ ուրիշի գործողություններ:

Այս նույն սկզբունքով առաջնորդվել է նաև մեր օրենսդիր մարմինը՝ «Ազգային ժողովը. 1998թ. մայիսի 5-ին Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգիրքն ընդունելիս նրա ութերորդ բաժնում նախատեսել է միակողմանի գործողություններից ծագող պարտավորությունների վերոհիշյալ երեք տեսակները:

Ի տարբերություն Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի, Ռուսաստանի Ղաշնության քաղաքացիական օրենսգրքի երկրորդ մասը<sup>2</sup>, որն ամբողջությամբ նվիրված է պարտավորությունների բոլոր տեսակներին, համակարգված տեսքով և որոշակի հերթականությամբ չի կարգավորել միակողմանի գործողություններից ծագող պարտավորությունները: Այսպես, հանձնարարության պայմանագրին հաջորդող 50-րդ գլխում /ՌԴ քաղ. օր. 980-989 հոդվածներ/ նախատեսվել է առանց հանձնարարության, ի շահ ուրիշի գործողու-

1. Ств О.С. Иоффеի նշված աշխատությունը, էջ 780:

2. Ռուսաստանի Ղաշնության Պետական Ղումայի կողմից ընդունվել է 1995թ. դեկտեմբերի 22-ին:

թյուններից ծագող պարտավորությունը, իսկ 56 և 57-րդ գլուխները համապատասխանաբար հատկացվել են պարզ և վճարելու հրապարակային խոստումից և հրապարակային մրցույթից ծագող պարտավորություններին:

Չնայած << քաղաքացիական օրենսգրքը միակողմանի գործողություններից ծագող պարտավորությունները կարգավորելիս առանձնացրել է այդպիսի պարտավորությունների երեք տեսակ՝ պարզ և վճարելու հրապարակային խոստումը, հրապարակային մրցույթ կազմակերպելը և առանց հանձնարարության, ի շահ ուրիշի գործողություններ կատարելը, սակայն իրավաբանական գրականության մեջ միակողմանի գործողություններից ծագող պարտավորությունների խմբի հետ ուսումնասիրվում է նաև խաղեր և գրազներ անցկացնելու պարտավորությունը՝:

Պրոֆեսոր Գ.Ղարախանյանի և այլ հեղինակների կարծիքով անկախ քաղաքացիական օրենսգրքերի համակարգից՝ միակողմանի գործողություններից ծագող պարտավորությունները պետք է ուսումնասիրվեն միասին և որոշակի հերթականությամբ<sup>1</sup>:

Միակողմանի գործողություններ են առանց շահագրգիռ անձի հանձնարարության, նրա այլ ցուցումի կամ նախապես տրված համաձայնության, գործողությունները, որոնց նպատակն է կանխել այդ անձի կյանքին, առողջությանը կամ գույքին սպառնացող վնասը, կատարել նրա պարտավորությունները կամ պաշտպանել նրա այլ իրավաչափ շահերը:

Այս միակողմանի գործողություններից ծագում է համապատասխան պարտավորություն, հանդես են գալիս նրա սուբյեկտները՝ հետտորը, ի շահ որի կատարվում են այդ միակողմանի գործողությունները, և դոմինուսը, ով կատարում է դրանք: Նշված պարտավորությունը հռոմեական իրավաբաններն անվանում էին պայմանագրային<sup>2</sup>:

Ըստ այդ պարտավորության, ի շահ ուրիշի գործած անձը /դոմինուսը/ ձեռք է բերում իր կատարած անհրաժեշտ ծախսերը և կրած իրական վնասը շահագրգիռ անձի /հետտորի/ կողմից հատուցելու իրավունք /Քաղ. օր. 1052 հոդվ. 1-ին կետ/: Իսկ եթե ի շահ ուրիշի դոմինուսի կատարած միակողմանի գործողությունները հանգեցրել են դրական արդյունքի, ապա նա ձեռք է բերում վարձատրություն ստանալու

իրավունք, եթե նման իրավունքը նախատեսված է օրենքով, շահագրգիռ անձի հետ համաձայնությամբ կամ գործարար շրջանառության սովորույթներով /Քաղ. օր. 1053 հոդվ./: Պարտավորության այս տեսակը ևս դասվում է արտապայմանագրային պարտավորությունների տիպին: Տվյալ արտապայմանագրային պարտավորությունը կարող է վերածվել պայմանագրային պարտավորության, եթե հետտորը հավանություն տա իր օգտին դոմինուսի կատարած գործողություններին: Հավանություն տալու պահից սկսած՝ նրանց միջև ծագած հարաբերությունները կարգավորվում են հանձնարարության կամ այն պայմանագրի մասին կանոններով, որի էությանը համապատասխանում են կատարված գործողությունները:

<< քաղաքացիական օրենսգրքում նախատեսված միակողմանի գործողություններից ծագող պարտավորությունների թվում կարևոր տեղ են զբաղեցնում պարզ և վճարելու հրապարակային խոստումից և հրապարակային մրցույթից ծագող պարտավորությունները: Նշված պարտավորությունների էությունը կայանում է նրանում, որ անձն իր վրա պարտականություն է վերցնում պարզ և վճարելու նրան, ով կհասնի պայմանավորված արդյունքին: Ընդ որում, պարզև կարող է խոստացվել նաև երկակի արդյունքի հասնելու համար: Այդպիսի արդյունքների կարող են հասնել տարբեր անձինք՝ միմյանցից անկախ: Որպես կանոն, գոյություն ունի օբյեկտիվ հնարավորություն՝ արդյունքների մեջ լավագույնը որոշելու համար այս կամ այն շահախնչների սահմանում: Հակառակ դեպքում կստացվեն իրենց տեսակի մեջ համանման արդյունքներ, կամ էլ կարող են լինել մի քանի անձանց կողմից միաժամանակ ստեղծված արդյունքներ: Այսպես, կորած իրը գտնել կարող է միայն մեկ անձ, այն չի կարող կատարվել լավ կամ վատ: Ընդհանրապես, անհրաժեշտ տեղեկություններ հաղորդել կարող է յուրաքանչյուրը, ում դրանք այս կամ այն ձևով հայտնի են դարձել: Եթե այդպիսի անձինք մի քանիսն են և հնարավոր չէ որոշել, թե ով է առաջինը կատարել համապատասխան գործողությունը, ապա նրանցից յուրաքանչյուրը կարող է հավակնել հայտարարված պարզև մի մասի վրա՝ անկախ հաղորդած տեղեկությունների լրիվությունից և այլ որակներից: Այդ տեսանկյունից անհրաժեշտ է տարբերել պարզ և վճարելու հրապարակային խոստումը՝ որպես տեսակային հասկացություն, և հրապարակային մրցույթը՝ որպես նրա տարատեսակ: Վերջինիս հետևանքով ծագող պարտավորությունները պայմանավորված են ոչ միայն ցանկալի արդյունքի հասնելու հետ, այլ այնպիսի արդյունքի, որը լավագույնը կձանաչվի բոլոր արդյունքների մեջ:

1. Տե՛ս Ա.Պ.Սերգեյևի, Յու.Կ.Տիլստոյի խմբագրությամբ նշվ. աշխ., 705-706 էջերը, տե՛ս նաև *Гражданское право*, Т.2, изд. "БЕК", М., 1996, էջ 670:

2. Տե՛ս Հայաստանի Հանրապետության քաղաքացիական իրավունք: Երկրորդ մաս, Եր., 2001, էջ 574:

3. Տե՛ս *Римское частное право*. Учебник под ред. И.Б.Новикова, И.С.Перетерского. М., 1994, էջ 502:

### ԳԼՈՒԽ 3. ՊԱՐԳԵՎ ՎՃԱՐԵԼՈՒ ՀՐԱՊԱՐԱԿԱՑԻՆ ԽՈՍՏՈՒՄ

#### § 1. Պարզև վճարելու հրապարակային խոստման հասկացությունը և պայմանները

Այս կամ այն աշխատանքը կատարելու, կամ ծառայություն մատուցելու համար դրանք կատարողների հետ սովորաբար կնքվում է համապատասխան պայմանագիր՝ նախապես կամ հետագայում վճարելու պայմանով: Երբեմն ցանկալի արդյունքին ավելի շուտ հասնելու համար նպատակահարմար է աշխատանքի կատարմանը կամ ծառայության մատուցմանը մասնակից դարձնել անձանց ավելի լայն շրջանակի՝ խոստանալով որոշակի պարզև տալ նրան, ով կհասնի այդ արդյունքին:

Այսպես, շուկայում գնումներ կատարելու ժամանակ անփութության հետևանքով մի քաղաքացի կորցրել է իր դրամապանակը: Այն գտնելու համար այդ քաղաքացին կարող էր որոնումներ կատարելու հանձնարարություն տալ մի քանի անձանց: Այդ դեպքում որոնումների ելքն ամբողջությամբ կախված կլինի միայն այդ անձանց ձեռնարկած գործողություններից: Կորցրած իրը շուտ գտնելու համար այդ քաղաքացին որոշեց հայտարարություն տալ՝ խոստանալով դրամական պարզև վճարել այն անձին, ով կգտնի կորած դրամապանակը:

Գովազդային հոլովակներում, ինտերնետ կայքերում, թերթերում, ամսագրերում, շենքերի, շինությունների պատերին և ցանկապատերին փակցված հայտարարություններում մենք հաճախ կարդում ենք, իսկ հեռուստատեսությամբ և ռադիոյով լսում այս տիպի հայտարարություններ. «Կիրակի օրը «Կիլիկիա» ավտոկայարանի կանգառում կորել է պայուսակ՝ կարևոր փաստաթղթերով, գտնողին խնդրում ենք զանգահարել... հեռախոսահամարներով, երաշխավորում ենք պարզևատրություն»: Այսպիսի հայտարարությունները ոչ այլ ինչ են, եթե ոչ պարզև վճարելու հրապարակային խոստում:

Պարզև վճարելու հրապարակային խոստումը, որպես միակողմանի գործողություններից ծագող պարտավորության ինքնուրույն տեսակ, նոր ինստիտուտ է Հայաստանի քաղաքացիական օրենսդրության և մասնագիտական գրականության մեջ: Հայկ. ԽՍՀ 1923թ. և Հայկ. ԽՍՀ 1964թ. քաղաքացիական օրենսգրքերը պարզև վճարելու հրապարակային խոստումից ծագող հարաբերությունները կարգավորող նորմեր չեն պարունակել: Ընդ որում, նախկին ԽՍՀՄ մյուս հանրապետու-

թյունների /քաղաքացիական Սովորական ԽՍՀ/ քաղաքացիական օրենսգրքերը ևս պարզև վճարելու հրապարակային խոստման հետ կապված հարաբերություններ չեն կարգավորել: Սակայն, այդպիսի պարզև խոստանալու դեպքում օրենքի անալոգիայի միջոցով կիրառվում էր Հայկական ԽՍՀ 1964թ. քաղաքացիական օրենսգրքի մրցանակաբաշխության մասին կանոնները /442-446 հոդվածներ/:

«Հ գործող քաղաքացիական օրենսգիրքը պարզև վճարելու հրապարակային խոստումից ծագող պարտավորությանը նվիրել է 57-րդ գլուխը /1041-1042 հոդվածներ/:

Քաղ. օր. 1041 հոդվածի 1-ին կետը սահմանում է. «Այն անձը, ով հրանարակայնորեն խոստացել է որոշակի օրինաչափ՝ գործողություն կատարելու համար վարձատրելու կամ պարզև տալու /պարզև վճարելու/ մասին, պարտավոր է խոստացված պարզև վճարել հայտարարության մեջ նշված ժամկետում այդ գործողությունը կատարած անձին, որը, մասնավորապես, գտել է հայտարարություն արած անձի կորցրած գույքը՝ կամ տեղեկություններ է հայտնել դրա վերաբերյալ»:

Սակայն պարզև վճարելու հրապարակայնորեն տրված ոչ բոլոր խոստումները կարող են իրավաբանական նշանակություն ունենալ:

Որպեսզի պարզև վճարելու խոստումն իրավաբանորեն պարտադիր լինի և խոստում տված ու խոստմանն արձագանքած անձանց համար առաջացնի քաղաքացիական հետևանքներ, այն պետք է ունենա հետևյալ հատկանիշները.

ա/ պարզև վճարելու խոստումը պետք է տրվի հրապարակայնորեն, հասցեագրված լինի անձանց անորոշ շրջանակի: Քանի որ նման խոստումը հասցեագրված է ոչ թե կոնկրետ սուբյեկտի, այլ անձանց անորոշ շրջանակի, և որ խոստմանն արձագանքել կարող է ցանկացած անձ, բայց վարձատրությունը պետք է տրվի միայն նրան, ով կհաս-

1. Պարզև վճարելու հրապարակային խոստման վերոնշյալ լեզայ ընդհանուր մեջ նշված «օրինաչափ գործողություն» քաղաքացիականությունը, մեր կարծիքով, նորմի հմաստն աղավաղում է: Իրավաբանական նշանակություն ունի ոչ թե «օրինաչափ գործողություն», այլ «իրավաչափ գործողություն» եզրույթը: Բացի այդ, ռուսերեն «правомериое» բառը հայերեն թարգմանվում է «իրավաչափ»: Ուստի, պետք է լինի ոչ թե օրինաչափ, այլ իրավաչափ գործողություն: Քաղաքացիական օրենսդրությանը և իրավաբանական գրականությանը հայտնի են իրավաչափ և ոչ իրավաչափ գործողություններ հասկացությունները /Տե՛ս, օրինակ, Բարսեղյան Տ.Կ. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական իրավունք, առաջին մաս, Եր., 2006, 69-70 էջերը/:

2. Մենք բաժանում ենք այն հեղինակների կարծիքը, որոնք ընդունում են ոչ թե «գույք», այլ «իր» եզրույթը /Այդ մասին մանրամասն տե՛ս Բարսեղյան Տ. Կ. 2006թ. Իրատ. նշվ. աշխ., 179-180 էջերը/: Աշխատության հետագա շարադրանքում օգտագործվում է «իր», «իրային իրավունք» եզրույթները:

նի անհրաժեշտ արդյունքի, ուստի պարզ վճարելու խոստումը, ինչպես իրավացիորեն նկատում է պրոֆ. Գ. Ղարախանյանը, պետք է դիտել որպես միակողմ գործարք, այլ ոչ թե պայմանագիր կնքելու առաջարկություն՝ օֆերտա<sup>1)</sup>։ Եթե պարզ վճարելու խոստումը հասցեագրված լինի կոնկրետ անձի կամ անձանց խմբի, ապա կողմերի հարաբերությունները կկրեն պայմանագրային բնույթ։ Այսպես, եթե բերված օրինակում այդ քաղաքացին կորած դրամապանակը գտնելու որոնումները հանձնարարել այդ նպատակով առանձնացված որոնողական խմբին, ապա նրանց հարաբերությունները կկրեն հանձնարարության բնույթ։ Այդ դեպքում կողմերի հարաբերությունների նկատմամբ կկիրառվեն Քաղաքացիական օրենսգրքի հանձնարարության պայմանագրի մասին կանոնները /Քաղ. օր. 782-790 հոդվածներ/։

Պարզ վճարելու հրապարակային խոստումն անհատականացված չէ, այսինքն՝ այն հասցեագրված է ոչ թե կոնկրետ, այլ ցանկացած անձի, ով կկատարի հայտարարության մեջ նշված գործողությունը։ Բացառություն են կազմում՝

1/ անձինք, ովքեր իրենց հակահրավակյան վարքագծով հրապարակային պարզ վճարելու նախադրյալներ են ստեղծել։ Օրինակ՝ պարզևի հավակնել չեն կարող այն անձինք, ովքեր պարզ ստանալու նպատակով հափշտակել են ուրիշ անձի իրերը։

2/ անձինք, ովքեր գտել են կորած իրերը գտանքի մասին Քաղ. օր. նորմերի խախտմամբ։

3/ պաշտոնատար անձինք, որոնց համար հայտարարությամբ պայմանավորված գործողության կատարումը համարվում է իրենց ծառայողական պարտականությունը։

բ/ հրապարակայնորեն խոստացված վարձատրությունը /պարզևը/ պետք է գույքային բնույթ կրի, այսինքն՝ ունենա դրամական կամ այլ արժեքային արտահայտություն։ Գույքային բովանդակություն չունեցող պարզևը քաղաքացիահրավակյան պարտավորություն չի առաջացնում։ Օրինակ՝ բարոյական բնույթի արժեքներ՝ գովասանագիր, պատվոգիր, դիպլոմ, պատվավոր կոչման շնորհում և այլն։ Օրենքը չի նշում, որ վարձատրությունը /պարզևը/ պետք է կրի բացառապես գույքային բնույթ և պարտադիր չէ, որ այն սոսկ դրամական բնույթ ունենա։ Օրինակ՝ հայտարարության մեջ նշված արդյունքին հասնելու համար կարելի է վարձատրել արժեքավոր նվերով, զբոսաշրջության ուղե-

գրով, որևէ արժեթղթով և այլն, կամ գույքային բնույթի պարզևի հետ տրվի բարոյական բնույթի արժեքներ,

գ/ պարզ վճարելու հրապարակային խոստման անհրաժեշտ տարր է հանդիսանում հրապարակային հայտարարության մեջ այն արդյունքի նշումը, որին պետք է հասնել՝ պարզ ստանալու պայմանով։ Պարզևը պետք է խոստացվի բացառապես իրավաչափ գործողություն կատարելու համար։ Օրինակ՝ չի կարելի պարզ վճարելու խոստում տալ որևէ անձի գույքին կամ առողջությանը վնաս պատճառելու համար։ Որպես կանոն, հայտարարության մեջ նշված գործողությունը կատարելու պահանջը պետք է ուղղված լինի ոչ թե մեկ անձի, այլ՝ անորոշ թվով անձանց։ Եթե անձի կողմից որոշակի արդյունքի հասնելու համար պարզ վճարելու խոստումը չի առաջացնում Քաղ. օր. 1041 հոդվածով նախատեսված պարտավորություն, քանի որ բացակայում է պարզ վճարելու խոստման հրապարակայնությունը։

Պարզ վճարելու հրապարակային խոստման հայտարարության մեջ նշված արդյունքը պետք է այնպիսին լինի, որ իրավաչափ գործողությունների կատարմամբ օբյեկտիվորեն հնարավոր լինի հասնել դրան։ Հակառակ դեպքում նման խոստումն իրավական հետևանքներ առաջացնել չի կարող,

դ/ պարզ վճարելու խոստումը պետք է հնարավորություն տա որոշելու, թե ում կողմից է այն խոստացվել, այսինքն՝ պարզ վճարելու հայտարարությունից պետք է պարզորոշ երևա, թե ով է պարզևի խոստում տալիս։ Խոստմանն արձագանքած անձն իրավունք ունի պահանջել պարզևի խոստման գրավոր հաստատում։ Հակառակ դեպքում նա կրում է այդպիսի պահանջը չներկայացնելու հետևանքների ռիսկը, եթե պարզվում է, որ պարզ վճարելու հայտարարությունն իրականում չի արվել նրանում նշված անձի կողմից /Քաղ. օր. 1041 հոդվածի 2-րդ կետ/։

Թվարկված հատկանիշները չունեցող պարզ վճարելու հրապարակային խոստումը չի առաջացնում Քաղ. օր. 1041 հոդվածով նախատեսված պարտավորություն։

Այս ամենից հետևում է, որ պարզ վճարելու հրապարակային խոստումը **կոնկրետ անձի**՝ անձանց անորոշ շրջանակի հասցեագրված դիմում է՝ որոշակի **իրավաչափ** արդյունքի հասնելու համար գույքային վարձատրություն այն անձին տալու մասին, ով կհասնի այդ արդյունքին։

1. Տե՛ս Հայաստանի Հանրապետության քաղաքացիական իրավունք։ Երկրորդ մաս, եր., 2001, էջ 576։

1. Տե՛ս Гражданское право. Т.2. Учебник под ред. Ю.К.Толстого, А.П.Сергеева, М., 1999, էջ 687։



Պարզև վճարելու հրապարակային խոստումը տարբերվում է նվիրատվություն կատարելու խոստումից: Պարզև խոստումն ուղղված է անորոշ շրջանակի անձանց և խոստում տված անձը չի կարող իմանալ, թե ով կարող է հասնել պայմանավորված արդյունքին: Մինչդեռ նվիրատվություն անելու խոստումն ուղղվում է կոնկրետ անձի կանձանց և խոստում տվող անձը դա կատարում է առանց որևէ պայմանի և անհատույց: Բացի դրանից, նվիրատվություն անելու խոստումը պետք է ընդունի նվիրատուն և տա իր համաձայնությունը, որպեսզի կողմերի միջև ծագի պարտավորություն: Իսկ սա արդեն երկու կողմերի համաձայնություն է՝ պայմանագիր: Այնինչ, պարզև վճարելու հրապարակային խոստումը միակողմանի գործարք է:

Արդյունքը, որին հասնելու համար հրապարակայնորեն պարզև խոստացվել, կարող է լինել տարբեր բնույթի: Ղասակարգման տեսանկյունից ելնելով՝ կարելի է միմյանցից տարբերել հետևյալ արդյունքները՝ իր տեսակի մեջ եզակի և ըստ որակի համեմատելի: Այս հիմքի վրա էլ տարբերվում են պարզև վճարելու հրապարակային խոստումը և նրա տարատեսակը հանդիսացող հրապարակային մրցույթը: Այսպես, պարզև վճարելու հրապարակային խոստումը հասցեագրված է անձանց անորոշ շրջանակի և ենթադրում է ավելի լայն շրջանակի գործողությունների կատարում: Մինչդեռ, ինչպես կտեսնենք հետագայում, հրապարակային մրցույթը միշտ հետապնդում է հանրորեն օգտակար նպատակներ ու կարող է լինել նաև փակ՝ ուղղված անձանց որոշակի շրջանակի: Պարզև վճարելու հրապարակային խոստման դեպքում պարզև չափը կարող է նախօրոք որոշված չլինել, սակայն հրապարակային մրցույթի պարագայում պարզև չափը և տեսակը միշտ խստորեն որոշված է: Օրենքը թույլատրում է հրապարակայնորեն պարզև խոստանալ առանց ժամկետը նշելու: Ի դեպ, աշխատանքների կատարման ժամկետը համարվում է հրապարակային մրցույթի հայտարարության պարտադիր պայման: Պարզև վճարելու հրապարակային խոստման դեպքում պարզև կարող են ստանալ անհրաժեշտ գործողությունները միմյանցից անկախ կատարած մի քանի անձինք: Այնուհանդերձ, հրապարակային մրցույթում հաղթողը միշտ մեկն է, բացառությամբ այն դեպքերի, երբ աշխատանքը համատեղ կատարել են մի քանի անձինք: Ընդհանուր կանոնի համաձայն, պարզև խոստումը չի կարելի վերացնել, իսկ այն դեպքերում, երբ խոստումը վերացնելը թույլատրվում է, ապա դա կարելի է կատարել ցանկացած ժամանակ՝ պահպանելով այն վերացնելու ձևը: Ի հակառակ դրան՝ հրապարակային մրցույթի կազմակերպիչը կարող է վե-

րացնել մրցույթը միայն աշխատանքների ներկայացման համար սահմանված ժամկետի առաջին կեսի ընթացքում: Բացի դրանցից, հրապարակային խոստման պայմանները փոփոխելու հնարավորություն օրենքով նախատեսված չէ, մինչդեռ մրցույթի պայմանները փոփոխելը թույլատրվում է մրցույթը վերացնելու համար նշված ժամկետի ընթացքում:

Պարզև վճարելու խոստումը կարող է արվել տարբեր ձևերով՝

1/ գրավոր, օրինակ՝ թերթերում, ամսագրերում, լրագրերում, հայտարարությունը պատերին փակցնելու միջոցով և այլն:

2/ բանավոր, օրինակ՝ հեռուստատեսությամբ, ռադիոյով, հրապարակային ելույթներում և այլն: S

Կարևոր է, որ պարզև վճարելու հրապարակային խոստումը հասանելի լինի անորոշ շրջանակի անձանց, որոնք անհրաժեշտության դեպքում կարող են պահանջել նրա գրավոր հավաստումը:

Քանի որ պարզև վճարելու հրապարակային խոստումը համարվում է միակողմանի գործարք, ուստի, մեր կարծիքով, նրա վրա պետք է տարածվեն գործարքների, այդ թվում՝ գործարքի ձևի մասին Քաղ. օր. կանոնները: Օրինակ, եթե հրապարակայնորեն խոստացվի որոշակի գործողություն կատարելու համար բնակարան, շենք, շինություն կամ այլ անշարժ գույք, ապա այդ հայտարարությունը պետք է արվի լրավոր ձևով և վավերացվի նոտարական կարգով: Նշված ձևը չպահպանելը կհանգեցնի գործարքի անվավերության: Նման գործարքն առ ոչինչ է /Քաղ. օր. 300 հոդվ. 1-ին կետ/:

## § 2. Պարզև վճարելու հրապարակային խոստումից և նրան ուղղված արձագանքից ծագող պարտավորության հասկացությունը և տարրերը

Ընդհանրապես, պարտավորությունները ծագում են պայմանագրերից, վարչական և դատական ակտերից, վնաս պատճառելուց և անհիմն հարստացումից, քաղաքացիների և իրավաբանական անձանց այլ գործողություններից, միակողմանի գործարքներից և այլն: Պարզև վճարելու հրապարակային խոստումն իր իրավաբանական բնույթով համոզմանում է միակողմանի գործարք:

Հանդիսանալով միակողմանի գործարք՝ պարզև վճարելու հրապարակային խոստումն ինքն իրեն ոչ մի իրավունք, առավել ևս՝ պարտականություններ չի առաջացնում, քանի որ պարտավորությունը միշտ էլ առաջանում է կոնկրետ անձանց միջև, իսկ պարզև վճարելու

իրապարակային խոստումը հասցեագրված է անձանց անորոշ շրջանակի: Ճիշտ է՝ հնարավոր է նաև իրավահարաբերության առաջացում անձանց անորոշ շրջանակի հետ, որոնք պարտավորվում են ծեռնպահ մնալ ուրիշի իրավունքների դեմ ոտնձգությունից: Եվ ինչպես նշում է պրոֆ. Օ.Ս.Իոֆֆեն, այդպիսի հնարավորություն գոյություն ունի ոչ թե հարաբերական /պարտավորական/, այլ բացարձակ /օրինակ՝ սեփականության իրավահարաբերությունը/ իրավահարաբերությունների համար<sup>1</sup>: Բացարձակ իրավահարաբերությանը բնութագրական է այն, որ իրավագոր անձին հակադրվում են անորոշ շրջանակի պարտավոր անձինք: Վ.Ն.Սմիրնովը գտնում է, որ պարզև վճարելու հրապարակային խոստումը ևս իրավահարաբերություն է առաջացնում ցանկացածի և յուրաքանչյուրի հետ<sup>2</sup>: Այս դեպքում, ընդհակառակը, պարտավոր անձին կհակադրվեն անորոշ շրջանակի իրավագոր անձինք: Ի դեպ, մեր կարծիքով, անորոշ շրջանակի իրավագոր անձանց հակադրումը մեկ պարտավոր անձի հետ բացառվում է՝ քննարկվող քաղաքացիաիրավական հարաբերության բնույթից ելնելով: Պետք է հստակ հիշել, որ պարզև վճարելու հրապարակային խոստումը ոչնչով չի իրավագորում նրանց, ում այն հասցեագրված է: Պարզև խոստացողի նպատակն այն է, որ որևէ մեկը կհասնի հայտարարության մեջ նշված արդյունքին, և ինքն էլ խոստացված պարզև կտա նրան: Կողմերի մոտ համապատասխան իրավունքներ և պարտականություններ ծագում են միայն խոստման մեջ նշված արդյունքին հասնելու դեպքում: Այդպիսի խոստում տված անձը ևս կապված է նրա հետ միայն պայմանով, եթե որևէ մեկը կհասնի այն արդյունքին, որի համար խոստացված է պարզև: Միայն այդ դեպքում է պարզև խոստացած անձի մոտ պարտականություն ծագում՝ համապատասխան պարզև վճարելու այն անձին, ով հասել է պայմանավորված արդյունքին, իսկ վերջինս ձեռք է բերում խոստացված պարզև խոստում տված անձից պահանջելու իրավունք: Այդ պահին էլ ծագում է համապատասխան պարտավորությունը, հանդես է գալիս նրա մասնակիցների կոնկրետ կազմը, իրացվում են իրավունքները և պարտականությունները: Հետևաբար, պարզև վճարելու հրապարակային խոստումը կարելի է դասել միակողմանի պայմանական գործարքների թվին: Ի դեպ, պայմանական են համարվում այն գործարքները, որոնցում կողմերի իրավունքների և պարտականությունների ծագումը կամ դադար-

1. Տես Իոֆֆե Օ. Ս. Обязательственное право. М., 1975, էջ 784:

2. Տես Смирнов В. Н. Конкурс в советском гражданском праве. Л., 1964, էջ 13:

ումը կախվածության մեջ է գտնվում այնպիսի հանգամանքից, որի էությունը հավանականությունը գործարքի կնքման պահին կու՛մեղին հայտնի չէ<sup>3</sup>: Տվյալ դեպքում պարզև վճարելու հրապարակային խոստում տված անձին հայտնի չէ, թե ով կհասնի հայտարարության մեջ նշված արդյունքին և, արդյո՞ք, կհասնի, թե՛ ոչ: Եվ այդ պայմանի խոստման մեջ պայմանավորված արդյունքի/ իրականացման դեպքում, նա պարտավորվում է խոստացված պարզևը տալ այդ արդյունքին հասած անձին, մասնավորապես, մեր նշված օրինակում՝ կորած կրամապանակը գտնողին:

Քաղ. օր. 1041 հոդվածով նախատեսված պարտավորության ծագումն հիմք է հանդիսանում բարդ իրավաբանական կազմը՝ իր մեջ ընդգրկելով հետևյալ երկու իրավաբանական փաստերը.

1/ պարզև վճարելու հրապարակային խոստումը.

2/ պայմանավորված արդյունքին հասնելու նրա արձագանքը:

Արդարացիորեն պետք է համաձայնվել Օ.Ս.Իոֆֆեի այն կարծիքի հետ, որ պայմանավորված արդյունքին հասնելը գործարք չէ<sup>4</sup>: Այն միակողմանի փաստական և միաժամանակ նաև իրավաչափ գործություն է, որը կատարվում է հրապարակայնորեն խոստացված պարզևն ստանալու ակնկալիքով: Այնուհանդերձ, պարզև վճարելու հրապարակային խոստումը միակողմանի գործարք է:

Չնայած հայտարարությամբ պայմանավորված արդյունքին հասնելու գործարք չէ, սակայն այդ արդյունքին հասնելու արձագանքը՝ կրած իրը գտնելու կամ այլ գործողությունը կատարելու մասին հայտարարություն տված անձին հայտնելը միակողմանի գործողություն է, որը հետապնդում է իրավունքներ և պարտականություններ առաջացնելու նպատակներ, ուստի այն համարվում է միակողմանի գործարք<sup>5</sup>:

Պարզև վճարելու հրապարակային խոստումը և հայտարարությամբ պայմանավորված արդյունքին հասնելու արձագանքը միակողմանի գործարքներ են, որոնք կրում են հանդիպական բնույթ և պետք է համապատասխանեն միմյանց: Սակայն, նրանց կատարումը պայմանագրի կնքում չի նշանակում: Այսպես, պարզև վճարելու խոստումը չի կարելի համարել օֆերտա, քանի որ այն հասցեագրված է ոչ թե կոնկրետ անձի, այլ ուղղված է բոլորին և յուրաքանչյուրին: Ի դեպ, օբյեկտան առաջարկ է՝ հասցեագրված մեկ կամ մի քանի անձանց, իսկ

1. Տես Բարսեղյան Տ.Կ. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական իրավունք, սույնին մաս, Եր. 2000, 199-200 էջերը:

2. Տես Իոֆֆե Օ. Ս. Обязательственное право. М., 1975, էջ 782:

հաճախ էլ՝ անորոշ շրջանակի անձանց /հրապարակային օֆերտա/, սակայն ոչ թե որոշակի արդյունքի հասնելու, այլ յուրաքանչյուր արձագանքողի հետ պայմանագիր կնքելու նպատակով՝:

Պարզ վճարելու հրապարակային հայտարարությամբ պայմանավորված արդյունքին հասնելու վերաբերյալ խոստում տված անձին հայտնելն ակցեպտ չի համարվում: Ընդ որում, ակցեպտն առաջարկն ընդունելու մասին այն անձի պատասխանն է, ում հասցեագրված է օֆերտան:՝ Նախ և առաջ, տվյալ արդյունքին կարող են հասնել անորոշ թվով անձինք, երկրորդ՝ այդ արդյունքին միաժամանակ հասած մի քանի անձանցից յուրաքանչյուրը կարող է ստանալ պարզևի համապատասխան մասը:

Այս ամենից հետևում է, որ **պարզ վճարելու հրապարակային հայտարարությունը և նրանում նշված արդյունքին հասնելուն ուղղված կոնկրետ անձի /անձանց/ արձագանքն առաջացնում են քաղաքացիաիրավական պարտավորություն, որի ուժով մի կողմը՝ պարզ վճարելու հրապարակային խոստում տված անձը /պարտապան/ պարտավորվում է մյուս կողմին՝ հայտարարությամբ պայմանավորված արդյունքին հասած անձին կամ անձանց /պարտատեր/ վճարել հայտարարությամբ խոստացված պարզևը /վարձատրությունը/, իսկ վերջինը կամ վերջիններն իրավունք ունեն պարզևի խոստում տված անձից պահանջելու խոստացված պարզևը:**

Ցանկացած քաղաքացիաիրավական պարտավորության էությունը ճիշտ ըմբռնելու, տվյալ պարտավորությունն այլ պարտավորություններից սահմանազատելու և նրա տեղն ու դերը պարտավորական իրավունքի համակարգում որոշելու համար կարևոր է վերլուծել այդ պարտավորության, որպես քաղաքացիական իրավահարաբերության, տարբերը՝ սուբյեկտները, օբյեկտը և բովանդակությունը:

Բննարկվող պարտավորության **սուբյեկտներն** են պարզ վճարելու հրապարակային խոստում տված անձը և այդ խոստմանն արձագանքած ցանկացած անձ, ով հասել է խոստման մեջ պայմանավորված արդյունքին: Պարզ խոստացողը հանդես է գալիս որպես պարտապան, իսկ խոստմանն արձագանքած ցանկացած անձ՝ պարտատեր:

Պետք է նշել, որ հրապարակայնորեն պարզ կարող են խոստանալ քաղաքացիական իրավունքի բոլոր սուբյեկտները՝ քաղաքացիները, իրավաբանական անձինք, Հայաստանի Հանրապետությունը և Հանայնքները:

1. Տես Բարսեղյան Տ.Կ., 2000թ. հրատ. նշվ. աշխ., 421-422 էջերը:

2. Տես նույն տեղում, էջ 422:

Ինչպես արդեն նշվեց, պարզ վճարելու հրապարակային խոստումը միակողմանի գործարք է: Ընդհանուր կանոնի համաձայն, անգործունակ քաղաքացիներն ինքնուրույն չեն կարող գործարքներ կնքել: Ուստի, անգործունակ քաղաքացիները չեն կարող նաև պարզ վճարելու հրապարակային խոստում տալ: Անգործունակ փոխարեն նույն խոստում կարող է տալ նրա խնամակալը /Քաղ. օր. 31 հոդվ. 1-ին կետ/:

Քանի որ սահմանափակ գործունակ քաղաքացիներն ինքնուրույն կարող են կնքել մանր կենցաղային գործարքներ, ապա նրանք կարող են ինքնուրույն տալ միայն օրենքով սահմանված չափով պարզ վճարելու հրապարակային խոստումներ: Մնացած դեպքերում պահանջվում է սահմանափակ գործունակ քաղաքացու հոգաբարձուի համաձայնությունը:

Ինչ վերաբերում է քաղաքացիական իրավունքի մյուս սուբյեկտներին, ապա պարզ վճարելու խոստում տալու դեպքում կիրառվում են նրանց իրավունակության և գործունակության բնույթն ու ծավալները կարգավորող Քաղ. օր. նորմերը:

Օրենքի նշված պահանջները չպահպանելը հանգեցնում է պարզ վճարելու հրապարակային խոստման անվավերության:

Ինչպես ասվեց, պարզևի հրապարակային խոստմամբ պայմանավորված արդյունքին հասնելը գործարք չէ: Այն ոչ թե իրավաբանական, այլ միակողմանի փաստական գործողություն է: Ուստի, այդ հարում որևէ սահմանափակում չպետք է նախատեսվի: Կորած իրը գտնելու և նրա մասին տեղեկություններ հայտնել կարող է նաև անգործունակ քաղաքացին: Այդ դեպքում նա ձեռք է բերում խոստացված պարզևը ստանալու իրավունք: Ըստ որում, նա իր այդ իրավունքը կարող է իրականացնել միայն խնամակալի օգնությամբ: Փաստորեն, չի բացառվում պարզ վճարելու հրապարակային խոստմամբ պայմանավորված արդյունքին հասնելն անգործունակ քաղաքացու կողմից, սակայն հայտարարությանն արձագանքել՝ նրա այդ իրավունքը իրականացնել կարող է միայն օրինական ներկայացուցիչը՝ խնամակալը:

Պետք է տարբերել բննարկվող պարտավորության երկու բնույթի **օբյեկտներ**՝ նյութական և իրավաբանական:

Քաղ. օր. 1041 հոդվածով նախատեսված պարտավորության նյութական օբյեկտ է համարվում հայտարարությամբ խոստացված պարզևը, իսկ իրավաբանական օբյեկտ՝ հայտարարությամբ պայմանավորված արդյունքին հասնելուն ուղղված պարզևի հավանորոշման գործողությունները:

### § 3. Պարզև վճարելու հրապարակային խոստումից և նրան ուղղված արձագանքից ծագող պարտավորության բովանդակությունը

Քննարկվող պարտավորության **բովանդակությունն** են կազմում կողմերի՝ պարզև վճարելու հրապարակային խոստում տված անձի և խոստմանն արձագանքած անձի իրավունքներն ու պարտականությունները: Հրապարակայնորեն պարզև խոստացողը պարտավոր է պարզև տալ հայտարարության մեջ նշված գործողությունը կատարածին: Պարզև վճարելու հրապարակային խոստման ենթակա պարզևատրուը կարող է արտահայտված լինել կոնկրետ դրամական գումարով:

Գործնականում հնարավոր է, որ պարզև վճարելու հայտարարության մեջ նշված չլինի պարզևի չափը, օրինակ՝ «Կորած անձնագիրը գտնողին խնդրվում է հայտնել տեղական ոստիկանության բաժին, պարզևատրուը երաշխավորվում է»: Եթե պարզև վճարելու հրապարակային խոստման մեջ նշված չէ պարզևի չափը, ապա այն որոշվում է պարզև խոստացած անձի հետ համաձայնությամբ, իսկ վեճի դեպքում՝ դատարանով /Քաղ. օր. 1041 հոդվածի 3-րդ կետ/:

Պարզև վճարելու հրապարակային խոստումը ենթադրում է հասնել իր տեսակի մեջ միակ և անկրկնելի արդյունքի: Այդ արդյունքին կարելի է հասնել, կամ էլ՝ չհասնել: Պարզև վճարելու հայտարարության մեջ նշված գործողությունը չի կարող կատարվել լավ կամ վատ, կամ էլ՝ կրկին անգամ: Կորած իրը կարելի է գտնել, կամ էլ՝ չգտնել, սակայն հնարավոր չէ երկու անգամ գտնել:

Խոստացված պարզևն իրավունք ունի պահանջել նա, ով հասել է նշված արդյունքին: Մակայն, բացառված չեն այն դեպքերը, երբ պարզևի մասին հայտարարությունում նշված գործողությունը կատարեն մի քանի անձինք՝ միմյանցից անկախ: Այդ դեպքում պարզև ստանալու իրավունքը ծագում է այն անձի մոտ, ով առաջինն է կատարել համապատասխան գործողությունը /Քաղ. օր. 1041 հոդվ. 5-րդ կետ/: Հայտարարության մեջ նշված գործողությունները առաջինը կատարողին որոշելու անհնարինության դեպքում, կամ, եթե այդ գործողությունը միաժամանակ կատարել են մի քանի անձինք, պարզևը նրանց միջև բաշխվում է հավասար չափերով, կամ էլ նրանց միջև համաձայնությամբ այլ չափերով, իսկ վեճի դեպքում՝ դատարանով /Քաղ. օր. 1041 հոդվ. 5-րդ կետ 2-րդ մաս/:

Պարզև վճարելու պայման հանդիսացող արդյունքին հասած անձը կարող է չիմանալ դրան հասնելու համար պարզև վճարելու հայտա-

րարության մասին: Մակայն, պարզև ստանալու իրավունքը և պարզև վճարելու համապատասխան պարտականությունը ծագում են անկախ նրանից՝ համապատասխան գործողությունը կատարվել է հայտարարության առնչությամբ, թե՛ ոչ:

Կարևոր նշանակություն ունի խոստմանն արձագանքած անձի վաստացի կատարած գործողությունները պարզևի հայտարարության մեջ նշված գործողություններին համապատասխանելու հարցը:

Երբեմն պարզև վճարելու հրապարակային խոստման հայտարարության մեջ նշված գործողությունները ներկայացվում են մակերեսունեն կամ երկիմաստ՝ դրանով իսկ ստեղծելով իրարամերձ ու հակասական մեկնաբանությունների առաջացման պայմաններ: Նշված գործողությունների իմաստն ու բնույթը պարզև խոստացողը և հայտարարությանն արձագանքած անձը /անձինք/ կարող են մեկնաբանել տարբեր իմաստով: Այստեղ խոսքը վերաբերվում է հայտարարությամբ պայմանավորված գործողությունների իմաստի և բնույթի երկակի ներկայացման մասին՝

1/ հայտարարությանն արձագանքած կողմի սուբյեկտիվ ներկայացման.

2/ այն գործողությունների օբյեկտիվ ներկայացման, որոնք նկատի է ունեցել հայտարարություն տված անձը հրապարակային պարզև խոստանալիս:

Եթե պարզևի հրապարակային հայտարարությունից հնարավոր չէ որոշել պայմանավորված գործողությունների իսկական իմաստն ու բնույթը, ապա կատարված գործողությունների համապատասխանությունը հայտարարության մեջ նշված պահանջներին որոշում է խոստում տված անձը: Վեճի դեպքում կատարված գործողությունների համապատասխանության խնդիրը լուծվում է դատական կարգով /Քաղ. օր. 1041 հոդվ. 6-րդ կետ/: Այստեղից կարելի է եզրակացնել, որ կրե անձը, ով հասել է որոշակի արդյունքի /կատարել է որոշակի գործողություն/, որն ակնհայտորեն չի համապատասխանում պարզև վճարելու հրապարակային խոստմամբ պայմանավորված արդյունքին կամ նրանում նշված գործողության բնույթին, ապա նրա մոտ համապատասխան պարզևը պահանջելու իրավունք չի ծագում:

Պարզևի մասին հայտարարության ամկայությունը կամ բացակայությունը ազդում է քննարկվող պարտավորության կողմերի փոխհարաբերությունների վրա: Եթե, օրինակ, վերը նշված դեպքում կորած դրամապանակը գտնողը այն վերադարձնի նրա տիրոջը, ապա պարզև վճարելու կողմերի հարաբերությունները կորոշվեն Քաղ. օր. 1041 հոդ-

վածով, իսկ այդպիսի հայտարարության բացակայության դեպքում՝ գտանքի մասին Քաղ. օր. կանոններով /Քաղ. օր. 180-182 հոդվածներ/: Իսկ եթե անձը գտել է ուրիշի կողմը, շունը կամ այլ ընտանի կենդանին, որոնց գտնելու համար պարգև վճարելու հրապարակային հայտարարություն չի եղել կամ էլ այդպիսի հայտարարությունը տրվել է դրանք գտնելուց հետո, ապա կողմերի հարաբերությունների նկատմամբ կկիրառվեն առանց հսկողության թողնված կենդանիների մասին Քաղ. օր. 183-185 հոդվածներով նախատեսված նորմերը:

Ժամկետը, որի ընթացքում պետք է հասնել արդյունքին, չի համարվում պարգև վճարելու հրապարակային խոստման ոչ պարտադիր, ոչ էլ՝ բնութագրական պայման: Սակայն, եթե ժամկետը սահմանված է, ապա գործողությունները, որոնց համար խոստացվել է պարգևը, պետք է կատարվեն այդ ժամկետի սահմաններում, իսկ հրապարակային խոստում տված անձը պետք է պարզևր վճարի մինչև դրա ավարտը:

Պայմանավորված արդյունքին հասնելու համար հրապարակային խոստում տված անձն իրավունք ունի վերացնել իր խոստումը:

Սակայն, օրենքը պարգև վճարելու հրապարակային խոստման պայմանները փոփոխելու հնարավորություն չի նախատեսում: Եթե պարգև խոստանալու հայտարարության մեջ կոնկրետ նշված է պարգևի ծնն ու չափը և արդյունքին հասնելու ժամկետը, ապա, օրենքի իմաստից ելնելով, դրանք չեն կարող փոփոխվել: Սակայն, երբեմն հայտարարությամբ պայմանավորված արդյունքին շուտ հասնելու և պարգևի հավակնորդների նյութական շահագրգռվածությունը բարձրացնելու համար պարգև խոստացողի մոտ կարող է ցանկություն առաջանալ ավելացնելու պարգևի չափը կամ էլ, իր գույքային վիճակի վատթարացման հետ կապված, նվազեցնելու պարգևի չափը կամ էլ դրամական պարգևը փոխարինելու իրային բնույթի պարգևի: Իսկ եթե հայտարարության մեջ նշված ժամկետը լրանա, սակայն որևէ անձ պայմանավորված արդյունքին չհասնի, կարող է, արդյոք, պարգև խոստացողը երկարածգել ժամկետը կամ էլ վերացնել ժամկետի մասին հայտարարության մեջ սահմանված պայմանը: Օրենքի վերլուծությունը ցույց է տալիս, որ պարգև խոստացողը խոստման հայտարարության մեջ այդպիսի փոփոխություններ անելու իրավագործություն չունի: Մեր կարծիքով, մի կողմից արդարացի չէ պարգև խոստացող անձին խոստման հայտարարության պայմանները փոփոխելու հնարավորությունից զրկելը, մյուս կողմից, հաշվի առնելով քննարկվող քաղաքացիաիրավական հարաբերության բնույթը, ճիշտ չէր լինի պարգևի չափը նվազեցնելը կամ էլ խոստման հայտարարության պայ-

մանների այնպիսի փոփոխությունը, որը կվատթարացնի պարգևի հավակնորդների գույքային վիճակը:

Քաղաքացիական օրենսդրությունը կատարելագործելու նպատակով առաջարկում ենք Քաղ. օր. 57-րդ գլխում նորմ նախատեսել հետևյալ խմբագրությամբ.

«Հրապարակայնորեն պարգև խոստացած անձը հետագայում կարող է փոփոխել պարգև վճարելու հրապարակային խոստման հայտարարության պայմանները, եթե այդպիսի փոփոխությունը կբարելավի պարգևի հավակնորդների գույքային վիճակը:

Պարգև վճարելու հրապարակային խոստման հայտարարության պայմանների վատթարացում նախատեսող փոփոխություններն անյուրյատրելի են»:

Ընդհանրապես, պարգևի խոստումը վերացնելը չպետք է խախտի պարգևի հավակնորդների օրինական շահերը: Այդ պատճառով օրենքը որոշակի պահանջներ է առաջադրում, որոնք պետք է կատարվեն խոստումը վերացնելիս: Պարգև խոստացած անձը չի կարող հրաժարվել պարգև վճարելու խոստումից հետևյալ դեպքերում.

ա/ երբ հայտարարության մեջ նշված է, կամ նրանից բխում է հրաժարման անթույլատրելիությունը: Եթե պարգև վճարելու հրապարակային հայտարարության մեջ պարգև խոստացողը ուղղակիորեն սահմանել է, որ հայտարարությունից հրաժարվելն անթույլատրելի է, կամ էլ հայտարարության բովանդակությունից և իմաստից բխում է վերացումն անթույլատրելիությունը, ապա այդ հանգամանքը վեր է ածվում հայտարարության էական /պարտադիր/ պայմանի, որն, անշուշտ, վերացման ենթակա չէ.

բ/ մինչև այնպիսի գործողությունների կատարման համար սահմանված ժամկետի ավարտը, որոնց համար պարգև է խոստացված: Եվ ինչպես արդեն նշվեց, հայտարարության մեջ ժամկետ նշելը պարտադիր չէ, իսկ եթե պարգև խոստացողը նրանում սահմանել է որոշակի ժամանակահատված, որի ընթացքում պետք է հասնել հայտարարության մեջ նշված արդյունքին, ապա ժամկետի մասին պայմանը դառնում է պարտադիր ոչ միայն պարգևի հավակնորդների, այլև պարգև խոստացողի համար. հայտարարության մեջ ժամկետի առկայության դեպքում պարգև խոստացողը չի կարող վերացնել տված խոստումը մինչև այդ ժամկետի ավարտը.

գ/ եթե հրաժարման մասին հայտարարություն անելու պահին մեկ կամ մի քանի արձագանքած անձինք արդեն կատարել են հայտարարության մեջ նշված գործողությունը:

Պարզևի խոստման վերացման մասին հաղորդումը պետք է կատարվի այն նույն ձևով, ինչ ձևով տրվել է պարզևի մասին խոստումը: Օրինակ՝ եթե պարզև վճարելու հրապարակային խոստումը տրվել է թերթում, ապա այդ նույն թերթում էլ պետք է տրվի պարզևի խոստման վերացումը: Հակառակ դեպքում պարզև վճարելու խոստում տված անձը կրում է այդ ձևը չպահպանելու հետևանքների ռիսկը:

Իրականում հնարավոր է իրավիճակ, երբ անձն իր կորած իրը գտնելու համար հեռուստատեսությամբ պարզև վճարելու խոստում տա, իսկ հետագայում, տարբեր պատճառներից ելնելով /իդը գտնվելու, այն արժեզրկվելու և այլն/, այդ անձը որոշի վերացնել պարզևի խոստումը: Ընդհանուր կանոնի համաձայն, նա պարտավոր է հրաժարվել տված խոստումից հեռուստատեսությամբ: Սակայն, նա, խախտելով պարզևի խոստումը վերացնելու ձևը, խոստումից հրաժարվելու մասին հայտարարությունը տալիս է որևէ ամսագրում: Դրանից հետո իրեն է դիմում մի քաղաքացի և հայտնում, որ նրա կորած իրը գտնելու համար ծախսեր է կատարել ու պահանջում է հատուցել դրանք: Իսկ պարզև խոստացողը հրաժարվում է այդ քաղաքացու ծախսերը հատուցել՝ պատճառաբանելով, որ ինքը ժամանակին հրաժարվել է տված խոստումից: Այստեղ կողմերի միջև ծագում է վեճ: Արդյոք, պարզև խոստացողը պարտավոր է հատուցել նշված քաղաքացու կատարած ծախսերը, թե՛ ոչ: Եթե, ընդունենք, որ պետք է հատուցի, ապա օրենքի ո՞ր նորմի պահանջն է դա, չէ որ նա արդեն հրաժարվել է իր խոստումից, չնայած խախտել է խոստումից հրաժարվելու ձևը՝ հայտարարությունը տալով ամսագրում:

Նման դեպքում, մեր կարծիքով, պարզևի հրապարակային խոստում տված անձը պետք է քաղաքացիաիրավական պատասխանատվություն կրի. կամ խոստացած պարզևը վճարի, կամ էլ հատուցի պարզևի հայտարարության պայմաններին համապատասխան արդյունքին հասած անձի կրած իրական վնասը:

Քաղ. օր. 1042 հոդվածի 2-րդ կետը սահմանում է. «Պարզևի հրապարակային խոստումը վերացնելը չի ազատում պարզև խոստացած անձին, պարզևի հայտարարության մեջ նշված սահմաններում՝ այն անձանց ծախսերը հատուցելու պարտականությունից, որոնք վերջիններս կրել են հայտարարության մեջ նշված գործողությունները կատարելու առնչությամբ»:

1. «Պարզևի հայտարարության մեջ նշված սահմաններում» բառակապակցությունն աղավաղում է նորմի իմաստը: Այն պետք է խնդրվի հետևյալ կերպ. «հայտարարության մեջ նշված պարզևի արժեքի սահմաններում»:

Օրենքում կոնկրետ չի նշվում, թե ինչ ծախսեր պետք է հատուցի պարզև խոստացած անձը պարզևի խոստումը վերացնելու դեպքում: Սակայն վերոնշյալ հոդվածի իմաստից կարելի է եզրակացնել, որ խոսքը վերաբերում է փաստացի կատարած ծախսերին /իրական վնասին/: Այն օգուտը, որը խոստմանն արձագանքած անձը կատարում է, եթե հայտարարության մեջ նշված գործողությունը չկատարել /բաց թողնված օգուտ/, չի կարող հատուցվել խոստում տված անձի կողմից:

Այստեղից հետևում է, որ հրապարակայնորեն պարզև խոստացած անձն իր խոստումը վերացնելու դեպքում պարտավոր է հատուցել խոստմանն արձագանքած անձանց այն ծախսերը, որոնք վերջիններս կրել են՝ կապված հայտարարության մեջ նշված արդյունքին հասնելուն ուղղված գործողություններ կատարելու հետ:

Սակայն, խոստում տված անձը պարտավոր է հատուցել խոստմանն արձագանքած անձանց կրած անհրաժեշտ ծախսերը միայն խոստացված պարզևի արժեքի սահմաններում: Հասկանալի է, որ պարզևի չափը գերազանցող ծախսերը հատուցելն անիմաստ կլինի:

Պարզև վճարելու հրապարակային խոստում տված անձն ազատվում է խոստմանն արձագանքած անձանց կրած ծախսերը հատուցելու պարտականությունից, եթե ապացուցում է, որ այդ ծախսերը նրանք կրել են այնպիսի գործողության կատարումն ապահովելու նպատակով, որն ակնհայտորեն չէր կարող հաջողություն ունենալ: Այդ պարտականությունը կատարելուց խոստում տված անձը կարող է ազատվել նաև այն դեպքում, եթե ապացուցի, որ խոստմանն արձագանքած անձը պարզևի հայտարարության մեջ նշված գործողությունները կատարել է պատշաճ ձևով խոստումը վերացնելուց հետո:

Պարզև վճարելու հրապարակային խոստումը վերացնելիս այն խոստացող անձը հետապնդում է ոչ միայն պարզևը տալուց, այլ նաև խոստմամբ պայմանավորված արդյունքն ստանալուց հրաժարվելու նպատակներ: Անհասկանալի է, թե պարզևի խոստումը վերացնելու ենարավորություն նախատեսելով հանդերձ, ինչու՞ է օրենսդիրը տված խոստումը վերացնելու համար քաղաքացիաիրավական պատասխանատվություն սահմանում պարզևի հայտարարության մեջ նշված պարզևի արժեքի սահմաններում այն անձանց ծախսերը հատուցելու ձևով, որոնք վերջիններս կրել են հայտարարության մեջ նշված գործողությունները կատարելու առնչությամբ:

Պարզև վճարելու հրապարակային խոստում տալը և նման խոստումից հրապարակայնորեն հրաժարվելը համարվում են միակողմա-

նի գործարքներ: Սակայն այս երկու իրավաբանական փաստերն առանձին վերցրած բավարար չեն համապատասխան պարտավորական հարաբերության առաջացման համար: Դրանք միասին չեն կարող հանդես գալ, քանի որ երկրորդը փոխարինում է առաջինին: Նման քաղաքացիաիրավական հարաբերության ծագման համար անհրաժեշտ է, որ որևէ մեկը պարզեղ ստանալու ակնկալիքով հայտնի պարզև խոստացողին հայտարարության մեջ նշված արդյունքին հասնելու մասին: Պարզևի խոստումը վերացնելու դեպքում, եթե որևէ մեկը չի հասել հայտարարության մեջ նշված արդյունքին, ուրեմն քաղաքացիաիրավական հարաբերության գոյության մասին խոսք լինել չի կարող, ուստի, մեր կարծիքով, կողմերի մոտ իրավունքներ և պարտականություններ, առավել ևս քաղաքացիաիրավական պատասխանատվություն չի կարող առաջանալ:

Այնուհանդերձ, ՀՀ օրենսդիրը Քաղ. օր. 1042 հոդվածի 2-րդ կետում նախատեսել է պարզև խոստացողի քաղաքացիաիրավական պատասխանատվությունը սահմանող նորմ՝ ցանկացած ձևով պարզևի խոստումից հրաժարվելու համար: Նման պայմաններում Քաղ. օր. 1042 հոդվածի 1-ին կետում նշված պարզևի խոստումից հրաժարվելու ձևի մասին հիշատակումն անհիմաստ է, քանի որ ձևը պահպանելը կամ չպահպանելը որևէ նշանակություն չունի նույն հոդվածի 2-րդ կետում սահմանված քաղաքացիաիրավական պատասխանատվության համար:

Քաղ. օր. նշված նորմերում առկա հակասությունները վերացնելու և քննարկվող քաղաքացիաիրավական հարաբերություններում հստակություն սահմանելու նպատակով առաջարկում ենք Քաղ. օր. 1042 հոդվածի 2-րդ կետը վերախմբագրել հետևյալ կերպ. «Պարզև վճարելու հրապարակային խոստումը վերացնելու ձևը չպահպանելու և պարզև վճարելու հայտարարության պայմանները անօրինական փոփոխելու դեպքում պարզև խոստացած անձը պարտավոր է հատուցել այն անձանց կրած իրական վնասը, որը վերջինները կրել են հայտարարության մեջ նշված արդյունքին հասնելու կապակցությամբ»:

Այսպիսով, ՀՀ գործող քաղաքացիական օրենսգրքով կարգավորվող պարզև վճարելու հրապարակային խոստումից և հրապարակային հայտարարության մեջ նշված արդյունքին հասնելու արդյունքում ծագում է քաղաքացիաիրավական պարտավորություն, որը խոստում տված անձի համար ունի իրավադատարեցնող, իսկ արդյունքին հասած անձի համար՝ իրավաստեղծ նշանակություն:

Ինչպես նկատեցինք, պարզևի խոստում տալու հրապարակային

հայտարարության մեջ նշված արդյունքին օբյեկտիվորեն հնարավոր է հասնել միայն մեկ անգամ: Սակայն պարզև կարող է խոստացվել նաև երկակի արդյունքի հասնելու համար: Նման դեպքում միմյանցից անկախ տարբեր անձինք կարող են հասնել այնպիսի արդյունքների, որ, ըստ որակի, լինեն համեմատելի և դրանցից չավագույնն ընտրելու հնարավորություն ընձեռվի: Արդյունքում առաջանում է մրցակցություն, մրցապայքար, քաղաքացիաիրավական այլ հարաբերություններ, որոնք կարգավորող նորմերն էլ կազմում են առանձին քաղաքացիաիրավական ինստիտուտ՝ պարզև վճարելու հրապարակային խոստման տարատեսակ հանդիսացող հրապարակային մրցույթը:

## ԳԼՈՒԽ 4. ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՄՐՑՈՒՅԹ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼԸ

### § 1. Հրապարակային մրցույթի հասկացությունը, նշանակությունը և հատկանիշները

Միակողմանի գործողություններից բխող պարտավորությունների տարածում ունեցող տեսակ է հրապարակային մրցույթը՝ մրցանակաբաշխությունը: Այն պարզ և վճարելու հրապարակային խոստման տարատեսակ է: Հրապարակային մրցույթը հնարավորություն է ընձեռում կատարած աշխատանքների և ստեղծած այլ արդյունքների հնարավոր շրջանակից ընտրել լավագույնը:

Ներկայումս հաճախակի են դարձել հասարակական կյանքի տարբեր ոլորտներում կազմակերպվող և անցկացվող տարատեսակ և տարաբնույթ մրցույթները: Մրցույթները կազմակերպվում և անց են կացվում տարբեր նպատակներով՝ մասնագետներ /աշխատողներ/ ընտրելու, գիտության, գրականության, արվեստի լավագույն ստեղծագործություններ և մտավոր գործունեության այլ արդյունքներ ձեռք բերելու, լավագույն կատարումները, առաջադրանքները, գիտական աշխատություններն առանձնացնելու, շեմքեր, շինություններ, ծեռնարկություններ և այլ օբյեկտներ կառուցելու, ճարտարապետական կառույցի, հուշարձանի, հուշակոթողի լավագույն նախագիծ կազմելու, պետության կարիքների համար մրցույթի պայմանագրեր կնքելու և այլն:

Հաճախ հրապարակային մրցույթ է կազմակերպվում հանրության համար կարևորություն ունեցող գիտության, գրականության և արվեստի բնագավառներում: Մասնավորապես, հրապարակային մրցույթ հայտարարվում է աշխարհագրությանը, տոպոգրաֆիային, երկրաբանությանը, ճարտարապետությանը և այլ գիտություններին վերաբերող աշխարհագրական, երկրաբանական և այլ քարտեզներ, նախագծեր, էսքիզներ և այլաստիկ ստեղծագործություններ, դպրոցական ու բուհական դասագրքեր, պատմական նշանակալի իրադարձության նվիրված մեմորանդաներ, աշխատություններ, այլ ստեղծագործությունների թարգմանություններ, մշակումներ, ռեֆերատներ, համառոտ բնութագրումներ, տեսություններ, ամփոփումներ, բեմականացումներ, կինոմատոգրաֆիական վերափոխումներ, հանրագիտարաններ, ակտիոգրաֆիաներ, տվյալների բազաներ, գրական, այդ թվում՝ գիտական ստեղծագործություններ, համակարգչային կիրառական ծրագրեր, գործառ-

ուական համակարգեր, գեղանկարչության, քանդակագործության, գրաֆիկայի, կերպարվեստի, դրամատիկական, երաժշտադրամատիկական ստեղծագործություններ, սցենարներ, սցենարային պլաններ, դեկորատիվ-կիրառական և բեմական գրաֆիկայի /բեմական դիզայնի/ արվեստի, ճարտարապետության, քաղաքաշինության, այգեպուրակային արվեստի, պարարվեստի և մնջախաղի, տեքստով և առանց տեքստի երաժշտական ստեղծագործություններ, կինոֆիլմեր, հեռուստաֆիլմեր և գիտության, գրականության, արվեստի այլ ստեղծագործություններ ստեղծելու ու դրանց լավագույններն ընտրելու համար:

Սակայն թվարկված բազմաբնույթ բնագավառներում կազմակերպված ոչ բոլոր մրցույթներն են առաջացնում քաղաքացիաիրավական պարտավորություն:

Այդպիսի մրցույթները հետապնդում են նրանում մասնակցություն ունեցող անձանց՝ աշխատանքների հեղինակներին նյութապես և բարոյապես շահագրգռելու նպատակ: Հրապարակային մրցույթ հայտարարելու միջոցով հնարավոր է դառնում խորը և բազմակողմանի մշակելու գրականության և արվեստի առավել կարևոր թեմաները, ստեղծելու լավագույն աշխատանքներ, երաժշտական խոշոր գործեր, հայտնաբերելու երգի լավագույն կատարողների, արվեստի շնորհալի գործիչների, լուծելու տեխնիկական կամ ճարտարապետական որևէ լուսնի և այլն: Հրապարակային մրցույթը ապահովում է մրցույթի մասնակիցների կատարած աշխատանքների և ստեղծած այլ արդյունքների օբյեկտիվ հասարակական գնահատականը: Եվ ինչպես նշում է պրոֆ. Օ.Ս.Իոֆֆեն, մրցույթը միայն այն ժամանակ կարող է արդյունավետ դեր ունենալ, եթե յուրաքանչյուր ոք, ով ցանկանում է նրանում մասնակցություն ունենալ, համոզված լինի, որ իր աշխատանքային և ստեղծագործական ջանքերը զուր չեն անցնի, այլ կգնահատվեն և կվարձատրվեն աշխատանքի արժանիքներին և հայտարարված մրցույթի պայմաններին համապատասխան:

Մրցութային հարաբերությունների այդպիսի բազմաբանակությունն ու բազմազանությունը պայմանավորված է գիտության և տեխնիկայի աննախադեպ զարգացման, հասարակության պահանջումներին արդիականացման, ազատ և մրցակցային տնտեսության ձևավորման, տնտեսական հարաբերությունների միջազգայնացման, ժողովրդավարական գործընթացների զարգացման, իրավական պետության կառուցման, միջազգային կառույցներին ՀՀ ինտեգրման հետ:

1 Տե՛ս Իոֆֆե Օ. Շ. *Обязательственное право*. М., 1975, էջ 784:



Հրապարակային մրցույթ հայտարարելուց ծագող հասարակական հայաբերությունները Հայաստանում առաջին անգամ օրենսդրական կարգավորում են ստացել Հայկական ԽՍՀ 1964թ. քաղաքացիական օրենսգրքում /442-446 հոդվածներ/: Սակայն մինչ այդ Հայաստանում մրցանակաբաշխություն անցկացվել է ԽՍՀՄ օրենսդրության պահանջներին համապատասխան: Հայկական ԽՍՀ 1964թ. քաղաքացիական օրենսգրքում հրապարակային մրցույթը պարզապես անվանվում էր մրցանակաբաշխություն: Անհրաժեշտ է նշել, որ գործող օրենսդրությամբ կարգավորվող հրապարակային մրցույթն իր բնույթով և բովանդակությամբ որոշակիորեն տարբերվում է նախկին օրենսդրության կարգավորման առարկա հանդիսացող մրցանակաբաշխության ինստիտուտից: Այսպես, Հայկական ԽՍՀ 1964թ. քաղաքացիական օրենսգրքի 442 հոդվածի 1-ին կետի համաձայն մրցանակաբաշխություն կարող էին հայտարարել միայն այն հայտարարելու համար հատուկ իրավասություններ ունեցող կազմակերպությունները: Քաղաքացիները մրցանակաբաշխություն հայտարարելու իրավասություն չունեին: Ներկայումս օրենսդիրը բավականին ընդլայնել է հրապարակային մրցույթ հայտարարելու իրավասություն ունեցող անձանց շրջանակը և այդ հարցում որևէ սահմանափակում չի նախատեսել /ՀՀ գործող քաղ. օր. 1043 հոդվ. 1-ին կետ/:

Անժամեշտ ենք համարում ներկայացնելու «մրցույթ» և «մրցանակաբաշխություն» քաղաքացիական իրավական հասկացությունների լեզվաբանական ստուգաբանությունը և իրավական բնույթը: Այսպես, մրցույթը լեզվաբանորեն բացատրվում է մրցություն, մրցակցություն: Իրավաբանական առումով մրցույթն իրենից ներկայացնում է համասեռ իրավական նորմերից բաղկացած համալիր իրավական ինստիտուտ: Մինչդեռ, մրցանակաբաշխություն է համարվում մրցանակներ բաշխելը, մրցանակներ հանձնելու հանդեսը<sup>1</sup>: Մրցույթն իր մեջ ներառում է մի շարք իրավահարաբերություններ՝ մրցույթ հայտարարելը, աշխատանքները մրցույթին ներկայացնելը, ներկայացված աշխատանքները գնահատելը, պարգև վճարելը, պարգևի չարժանացած աշխատանքները վերադարձնելը և այլն: Մրցանակաբաշխությունը մրցույթին ներկայացված, լավագույն ճանաչված աշխատանքների հեղինակներին պարգևներ /մրցանակներ/ շնորհելու գործընթացն է՝ մրցանակները

1. Տե՛ս ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, հատոր 3. 4-Մ, Հայկական ՍՍՀ գրությունների ակադեմիայի հրատարակչություն. Եր., 1974. էջ 571:

2. Տե՛ս նույն տեղում, էջ 570:

ընդհանրապես: Ուստի, ճիշտ ենք համարում Քաղ. օր. 1043-1047 հոդվածներով նախատեսված քաղաքացիական ինստիտուտն ՀՀ օրենսդիր մարմնի կողմից հրապարակային մրցույթ անվանելը: Անհրապարակահարմար ենք գտնում նրա հիման վրա ծագող պարտավորությունը անվանել մրցույթային պարտավորություն:

Մրցույթային իրավահարաբերությունները կառուցվում են պարտավորական իրավահարաբերությունների ձևով: Մրցույթային իրավահարաբերություններն օժտված են մի շարք առանձնահատկություններով, որոնք հատուկ են այդ հասարակական հարաբերություններին՝ կապված մի կողմից նրանց ձևավորման և իրացման հատուկ ոլորտի, մյուս կողմից՝ գործառույթային-նպատակային նշանակության հետ: Տվյալ դեպքում այդպիսի ոլորտ է հանդիսանում մեր հասարակության հոգեկան ստեղծագործության ոլորտը: Ինչ վերաբերում է նշված հասարակական կապերի գործառույթային-նպատակային նշանակությանը, ապա այն կայանում է որոշակի կազմակերպա-իրավական կառուցակարգի մասվորման և գործառույթային մեջ, որի հիմնական խնդիրն է երևան հանել, գիտության, գրականության, արվեստի լավագույն և արդյունավետ ստեղծագործություններ և խրախուսել այդպիսի ստեղծագործությունների հեղինակներին: Մրցույթի խրախուսական բնույթը նրա էական հատկանիշներից մեկն է: Մրցույթի պայմաններով նախատեսված որոշակի լավագույն աշխատանքի կատարման համար հատուկ վարձատրություն /պարգև/ տալու մասին մրցույթի կազմակերպչի հայտարարությունը ոչ միայն նպաստում է մրցույթի մասնակիցների մրցակցային ոգու բարձրացմանը և ներկայացված աշխատանքներից բազմակողմանի և օբյեկտիվ ընտրության միջոցով լավագույններն առանձնացնելու հնարավորության ապահովմանը, այլ նաև անուղղակի ձևով կազմակերպում է մրցույթի մասնակիցների գործունեությունը՝ կապված աշխատանքի փնտջի, ներկայացման ժամկետի, աշխատանքի ձևի և այլնի հետ:

Իր իմաստային նշանակությամբ «մրցույթ» հասկացությունը նշանակում է մրցապայքար, մրցակցություն: Դրա համար էլ նրան են դիմում ցանկացած ժամանակ, երբ անհրաժեշտ է հնարավոր արդյունքների շրջանակից ստանալ լավագույնը: Բայց, իր կոնկրետ բովանդակությամբ և իրավական կարգավորման առանձնահատկություններով մրցույթն ունի տեսակային տարբերություններ և անց է կացվում տարբեր հարաբերություններին իրավաբանական արտահայտություն տալու համար: Նրանց մի մասը ծագում է աշխատանքային հարաբերու-

1. Տե՛ս Ա. Գ. Սերգեյևի, Յու. Կ. Տոլստոյի խնդրադրությամբ նշվ. աշխ., էջ 694:

թյունների ոլորտում և կարգավորվում է աշխատանքային օրենսդրության նորմերով: Աշխատանքային իրավունքում մրցույթը հանդիսանում է աշխատանքային իրավահարաբերությունների ծագման հիմքերից մեկը: Մասնավորապես, այդպիսի հարաբերություններ են առաջանում մասնագետների ընտրության մրցույթներում: Մյուսները նպատակ են հետապնդում ի հայտ բերել կոնկրետ սուբյեկտի, որի հետ պետք է կնքվի համապատասխան քաղաքացիաիրավական պայմանագիր: Այդպիսին է՝ աճուրդի պայմանագրի կնքման կարգը, մասնավորապես, պետական և համայնքային /մունիցիպալ/ սեփականության մասնավորեցման ժամանակ:

Նախկինում մրցութային իրավահարաբերությունները հանդիսանում էին նաև վարչական իրավունքի կարգավորման առարկա: Վարչական իրավունքում մրցույթն անց էր կացվում որևէ տեխնիկական, գիտական և այլ խստորեն որոշված առաջադրանքների թեմայով՝ լավագույն գիտական ձեռքբերումների ընտրության նպատակով՝:

Որպես պարզ և վճարելու հրապարակային խոստման տեսակ և հատուկ պարտավորական իրավահարաբերության ծագման յուրահատուկ հիմք հրապարակային մրցույթը կարգավորվում է ՀՀ քաղ. օր. 1043-1047 հոդվածներով: Մրցութային իրավունքն իրենից ներկայացնում է յուրահատուկ քաղաքացիաիրավական ինստիտուտ՝ քաղաքացիաիրավական նորմերի համակցություն, որոնք կարգավորում են որոշակի հասարակական հարաբերություններ՝ կապված մրցույթ հայտարարելու, աշխատանքները մրցույթին ներկայացնելու, մրցույթի պայմանները փոփոխելու, աշխատանքները գնահատելու և սահմանված պարզև /վարձատրությունը/ փոխանցելու, պարզևի չարժանացած աշխատանքները վերադարձնելու, պարզևի արժանացած ստեղծագործությունները օգտագործելու հետ: Այդպիսի մրցույթը, որպես քաղաքացիաիրավական ինստիտուտ, իր մեջ ներառում է նաև անորոշ շրջանակի անձանց մրցակցության հիման վրա հաղթողին հատուկ վարձատրություն վճարելու հետ կապված հարաբերություններ:

Որպեսզի հրապարակային մրցույթն իրավաբանորեն պարտադիր լինի և նրանում մասնակցող անձանց համար առաջացնի քաղաքացիաիրավական հետևանքներ /իրավունքներ և պարտականություններ/, պետք է պահպանվեն հետևյալ պայմանները.

ա/ որոշակի աշխատանքի լավագույն կատարման կամ այլ արդյունքների հասնելու համար պարզևի խոստումը պետք է լինի **հրա-**

**պարակային**, այսինքն՝ հասցեագրված լինի անորոշ թվով անձանց Ա.Ն.Գուլը նշում է, որ մրցույթի հրապարակային բնույթը ենթադրում է մրցակցություն, մրցապայքար, որը, ըստ նրա, համարվում է մրցույթի պարտադիր տարր՝:

Կախված նրանից, թե ում է հասցեագրված մրցույթում մասնակցության առաջարկը, տեսական գրականության և քաղաքացիական օրենսդրության մեջ մրցույթները բաժանվում են երկու տեսակի՝ բաց և փակ:

Բաց մրցույթի դեպքում նրանում մասնակցության առաջարկը հասցեագրված է բոլոր ցանկացողներին, և նրան արձագանքած ցանկացած անձ կարող է մրցույթի մասնակից դառնալ: Այդ դեպքում մրցույթի մասնակիցների շրջանակը կարող է լինել ավելի լայն /բոլոր ցանկացողներին ներգրավել մրցույթին/ կամ ավելի նեղ /մրցույթ՝ որոշակի մասնագիտություն ունեցող անձանց միջև/: Սակայն, մրցույթը միշտ էլ բնութագրվում է նրանով, որ մրցույթի կազմակերպչի համար նրա մասնակիցների կոնկրետ կազմն անորոշ է և անհայտ: Նույնիսկ այն մասնակ, երբ մրցույթն անց է կացվում որոշակի որակավորում ունեցող անձանց միջև, կամ, երբ մրցույթի կազմակերպիչը նախապես ընտրում է մրցույթին մասնակցելու ցանկություն ունեցող անձանց, հրապարակային բնույթ ունեցող մրցույթը չի դադարում բաց մրցույթ լինելուց: Փակ մրցույթն, ընդհակառակը, բնութագրվում է նրանով, որ մրցույթում մասնակցություն ունենալու առաջարկը հասցեագրված է մրցույթի կազմակերպչի կողմից ընտրված որոշակի անձանց շրջանակի: Այդ դեպքում մրցույթի մասնակիցների շրջանակը միշտ սահմանափակ է և հայտնի է նրա կազմակերպչին: Ի դեպ, փակ մրցույթի դեպքում մրցույթի կազմակերպիչն իրավունք չունի իրականացնել մրցույթի մասնակիցների նախնական ընտրությունը՝:

Մեր կարծիքով, մրցույթի հրապարակային բնույթից ելնելով, անհրաժեշտ է տարբերել մրցույթի երեք տեսակներ՝ բաց, սահմանափակ և փակ:

Ինչպես արդեն նշվեց, բաց մրցույթը հասցեագրված է բոլոր ցանկացողներին, և նրան արձագանքած ցանկացած անձ կարող է դառնալ մրցույթի մասնակից: Փակ մրցույթի դեպքում մրցույթի կազմակերպչի մրցույթում մասնակցության առաջարկն ուղղված է անձանց որոշակի շրջանակի: Ի դեպ, սահմանափակ մրցույթը ևս հասցեագրված է բոլոր ցանկացողներին, սակայն նրանում որոշակի անձանց մասնակցություն-

1. *Տես Советское гражданское право. Т. 2. М., 1985, էջ 501:*

1. *Տես Усов А.Н. Гражданское право. Учебник в 3 томах. Т. 2. М., 2003, էջ 404:*  
2. *Տես նույն տեղում, էջ 405:*

ընդ սահմանափակված է: Օրինակ՝ հայտարարվել է մրցույթ, որին կարող են մասնակցել տասնութ տարին լրացած բոլոր ցանկացողները, այսինքն՝ առկա է տարիքային սահմանափակում, և անչափահասների մասնակցությունը մրցույթին սահմանափակված է: Կամ՝ հայտարարվել է գեղեցկության մրցույթ, որին, որպես կանոն, կարող են մասնակցություն ունենալ իգական սեռի բոլոր ցանկացողները: Այստեղ արդեն սահմանված է սեռային սահմանափակում՝ արական սեռի անձինք մրցույթին չեն մասնակցում:

Փակ մրցույթի անցկացումը չի հակասել նաև նախկինում գործող օրենսդրությանը: Ի դեպ, 1964թ. Քաղ. օր. մրցույթին նվիրված գլուխը չի բովանդակել ցուցում փակ մրցույթի անցկացման հնարավորության մասին: Դա, իր հերթին, խոսում է այն մասին, որ փակ մրցույթն էականորեն տարբերվում է սովորական մրցույթից և ունի այլ իրավական բնույթ: Այդ կարծիքի կողմնակիցները փակ մրցույթի առանձնահատկությունը տեսնում էին նրանում, որ կազմակերպիչը մի կողմից պարտավոր է վճարել իր կողմից հրավիրված բոլոր մասնակիցների աշխատանքի դիմաց, որոնք կատարել են մրցույթի պայմանները, իսկ մյուս կողմից՝ միաժամանակ ձեռք է բերում մրցույթի մասնակիցների աշխատանքի արդյունքները, այդ թվում նաև՝ մրցույթում չհաղթած մասնակիցների աշխատանքներն օգտագործելու իրավունք<sup>1</sup>: Դրա հետ կապված Ա.Բ.Չեգորայտիսը նշել է. «Փակ մրցույթը համալիր իրավական ինստիտուտ է, որն իր մեջ պարունակում է քաղաքացիական, աշխատանքային և վարչական իրավանորմի տարրեր<sup>2</sup>»: Օ.Ս.Իոֆֆեն գտնում է, որ փակ մրցույթ հայտարարելուց և նրանում մասնակցություն ունենալուց ծագող հարաբերություններն ունեն պայմանագրային բնույթ: Փակ մրցույթ հայտարարելը հրապարակային բնույթ չի կրում, այդ պատճառով էլ, ըստ Օ.Ս.Իոֆֆեի, այն պետք է դիտել որպես պայմանագիր կնքելու առաջարկ /օֆերտա/: Այդ դեպքում փակ մրցույթներն «իրենցից ներկայացնում են առանձին պայմանագրերի խումբ՝ կնքվելով մասնակիցներից յուրաքանչյուրի հետ, որոնք անկախ մրցույթում զբաղեցրած տեղից և գնահատման որոշման ընդունումից, իրավունք ունեն ստանալ կատարած աշխատանքների վարձատրությունը<sup>3</sup>»: Փակ մրցույթում մասնակցի կողմից կատարած աշխատանքը լավագույնը ճանաչվելու դեպքում վերջինս ձեռք է բերում պարգևի ձևով լրացուցիչ վարձատրություն ստանալու իրավունք:

1. Տե՛ս Дзегорайтис А.Б. Конкурсы в советском гражданском праве. Л., Автореферат канд. дисс., 1969, էջ 9:

2. Տե՛ս Օ.Ս.Իոֆֆեի նշված աշխատությունը, էջ 786-787:

Ըստ Մ.Վ.Գորդոնի, փակ մրցույթների դեպքում մի քանի կոնկրետ, որպես կանոն, խոշոր մասնագետներ ստանում են միևնույն աշխատանքի վերաբերյալ պատվեր: Այդպիսի պատվերը սովորաբար ենթակա է վարձատրության՝ անկախ մրցույթում հաղթող ճանաչվելու և մրցույթի պայմաններով նախատեսված վարձատրության արժանատիության հանգամանքից: Եվ եթե այլ քան նախատեսված չէ մրցույթի պայմաններով, աշխատանքի օգտագործման իրավունքն անցնում է պատվիրատուին<sup>4</sup>:

Վ.Ի.Սերեբրովսկին փակ մրցույթը դիտում է որպես շինության կամ հուշարձանի նախագծի պատրաստման պատվերի պայմանագրի տարատեսակ, որի դեպքում մի քանի որոշակի անձինք միևնույն թեմայով ստեղծագործությունն ստեղծելու պատվեր են ստանում<sup>5</sup>:

Քննարկվող իրավական ինստիտուտի վերլուծությանն այլ մոտեցում է ցուցաբերում Վ.Ն.Սմիրնովը: Նրա կարծիքով փակ մրցույթն իրենից ներկայացնում է «յուրօրինակ իրավական ինստիտուտ», որում միավորվում են մրցույթի և հեղինակային պատվերի պայմանագրի հատկանիշները<sup>6</sup>: Վ.Ն.Սմիրնովը միաժամանակ ընդգծում է, որ փակ մրցույթը մրցույթի տարատեսակ է, և ներկայացնում է այդ ինստիտուտների մասնության գծերը.

1/ միևնույն աշխատանքը կատարվում է մի քանի մասնակիցների կողմից,

2/ մրցույթի կազմակերպիչն իր վրա պարտականություններ չի վերցնում հրապարակելու այն ստեղծագործությունները, որոնք լավագույն չեն ճանաչվել,

3/ լավագույն ճանաչված աշխատանքի հեղինակը ստանում է պարգև /մրցության վարձատրություն/, որը վճարվում է հեղինակային վարձատրությունից ոչ պակաս չափով,

4/ մրցույթին ներկայացված բոլոր աշխատանքների թվից լավագույն աշխատանքի ընտրությունն իրականացվում է մրցույթի կազմակերպիչի կողմից լիազորված ժյուրիի կամ մրցության հանձնաժողովի կողմից<sup>7</sup>:

1. Տե՛ս Гордон М.В. Советское авторское право. М., Госгиздат, 1955, 112-113 էջերի:

2. Տե՛ս Серебровский В.И. Вопросы советского авторского права. М., изд. АИ СССР, 1956, էջ 70:

3. Տե՛ս Смирнов В.И. Конкурсы в советском гражданском праве. Л., 1964, էջ 69:

4. Տե՛ս նույն տեղում, էջ 70:

Քաղ. օր. 1043 հոդվածի 2-րդ կետից միաժամանակ բխում է, որ փակ մրցույթը, չնայած օժտված չէ մասնակիցների կազմի անորոշության հատկանիշով, այնուամենայնիվ, մեր համոզմամբ, հանդիսանում է հրապարակային մրցույթի տարատեսակ: Այդ պատճառով էլ նրա վրա տարածվում են հրապարակային մրցույթի մասին Քաղ. օր. 58-րդ գլխով նախատեսված հիմնական դրույթները.

բ/ հրապարակային մրցույթը պետք է ուղղված լինի **որևէ հանրօգուտ նպատակի հասնելուն**: Կարելի է, օրինակ, հայտարարել մրցույթ շենքերի բակերը լավագույնը կանաչապատման, կամ տնամերձ տարածքի բարեկարգման, կամ դպրոցի շենքի վերանորոգման համար, բայց չի կարելի մրցույթ հայտարարել, օրինակ, ընտանի կենդանիներին լավագույնը խնամելու համար:

Վերջին տարիներին ԼՂՀ-ում կրթության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից կազմակերպվող և անցկացվող մրցույթները հիմնականում հետապնդում են հանրորեն օգտակար նպատակներ: Այսպես, «Տարվա լավագույն ուսուցիչ» մրցույթի հայտարարությամբ տվյալ մրցույթը հետապնդում է առարկայական խորը պատրաստվածություն ցուցաբերած, տաղանդաշատ, ստեղծագործական աշխատանք կատարող ուսուցիչներին բացահայտելու, նրանց մանկավարժական և մասնագիտական առաջավոր փորձը տարածելու, հասարակության մեջ ուսուցիչ մականավարժի հեղինակությունը բարձրացնելու նպատակներ<sup>1</sup>: «Տարվա լավագույն դպրոց» մրցույթի նպատակն է բացահայտել և խրախուսել ժամանակակից պահանջներին բավարարող լավագույն դպրոցները, ընդհանրացնել և տարածել այդ դպրոցների փորձը, դրանով իսկ նպաստել դպրոցի հեղինակության, դերի ու նշանակության, ուսուցչի վարկի բարձրացմանը<sup>2</sup>: Համանման հանրօգուտ նպատակների հասնելուն են ուղղված ԼՂՀ կրթության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից յուրաքանչյուր տարի կազմակերպվող և անցկացվող «Տարվա լավագույն տնօրեն», «Տարվա լավագույն մանկական ստեղծագործական կենտրոն», «Տարվա լավագույն մշակույթի տուն» մրցույթները:

Հրապարակային մրցույթի նպատակը բնակչության առավել լայն շրջանակի /օրինակ՝ բնակավայրի բնակիչների, եթե հայտարարվել է

1. Տես ԼՂՀ կրթության, մշակույթի և սպորտի նախարարության «Լուսարար» պաշտոնաթերթի 2003թ. հունվար ամսվա թիվ 1 համարը:

2. Տես ԼՂՀ կրթության, մշակույթի և սպորտի նախարարության «Լուսարար» պաշտոնաթերթի 2004թ. հունվարի 31-ի 2/64/ համարը:

մրցույթ՝ գետի վրայով անցկացվող կամուրջի նախագիծ մշակելու նպատակով/, մարդկանց որոշակի խմբի /օրինակ՝ ուսանողների/, ամբողջ հասարակության կամ պետական շահերի և պահանջմունքների բավարարումն է:

Մենք այն կարծիքին ենք, որ հրապարակային մրցույթի քննարկվող հատկանիշը՝ որևէ հանրորեն օգտակար նպատակ հետապնդելը, Ուսաստանի Ղաշնության քաղ. օր. 1057 հոդվածի 2-րդ կետի օրինակով պետք է իր արտացոլումը գտներ ՀՀ քաղ. օր. 1043 հոդվածում.

գ/ խոստացված վարձատրությունը պետք է լինի ոչ թե սովորական՝ աշխատանքային, հեղինակային օրենսդրությամբ նախատեսված այս կամ այն աշխատանքի կատարման համար սահմանված վճարի, այլ **հատուկ սահմանված պարգևի** ձևով:

Պարզևր արժեքավոր իրը, դրանք կամ այլ բան է, որը տրվում է մրցության մեջ հաղթողին իբրև մրցանակ<sup>1</sup>:

Այդ հատուկ սահմանված պարգևը մրցույթում հաղթողին է տրվում ստեղծած արդյունքի համար՝ անկախ իր կատարած աշխատանքի համար այլ տեսակի վարձատրություն ստանալու իրավունքից: Այդ դեպքում պարգևը պետք է լինի դրամական կամ իրային /օրինակ՝ ուղեգիր, հանգստյան տուն, հեռուստացույց, կամ անվճար բնակարան տրամադրել և այլն/: Ճիշտ է նկատում պրոֆ. Գ.Ղարախանյանը, որ մրցույթի հաղթողին այլ կերպ խրախուսումը, մասնավորապես, բարոյական բնույթի խրախուսանքի միջոցները, օրինակ՝ զավաթ, գովասանագիր, դիպլոմ, մեդալ, այլ տարբերիչ նշաններ տալը, եթե դրանք չեն զուգակցվել պարգև տալու հետ, չեն ձանաչվում մրցութային վարձատրություն<sup>2</sup>: Կարևոր է, որ պարգևի տեսակը և չափը միանշանակ նշված լինեն մրցույթի հայտարարության մեջ.

դ/ պարգևը պետք է խոստացվի որոշակի աշխատանքի լավագույն կատարման կամ այլ արդյունքների հասնելու համար, որը ենթադրում է տարբեր անձանց կողմից որակական հատկանիշներով իրարից տարբերվող արդյունքներից մեկի համեմատության և ընտրության հնարավորություն:

Այն արդյունքը, որին հասնելու համար հրապարակայնորեն պարգև է խոստացվել, կարող է լինել երկակի: Առաջադրված թեմայով գեղարվեստական ստեղծագործություն գրելը, հուշարձանի նախագիծ մշա-

1. Տես ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, հատոր 3, 4-Մ, Հայկական ՄՍՀ գիտությունների ակադեմիայի հրատարակչություն, Եր., 1974, էջ 570:

2. Տես Հայաստանի Հանրապետության քաղաքացիական իրավունք: Երկրորդ մաս, Եր., 2011, էջ 583:

կելը և այլն իրականացվում են միմյանցից անկախ, տարբեր անձանց կողմից և դրա համար էլ գնահատվում են ըստ որակի: Ընդհակառակը, կորած իրը գտնելը, կամ այլ համանման նպատակի հասնելը ենթարկվում է միայն միատեսակ արդյունքի, երբ համեմատական եղանակով, ըստ որակի, գնահատելը բացառվում է: Դրան համապատասխան պարզև վճարելու հրապարակային խոստումը, որպես սեռային հասկացություն, հիմք է ծառայում առանձնացնելու համար հրապարակային մրցույթը, որպես պարզև վճարելու հրապարակային խոստման տեսակային հասկացություն, որը ենթադրում է հասնել ոչ թե ցանկալի, այլ այնպիսի արդյունքի, որը մնացած արդյունքների մեջ կձանաչվի լավագույնը:

Ներկայացված աշխատանքը պետք է համապատասխանի մրցույթի պայմաններին, իսկ իր բնույթով լինի այնպիսին, որ նրա արդյունքը տարբեր անձանց կողմից կատարվելու դեպքում լինի համեմատելի: Այդ պատճառով էլ մրցույթը պետք է ձանաչել չկայացած, եթե ներկայացվել է միայն մեկ աշխատանք /մեկ արդյունք/ կամ էլ՝ թեկուզև մի քանիսը, սակայն մեկ անձի կողմից: Ընդ որում, միևնույն հեղինակը գրված չէ միևնույն մրցույթին մի քանի աշխատանքներ ներկայացնելու հնարավորությունից:

Աշխատանքի բնույթը և բովանդակությունը, որի լավագույն կատարման համար հրապարակայնորեն խոստացվել է հատուկ վարձատրություն /պարգև/, որոշվում են մրցույթի պայմաններով: Այն աշխատանքը, որ թեկուզև տարբերվում է բարձր որակով, բայց չի համապատասխանում մրցույթի պայմաններին, ընդհանրապես, չի թույլատրվում ներկայացնել մրցույթին:

Հրապարակային մրցույթի վերոնշյալ հատկանիշներն իրենց համակցությամբ հնարավորություն են տալիս ներկայացնելու հրապարակային մրցույթի հասկացության գիտական բնորոշումը՝ **հրապարակային մրցույթ է համարվում որևէ հանրօգուտ նպատակի հասնելու համար հատուկ սահմանված ձևով գույքային բնույթի պարզև տալու հրապարակային խոստումը, որը ենթադրում է ըստ որակի համեմատելի աշխատանքներից կամ այլ արդյունքներից լավագույնն ընտրելու հնարավորություն:**

Քաղաքացիական իրավունքում հրապարակային մրցույթի հրավական բնույթը որոշելու համար անհրաժեշտ է վերլուծել մրցույթի կազմակերպման և անցկացման բոլոր էական պայմանները:

Քաղաքացիաիրավական մրցույթին յուրահատուկ են հետևյալ պայմանները՝

1. մրցույթ հայտարարելով՝ կազմակերպիչը ներկայացվող աշխատանքների համար սահմանում է որոշակի պահանջներ և նշանակում է դրանց ներկայացման ժամկետը: Մրցույթի նպատակին կարող է ծառայել միայն կատարված աշխատանքի արդյունքը, այլ ոչ թե ստեղծագործական գործունեության գործընթացը: Ընդ որում, մրցույթի կազմակերպչին չի հետաքրքրում, թե ինչ մեթոդներով և աշխատանքի ինչ կրուստներով է ստացվել տվյալ արդյունքը,

2. իր վրա վերցնելով պարզև /վարձատրություն/ տալու պարտականությունը՝ մրցույթի կազմակերպիչն իրավունք է ստանում որոշելու, թե մրցույթի մասնակիցներից ով է լավագույնը կատարել հայտարարությամբ սահմանված առաջադրանքը: Որպես կանոն, մրցույթի կազմակերպիչը գիտության, գրականության, արվեստի տվյալ բնագավառի մասնագետներից ձևավորում է հատուկ մարմին՝ ժյուրի կամ մրցութային հանձնաժողով, որին էլ վստահում է ներկայացված աշխատանքների քննարկումը և գնահատումը՝ նրան տալով համապատասխան լիազորություններ,

3. մրցույթի մասնակիցներն իրենց աշխատանքի արդյունքները՝ կատարված աշխատանքները, որոնք պետք է համապատասխանեն հայտարարված մրցույթի պայմաններին, սահմանված ժամկետում ներկայացնում են մրցույթին: Մրցույթին աշխատանքները ներկայացնելը, ինչպես նշում է Վ.Ն.Սմիրնովը, դեռ մրցույթի կազմակերպչին չի պարտավորեցնում վարձատրություն տալ, այլ ծագում է միայն կոնկրետ պարտականություն՝ քննարկել աշխատանքի արժանիությունը, որոշել նրա համապատասխանությունը հայտարարության պայմաններին և այլ աշխատանքների հետ նրա որակական հարաբերակցությունը: Աշխատանք ներկայացնելը, ըստ Վ.Ն.Սմիրնովի, բոլոր դեպքերում հանդիսանում է այն բարդ իրավաբանական կազմի անհրաժեշտ տարրերից մեկը, որը վարձատրություն տալու հիմք է ծառայում՝,

4. լավագույն աշխատանքի կամ այլ արդյունքի ընտրության և պարզև վճարելու մասին որոշումն ընդունում են մրցույթի կազմակերպիչ կողմից լիազորված բարձրորակ մասնագետները: Այդ որոշումն ընդունելիս պետք է ապահովվի մրցութային հանձնաժողովի /ժյուրիի/ անդամների օբյեկտիվության և անաչառության բարձր աստիճան: Տվյալ որոշումը հենվում է մրցակցող հեղինակների կողմից ներկայացված բազմաթիվ աշխատանքներից առանձին լավագույն աշխատանքների /այլ արդյունքների/ ընտրության վրա: Աշխատանքը

1. Տես Վ.Ն.Սմիրնովի նշվ. աշխ., էջ 23:

/այլ արդյունքը/ լավագույնը ճանաչելու վերաբերյալ որոշումը իրավական հիմք է հանդիսանում հեղինակներին՝ մրցույթի մասնակիցներին հայտարարությամբ սահմանված վարձատրություն տալու համար,

5. մրցույթի մասնակիցները մրցույթի կազմակերպչին են փոխանցում իրենց աշխատանքների նկատմամբ սեփականության իրավունքը՝ միաժամանակ պահպանելով այդ ստեղծագործությունների նկատմամբ հեղինակի գույքային և անձնական ոչ գույքային իրավունքները: Մրցույթի կազմակերպչի կողմից հայտարարված պարզև ստանալու համար անհրաժեշտ է, որ աշխատանքը ներկայացվի սահմանված ժամկետում, բավարարի մրցույթի հայտարարությամբ սահմանված պահանջներին և գնահատվի ու լավագույնը ճանաչվի մրցույթին ներկայացված բոլոր աշխատանքների մեջ,

6. գիտության, գրականության կամ արվեստի ստեղծագործություններ ստեղծելու մրցույթում կազմակերպիչը պարզև արժանացած ստեղծագործական հեղինակի հետ այդ ստեղծագործությունն օգտագործելու համար հեղինակային պայմանագիր կնքելու նախապատվության իրավունք է ձեռք բերում,

7. մրցույթում հաղթող չճանաչված աշխատանքները մրցույթի կազմակերպիչը վերադարձնում է դրանց հեղինակներին, բացառությամբ, եթե աշխատանքները վերադարձնելն անհնար է՝ դրանց բնույթից ելնելով:

## **§ 2. Հրապարակային մրցույթ հայտարարելու պայմանները և հայտարարության ձևը**

Մրցույթի անցկացման մասին հայտարարությունը, այսինքն՝ ակտը, որում արտահայտվում է որոշակի աշխատանքի լավագույն կատարման համար պարզև հրապարակային խոստումը, կարող է արվել տարբեր ձևերով՝

1/ գրավոր, օրինակ, թերթերում, ամսագրերում, լրագրերում, հատուկ տեղեկատվական թերթում /բյուլետեն/՝ հրապարակելու, ինտերնետ կայքում տեղադրելու, հասարակական վայրերում համապատասխան հայտարարությունը փակցնելու միջոցով և այլն:

2/ բանավոր, օրինակ, հեռուստատեսությամբ, ռադիոյով, հրապարակային ելույթներում և այլն:

Այն տեղեկությունները /պայմանները/, որոնք պետք է պարունակի մրցույթի հայտարարությունը, նախատեսված են օրենքով: Պրոֆեսոր Գ.Ղարախանյանը հրապարակային մրցույթ հայտարարելու պայման-

ները բաժանում է պարտադիր և ֆակուլտատիվ պայմանների: Չստորա, պարտադիր են այն պայմանները, որոնք պետք է նշված լինեն ցանկացած մրցույթի հայտարարման դեպքում: Ֆակուլտատիվ այն պայմաններն են, որոնք նշվում են մրցույթի կազմակերպչի հայեցողությամբ: Դրանց քանակը և բնույթը կախված է մրցույթի առանձնահատկություններից: Քաղ. օր. 1043 հոդվ. 3-րդ կետում սահմանված է, որ հրապարակային մրցույթի հայտարարությունը պետք է առնվազն նախատեսի առաջադրանքի էությունը, աշխատանքների կամ այլ ձեռքբերումների չափանիշները և գնահատման կարգը, դրանց ներկայացման վայրը, ժամկետն ու կարգը, պարզև չափը և ձևը, ինչպես նաև մրցույթի արդյունքների հրապարակման ժամկետներն ու կարգը:

Այստեղ, օրենսդիրն օգտագործում է «աշխատանքներ կամ այլ ձեռքբերումներ» բառակապակցությունը, որը, մեր կարծիքով, ճիշտ համարել չի կարելի: Ձեռք բերել կարելի է իրավունքը, իրը: Տվյալ դեպքում խոսքը վերաբերվում է որևէ արդյունքին հասնելուն:

Բացի այդ, Քաղ. օր. վերոնշյալ նորմում տեղ է գտել ակնհայտ սխալ և անիմաստ ձևակերպում: Ինչպե՞ս հասկանալ «աշխատանքների կամ այլ ձեռքբերումների չափանիշներ» բառակապակցությունը, եթե մինչ այդ, որպես հրապարակային մրցույթի հայտարարության պարտադիր պայման, նշվում է առաջադրանքի էությունը: Եթե ընդունենք, որ ՀՀ քաղ. օր. 1043 հոդվածի 3-րդ կետի տեքստը հայերեն թարգմանվել է ՌԴ քաղ. օր. 1057 հոդվածի 4-րդ կետի տեքստից, ապա «критерии и порядок оценки результатов работы или иных достижений» բառակապակցությունը հայերեն թարգմանությամբ արտահայտում է հետևյալ իմաստը. «Աշխատանքների կամ այլ արդյունքների գնահատման չափանիշները և կարգը»:

Վերջին ձևակերպումը համապատասխանում է նորմի էությանը և միանգամայն տարբեր իմաստ ունի: Մեր կարծիքով, աշխատանքների կամ այլ արդյունքների գնահատման չափանիշները և կարգը մրցույթի հայտարարության մեջ որպես պարտադիր պայման նշելուց բացի, պետք է հայտարարության մեջ ներառել նաև գնահատման ժամկետի մասին պայմանը, որն էական նշանակություն ունի մրցույթի հավանական մասնակիցների համար:

Բացի նշվածներից, վերոնշյալ նորմում խախտվել են մրցույթ հայտարարելու պարտադիր պայմանների թվարկման հաջորդականությունը. սկզբից նշվել է գնահատման կարգը, այնուհետև աշխատանք-

1. Տե՛ս Հայաստանի Հանրապետության քաղաքացիական իրավունք: Երկրորդ մաս, Եր., 2001, էջ 583:

ների կամ այլ արդյունքների ներկայացման վայրը, ժամկետը և կարգը: Բնական է, որ առանց աշխատանքների կամ այլ արդյունքների ներկայացման, գնահատման մասին խոսք լինել չի կարող:

Քաղ. օր. 1043 հոդվածի 3-րդ կետում առկա աղավաղված և թերի ձևակերպումները վերացնելու նպատակով առաջարկում ենք նշված կետը վերախմբագրել հետևյալ կերպ. «Հրապարակային մրցույթի հայտարարությունը պետք է առնվազն նախատեսի առաջադրանքի էությունը, աշխատանքների կամ այլ **արդյունքների** ներկայացման վայրը, ժամկետն ու կարգը, դրանց **գնահատման չափանիշները**, կարգը և **ժամկետը**, պարգևի չափը և ձևը, ինչպես նաև մրցույթի արդյունքների հրապարակման ժամկետներն ու կարգը»:

Պարտադիր պայմանների կամ, թեկուզև, նրանցից մեկի բացակայության դեպքում մրցույթը հայտարարված չի համարվում: Իսկ եթե հայտարարվել է մրցույթ պարտադիր պայմանների /պայմաններից մեկի/ բացակայությամբ, ապա այդպիսի մրցույթն իրավական հետևանքներ չի առաջացնում:

Մրցույթ հայտարարելու պարտադիր պայմաններն են՝

ա/ **տեղեկություններ առաջադրանքի էության**, այսինքն՝ մրցույթի առարկայի կամ «աշխատանքների որոշակիության» մասին: Մրցույթի հայտարարության մեջ առաջադրանքը կամ կատարվող աշխատանքի թեման պետք է նշվի հստակ, պարունակի բովանդակության հիմնական տարրերը, կառուցվածքին ներկայացվող պահանջները և այլն: Օրինակ՝ կառույցի նախագիծ պատրաստելը, գորգ գործելը, դասագիրք գրելը, բնանկար նկարելը, պատմական իրադարձության առթիվ հուշարձանի նախագիծ կազմելը և այլն: Այդ տեղեկությունների մանրամասը նշելը կախված է մրցույթի նպատակներից և բնույթից: Կատարման վարպետության մրցույթի անցկացման ժամանակ բավարար է նշել ժանրի կամ գործունեության տեսակը, իսկ ճարտարապետական օբյեկտի նախագծման մրցույթում, որպես կանոն, նշվում են գեղարվեստական, տեխնիկական և այլ հատկանիշներ:

բ/ **առաջադրանքի կատարման ժամկետը**, այսինքն՝ մրցույթին աշխատանքների ներկայացման ժամկետը: Այն պետք է օժտված լինի այնպիսի շարունակելիությամբ, որը ռեալ կապահովի մրցութային առաջադրանքի կատարումը: Մրցութային պարտավորությունում ժամկետն սկսում է հոսել մրցույթի հայտարարման պահից և ավարտվում է մրցույթի հայտարարության մեջ սահմանված պահին: Մրցույթի մասնակցի համար այդ ժամկետի կարևորությունը պայմանավորված է նրանով, որ աշխատանքները մրցույթին ներկայացնել թույլատրվում է

միայն նշված ժամկետի սահմաններում: Ինչ վերաբերվում է մրցույթի կազմակերպչին, ապա նա գործնականում որոշում է այն ժամանակը, որի ընթացքում ինքն իրավաբանորեն կապված է հայտարարված մրցույթի հետ: Միաժամանակ մրցույթի կազմակերպիչը պարտավոր է այդ ժամկետի ընթացքում կատարել մրցույթից ծագող գործողություններ: Եթե աշխատանքները ժամանակին չեն ներկայացվել մրցույթին, ապա մրցույթը համարվում է չկայացած, եթե մրցույթի կազմակերպիչը չի հայտարարել մրցույթի ժամկետի երկարացման մասին:

Մրցույթի բնույթից կախված՝ ժամկետը կարող է որոշվել՝

1/ ժամանակի որոշակի հատվածով, որի ընթացքում պետք է կատարվի առաջադրանքը, օրինակ, մրցույթի հայտարարման օրվանից վեց ամսվա ընթացքում, կամ մինչև 2007թ. սեպտեմբերի մեկը,

2/ կոնկրետ օրացուցային ամսաթվով, որին հանգում է առաջադրանքի կատարումը, երբ, օրինակ, մրցույթի առարկա է հանդիսանում մրցույթի մասնակիցների կատարողական արվեստը, որը գնահատվում է կատարումը ներկայացնելու հետ միաժամանակ,

3/ կարող են նախատեսվել վերջնական և միջանկյալ ժամկետներ, օրինակ՝ նախնական գնման կամ կատարողներին լսելու միջանկյալ ժամկետը, կամ էլ՝ մրցութային առաջադրանքների կատարման նախագծերի ներկայացման ժամկետը և այլն:

Նախատեսված ժամկետում առաջադրանքը չկատարելը կամ աշխատանքները չներկայացնելը, անկախ դրանց պատճառներից, հանգեցնում են մրցույթին աշխատանքներն ընդունելուց հրաժարվելուն, որը չի կարող բողոքարկվել ո՛չ վարչական, և ո՛չ էլ՝ դատական կարգով: Ինչպես արդեն նշվեց, մրցույթի կազմակերպիչ և մասնակցի միջև մրցութային իրավահարաբերություն է ծագում աշխատանքները մրցույթին ներկայացնելու պահից: Այսինքն՝ կողմերի համար իրավունքներ և պարտականություններ են առաջանում այդ պահից: Ուստի, մրցույթի կազմակերպիչը պարտավոր չէ ընդունել մրցույթի այն մասնակցի կատարած աշխատանքը, որը ներկայացվել է աշխատանքների ներկայացման համար հայտարարության մեջ սահմանված ժամկետից ուշ, թեկուզև այն բավարարի մրցույթի հայտարարության պայմաններին: Այստեղ, աշխատանքները մրցույթին չներկայացնելու պատճառները, թեկուզև դրանք լինեն հարգելի /անհարգախարհի ուժ, հիվանդություն, հայտարարության մասին ժամանակին տեղյակ չլինել և այլն/, որևէ իրավական նշանակություն չունեն և, միանշանակ, աշխատանքների ընդունումը մերժվում է: Դա օրենքի իմպերատիվ պահանջն է:

գ/ **աշխատանքների կամ այլ արդյունքների ներկայացման կարգը** անենից առաջ վերաբերվում է ներկայացման ձևին, ինչպես նաև հարակից այլ պայմաններին, որոնք պետք է պահպանվեն: Մրցույթին աշխատանքների /այլ արդյունքների/ ներկայացման կարգը որոշվում է աշխատանքների բնույթով և արտահայտվում է կամ մրցույթի մասնակցի կողմից նյութական օբյեկտի ձևով /ձեռագրեր, նկարներ, մոդելներ, նախագծեր և այլն՝ գիտության, գրականության, արվեստի կամ մտավոր գործունեության այլ արդյունքների մրցույթի անցկացման դեպքում/ իր աշխատանքի որոշակի արդյունքը մրցույթի կազմակերպչին փոխանցելու, կամ մրցույթի կազմակերպչի կողմից աշխատանքների կատարումն անմիջական ընդունելու ճանապարհով /կատարման վարպետության լավագույնը որոշելու մրցույթի անցկացման դեպքում/:

Մրցույթի պայմաններով կարող է նախատեսվել աշխատանքների ներկայացում նշանաբանով, այսինքն՝ նշանաբանով /համարակալված տարբերանշաններով՝ հեղինակի անունը մինչև նրա աշխատանքը գնահատելը գաղտնի պահելու նպատակով/ կամ որոշակի քանակով նմուշներում հեղինակի ստորագրությամբ<sup>1</sup>: Երբեմն էլ կարող է նախատեսվել պայմանավորված ժամկետներում աշխատանքի նախագծի նախնական ներկայացում և այլն:

Մրցույթին աշխատանքի ընդունումը մերժելը կարող է կատարվել միայն մրցույթի պայմաններին նրա անհամապատասխանության, կամ էլ՝ նրա ներկայացման կարգի և ժամկետների խախտման շարժառիթով: Մնացած դեպքերում մրցույթի կազմակերպիչը պարտավոր է ընդունել մրցույթին ներկայացված աշխատանքները:

դ/ **աշխատանքների ներկայացման վայրը** մյուս պայմանների թվում պետք է նշված լինի մրցույթի մասին հայտարարության մեջ, որն էական նշանակություն ունի ոչ միայն մրցույթի մասնակիցների /օրինակ՝ մրցույթի մասնակիցների կողմից առաջադրանքի կատարման ժամկետը պահպանելու համար/, այլ նաև մրցույթին հասարակության ուշադրությունը գրավելու համար, հատկապես կատարման վարպետության մրցույթի անցկացման դեպքում: Վերջին դեպքում աշխատանքների ներկայացման վայր է ճանաչվում ցուցադրման և գնահատման ենթակա գործունեության իրականացման վայրը:

ե/ **աշխատանքների համեմատական գնահատման չափանիշները, կարգն ու ժամկետները** որոշվում են՝ կախված աշխատանքի առանձնահատկություններից: Որոշ դեպքերում անց է կացվում աշխատանք-

1. Տես Ա.Պ.Սերգեյևի, Յու.Կ.Տոլստոյի խմբագրությամբ նշվ. աշխ., էջ 696:

ների և ներկայացումների նախագծերի նախնական ընտրություն և գնահատում: Մրցույթը կարող է անցկացվել մի քանի փուլերով: Յուրաքանչյուր փուլում անց է կացվում գնահատում և ընտրություն՝ հաջորդ փուլում ավելի արժանի աշխատանքները ներկայացնելու համար /այդ կարգով սովորաբար անց են կացվում կատարողների ընտրության և հուշարձանների պատրաստման մրցույթները/: Աշխատանքի վերջնական գնահատմանը կարող է նախորդել նրա նախնական բաց քննարկումը այս կամ այն կոլեկտիվում, մրցույթին ներկայացված աշխատանքները ցուցահանդես ներկայացնելը /ցուցադրել կինոյով, հեռուստատեսությամբ/՝ այդ աշխատանքների մասին հասարակության կարծիքը որոշելու նպատակով: Աշխատանքի վերջնական գնահատման ժամկետ է ճանաչվում նրա հեղինակին վարձատրություն տալու մասին որոշումն ընդունելու ժամկետը:

զ/ մրցույթի հայտարարության պարտադիր պայման է հանդիսանում հատուկ սահմանված **պարզևի ձևը և չափը**: Պարզևը արժեքավոր իրը, դրանք կամ այլ նյութական արժեք է, որը տրվում է մրցույթում հաղթողին իբրև մրցանակ: Այդ հատուկ սահմանված պարզևը մրցույթում հաղթողին է տրվում ստեղծած արդյունքի համար՝ անկախ իր կատարած աշխատանքի համար այլ տեսակի վարձատրություն ստանալու իրավունքից: Այդ դեպքում պարզևը պետք է լինի դրամական կամ իրային /օրինակ՝ ուղեգիր, հանգստյան տան ուղեգիր, հեռուստացույց, կամ անվճար բնակարան տրամադրել և այլն/: Մրցույթի հաղթողին բացառապես բարոյական բնույթի խրախուսանքի միջոցները, օրինակ՝ գավաթ, զոսկասանազիր, դիպլոմ, մեդալ, այլ տարբերիչ նշաններ տալը, չեն ճանաչվում մրցութային վարձատրություն: Ինչպես արդեն նշվել է, դրանք պետք է զուգակցված լինեն գույքային բնույթի պարզևի հետ: Կարևոր է, որ պարզևի տեսակը և չափը միանշանակ նշված լինեն մրցույթի հայտարարության մեջ:

Վարձատրության /պարզևի/ չափը սովորաբար սահմանվում է որոշակի դրամական գումարի ձևով, բայց կարող է արտահայտվել նաև որևէ այլ գույքային արժեքով: Որպես կանոն, այս կամ այն աշխատանքի մրցույթում զբաղեցրած տեղին համապատասխան սահմանվում են որոշակի չափով մի քանի պարզևներ /օրինակ՝ առաջին տեղը զբաղեցրած աշխատանքի համար՝ տասը հազար դրամ, երկրորդ տեղը՝ ութ հազար, երրորդը՝ հինգ հազար դրամ չափերով պարզևներ/: Երբեմն էլ յուրաքանչյուր տեղի համար կարող են սահմանվել ոչ թե մեկ, այլ մի քանի պարզևներ /օրինակ՝ առաջին տեղի համար՝ մեկ, երկրորդի՝ երկու, երրորդի՝ երեք պարզևներ/:



Չի բացառվում, որ պարզև սահմանվի առանց յուրաքանչյուր տեղի համար պարզևների քանակը նշելու: Օրինակ՝ առաջին կարգի մրցանակ՝ տասը հազար դրամ չափով: Այս դեպքում մրցույթ հայտարարողը չի սահմանափակում մրցանակների քանակը և պարտավորվում է հրապարակային մրցույթի հայտարարության մեջ նշված չափով այն քան պարզև վճարել ամեն տեղի համար, որքան մրցույթում հաղթող կձևանալեն համեմատական գնահատման ժամանակ: Դրա համար էլ Տ.Կ.Բարսեղյանն արդարացիորեն նշում է, որ այդպիսի պայմաններում հայտարարված մրցանակաբաշխությունը հայտարարող կազմակերպությանը դնում է անորոշ վիճակում՝ իր ապագա պարտավորությունների կատարման կապակցությամբ, և այդ պատճառով այն կյանքում գրեթե չի կիրառվում:

Բացի մրցույթում հաղթողներին պարզևներ տալուց, կարող են սահմանվել նաև խրախուսական պարզևներ մրցույթի այն մասնակիցների համար, որոնց աշխատանքները, չնայած մրցանակային տեղ չեն զբաղեցրել, բայց ձանաչվել են արժանի աշխատանքներ: Խրախուսական պարզևների քանակը, դրանց տեսակները և չափերը հաստատվում են մրցույթի կազմակերպչի կողմից: Բացի նյութական բնույթի պարզևներից, մրցույթի հայտարարությամբ կարող են սահմանվել նաև ոչ նյութական բնույթի խրախուսանքներ: Օրինակ՝ մրցույթի կազմակերպչին իրավունք ունի հատուկ վարձատրությունից բացի հաղթողներին շնորհել դափնեկրի կոչում, պարգևատրել գավաթներով, մեդալներով, դիպլոմներով և այլն:

**Է/ մրցույթի արդյունքները հրապարակելու կարգը և ժամկետները**  
մրցույթի արդյունքները որոշվում են մրցութային աշխատանքների գնահատման մասին որոշման մեջ: Մրցութային արդյունքների վերաբերյալ կազմակերպչի որոշումը միակողմանի գործարք է, որը հաղթողի համար ունի իրավաստեղծ, մյուս մասնակիցների համար՝ իրավադարձորենող նշանակություն: Մրցութային արդյունքների վերաբերյալ որոշման մասին մրցութային մասնակիցները պետք է ծանուցվեն այն նույն ձևով, ինչ ձևով ծանուցվել են մրցութային հայտարարության մասին: Օրինակ՝ գրավոր ձևով ծանուցել մրցութային բոլոր մասնակիցներին, կամ՝ միայն մրցութային հաղթողներին և այլն: Այստեղ պարտադիր պայման է հանդիսանում ոչ միայն արդյունքները հրապարակելու կարգը, այլ նաև հրապարակման ժամկետը, որը նշված է լինում մրցութային հայտարարության մեջ:

1. Տես Հայկական ՍՍՀ քաղաքացիական իրավունք: Հատոր 2. Երևանի համալսարան, 1982, էջ 378:

Ինչպես արդեն նշեցինք, մրցույթ հայտարարելու համար պարտադիր պայմաններից բացի կարող են նախատեսվել նաև **ֆակուլտատիվ պայմաններ**:

Մրցութային ֆակուլտատիվ պայմանները որոշվում են նրա կազմակերպչի կողմից և կողմերի փոխհարաբերություններում որոշակիություն սահմանելու համար մանրամասնում են նրա առանձին տարրերը: Ամենից առաջ դրանք վերաբերում են մրցութային ներկայացված աշխատանքների կազմակերպմանը, մրցութային համեմատողովի /ժյուրիի/ կազմին, վարձատրություն տալու կարգին և ժամկետներին, փոխության, գրականության, արվեստի պարգևատրման արժանացած ստեղծագործությունների օգտագործմանը և այդ ստեղծագործությունների հեղինակներին հոնորարի վճարման կարգին, մրցութային մասնակիցների պարզևի չարժանացած աշխատանքների վերադարձման կարգին և այլն:

Ինչպես բազմիցս նշել ենք, Քաղ. օր. 1043 հոդվածի 3-րդ կետում սահմանված են մրցութային հայտարարելու էական պայմանները, որոնք պետք է պարտադիր կերպով նշվեն մրցութային հայտարարության մեջ: Սակայն օրենքով չեն սահմանվել այդ պայմաններից թեկուզ մեկի բացակայությամբ կամ օրենքի, այլ իրավական ակտերի խախտմամբ հայտարարված մրցութային /անվավեր մրցութային/ կամ էլ չկայացած մրցութային մասին կանոններ: Անգամ հիշատակում չի կատարվել այն մասին, որ հրապարակային մրցութային հայտարարության՝ որպես միակողմանի գործարքի նկատմամբ կարող են կիրառվել Քաղ. օր. գործարքների, այդ թվում նաև անվավեր գործարքների մասին նորմերը: Մեր խորին համոզմամբ, մրցութային չկայացած և անվավեր ձևակազմելու հիմքերի օրենսդրական կարգավորումը մրցութային իրավաբարաբերություններում կմտցնի հստակություն և գերծ կպահի տարաբնույթ վիճահարույց մեկնաբանություններից:

Վերոնշյալ անհրաժեշտությունից ելնելով՝ առաջարկում ենք Քաղ. օր. 58-րդ գլխում նոր հոդվածի կարգով «Չկայացած և անվավեր մրցութային» վերտառությամբ նորմ նախատեսել հետևյալ խմբագրությամբ.

«1. Հրապարակային մրցութային համարվում է չկայացած, եթե՝

1/ մրցութային ներկայացվել է միայն մեկ աշխատանք /մեկ արդյունք/ կամ էլ մեկ անձի կողմից ներկայացվել է մի քանի աշխատանքներ /արդյունքներ/.

2/ ներկայացված աշխատանքներից /արդյունքներից/ ոչ մեկը չի համապատասխանում հրապարակային մրցութային հայտարարության

պահանջներին.

3/ անհաղթահարելի ուժի հետևանքով անհնար է դարձել հրապարակային մրցույթի հայտարարությանը նախատեսված աշխատանքները կատարելը կամ այլ արդյունքների հասնելը:

2. Սույն օրենսգրքի 1043 հոդվածի 3-րդ կետով սահմանված պահանջների և գործարքների մասին Քաղ. օր. նորմերի խախտմամբ հայտարարված մրցույթը կարող է դատական կարգով անվավեր ճանաչվել:

3. Անվավեր ճանաչված մրցույթների նկատմամբ կիրառվում են սույն օրենսգրքի գործարքների անվավերության հետևանքների մասին կանոնները»:

Անվավեր կարող են համարվել անգործունակ կամ սահմանափակ գործունակ ճանաչված քաղաքացու, իր կանոնադրությամբ սահմանված իրավունակության սահմանազանցմամբ իրավաբանական անձի հայտարարած մրցույթները, ինչպես նաև այն մրցույթները, որոնցում չեն նշվել այս պայմաններից թեկուզև մեկը՝ առաջադրանքի էությունը, աշխատանքների կատարման ժամկետը, աշխատանքների կամ այլ արդյունքների ներկայացման կարգը, վայրն ու ժամկետը, դրանց համեմատական գնահատման չափանիշները, գնահատման կարգը և ժամկետը, մրցույթի արդյունքները հայտարարելու կարգն ու ժամկետը, պարզևի ձևը և չափը:

Ներկայումս հեռուստատեսությամբ, ռադիոյով հաճախակի ենք լսում, իսկ թերթերում, ամսագրերում հանդիպում հրապարակային մրցույթի այնպիսի հայտարարություններ, որոնցից պարզ չի հասկացվում մրցույթի հայտարարության պարտադիր պայմանները՝ աշխատանքների /այլ արդյունքների/ ներկայացման կարգը, ժամկետը և վայրը, ներկայացվող աշխատանքների համեմատական գնահատման չափանիշները, հատուկ սահմանված պարզևի ձևը և չափը, վարձատրություն տալու կարգն ու ժամկետը և այլն:

Բերենք հետևյալ օրինակը:

Համաշխարհային հայկական կոնգրեսը Ուսաստանի հայերի միության հետ համատեղ ՀՀ կրթության և գիտության նախարարության աջակցությամբ 2006թ. «Իմ հին հայ լեզու» քաղցր ու սրտաբուխ» կամ «Ուր էլ լինես... քո մայր լեզուն չմոռանա» թեմաներով կազմակերպել և անց է կացրել լավագույն գրական և ստեղծագործական ամենամյա միջազգային մրցույթ: Մրցույթի մասին հայտարարության վերլուծությունը ցույց է տալիս, որ մրցույթի կազմակերպիչները պահպանել են մրցույթի հայտարարությանն առաջադրվող, Քաղ. օր. 1043

հոդվածի 3-րդ կետով նախատեսված պահանջների մի մասը՝ կատարվելիք առաջադրանքի էությունը /աշխատանքների ներկայացվող պահանջները/, աշխատանքները ներկայացնելու վայրը, ժամկետն ու կարգը, պարզևների ձևը և չափը, մրցույթի արդյունքների ամփոփման ժամկետը և վայրը: Հայտարարության մեջ ներառվել են նաև մրցույթի հայտարարության ֆակուլտատիվ պայմաններ՝ կապված ներկայացվող աշխատանքների կազմակերպման, մրցութային հանձնաժողովի լիազորությունների հետ: Այնուհանդերձ վերոնշյալ մրցույթի հայտարարությունը հնարավորություն չի տալիս որոշելու աշխատանքների գնահատման չափանիշները, կարգը և ժամկետը, մրցույթի արդյունքների ամփոփման կարգը, որոնք նաև պայմաններ են և կարևոր նշանակություն ունեն մրցույթի մասնակիցների հստակ: Մրցույթի հայտարարության 5-րդ կետում, որպես աշխատանքների գնահատման չափանիշ, միայն նշվել է. «Մրցույթի արդյունքների ամփոփման ժամանակ հավասար բալեր ունենալու դեպքում նախապատվությունը կտրվի հայերեն լեզվով ներկայացված աշխատանքներին»:

Մրցույթի հայտարարության էական պայմաններից մեկի կամ մի քանիսի բացակայությամբ մրցույթներ ներկայումս քիչ չեն հայտարարվում:

Մեր կարծիքով, հրապարակային մրցույթի հայտարարության մեջ առկա թերություններն ու բացթողումները մրցույթի հավանական մասնակիցների մոտ հաճախ տարբեր մեկնաբանությունների տեղիք են տալիս, իսկ հետագայում մրցույթի կազմակերպչի ու նրա մասնակիցների միջև ծագում են վեճեր:

Մրցույթի մասնակիցների իրավունքների և օրինական շահերի պաշտպանության, մրցութային իրավահարաբերություններում հստակություն սահմանելու համար հրապարակային մրցույթ կազմակերպչիս շատ կարևոր է պահպանել նրա պարտադիր պայմանները և, միաժամանակ, ցանկալի է հայտարարության մեջ ներառել նաև մրցույթ հայտարարելու ֆակուլտատիվ պայմանները:

Անհրաժեշտ ենք համարում ներկայացնելու գիտության, գրականության կամ արվեստի լավագույն ստեղծագործություններ ընտրելու հրապարակային մրցույթ հայտարարելու օրինակելի ձև:

\_\_\_\_\_ հրապարակային մրցույթ  
*նշում մրցույթի տեսակի մասին*

\_\_\_\_\_ -ը \_\_\_\_\_ -ից  
*մրցույթի կազմակերպիչ անունը /անվանումը տարին, ամիսը, ամսաթիվը տարին, ամիսը, ամսաթիվը*

հայտարարում է մրցույթ \_\_\_\_\_ թեմայով:  
*առաջարկների էությունը*

Մրցույթին կարող են մասնակցել \_\_\_\_\_:  
*մրցույթին մասնակցող անձանց շրջանակը*

Մրցույթին չեն կարող մասնակցել \_\_\_\_\_:  
*մրցույթին մասնակցելու իրավունք չունեցող անձինք*

Մրցույթը հետապնդում է \_\_\_\_\_ նպատակներ:  
*նշում մրցույթի նպատակների մասին*

Աշխատանքները կամ այլ արդյունքները պետք է մրցույթին ներկայացվեն \_\_\_\_\_:  
*ներկայացման ժամկետը ներկայացման կարգը ներկայացման վայրը*

Մրցույթն անց է կացվելու \_\_\_\_\_ փուլերով:  
*փուլերի քանակը*

Յուրաքանչյուր փուլում անց է կացվելու գնահատում և ընտրություն՝ հաջորդ փուլում ավելի արժանի աշխատանքները /այլ արդյունքները/ ներկայացնելու համար:  
 Մրցույթին աշխատանքները /այլ արդյունքները/ պետք է ներկայացվեն \_\_\_\_\_:  
*աշխատանքներին /այլ արդյունքներին/ ներկայացվող պահանջները*

Մրցույթին ներկայացված աշխատանքների գնահատումը կատարվելու է \_\_\_\_\_:  
*համեմատական գնահատման չափանիշները, կարգը և ժամկետը*

Սահմանված են պարգևներ /մրցանակներ/ \_\_\_\_\_ առաջին տեղի \_\_\_\_\_  
*պարգևի ձևը և չափը*

համար, \_\_\_\_\_ երկրորդ տեղի համար, \_\_\_\_\_ երրորդ տեղի համար:  
*պարգևի ձևը և չափը պարգևի ձևը և չափը*

Սահմանված են նաև պարգևներ \_\_\_\_\_:  
*նշում խրախուսական պարգևների մասին*

Մրցույթի արդյունքները հայտարարվելու են \_\_\_\_\_:  
*նշում կարգի և ժամկետի մասին*

Մրցույթին ներկայացված աշխատանքները /այլ արդյունքները/ գնահատելու համար ձևավորվելու է մրցութային հանձնաժողով /ժյուրի/:

Մրցութային հանձնաժողովը /ժյուրին/ իրավասու է՝ \_\_\_\_\_:  
*նշում լիազորությունների մասին*

Մրցույթի կազմակերպիչը կարող է օգտագործել մրցույթում հաղթող ճանաչված աշխատանքները, որոնք չեն վերադարձվելու մրցույթի մասնակիցներին: Մրցույթում հաղթող ճանաչված աշխատանքների հեղինակների հետ մրցույթի կազմակերպիչն առաջարկում է կնքել հեղինակային պայմանագիր

\_\_\_\_\_ նշում պայմանագրի կնքման ժամկետի, աշխատանքների \_\_\_\_\_:  
 \_\_\_\_\_ օգտագործման, հեղինակներին վարձատրելու և այլ պայմանների վերաբերյալ

Մրցույթում պարգևի չարժանացած աշխատանքները ենթակա են վերադարձման \_\_\_\_\_, կամ վերադարձման ենթակա \_\_\_\_\_:  
*նշում վերադարձման կարգի և ժամկետների մասին*

չեն \_\_\_\_\_:  
*նշում չվերադարձնելու պատճառների մասին*

### § 3. Հրապարակային մրցույթի պայմանները փոփոխելը և մրցույթը վերացնելը

Ինչպես արդեն նշվեց, մրցույթի պարտադիր և ֆակուլտատիվ պայմանները սահմանվում են մրցույթ անցկացնելու մասին հրապարակային հայտարարության մեջ: Ընդհանուր կանոնի համաձայն՝ հրապարակային մրցույթի պայմանները փոփոխման ենթակա չեն, իսկ մրցույթը վերացնել չի թույլատրվում:

Սակայն, կյանքում երբեմն անհրաժեշտություն է առաջանում մրցույթի կազմակերպման և անցկացման ընթացքում փոփոխելու հրապարակայինորեն հայտարարված մրցույթի պայմանները, իսկ հաճախ էլ՝ վերացնելու մրցույթը:

Անհրաժեշտ ենք համարում նշելու, որ Հայկական ԽՍՀ 1964թ. քաղաքացիական օրենսգիրքը նախատեսում էր մրցանակաբաշխության պայմանները փոփոխելու հնարավորություն /443 հոդվ./ ու միաժամանակ հստակ կարգավորում էր մրցանակաբաշխության պայմանները փոփոխելուց ծագող քաղաքացիական հարաբերությունները: Սակայն, նախկին օրենսդրությունը մրցանակաբաշխությունը վերացնելու իրավունք չէր վերապահել մրցույթի կազմակերպչին: Մրցույթի կազ-

մակերպիչը, հայտարարելով մրցանակաբաշխություն, չէր կարող հետագայում այն վերացնել:

« 1998թ. քաղաքացիական օրենսգիրքը ոչ միայն նախատեսել է մրցույթի պայմանները փոփոխելը, այլ նաև կարգավորել է մրցույթի կազմակերպչի կողմից մրցույթը վերացնելուց ծագող հարաբերությունները:

Այսպես, « քաղ. օր. 1044 հոդվածի 1-ին կետում սահմանված է, որ հրապարակային մրցույթ հայտարարած անձն աշխատանքները ներկայացնելու համար սահմանված ժամկետի միայն առաջին կեսի ընթացքում իրավունք ունի փոփոխել դրա պայմանները կամ վերացնել մրցույթը:

Քաղ. օր. վերոնշյալ հոդվածը վերնագրված է հետևյալ կերպ. «Հրապարակային մրցույթի պայմանները փոփոխելը և վերացնելը»: «Մրցույթի պայմանները փոփոխել» ձևակերպումը հասկանալի է, մինչդեռ, ի՞նչ կարելի է հասկանալ «մրցույթի պայմանները վերացնել» բառակապակցության տակ: Այստեղ խոսքը վերաբերվում է մրցույթը վերացնելուն, այլ ոչ թե մրցույթի պայմանները վերացնելուն: Հոդվածի վերնագրից բխող այս սխալ ձևակերպումն արտացոլվել է նաև ամբողջ հոդվածում: Մեր կարծիքով, ճիշտ կլինի Քաղ. օր. 1044 հոդվածը վերնագրել. «Մրցույթի պայմանները փոփոխելը և մրցույթը վերացնելը» և այդ նույն կարգով փոփոխությունը կատարել ամբողջ հոդվածում:

Մրցույթի պայմանները փոփոխելը, դեռ ավելին, այն վերացնելը, հատկապես նրա անցկացման ժամկետի վերջում, կարող է դիպչել և էական վնաս պատճառել նրանում մասնակցելու ցանկություն ունեցող անձանց օրինական շահերին, որոնք այդ ժամանակ արդեն ձեռնարկ են եղել մրցույթի պայմաններով որոշված աշխատանքների կատարմանը, ու դրան համապատասխան կրել կորուստներ: Այդ պատճառով էլ օրենքը մրցույթի պայմանների փոփոխման և մրցույթի վերացման հնարավորություն է նախատեսում միայն աշխատանքների ներկայացման համար սահմանված ժամկետի առաջին կեսի սահմաններում:

Օրենքը միանշանակ արգելում է մրցույթի կազմակերպչի կողմից մրցույթի պայմանները փոփոխելը աշխատանքների ներկայացման ժամկետի երկրորդ կեսում՝ հաշվի առնելով, որ մրցույթի հավանական մասնակիցները ոչ միայն արդեն ձեռնամուխ են եղել մրցութային աշխատանքների կատարմանը, այլև արդեն իսկ ավարտել, նույնիսկ մրցութին են ներկայացրել աշխատանքները և սպասում են համեմա-

տական գնահատմանն ու հաղթող ձանաչվելու դեպքում՝ նաև պարգևատրմանը:

Իրավաբանական գրականության մեջ մրցույթի պայմանների փոփոխման վերաբերյալ հեղինակներն արտահայտել են տարբեր կարծիքներ:

Ի.Բ.Նովիցկին գտնում է, որ մրցույթի պայմաններում որևէ փոփոխություն մտցնել չի կարելի: Նա միաժամանակ բացառում է մրցույթի կազմակերպչի նման իրավունքը նույնիսկ մինչև աշխատանքները մրցույթին ներկայացնելու պահը: Այդ կապակցությամբ Ի.Բ.Նովիցկին ընդգծում է, որ եթե պարզև տալու հրապարակային խոստումը, որպես միակողմանի կամահայտնություն, ինքն իրեն առաջացնում է պարտավորություն, ուրեմն նրանում որևէ փոփոխություն մտցնել չի կարելի<sup>1</sup>:

Ի.Բ.Նովիցկու այդ հետևություններին հակադրվել է Վ.Ն.Սմիրնովը: Վ.Ն.Սմիրնովի կարծիքով այն փաստը, որ մրցույթ հայտարարելը որակվում է որպես միակողմանի գործարք, ամենևին չի կարող մրցույթի պայմաններում փոփոխություն մտցնելու անթույլատրելիությունը հաստատելու հիմք ծառայել: Ըստ նրա, մրցույթ հայտարարելը ինքնամասշտակ չէ: Մրցույթի նպատակը որոշակի խնդրի լուծումն է: Եթե մրցույթի կազմակերպման ընթացքում պարզվի, որ փոխվել են այդ խնդրի լուծմանը ներկայացվող էական պահանջները, ապա մրցույթի կազմակերպչին պետք է իրավունք վերապահել փոփոխելու մրցույթի պայմանները: Ի դեպ, ինչպես նշում է Վ.Ն.Սմիրնովը, անհրաժեշտ է, որ մրցույթի կազմակերպչի այդ իրավունքը որոշակի ձևով հիմնավորվի: Առաջին հերթին մրցույթի մասին հայտարարությունը պետք է հնարավորություն ընձեռի փոփոխելու նրա պայմանները: Երկրորդ, այդպիսի փոփոխությունները թույլատրելի են միայն բացառիկ հանգամանքների առկայության դեպքում, երբ էականորեն փոխվում են մրցութային առաջադրանքին ներկայացվող պահանջները: Վերջապես, մրցույթի պայմանները կարող են փոփոխվել այնպիսի հանգամանքների հետևանքով, որոնք կախված չեն մրցույթի կազմակերպիչից<sup>2</sup>: Ե.Լ.Վակնանն ու Ի.Ա.Գրինգոլցն այն կարծիքին են, որ մրցույթի պայմանների փոփոխությունը թույլատրելի է օբյեկտիվ պատճառներով և միայն մինչև աշխատանքների ներկայացման ժամկետի չրանսպը<sup>3</sup>:

1. *Sten Otdelnyye vidy oblyazatel'stva. Kurs sovetskogo grazhdanskogo prava. M., 1954, էջ 356:*

2. *Sten Վ.Ն.Սմիրնովի նշվ. աշխ., էջ 38:*

3. *Sten E.Л.Вакман, И.А.Грингольц. Авторские права художников. М., 1962, изд. "Сов. художник", էջ 123:*

Ուշագրավ է, որ Վրաստանի գործող քաղաքացիական օրենսգրքի 759 հոդվածի համաձայն չի թույլատրվում այնպիսի փոփոխություններ մտցնել մրցույթի պայմաններում, որոնք կվնասեն մրցույթի մասնակիցներին:

Ելնելով մրցույթի հավանական մասնակիցների մրցույթում հետապնդող շահերից, մեր կարծիքով, կարելի է առանձնացնել մրցույթի պայմանների փոփոխման երկու տարբերակ՝

1/ մրցույթի պայմանների այնպիսի փոփոխություն, որը կվատթառացնի մրցույթի մասնակիցների վիճակը.

2/ մրցույթի պայմանների այնպիսի փոփոխություն, որը կբարելավի մրցույթի մասնակիցների վիճակը:

ՀՀ քաղ. օր-ը թույլատրում է մրցույթի կազմակերպչին աշխատանքների ներկայացման ժամկետի առաջին կեսում կատարելու մրցույթի պայմանների ցանկացած փոփոխություն անկախ նրանից՝ այդ փոփոխությունը կբարելավի, թե կվատթառացնի մրցույթի հավանական մասնակիցների վիճակը:

Մենք իրավաչափ ենք համարում մրցույթի կազմակերպչի կողմից մրցույթի պայմանների այնպիսի փոփոխությունը, որը կբարելավի մրցույթի ապագա մասնակիցների վիճակը /օրինակ՝ ավելացվի պարզների չափը և քանակը/, նույնիսկ եթե այն կատարվի աշխատանքների ներկայացման համար սահմանված ժամկետի երկրորդ կեսում: Չի բացառվում, որ նման փոփոխությունը նյութապես կարող է շահագրգռել և բարոյապես խրախուսել մրցույթի հավանական մասնակիցներին առավել արդյունավետ աշխատելու և մրցույթին լավագույն աշխատանքներ ներկայացնելու: Իսկ մրցույթին լավագույն աշխատանքներ ներկայացնելը հենց բխում է մրցույթի կազմակերպչի շահերից: Ուստի, մրցութային աշխատանքների ներկայացման ժամկետի երկրորդ կեսում մրցույթի հավանական մասնակիցների վիճակը բարելավող մրցույթի պայմանների փոփոխությունը կարող է փոխշահավետ լինել և՛ մրցույթի կազմակերպչի, և՛ մրցույթի հավանական մասնակիցների համար:

Առաջարկում ենք Քաղ. օր. 1044 հոդվածի 1-ին կետին, որպես երկրորդ պարբերություն, ավելացնել. «Աշխատանքների ներկայացման ժամկետի երկրորդ կեսում թույլատրվում է մրցույթի պայմանների այնպիսի փոփոխություն, որը կբարելավի մրցույթի ապագա մասնակիցների վիճակը»:

Մրցույթի պայմանները փոփոխելու և մրցույթը վերացնելու հնարավորությունը կախված չէ հավակնորդների կամահայտնությունից: Պրա համար մրցույթի կազմակերպիչն իրավունք ունի փոփոխություններ

մտցնել նրա պայմանների մեջ նաև այն ժամանակ, երբ հավակնորդներից որևէ մեկը սահմանված ժամկետի առաջին կեսի սահմաններում արդեն ներկայացրել է աշխատանքը: Այդպիսի հանգամանքներում աշխատանքը կատարողը չի կարող պահանջել թույլատրել իրեն մասնակցելու սկզբնական սահմանված պայմաններով, կամ անվավեր ճանաչելու նրանում կատարված փոփոխությունները:

Մրցույթի պայմանները փոփոխելը կամ մրցույթը վերացնելը պետք է կատարվի մինչև հավանական մասնակիցներին, այսինքն՝ այն անձանց, որոնց վրա հենվել է մրցույթի մասին հայտարարությունը, տեղեկացնելը: Այդ նպատակին կարելի է հասնել, եթե մրցույթի պայմանները փոփոխելը կամ մրցույթը վերացնելը կատարվել է այն նույն կարգով, ինչ կարգով հայտարարվել էր մրցույթը: Այդ պահանջը կատարելը մրցույթի կազմակերպչին ազատում է սկզբնական պայմաններով կատարված աշխատանքը մրցույթին ընդունելու պարտականությունից, չնայած այդ աշխատանքի հեղինակը հարգելի պատճառով չի իմացել մրցույթի պայմանների փոփոխման կամ մրցույթի վերացման մասին: Քաղ. օր. 1044 հոդվածի 3-րդ կետի ուժով. «Մրցույթի պայմանները փոփոխելու կամ մրցույթը վերացնելու դեպքում մրցույթ հայտարարած անձը պետք է հատուցի ցանկացած անձի կրած ծախսերը, որը նա կատարել է հայտարարության մեջ նախատեսված աշխատանքի վրա մինչև այն պահը, երբ իրեն հայտնի է դարձել կամ պետք է հայտնի դառնար մրցույթի պայմանները փոփոխելու կամ վերացնելու մասին»:

Մրցույթի կազմակերպիչն ազատվում է ծախսերը հատուցելու պարտականությունից, եթե ապացուցում է, որ նշված աշխատանքը կատարելը կապված չի եղել մրցույթի հետ, մասնավորապես, եթե այն կատարվել է մինչև մրցույթ հայտարարելը, կամ ակնհայտորեն չի համապատասխանում մրցույթի պայմաններին /Քաղ. օր. 1044 հոդվ. 3-րդ կետ/:

Ա.Ն.Գուկը նշում է, որ հրապարակային մրցույթ հայտարարած անձը պարտավոր է սահմանված պարզևը վճարել՝

1/ մրցույթի բոլոր այն մասնակիցներին, որոնք կատարել են հրապարակային մրցույթով պայմանավորված աշխատանք.

2/ եթե մրցույթի կազմակերպիչը չի պահպանել մրցույթի պայմանների փոփոխման կամ մրցույթի վերացման մասին մրցույթի մասնակիցներին ծանուցելու օրենքով սահմանված կարգը.

3/ եթե կատարված աշխատանքները համապատասխանում են հրապարակային մրցույթի պայմաններին՝

1. Տե՛ս Ա.Ն.Գուկի նշված աշխատությունը, էջ 407:

Քաղաքացիագետների իրարամերժ ու հակասական տեսակետների վերլուծությունը ցույց է տալիս, որ մրցութային իրավահարաբերություն ծագում է աշխատանքները մրցութային ներկայացնելու, իսկ մրցութային պարտավորական իրավահարաբերություն՝ աշխատանքները գնահատելու պահից: Աշխատանքները մրցութային ներկայացնելու պահից մրցութային կազմակերպչի և աշխատանք ներկայացրած մասնակցի միջև ծագում են իրավունքներ և պարտականություններ: Մասնավորապես, մրցութային մասնակիցն իրավունք ունի պահանջել մրցութային կազմակերպչից ընդունելու և գնահատելու մրցութային հայտարարության պահանջները բավարարող իր աշխատանքը, իսկ կազմակերպչիչը պարտավոր է ընդունել և համեմատական գնահատման ենթարկել այդ աշխատանքը մրցութային հայտարարության պայմաններով նախատեսված կարգով և ժամկետում: Աշխատանքները գնահատելու պահից մրցութային հաղթող ձևաչված մասնակցի մոտ ծագում է պարզև պահանջելու իրավունք, իսկ կազմակերպչիչը ստանձնում է պարզև տալու պարտականություն: Անշուշտ, տրամաբանական է, որ մինչև որևէ մասնակցի մրցութային աշխատանք չներկայացնի, ապա մրցութային իրավահարաբերություն չի կարող առաջանալ: Այսինքն՝ միայն մրցութային հայտարարելը, այդ թվում նաև մրցութային պայմանները փոփոխելը կամ այն վերացնելը չեն կարող մրցութային իրավահարաբերություն առաջացնել: Այլ կերպ ասած՝ մրցութային կազմակերպչի կողմից մրցութային պայմանները փոփոխելը կամ մրցութային վերացնելը իրավունքներ և պարտականություններ, դեռ ավելին, Քաղ. օր. 1043 հոդվածի 3-րդ կետով նախատեսված քաղաքացիաիրավական պատասխանատվություն առաջացնել չեն կարող: Եվ ինչպես իրավագիտորեն նշում է Տ.Կ.Բարսեղյանը, ցանկացած պատասխանատվություն ծագում է իրավախախտում թույլ տրվելու պահից ու հենց այդ պահից էլ իրավագոր անձի համար առաջանում է իրավական պատասխանատվության միջոցների կիրառության իրավունք: Ըստ նրա, գույքային պատասխանատվության հիմք կարող է հանդիսանալ միայն անձի սուբյեկտիվ իրավունքների խախտումը: Մրցութային իրավահարաբերության կողմերի միջև սուբյեկտիվ իրավունքներ և պարտականություններ կարող են առաջանալ միայն իրավահարաբերության ծագման պահից, իսկ քաղաքացիաիրավական պատասխանատվություն՝ պարտականությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում:

1. Տես Բարսեղյան Տ.Կ. *Գույքային պատասխանատվության ինստիտուտի էվոլյուցիան և արդիական հիմնահարցերը: Երևանի համալսարանի իրատ.*, Եր., 2006, էջ 223.

Քաղ. օր. 1044 հոդվածի 3-րդ կետը անորոշ շրջանակի անձանց առջև գույքային պատասխանատվություն է սահմանում մրցութային կազմակերպչի համար մրցութային պայմանները փոփոխելու կամ մրցութային վերացնելու դեպքում, որը յուրահատուկ չէ հարաբերական քաղաքացիական իրավահարաբերության տարատեսակ հանդիսացող մրցութային պարտավորական իրավահարաբերությանը:

Եթե Քաղ. օր. 1044 հոդվածի 1-ին կետի համաձայն մրցութային կազմակերպիչը հնարավորություն ունի մրցութային պայմանները փոփոխել կամ վերացնել մրցութային, ապա նպատակահարմար չէ նույն հոդվածի 3-րդ կետում քաղաքացիաիրավական պատասխանատվություն սահմանել մրցութային պայմանները փոփոխելու կամ մրցութային վերացնելու համար աշխատանք կատարած ցանկացած անձի կրած ծախսերը հատուցելու ձևով:

Մեր կարծիքով, անհրաժեշտ է բավարարվել Քաղ. օր. 1044 հոդվածի 4-րդ կետով նախատեսված մրցութային պայմանները անօրինական փոփոխելու կամ մրցութային վերացնելու դեպքում հայտարարությանը նշված պայմանները բավարարող աշխատանք կատարած անձին պարզև տալու ձևով քաղաքացիաիրավական պատասխանատվությամբ:

Առաջարկում ենք Քաղ. օր. 1044 հոդվածի շարադրանքից հանել 3-րդ կետը:

Օրենքով սահմանված պահանջները չպահպանելը մրցութային կազմակերպչի համար առաջացնում է անցանկալի իրավական հետևանքներ: Այսպես, հայտարարելով հրապարակային մրցութային կազմակերպիչն արդեն իսկ իր վրա պարտականություն է վերցրել պարզև վճարել մրցութային այն մասնակցին, որի աշխատանքը լավագույնը կձանաչվի: Այժմ արդեն մրցութային կազմակերպիչը ստիպված է համանման պարտականություն կրել մրցութային հայտարարության պահանջները բավարարող աշխատանք կատարած ցանկացած մասնակցի հանդեպ: Մրցութային մասնակցի պարզև ստանալու իրավունքը կարող է իրականացվել միայն այն դեպքում, եթե մրցութային պայմաններին համապատասխանող աշխատանքը նրա կողմից արդեն կատարվել է: Տվյալ սուբյեկտիվ իրավունքի իրականացումը կախված չէ նրանից, թե կատարված աշխատանքը ներկայացվել է մրցութային, թե՛ ոչ: Այդ դեպքում մրցութային պայմանների անօրինական փոփոխման կամ մրցութային վերացման փաստն ակամայից մրցութային մասնակցին իրավունք չի տալիս պահանջելու սահմանված պարզև: Այդ պատճառով, տեղեկություն ստանալով մրցութային պայ-

մանների անօրինական փոփոխման կամ մրցույթի վերացման մասին, համապատասխան մասնակիցը կարող է կասեցնել աշխատանքի կատարումը և դիմել մրցույթի կազմակերպչին՝ պահանջելով, որ նա հատուցի աշխատանքի կատարման հետ կապված իր կատարած անհրաժեշտ ծախսերը: Իսկ եթե մրցույթի մասնակիցը ցանկանում է պարզև ստանալ, ապա համապատասխան պահանջ կարող է ներկայացնել միայն մրցութային առաջադրանքի կատարումն ավարտելուց հետո:

## ՉԼՈՒՄ 5. ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՄՐՑՈՒՅԹ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒՑ ԲՆՈՂ ՊԱՐՏԱԿՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

### § 1. Մրցութային պարտավորության հասկացությունը և ծագման հիմքերը

Ցիվիլիստիկական գրականության մեջ մրցութային պարտավորության հասկացության վերաբերյալ արտահայտվել են տարբեր կարծիքներ:

Օ.Ա.Կրասավչիկովի կարծիքով «մրցութային իրավաբանական բնույթով կարող է հասկացվել ոչ միայն որպես իրավական ինստիտուտ, այլև որպես մրցութային հարաբերության իրավական ձև: Մրցութային, որպես որոշակի քաղաքացիական կազմակերպար-իրավական ձև, իրենից ներկայացնում է մրցույթի հայտարարության, աշխատանքների ներկայացման, դրանց գնահատման և հրապարակայնորեն խոստացված վարձատրություն վճարելու հետ կապված կազմակերպչական /ոչ գույքային/ և գույքային հարաբերությունների փոխկապակցված համակցություն»:

Օ.Ս.Իոֆֆեն նշում է, որ մրցութային վրա հիմնված պարտավորությունը մրցութային կազմակերպչին պարտավորեցնում է վճարելու և մրցութային հայցորդին իրավագործում է ստանալու իր կողմից ներկայացված և արժանի ճանաչված աշխատանքի համար սահմանված պարգևը<sup>2</sup>:

Վ.Ն.Սմիռնովի բնութագրմամբ քաղաքացիական իրավունքում մրցութային անորոշ թվով կատարողներին հրապարակային իրավեր անելու և վարձատրություն տալու միջոցով գիտական, տեխնիկական, ճարտարապետական, գեղարվեստական կամ այլ խնդրի լուծումը կազմակերպելու համալիր իրավական ինստիտուտ է, ըստ որի մրցութային կազմակերպիչը մրցութային հաղթողի հեղինակային գույքային և անձնական ոչ գույքային իրավունքների պահպանմամբ նրան վարձատրություն վճարելու պարտականությունը կատարելու դեպքում լավագույն արդյունքն օգտագործելու իրավունք է ձեռք բերում<sup>3</sup>:

Հայրենական իրավաբանական գրականության մեջ Տ.Կ.Բարսեղյանը դեռևս 1982թ. լույս ընծայված գրքում մրցանակաբաշխության /իրապարակային մրցութային/ մասին արտահայտել է յուրօրինակ կար-

1. См *Советское гражданское право*. Т. 2. М., 1985, 502-503 էջերը:

2. См *Օ.Ս.Իոֆֆեի նշվ. աշխ.*, էջ 784:

3. См *Смирнов В.И. Конкурс в советском гражданском праве*. Л., 1964, էջ 29:

ծիք: Ըստ նրա, մրցանակաբաշխությունը քաղաքացիաիրավական, նպատակներ հետապնդող միակողմ գործարք է, որի ուժով քաղաքացիական պարտավորություն է առաջանում մրցանակաբաշխություն հայտարարած կազմակերպության և մրցանակաբաշխության պայմաններին համապատասխան աշխատանքներ ներկայացրած քաղաքացիների կամ կազմակերպությունների միջև: Մրցանակաբաշխությունը համարելով միակողմ քաղաքացիաիրավական գործարք՝ Տ.Քարսեղյանը նշում է, որ մրցանակաբաշխության նկատմամբ կիրառվում են գործարքներին վերաբերող քաղաքացիական օրենսգրքի ընդհանուր նորմերը:

Մրցանակաբաշխության հասկացության նշված ձևակերպումը բխում է տվյալ ժամանակաշրջանում գործող օրենսդրության պահանջներից: Սակայն, այն չի կարող ընդունվել ներկայումս գործող քաղաքացիական օրենսդրության տեսանկյունից, քանի որ միայն մրցույթ /մրցանակաբաշխություն/ հայտարարելը չի կարող հիմք հանդիսանալ մրցութային պարտավորության ծագման համար: Այդպիսի պարտավորության ծագման հիմքում պետք է ընկած լինեն միմյանց հաջորդող և փոխարինող հետևյալ միակողմանի գործարքներն ու միակողմանի փաստական գործողությունները՝ մրցույթ հայտարարելը, աշխատանքները մրցութային ներկայացնելը, աշխատանքները գնահատելը և գնահատման մասին որոշում ընդունելը:

«Ը գործող քաղ. օր. 1043 հոդվածի 1-ին կետում տրված է հրապարակային մրցույթ հայտարարելուց ծագող պարտավորության լեզու /իրավական/ բնորոշումը, համաձայն որի՝ աշխատանքի լավագույնս կատարման կամ այլ արդյունքների հասնելու համար դրամական վարձատրություն կամ պարգև տալու /պարգև վճարելու/ մասին հրապարակայնորեն հայտարարություն /հրապարակային մրցույթ/ արած անձը պետք է պայմանավորված պարգևը վճարի /հանձնի/ մրցույթ անցկացնելու կանոններին համապատասխան հաղթող ճանաչված անձին:

Սակայն մրցութային պարտավորության հասկացության վերաբերյալ քաղաքացիագետների սահմանումները, ինչպես նաև Քաղ. օր. 1043 հոդվածի 1-ին կետում տրված լեզու բնորոշումն ամբողջապես չեն արտահայտում հրապարակային մրցույթ հայտարարելու հիման վրա ծագող պարտավորության էությունը:

1. Տե՛ս Հայկական ՍՍՀ քաղաքացիական իրավունք: Հատոր 2, Երևանի համալսարանի հրատ., Եր., 1982. էջ 377:

Հայտնի է, որ պարտավորությունը քաղաքացիական իրավահարաբերություն է, որն իրավունքներ և պարտականություններ է ստեղծում նրանում մասնակցություն ունեցող անձանց՝ իրավագոր /քննարկվող պարտավորությունում՝ մրցույթում հաղթող ճանաչված մասնակից/ և պարտավոր /մրցույթի կազմակերպիչ/ կողմերի համար: Պարտավորության, այդ թվում նաև մրցութային պարտավորության հասկացությունը բնորոշելիս պարտադիր է նրա տարրերի՝ սուբյեկտների, օբյեկտի և բովանդակության մասին հիշատակումն այնքանով, որքանով դրանք կբացահայտեն տվյալ հասկացության էությունը: Մեր խորին համոզմամբ, ցիվիլիստիկական գրականության մեջ մրցութային պարտավորության հասկացության համապարփակ սահմանում չի տրվել: Մեր կարծիքով, կարելի է տալ մրցութային պարտավորության հետևյալ սահմանումը. **մրցութային քաղաքացիաիրավական պարտավորության ուժով մրցոյթի կազմակերպիչը պարտավոր է ընդունել և գնահատել մրցույթի հայտարարության պահանջները բավարարող բոլոր աշխատանքները կամ այլ արդյունքները, մրցույթում հաղթող ճանաչված կամ խրախուսական պարգևի արժանացած աշխատանքի /այլ արդյունքի/ հեղինակին վճարել /տալ/ մրցույթի հայտարարությամբ սահմանված պարգևը /վարձատրությունը/ և կատարել մրցույթի հայտարարությունից բխող այլ պարտականություններ, իսկ մրցույթի մասնակիցը /պարտատերը/ իրավունք ունի մրցույթի կազմակերպիչ /պարտապանից/ պահանջել կատարելու իր պարտականությունները:**

Տրված սահմանումից բխում է, որ մրցութային պարտավորությունը պարտավորական իրավահարաբերության յուրահատուկ տեսակ է: Պարտավորական իրավահարաբերությունը նաև քաղաքացիական իրավահարաբերություն է: Իսկ ցանկացած պարտավորական իրավահարաբերություն, այդ թվում նաև պարտավորական մրցութային իրավահարաբերությունն ունի իր ծագման հիմքերը: Հայտնի է, որ քաղաքացիական իրավահարաբերությունները ծագում են որոշակի իրավաբանական փաստերի առկայության դեպքում: Իսկ իրավաբանական փաստերն այն իրական հանգամանքներն են, որոնց առկայության կամ բացակայության հետ օրենքը կապում է քաղաքացիական իրավահարաբերությունների առաջացումը, փոփոխումը կամ դադարումը:

Մրցութային պարտավորության հիմքում ընկած իրավաբանական փաստերն իրենցից ներկայացնում են մեկը մյուսին հետևողականորեն փոխարինող միակողմանի գործարքների և միակողմանի փաստական գործողությունների ամբողջություն: Ղրանք են՝ մրցույթ հայտարարելը, աշխատանքները մրցութային ներկայացնելը, գնահատման մասին որո



շում ընդունելը, պարզև վճարելը, ներկայացված աշխատանքները մրցույթի մասնակիցներին վերադարձնելը և այլն: Մրցութային իրավահարաբերության զարգացման մեջ գլխավոր իրավաբանական փաստը հանդիսանում է մրցույթ հայտարարելը: Հենց այդ իրավաբանական փաստն էլ բոլոր ցանկություն հայտնողների համար /փակ մրցույթի դեպքում՝ որոշակի շրջանակի անձանց համար/ հնարավորություն է ստեղծում մասնակցություն ունենալ մրցույթում: Այդ հնարավորության իրացումն ուղեկցվում է համապատասխան անձանց կողմից կատարված աշխատանքները կամ նրանց կողմից ստեղծված այլ արդյունքները մրցույթին ներկայացնելու հետ կապված գործողությունների կատարմամբ: Մրցույթի հայտարարության իրավական բնույթի և նշանակության հարցը իրավաբանական գրականության մեջ վիճելի է:

Որոշ հեղինակներ ենթադրում են, որ տվյալ իրավաբանական փաստը հիմք է ծառայում մրցութային իրավահարաբերության ծագման համար: Քաղաքացիագետները նշված իրավահարաբերության բովանդակության և սուբյեկտիվ կազմի վերաբերյալ արտահայտել են տարբեր կարծիքներ:

Այսպես, Վ.Ս.Տոլստոյը գտնում է, որ մրցույթ հայտարարելը նրա կազմակերպչի և մասնակիցների մոտ առաջացնում է, այսպես կոչված, «պասիվ» իրավունքներ և պարտականություններ: «Պասիվություն» ասելով՝ հեղինակը նկատի է ունեցել իրավունքների և պարտականությունների այնպիսի վիճակը, երբ դրանց սուբյեկտները «դեռևս չունեն լրիվ հնարավորություններ գիտակցորեն գործելու նրանց հետ»<sup>1</sup>: Այլ կերպ ասած՝ իրավագործ անձը, մինչև որևէ պահի վրա հասնելը, չի կարող իրականացնել իրեն պատկանող սուբյեկտիվ իրավունքը, իսկ պարտավոր անձը պարտավոր չէ կատարել իր վրա դրված պարտականությունը: Այս իրավիճակը սռաջ է բերում հակասություն: Սուբյեկտիվ իրավունքը, հանդիսանալով իրավագործ անձի իրավաբանական նշանակություն ունեցող շահի բավարարման միջոց, ապահովված է պարտավոր անձից որոշակի վարքագիծ պահանջելու հնարավորությամբ: Հակառակ դեպքում սուբյեկտիվ իրավունքը կորցնում է իր սոցիալական արժեքը: Ակնհայտ է, որ դա հասկացել է ինքը՝ հեղինակը՝ շոշափելով իրավաբանական նշանակություն ունեցող շահի պաշտպանության պահանջով «պասիվ» իրավունքի պաշտպանության պահանջը ճանաչելու հնարավորության մասին հարցը<sup>2</sup>:

1. *Տես* Толстой В.С. *Понятие и значение односторонних сделок в советском гражданском праве*. М., 1966, 145-147 էջերը:

2. *Տես* նույն տեղում, էջ 147:

Վ.Ն.Սմիրնովի կարծիքով, մրցույթ հայտարարելը «հիմք է հանդիսանում բացարձակ քաղաքացիական իրավահարաբերության ծագման համար, որի ժամանակ մրցույթի կազմակերպչին, որպես կոնկրետ պարտավոր անձի, հակադրվում են անորոշ թվով իրավագործ անձինք»<sup>1</sup>: Ի դեպ, բացարձակ են այն քաղաքացիական իրավահարաբերությունները, որոնցում իրավահարաբերության մեկ սուբյեկտի իրավունքին համապատասխանում է բոլորի և յուրաքանչյուրի պարտականությունը: Այդ դեպքում մրցույթ հայտարարելը հանդիսանում է հետաձգող պայմանով կնքված միակողմանի գործարք: Ընդ որում, այդպիսին է համարվում այն գործարքը, որից բխող իրավունքների և պարտականությունների առաջացումը կախման մեջ է դրվում որոշակի պայմանի իրականացումից: Ստացվում է այնպես, որ մրցույթ հայտարարելն արդեն նրա կազմակերպչի և երրորդ անձանց մոտ առաջացնում է բացարձակ իրավունքներ և պարտականություններ: Այնուհանդերձ, հետաձգող պայմանով կնքված գործարքով իրավունքները և պարտականությունները կարող են ծագել միայն ապագայում՝ նրա պայմաններով նախատեսված հանգամանքները վրա հասնելու դեպքում: Եթե, հետևելով հեղինակի տրամաբանությանը, հաշվենք, որ հետաձգող պայմանը, որի վրա հասնելով, մրցույթի կազմակերպչի և նրա մասնակիցների մոտ ծագում են իրավունքներ և պարտականություններ, հանդիսանում է աշխատանքները մրցույթին ներկայացնելը, ապա դժվար է գուշակել, թե քննարկվող գործարքը կկատարվե՞ր առանց այդ պայմանի, թե՛ ոչ:

Մրցույթ հայտարարելը հետապնդում է հավանական մասնակիցներին մրցույթին ներգրավելու նպատակ, որի համար վերջիններս պետք է ներկայացնեն իրենց աշխատանքները և ստեղծած այլ արդյունքները: Այդ պատճառով, եթե մրցույթի հայտարարության մեջ բացակայում է աշխատանքների ներկայացման կարգի մասին պայմանը, ապա տվյալ գործարքը դառնում է անիմաստ: Քանի որ մրցութային իրավահարաբերությունները պարտավորական իրավահարաբերությունն է, իսկ պարտավորական իրավահարաբերությունները, ի տարբերություն սեփականության իրավահարաբերությունների, հարաբերական իրավահարաբերություններ են, ուստի բացարձակ իրավահարաբերության գոյության մասին Վ.Ն.Սմիրնովի միտքը, ըստ որի պարտավոր անձը հակադրվում է անորոշ շրջանակի իրավագործ անձանց, մեր կարծիքով, հակասական է:

1. *Տես* Վ.Ն. Սմիրնովի նշվ. աշխ., էջ 24:

Գրականության մեջ որևէ հանրագուտ նպատակի հասնելու համար որոշակի գործողություններ կատարելու ժառանգի վրա դրված պարտականությունների հիման վրա ծագող իրավահարաբերությունները բնութագրելիս համանման տեսակետ է արտահայտել Ն.Դ.Եգորովը<sup>1</sup>:

Որոշ հեղինակներ էլ գտնում են, որ մրցույթ հայտարարելու փաստն ինքնին առաջացնում է համապատասխան հարաբերություններ, և չեն ներկայացնում այն հիմնավորող համոզիչ փաստարկներ<sup>2</sup>:

Ավելի համոզիչ է այն քաղաքացիագետների տեսակետը, որոնք ենթադրում են, որ այնպիսի միակողմանի գործարք, ինչպիսին հանդիսանում է մրցույթ հայտարարելը, ինքն իրեն մրցութային իրավահարաբերություն չի առաջացնում: Այդ հարաբերությունները ծագում են «ոչ թե մրցույթ հայտարարելու պահին, այլ մրցութային աշխատանքները ներկայացնելու պահին»: Մրցույթ հայտարարելով՝ կազմակերպիչը միայն «նախադրյալներ է ստեղծում ապագա իրավահարաբերություններում իր մասնակցության համար»<sup>3</sup>:

Մրցույթ հայտարարելը որոշակի պարտականություններ է դնում նրա կազմակերպչի վրա: Մասնավորապես, կազմակերպիչը չի կարող ինքնակամ փոփոխել մրցույթի պայմանները կամ վերացնել մրցույթը: Մրցույթի կազմակերպիչը նշված գործողությունները կարող է կատարել միայն օրենքով սահմանված պահանջների պահպանման դեպքում: Եթե մրցույթը չի կարող փոփոխվել կամ վերացվել, ապա այստեղից հետևում է, որ մրցույթի կազմակերպիչն իրավունք չունի հրաժարվել մրցութային ներկայացված աշխատանքներն ընդունելուց՝ Այնուհանդերձ, տվյալ փուլում դեռ շուտ է խոսել մրցույթի կազմակերպչի մոտ նրա հավանական մասնակիցների առջև քաղաքացիաիրավական պարտականությունների գոյության մասին: Այդպիսի պարտականություններ ծագում են աշխատանքները և այլ արդյունքները մրցութային ներկայացնելու պահից: Ինչպես նշում է պրոֆ. Օ.Ս.Իոֆֆեն. «...այժմ արդեն կազմակերպիչը ոչ միայն կապված է անորոշ շրջանակի անձանց կողմից ներկայացված աշխատանքների ընդունման հնարավորության հետ, այլև աշխատանքները ներկայացնող կոնկրետ

ուրբյեկտների առջև կրում է հստակ սահմանված պարտականություններ»<sup>4</sup>: Եթե աշխատանքների ներկայացման բոլոր պայմանները պահպանվել են, ապա կազմակերպիչը պարտավոր է մրցույթի պայմաններով նախատեսված կարգով գնահատել ներկայացված աշխատանքները: Այդ դեպքում աշխատանքները և այլ արդյունքները ներկայացնելուց հետո մրցույթի կազմակերպչի և յուրաքանչյուր մասնակցի միջև ծագում է մրցութային իրավահարաբերություն<sup>5</sup>:

Նշված իրավահարաբերություններն օժտված են միասեռ բովանդակությամբ: Այսինքն՝ մասնակիցներից յուրաքանչյուրն իրավունք ունի մրցույթի կազմակերպչից պահանջել իր կողմից ներկայացված աշխատանքների գնահատականները, և կազմակերպիչն էլ պարտավոր է կատարել այդ պարտականությունը՝ Դրա համար էլ մրցութային իրավահարաբերությունները հանդիսանում են հարաբերական իրավահարաբերություններ, և դրանց քանակը համընկնում է մրցույթի մասնակիցների քանակին: Ընդ որում, հարաբերական են այն իրավահարաբերությունները, որոնց սուբյեկտներից մեկի սուբյեկտիվ իրավունքին համապատասխանում է մյուս սուբյեկտի պարտականությունը:

Դ.Գ.Լավրովը նշում է, որ մրցութային իրավահարաբերությունը, լինելով հարաբերական իրավահարաբերություն՝ մինչև աշխատանքները գնահատելն այն չի հանդիսանում պարտավորական իրավահարաբերություն<sup>6</sup>:

Անհրաժեշտ է համաձայնվել Դ.Գ.Լավրովի հետ: Այսպես, պարտավորական իրավահարաբերության իրավական ձևն իր արտացոլումն է գտել Քաղ. օր. 345 հոդվածում տրված բնորոշման մեջ, համաձայն ուրի իրավագոր կողմը /պարտատերը/ իրավունք ունի պարտավոր կողմից /պարտապանից/ պահանջել իր օգտին կատարելու որոշակի պործողություններ՝ իրեն փոխանցել որոշակի նյութական բարիքներ /վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն/: Պարտավորական իրավահարաբերության այդպիսի առանձնահատկությունը կանխորոշված է նրա հիմքում ընկած հարակալական հարաբերության տնտեսական բովանդակությամբ, մասնավորապես, պարտապանի տնտեսական ոլորտից պարտատիրոջ տնտեսական ոլորտը նյութական բարիքների փոխանցմամբ: Այդ դեպ-

1. Стн Егоров Н.Д. Гражданско-правовое регулирование общественных отношений. Л., 1988, էջ 175:

2. Стн Рахмилович В.А. Обязательства, возникающие вследствие объявления конкурса. Советская юстиция. N 14, էջ 19, В.Г.Вердников, А.Ю.Кабалкин Новые гражданские кодексы союзных республик. М., 1965, էջ 116:

3. Стн Дзедорайтис А.Б. Конкурс в советском гражданском праве. Л., Автореферат канд. дисс., 1969, էջ 5:

1. Стн Иоффе О. С. Обязательственное право. М., 1975, էջ 789:

2. Стн Гражданское право. Т. 2. Учебник под ред. Ю.К.Толстого, А.И.Сергеева, М., 1999, էջ 691:

3. Стн Шуцын տեղում, էջ 692:

քում նշված փոխանցումը կրում է ապրանքային բնույթ, իսկ փոխանցվող նյութական բարիքներն ընդունում են սպառման և փոխանցման արժեք ունեցող ապրանքի ձև: Մրցութային պարտավորությունում քննարկվող փուլում իրավագոր կողմն իրավունք չունի պարտավոր կողմից պահանջել իր օգտին փոխանցելու նյութական բարիքներ: Մրցութային մասնակիցներն, իրենց կատարած աշխատանքները մրցութային ներկայացնելով, հետապնդում են ոչ թե պարտականությունների կատարման, այլ մրցութային հայտարարելուց ծագող հնարավորությունների իրացման նպատակ: Միաժամանակ, մրցութային մասնակիցը, մրցութային ներկայացնելով իր կողմից կատարված աշխատանքը, ձեռք է բերում հանդիպական գույքային բավարարվածություն ստանալու իրավունք: Այդպիսի իրավունք կարող է ծագել միայն ապագայում՝ իրեն մրցութային հաղթող ճանաչելու և դրամական կամ այլ պարգև սահմանելու դեպքում: Այդ պատճառով մրցութային իրավահարաբերությունները նյութական բարիքների ապրանքային փոխանցում չեն միջնորդավորում, քանի որ նշված նյութական բարիքները, որոնց առթիվ ծագում են նշված հարաբերությունները, ապրանքային ձև չեն ընդունում: Այսքանով հանդերձ անհրաժեշտ է ընդունել, որ մրցութային իրավահարաբերությունները, որոնք առաջանում են աշխատանքները մրցութային ներկայացնելու ժամանակ, չի կարելի համարել պարտավորական իրավահարաբերություններ:

Դրա հետ միասին մրցութային իրավահարաբերությունները, որոնք ծագում են մրցութային կազմակերպչի և մրցութային հաղթող ճանաչված նրա մասնակիցների միջև, համարվում են պարտավորական իրավահարաբերություններ: Մրցութային մասնակիցների աշխատանքները հաղթող են ճանաչվում պարգև տալու մասին որոշման կայացման դեպքում: Դրանից հետո է միայն հաղթող ճանաչված աշխատանքի հետևանքով պարգև ստանալու իրավունք ձեռք բերում, իսկ մրցութային մասնակիցը ստանձնում է այդ պարգևը տալու պարտականություն: Ինչպես արդարացիորեն նշել է Ա.Բ.Չեգորայտիսը, տվյալ իրավաբանական փաստի նշանակությունը կայանում է նրանում, որ այն «միաժամանակ առաջացնում է և՛ իրավադարեցնող, և՛ իրավափոփոխիչ հետևանքներ»<sup>1</sup>:

Իրավահարաբերությունները մրցութային այն մասնակիցների միջև, որոնց աշխատանքները չեն արժանացել պարգևի և նյութական վճարում չեն ստացել, դադարում են: Ինչ վերաբերվում է պարգևի չարժ

1. Տե՛ս Ա.Բ.Չեգորայտիսի նշվ. աշխ., էջ 11:

նացած, բայց նյութական վճարում ստացած աշխատանքներին, ապա մրցութային կազմակերպչի մոտ պարտականություն է առաջանում դրանք վերադարձնելու, եթե մրցութային մասին հայտարարության մեջ նշված չէ, որ ներկայացված աշխատանքները չեն վերադարձվում: Այդ դեպքում գնահատման որոշում ընդունելը հանգեցնում է իրավահարաբերության դադարեցում այն մասնակիցների հետ, որոնք մրցութային հաղթանակ չեն տարել:

Քննարկվող իրավաբանական փաստի նշանակությանը ուշադրության արժանի կարծիք է արտահայտել Վ.Տ.Սմիլոնովը: Շատ նրա, եթե մրցութային աշխատանքների ներկայացման փուլում մրցութային մասնակիցն իրավագոր է պահանջել իր աշխատանքների գնահատականը, իսկ մրցութային կազմակերպիչը պարտավոր է հայտնել այդ գնահատականը, ապա համապատասխան պարտավորության բովանդակությունն էական փոփոխություններ չի կրում: Գնահատման որոշումն ընդունելու հետ իրավահարաբերության բովանդակությունը պայմանավորում է մրցութային հաղթողի մրցութային պայմաններով սահմանված պարգևը պահանջելու իրավունքը և այդ իրավունքի դիմաց մրցութային կազմակերպչի այդպիսի պարգև տալու պարտականությունը: Այդ պահից էլ սկսած տվյալ իրավահարաբերությունը դառնում է պարտավորական իրավահարաբերություն<sup>2</sup>:

Այսպիսով, մրցութային վրա հիմնված պարտավորության սահմաններում այն մասնակիցը, որի աշխատանքը ճանաչվել է լավագույնը, իրավունք ունի մրցութային կազմակերպչից պահանջել իրեն տալու պայմանավորված պարգևը: Իսկ լավագույնը ճանաչված աշխատանքը հաղթողին վերադարձման ենթակա չէ: Մրցութային կազմակերպիչը հնարավորություն է ստանում հանդիպական գույքային բավարարման փոխարեն օգտագործել նրա սպառողական արժեքը, որն իր մեջ ներառում է նաև ներկայացված աշխատանքների փոխանցման արժեքը: Տվյալ հասարակական հարաբերությունում փոխանցվող նյութական բարիքները կրում են ապրանքային բնույթ:

Գրականության մեջ տարածված է կարծիք այն մասին, որ գնահատման մասին որոշում ընդունելը և մրցութային կազմակերպչի կողմից այն հաստատելը հանդիսանում են վարչական ակտեր<sup>3</sup>:

1. Տե՛ս Ա.Պ.Սերգեյևի, Յու.Կ.Տոլստոյի խմբագրությամբ նշվ. աշխ., էջ 693:

2. Տե՛ս Смирнов В.Н. Конкурс в советском гражданском праве. II., 1964, 25, 26 էջերը, ուես նաև Հայկական ՍՍՀ քաղաքացիական իրավունք: Հատոր 2, Երևանի համալսարանի հրատ., Եր., 1982, էջ 379:

Մենք ընդհանրապես այդ կարծիքի հետ համամիտ չենք: Այսպես, վարչական ակտը պետական կամ տեղական ինքնակառավարման իրավասու մարմնի կողմից ընդունված անհատական այն ակտն է, որն ուղղված է քաղաքացիական իրավահարաբերություններ առաջացնելուն, փոփոխելուն կամ դադարեցնելուն: Մրցույթի կազմակերպիչը հանդիսանալով մրցութային պարտավորական քաղաքացիական իրավահարաբերության սուբյեկտ, այդ իրավահարաբերությունում մասնակցում է կողմերի իրավահավասարության, այլ ոչ թե մեկ կողմի մյուսի ենթակայության սկզբունքով, որը յուրահատուկ է վարչական իրավահարաբերություններին: Ուստի, մրցույթի կազմակերպիչը գնահատման որոշում ընդունելիս կամ այն հաստատելիս այդպիսի կառավարչական լիազորություններով օժտված չէ:

Հեղինակների նման կարծիքը պայմանավորված էր տվյալ ժամանակաշրջանի օրենսդրության պահանջներով: 1961թ. ԽՍՀ միության և միութենական հանրապետությունների քաղաքացիական օրենսդրության հիմունքները և Հայկ. ԽՍՀ 1964թ. քաղաքացիական օրենսգիրքը մրցույթ հայտարարելու, կազմակերպելու և անցկացնելու իրավասություններ վերապահել էին միայն հատուկ իրավասություններով օժտված պետական, կոոպերատիվ կամ հասարակական կազմակերպություններին: Իսկ այդ կազմակերպությունները կամ նրանց կողմից ձևավորված մրցութային հանձնաժողովները ներկայացված աշխատանքների /այլ արդյունքների/ գնահատման մասին որոշում ընդունելիս օժտված էին վարչաիրավական լիազորություններով:

Մեր համոզմամբ, մրցութային աշխատանքները գնահատելը /արդյունքներն ամփոփելը/ ու այդ մասին որոշում ընդունելը մրցույթի կազմակերպչի կամ նրա կողմից ձևավորված մրցութային հանձնաժողովի /ժյուրիի/ նպատակաուղղված իրավաչափ գործողությունների համակցություն է, որի հիման վրա հաղթող ճանաչված մասնակիցները ձեռք են բերում որոշակի իրավունքներ, իսկ մրցանակային տեղ չգրառեցրած աշխատանքների հեղինակների հետ մրցութային իրավահարաբերությունները դադարում են: Որպես կանոն՝ մրցութային իրավահարաբերություններում մասնակցում են երկու կողմեր՝ մրցույթի կազմակերպիչը և մրցույթի մասնակիցները: Մրցութային աշխատանքների գնահատման մասին որոշման մեջ արտահայտվում է միայն այդ կողմերից մեկի՝ մրցույթի կազմակերպչի կամքը: Մրցույթի մասնակիցները աշխատանքների գնահատմանը չեն մասնակցում ու համապատասխան որոշում ընդունելիս իրավասու չեն արտահայտել իրենց կամքը: Մեր կարծիքով, մրցութային աշխատանքները գնահատելը և

այդ մասին համապատասխան որոշում ընդունելը միակողմանի գործարք է, որն ուղղված է մրցութային պարտավորություն առաջացնելուն, փոփոխելուն և դադարեցնելուն:

Ա.Բ.Ձեզորայտիսն արդարացիորեն նշել է, որ մրցույթ հայտարարելը, որպես միակողմանի գործարք, չի կարող նրա կազմակերպչին միակողմանի պարտավորեցնող վարչական իրավասություններ վերապահել երրորդ անձանց հետ հարաբերություններում: Այն, որ տվյալ որոշումը ներգործում է երրորդ անձանց իրավական ոլորտի վրա, ամենևին չի վկայում մրցույթի կազմակերպչի երրորդ անձանց հետ հարաբերություններում իշխանական իրավասությունների առկայության մասին: Համանման ձևով խոսքը վերաբերվում է միակողմանի պարտավորեցնող այն գործարքներին, որոնք, ըստ Բ.Բ.Ձեռեպախի-նի, հիմնված են «իրավական նորմի կամ էլ իրավահարաբերության վրա, որում միակողմանի կամահայտնության սուբյեկտն արդեն հարաբերություն է ստեղծել այն անձի հետ, որի հետ հարաբերություններում իրավունք ունի իրականացնել իր միակողմանի կամքը»<sup>2</sup>:

Օ.Ս.Իոնֆֆեի կարծիքով տվյալ պարտավորությունը «պարտավորեցնում է կազմակերպչին պարզ և վճարել և իրավունք է տալիս մրցույթի մասնակցին ստանալու իր կողմից ներկայացված և լավագույն ճանաչված աշխատանքի դիմաց պայմանավորված վարձատրությունը»: Նա նաև նկատում է, որ մրցութային իրավահարաբերությունը ծագում է աշխատանքների ներկայացման փաստով, և մրցութային իրավահարաբերությունների օբյեկտ է համարվում մրցույթի կազմակերպչի աշխատանքների գնահատման գործունեությունը<sup>3</sup>:

Մեր կարծիքով, աշխատանքը մրցույթին ներկայացնելու փուլում դեռևս վաղաժամ է խոսել մրցույթի մասնակցի և մրցույթի կազմակերպչի միջև մրցութային պարտավորական իրավահարաբերության գոյության մասին: Տվյալ փուլում մրցույթի մասնակիցը իրավասու չէ մրցույթի կազմակերպչից պահանջելու որոշակի պարզ /մրցանակ/, բանզի նրա աշխատանքը դեռևս համեմատական գնահատման չի ենթարկվել: Մրցութային իրավահարաբերության զարգացման այս փուլում մրցույթի մասնակիցը կարող է պահանջել միայն ընդունելու և գնահատելու իր կողմից կատարված և մրցույթին ներկայացված հայ-

1 Տե՛ս Դեզորայտիս Ա.Բ. *Понятие конкурса в советском гражданском праве. // Правоведение. N 6, 1968, էջ 59:*

2 Տե՛ս Կերեպախի Բ.Բ. *Правопреемство по советскому гражданскому праву. М., 1962, 29-30 էջերը:*

3 Տե՛ս Օ.Ս.Իոնֆֆեի նշված աշխատությունը, 787, 789 էջերը:

տարարության բոլոր պահանջները բավարարող աշխատանքը: Անհրաժեշտ է վերապահումով համաձայնվել Վ.Տ.Սմիրնովի հետ, որ մրցութային պարտավորությունը ծագում է ոչ թե աշխատանքները մրցութին ներկայացնելու, այլ մրցութին ներկայացված աշխատանքների գնահատման մասին որոշումն ընդունելու պահից: Իսկ այս տեսակետը չի կարելի միանշանակ ճիշտ հաշտել կատարման վարպետության մրցութի պարագայում, քանի որ այս մրցություն մասնակցի կատարողական արվեստն անմիջականորեն ընդունվում և գնահատվում է մրցութային հանձնաժողովի կամ մրցութի կազմակերպչի կողմից: Այլ կերպ ասած՝ այսպիսի մրցություններում կատարողական և գնահատման փուլերն իրար համընկնում են: Մեր կարծիքով, կատարողական արվեստի մրցություն մասնակցի և կազմակերպչի միջև մրցութային պարտավորություն ծագում է կատարումը ներկայացնելու պահից:

Մրցութային պարտավորական իրավահարաբերությունները, նրանց ծագման պահից մինչև դադարումը, անցնում են մի շարք փուլեր /էտապներ/, որոնցից յուրաքանչյուրը հետապնդում է որոշակի /կազմակերպչական, գույքային և այլն/ նպատակներ, ունենում է իրեն հատուկ բովանդակություն: Մրցութային պարտավորության զարգացման դինամիկան իր մեջ ընդգրկում է հետևյալ չորս հիմնական փուլերը՝ կազմակերպչական, կատարողական, գնահատման և եզրափակիչ:

Քաղաքացիաիրավական մրցութի **կազմակերպչական** փուլը՝ մրցութային հայտարարություն տալն է: Իր իրավաբանական բնույթով մրցութ հայտարարելն իրենից ներկայացնում է միակողմ գործարք, որի ուժով մրցութի կազմակերպիչը հրապարակայնորեն հայտարարում է մրցութի պայմաններին համապատասխան լավագույն աշխատանքի կատարման համար վարձատրություն վճարելու պարտականությունն իր վրա վերցնելու մասին: Հատկապես այդ գործարքի ուժով մրցութի կազմակերպիչը մրցութի ժամկետի ընթացքում պարտավոր է քննարկման և գնահատման ընդունել առաջադրանքի ընդհանուր գծերի սահմաններում կատարված ու մրցութին ներկայացված բոլոր աշխատանքները: Առաջադրանքին ներկայացվող կարևոր պահանջները պետք է արտացոլված լինեն մրցութի մասին հայտարարության մեջ:

Մրցութային իրավահարաբերության զարգացման երկրորդ փուլն անվանվում է **կատարողական**, քանի որ այս փուլում ակտիվ դերակատարություն է ստանում աշխատանքը կատարողը, որի գործողություններին սպասել է մրցութի կազմակերպիչը մրցութ հայտարարելիս:

Կախված մրցութի բնույթից և նրա օբյեկտի առանձնահատկություններից՝ մրցութի մասնակիցների գործողությունների արդյունքները կարող են լինել երկու տեսակի՝

1/ կատարված աշխատանքի նյութականացված արդյունքը /շարադրություն, բնանկար, հուշարձանի նախագիծ և այլն/, որը պետք է փոխանցվի մրցութի կազմակերպչին՝ նշելով հեղինակի անունը կամ էլ դեֆզով /նշանաբանով/ ելնելով մրցութի պայմաններից.

2/ մրցութի մասնակցի անմիջականորեն ներկայացվող կատարողական գործունեությունը /մրցութի մասնակիցների ներկայացումն անմիջականորեն ժյուրիի առջև/: Վերջին դեպքում կատարողական փուլը ժամանակային առումով համընկնում է գնահատման փուլի հետ:

Քննարկվող փուլի համար էական է համարվում այն, որ համապատասխան աշխատանքը պետք է ներկայացվի մրցութի հայտարարության պայմանների պահպանմամբ:

Մրցութային իրավահարաբերության զարգացման երրորդ փուլը **գնահատման** փուլն է, որն իր մեջ ներառում է երեք մասեր՝

ա/ ներկայացված աշխատանքները ընդունելը.

բ/ աշխատանքները գնահատելը.

գ/ պարգև վճարելու կամ չվճարելու մասին որոշում ընդունելը:

Այս փուլը **գնահատողական** է համարվում, քանի որ նրա անմիջական նպատակը մրցութին ներկայացված աշխատանքները գնահատման ենթարկելն է:

Եզրափակիչ փուլում մրցութի կազմակերպիչը կամ նրա կողմից ձևավորված մրցութային հանձնաժողովը որոշում են ընդունում մրցութի արդյունքները ամփոփելու մասին: Հաղթող ձանաչված աշխատանքների հեղինակները պարգևատրվում են, իսկ հաղթող չձանաչված աշխատանքները վերադարձվում հեղինակներին, եթե այլ բան նախատեսված չէ մրցութի հայտարարությամբ կամ չի բխում ներկայացված աշխատանքների բնույթից /Քաղ. օր. 1047 հոդվ./:

## § 2. Մրցութային պարտավորության սուբյեկտները, օբյեկտները և բովանդակությունը

Ինչպես ցանկացած քաղաքացիական իրավահարաբերություն, այնպես էլ մրցութային պարտավորական իրավահարաբերությունն ունի իր տարրերը՝ սուբյեկտները, օբյեկտը և բովանդակությունը:

«Սուբյեկտ» բառը ծագել է լատիներեն «Subjectum» բառից, որը փիլիսոփայական կատեգորիա է և նշանակում է ենթակա: Սուբյեկտ

ասելով հասկացվում է ակտիվորեն գործող և ճանաչող, գիտակցությամբ և կամքով օժտված մարդ<sup>1</sup>: Քաղաքացիաիրավական առումով սուբյեկտը քաղաքացիական իրավունակությամբ և գործունակությամբ օժտված անձն է /ֆիզիկական անձ և իրավաբանական անձ/:

Ընդհանրապես, քաղաքացիական իրավունքով կարգավորվող հարաբերության մասնակիցներն անվանվում են քաղաքացիական իրավահարաբերության սուբյեկտներ: ՀՀ քաղաքացիական օրենսդրության համաձայն քաղաքացիաիրավական հարաբերության սուբյեկտները չորսն են ֆիզիկական անձինք, իրավաբանական անձինք, Հայաստանի Հանրապետությունը և տեղական ինքնակառավարման մարմինները /Համայնքները/: Մրանք կարող են հանդես գալ բազմաբնույթ հարաբերություններում և այն էլ տարբեր դեբերով:

Օրենքն առանձնացնում է մրցութային պարտավորական իրավահարաբերության երկու կատեգորիայի սուբյեկտներ՝ մրցութի կազմակերպիչը և մրցութի մասնակիցները:

Մրցութային իրավահարաբերություններում ոչ պակաս դերակատարություն ունի մրցութի կազմակերպիչ կողմից ձևավորվող մրցութային հանձնաժողովը կամ ժյուրին, որը հանդես է գալիս մրցութային իրավահարաբերության զարգացման միայն երրորդ՝ գնահատման փուլում: Քանի որ մրցութային հանձնաժողովի /ժյուրիի/ ձևավորման, գործունեության կարգը և լիազորությունների շրջանակը որոշում է մրցութի կազմակերպիչը, իսկ նրա իրավունքները և պարտականությունները կապված են միայն ներկայացված աշխատանքների /այլ արդյունքների/ քննարկման և գնահատման հետ, ապա, մեր համոզմամբ, մրցութային հանձնաժողովը /ժյուրին/ մրցութային իրավահարաբերության սուբյեկտ չի կարող համարվել:

Մրցութի կազմակերպիչը մրցութային պարտավորության այն սուբյեկտն է, որն իրավասու է հայտարարել մրցութ և դրանով իսկ իր վրա վերցնել մրցութի պայմաններին համապատասխան կատարված աշխատանքների /այլ արդյունքների/ համար մրցութում հաղթող ճանաչվածներին վարձատրություն տալու, մրցութում հաղթող չճանաչված աշխատանքները հեղինակներին՝ մասնակիցներին վերադարձնելու և այլ որոշակի պարտականություններ:

Մրցութի մասնակիցը մրցութային պարտավորության այն սուբյեկտն է, որը հայտարարված մրցութի պայմաններին համապատաս-

խան կատարել է որոշակի աշխատանք կամ ծեռք է բերել որոշակի արդյունք, և իր աշխատանքը /այլ արդյունքը/ մրցութում լավագույնը ճանաչվելու դեպքում իրավունք ունի մրցութի կազմակերպիչից պահանջելու մրցութի պայմաններով սահմանված վարձատրությունը /պարգևը/:

Մրցութային պարտավորությունում մրցութի կազմակերպիչը հանդես է գալիս որպես պարտավոր անձ /պարտապան/, իսկ մրցութում հաղթող ճանաչված մասնակիցն՝ իրավագոր անձ /պարտատեր/:

Հայաստանի Հանրապետության նախկին օրենսդրությամբ մրցութ կարող էին հայտարարել այն կազմակերպությունները /պետական, կոոպերատիվ կամ հասարակական/, որոնք օժտված էին մրցութ անցկացնելու համար անհրաժեշտ իրավասուբյեկտությամբ /հատուկ իրավունակությամբ և գործունակությամբ/: Մրցութ անցկացնելու իրավունքը պետք է ամրագրված լիներ այդ կազմակերպությունների կանոնադրությամբ կամ նախատեսված լիներ ԽՍՀՄ օրենսդրությամբ կամ այլ նորմատիվ իրավական ակտերով /Հայկական ԽՍՀ 1964թ. Քաղ. օր. 442 հոդվ./: Ընդ որում, նշված կազմակերպությունները պետք է օժտված լինեին իրավաբանական անձի իրավունքներով: Մրցութ հայտարարելու համար քաղաքացիներն իրավասուբյեկտությամբ օժտված չէին, այսինքն՝ օրենքը քաղաքացիների կողմից մրցութ հայտարարելու հնարավորություն չէր նախատեսում: Մինչդեռ, մրցութի մասնակիցներ կարող էին լինել և ՀՀ քաղաքացիները, և քաղաքացիություն չունեցող անձինք, և օտարերկրյա քաղաքացիները, իսկ կազմակերպությունները, որպես մրցութի մասնակիցներ, հանդես գալ չէին կարող:

Գործող քաղաքացիական օրենսդրությունը մրցութային պարտավորության սուբյեկտիվ կազմին որևէ հատուկ պահանջներ չի առաջադրում: Հրապարակային մրցութի հնարավոր կազմակերպիչների շրջանակն օրենքով սահմանափակված չէ: Նման մրցութ կարող են կազմակերպել ոչ միայն կազմակերպությունները, այլև՝ քաղաքացիները: Որպես մրցութի հնարավոր մասնակից՝ հավակնորդ կարող են լինել ոչ միայն քաղաքացիները, այլ նաև՝ կազմակերպությունները: Հաճախ մրցութի հայտարարության բովանդակությունից կամ նրա բնույթից բխում է, որ նրան մասնակցել կարող են միայն քաղաքացիներ /օրինակ՝ ասմունքող ընտրելիս/ կամ միայն կազմակերպությունները /օրինակ՝ ինքնագործ կոլեկտիվ ընտրելիս/: Չնայած դրան, չի բացառվում մրցութին քաղաքացիների և կազմակերպությունների միաժամանակյա մասնակցությունը: Օրինակ, եթե մրցութ է հայտարարված հա-

1. Տես Փիլիսոփայական բառարան: Մ.Մ.Ռոզենտայի խմբագրությամբ, «Հայաստան» հրատ., Եր., 1975, 395-396 էջերը:

մակարգչային որևէ ծրագիր կազմելու, գիտական կամ այլ հիմնախնդիր լուծելու համար, ապա նրանում կարող են մասնակցություն ունենալ ոչ միայն գիտնականներ, ինժեներներ, տեխնիկներ, այլ նաև՝ գիտահետազոտական ինստիտուտներ, կոնստրուկտորական բյուրոներ, փորձաքննությունների լաբորատորիաներ և այլն:

Քանի որ հրապարակային մրցույթ հայտարարելը քաղաքացիաիրավական նպատակներ հետապնդող միակողմանի գործարք է, ուստի այն կարող են հայտարարել լրիվ գործունակ՝ տասնութ տարին լրացած, ինչպես նաև օրենքով նախատեսված կարգով լրիվ գործունակություն ձեռք բերած /Քաղ. օր. 24 հոդվ. 2-րդ և 3-րդ կետեր/ ՀՀ քաղաքացիները: Օրենքով չի արգելվում օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց կողմից հրապարակային մրցույթ հայտարարելու հնարավորությունը: Այստեղ կարևորն այն է, որ նշված անձինք պահպանեն մրցույթ հայտարարելու վերաբերյալ ՀՀ օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված պահանջները:

Քաղ. օր. 52 հոդվածի 1-ին կետը սահմանում է, որ իրավաբանական անձը կարող է ունենալ իր հիմնադիր փաստաթղթով նախատեսված գործունեության նպատակներին համապատասխան քաղաքացիական իրավունքներ և կրել այդ գործունեության հետ կապված պարտականություններ: Այդ հոդվածի վերլուծությունից հետևում է, որ իրավաբանական անձը կարող է հայտարարել միայն իր կանոնադրությամբ սահմանված նպատակներին և խնդիրներին չհակասող, ինչպես նաև տվյալ իրավաբանական անձի կազմակերպա-իրավական բնույթից բխող հրապարակային մրցույթ: Քանի որ հրապարակային մրցույթ հայտարարելը միակողմանի գործարք է և, բնականաբար, նրա նկատմամբ կիրառվում են նաև Քաղ. օր. գործարքների մասին ընդհանուր նորմերը, ուստի իրավաբանական անձի կողմից վերը նշված պահանջների խախտմամբ հայտարարված մրցույթը Քաղ. օր. 314 հոդվածի ուժով կարող է դատական կարգով անվավեր ճանաչվել:

Օրենքը չի արգելում, որ մրցույթ կարող են հայտարարել Հայաստանի Հանրապետությունը և Համայնքները: Օրինակ՝ Հայաստանի Հանրապետության համապատասխան իրավասու պետական մարմինը կարող է մրցույթ հայտարարել պետական որևէ խորհրդանիշի /գերբ, դրոշ, զինանշան, օրհներգ և այլն/ լավագույն ձև նշակելու համար: «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 9-րդ կետում, որպես սկզբունք, սահմանված է, որ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից բնակչությանը նատուցվող ծառայությունների կազմակերպումն իրականացվում է առավելագույն

մրցույթների միջոցով:

Այս ամենից կարելի է եզրակացնել, որ հրապարակային մրցույթի հնարավոր կազմակերպիչներ կարող են հանդես գալ քաղաքացիական իրավունքի բոլոր սուբյեկտները՝ Հայաստանի Հանրապետությունը, Համայնքները, իրավաբանական անձինք և քաղաքացիները:

Սակայն, օրենքը չի նախատեսել այն անձանց շրջանակը, ովքեր չեն կարող մասնակցել մրցույթին: Օրինակ՝ օրենքով արգելված է մրցութային հանձնաժողովի անդամների մասնակցությունը մրցույթին: Նրանք իրավունք ունեն մասնակցել մրցույթին որպես պարզևի հավակնորդներ: Այդ դեպքում, մեր կարծիքով, կյախտալի մրցութային հանձնաժողովի անդամների մրցույթի ելքում շահագրգռվածություն չունենալու սկզբունքը: Մրցութային հանձնաժողովի անդամը, միաժամանակ հանդիսանալով մրցույթի մասնակից, այլ աշխատանքների բնարկման և գնահատման ժամանակ կարող է տալ բացասական գնահատական՝ դրանով իսկ հեշտացնելով իր կողմից մրցանակային տեղ զբաղեցնելու հնարավորությունը: Ուստի, մրցութային հանձնաժողովի կողմից նրանց ներկայացրած աշխատանքների բնարկումը և գնահատումը, մեր կարծիքով, պետք է կատարվի առանց այդ անդամների մասնակցության: Այդ իսկ պատճառով ճիշտ կլիներ օրենսդրություն սահմանել մրցույթին մրցութային հանձնաժողովի /ժյուրիի/ անդամների մասնակցությունը բացառող նորմ:

Սպատակահարմար կլիներ նաև սահմանել, որ մրցույթին չեն կարող մասնակցել դատարանի վճռով անգործունակ, սահմանափակ գործունակ ճանաչված քաղաքացիները:

Քաղաքացիական օրենսդրությունը կատարելագործելու նպատակով առաջարկում ենք Քաղ. օր. 58-րդ գլխում նորմ նախատեսել, որը կսահմանի այն անձանց շրջանակը, ովքեր չեն կարող մասնակցել հրապարակային մրցույթին:

Մրցութային պարտավորության հաջորդ տարրն **օբյեկտն** է:

«Օբյեկտ» բառն առաջացել է լատիներեն «Objectum» բառից, որը բիբլիոփայական կատեգորիա է և նշանակում է առարկա: Օբյեկտ առելով հասկացվում է այն, ինչին ուղղված է սուբյեկտի ճանաչողական և այլ գործունեությունը: Օբյեկտը կարելի է դիտել իբրև սուբյեկտից անկախ գոյություն ունեցող օբյեկտիվ աշխարհ, իսկ նեղ առումով՝ իբրև ճանաչողության առարկա:

1. Յես Փիլիսոփայական բառարան: Մ.Մ.Ռոզենտայի խմբագրությամբ. «Հայաստան» կրթատ. ելք., 1975. 395-396 էջերը:

Յիվիլիստիկական գրականության մեջ քաղաքացիական իրավահարաբերության օբյեկտի հարցը վիճահարույց է: Հեղինակների մի մասը գտնում է, որ քաղաքացիական իրավահարաբերության օբյեկտն այն է, ինչին ուղղված է տվյալ իրավահարաբերությունը, իսկ մյուս մասը օբյեկտ է համարում այն, ինչի վրա ներգործում է քաղաքացիական իրավահարաբերությունը<sup>1</sup>:

Որոշ քաղաքացիագետներ էլ գտնում են, որ իրավահարաբերության օբյեկտ կարող է հանդիսանալ միայն մարդկանց վարքագիծը<sup>2</sup>: Մյուսները կարծում են, որ օբյեկտ կարող են լինել միայն գործողությունները<sup>3</sup>: Մ.Ս.Ագարկովը համոզված է, որ օբյեկտ կարող են լինել միայն իրերը<sup>4</sup>: Իսկ ահա Օ.Ս.Իոֆֆեն տարբերում է իրավահարաբերության երեք տեսակի օբյեկտներ՝

ա/ իրավաբանական օբյեկտ, այսինքն՝ պարտավոր անձի վարքագիծը.

բ/ գաղափարական օբյեկտ, այսինքն՝ իրավահարաբերությունների մասնակիցների կամքը.

գ/ նյութական օբյեկտ՝ իրերը կամ այլ նյութական բարիքները, որոնց ուղղված է իրավահարաբերության մասնակիցների վարքագիծը<sup>5</sup>:

Պարտավորական իրավահարաբերությունների օբյեկտ է համարվում այն, որ իրավագոր անձը /պարտատերը/, իր շահերից ելնելով, իրավունք ունի պարտավոր անձից /պարտապանից/ պահանջել հոգուտ իրեն կատարելու որոշակի ակտիվ գործողություններ:

Օ.Ա.Կրասավչիկովը գտնում է, որ մրցութային պարտավորության օբյեկտ են հանդիսանում մրցութի մասնակիցների կատարած, մրցութին ներկայացված աշխատանքները: Նա միաժամանակ առանձնացնում է քաղաքացիաիրավական մրցութային պարտավորության երկու կատեգորիայի օբյեկտներ՝ ստեղծագործական և այլ աշխատանքի արդյունքների այս կամ այն ձևով նյութականացված օբյեկտը և մրցութի մասնակցի կատարողական գործունեությունը, որն անմիջապես ընդունվում և գնահատվում է<sup>6</sup>:

Օ.Ս.Իոֆֆեն տարբերում է մրցութային իրավահարաբերության երկու բնույթի օբյեկտ՝ իրավաբանական և նյութական: Ըստ նրա, մրցութային իրավահարաբերության իրավաբանական օբյեկտ է հանդիսանում մրցութի կազմակերպչի աշխատանքների /այլ արդյունքների/ գնահատման գործունեությունը, իսկ նյութական օբյեկտ՝ վարձատրությունը /պարգևը/: Օ.Ս.Իոֆֆեն նաև նշում է, որ գիտության, գրականության, արվեստի ստեղծագործությունների վերաբերյալ մրցութային պարտավորությունում նյութական օբյեկտ է հանդիսանում լավագույնը ճանաչված ստեղծագործությունը, իսկ իրավաբանական օբյեկտ՝ մրցութի կազմակերպչի կողմից այդ ստեղծագործությունն օգտագործելուն նպաստող հեղինակի կողմից որոշակի գործողություններ կատարելու համար անհրաժեշտ ակտիվ գործողություններ կատարելը<sup>7</sup>:

Մեր կարծիքով, ճիշտ չէր լինի մրցութային իրավահարաբերությունների զարգացման բոլոր փուլերում միանշանակ մրցութային իրավահարաբերության օբյեկտ համարել մրցութին ներկայացված աշխատանքները /մրցութի մասնակցի կատարողական գործունեությունը/ կամ մրցութային աշխատանքների գնահատման գործում մրցութի կազմակերպչի գործունեությունը կամ էլ հենց մրցանակը /պարգևը/: Մրցութային իրավահարաբերության օբյեկտների վերաբերյալ հեղինակների կարծիքների բազմազանությունը պայմանավորված է նրանով, որ նրանք հաշվի չեն առել այն հանգամանքը, որ մրցութային իրավահարաբերությունները զարգացման տարբեր փուլերում էական փոփոխություններ են կրում. փոխվում են նրանց նպատակները, իրավահարաբերության բովանդակությունը և այլն: Ընդունելով այն կարծիքը, որ իրավահարաբերության օբյեկտն այն է, ինչին ուղղված է հենց ինքը՝ իրավահարաբերությունը, գտնում ենք, որ իրավահարաբերության բովանդակության փոփոխությունը հանգեցնում է նաև օբյեկտի փոփոխության: Այդ իսկ պատճառով մրցութային իրավահարաբերությունները զարգացման տարբեր փուլերում ներազդում են տարբեր օբյեկտների վրա: Այսպես, մրցութային իրավահարաբերության սկզբնական /կազմակերպչական/ փուլում մրցութային իրավահարաբերության օբյեկտ է համարվում մրցութի կազմակերպմանն ու անցկացմանն ուղղված մրցութի կազմակերպչի գործունեությունը: Երկրորդ /կատարողական/ փուլում մրցութային իրավահարաբերության օբյեկտը մրցութային աշխատանքների կատարմանը կամ այլ

1. Տե՛ս, օրինակ, Толстой Ю.К. К Теории правоотношения. Изд. ЛГУ, 1959, էջ 65:

2. Տե՛ս Малишнев Я.М. Объекты права. Л., 1957, էջ 66:

3. Տե՛ս Брагинский М.И. Общее учение о хозяйственном договоре. Минск, 1967, 138-139 էջերը:

4. Տե՛ս Агарков М.М. Обязательство по советскому гражданскому праву. М., 1940, 22-23 էջերը:

5. Տե՛ս Иоффе О.С. Советское гражданское право. Кн. 2. М., 1958, 167-172 էջերը:

6. Տե՛ս Советское гражданское право. Т. 2. М., 1985, էջ 504:

7. Տե՛ս Օ.Ս.Իոֆֆեի նշված աշխատությունը, էջ 787:



արդյունքներին հասնելուն ուղղված մրցույթի մասնակիցների գործունեությունն է: Իսկ ահա մրցութային իրավահարաբերության զարգացման երրորդ /գնահատման/ փուլում օբյեկտ է հանդիսանում մրցույթի կազմակերպչի կամ մրցութային հանձնաժողովի գործունեությունը, որն ուղղված է մրցութային աշխատանքների /այլ արդյունքների/ քննարկմանն ու գնահատմանը: Չորրորդ՝ եզրափակիչ փուլում, մրցութային իրավահարաբերության օբյեկտ է համարվում մրցույթի արդյունքների ամփոփմանն ուղղված /պարզևեր սահմանելու/ մրցույթի կազմակերպչի գործունեությունը: Այստեղ պետք է համաձայնվել Օ.Ս.Իոֆֆեի հետ, որը տարբերում է մրցութային իրավահարաբերությունների երկու բնույթի օբյեկտներ՝ իրավաբանական և նյութական: Ի դեպ, մրցութային իրավահարաբերությունների զարգացման տարբեր փուլերում տարբեր են նաև մրցութային իրավահարաբերության նյութական օբյեկտները: Այսպես, մրցութային իրավահարաբերության կատարողական փուլում նյութական օբյեկտ է հանդիսանում մրցույթի մասնակցի կատարած և մրցույթին ներկայացված աշխատանքը, գնահատման փուլում՝ պարզևեր /վարձատրությունը/, եզրափակիչ փուլում՝ պարզևի չարժանացած աշխատանքները վերադարձնելը: Անհրաժեշտ ենք համարում ընդգծել, որ մրցութային իրավահարաբերության առաջին՝ կազմակերպչական փուլում մրցութային իրավահարաբերությունը նյութական օբյեկտ չունի:

Բնականաբար, մրցույթին ներկայացված աշխատանքները պետք է համապատասխանեն մրցույթի պայմաններին: Ներկայացված աշխատանքների բնույթն ու բովանդակությունը մրցույթի պայմաններին չհամապատասխանելու դեպքում դրանք չեն թույլատրվում ներկայացնելու մրցույթին:

Մրցույթի պայմաններին այս կամ այն աշխատանքի համապատասխանության հարցը որոշում է մրցույթի կազմակերպիչը կամ էլ կատարված աշխատանքները գնահատելու համար հատուկ ձևավորված հանձնաժողովը /ժյուրին/: Մրցութային աշխատանքներին ներկայացվող պահանջների անորոշություններից և անհստակություններից խուսափելու համար մրցույթի կազմակերպիչը պետք է մրցույթի մասին հայտարարության մեջ հստակ և հասկանալի ձևակերպի կատարվելիք առաջադրանքը՝ խստիվ ընդգծելով բոլոր պայմանները: Որոշ դեպքերում անհրաժեշտ է լինում մրցույթի հայտարարության մեջ նշելու առաջադրանքի էությունը և այն օբյեկտիվ հատկանիշները, որոնք պետք է արտացոլվեն մրցույթին ներկայացվող աշխատանքներում:

Մրցութային պարտավորության **բովանդակությունն** են կազմում կողմերի՝ մրցույթի կազմակերպչի և մրցույթի մասնակիցների իրավունքներն ու պարտականությունները: Մրցութային իրավահարաբերության տարբեր փուլերում կողմերն օժտված են տարբեր իրավունքներով և պարտականություններով: Ընդ որում, կողմերից մեկի իրավունքին համապատասխանում է մյուս կողմի հանդիպական պարտականությունը: Օրինակ՝ մրցույթում իր աշխատանքը լավագույնը ճանաչվելու դեպքում մրցույթի մասնակիցը ծեռք է բերում մրցույթի պայմաններին համապատասխան պարզև ստանալու իրավունք, իսկ մրցույթի կազմակերպչի մոտ ծագում է համապատասխան պարզևը տալու պարտականություն:

Մրցութային պարտավորությունն առաջին հերթին իրավունքներ և պարտականություններ է առաջացնում մրցույթի կազմակերպչի համար: Նա պարտավոր է ընդունել հայտարարված պայմաններին համապատասխանող բոլոր ներկայացված աշխատանքները և հոգ տանել դրանց պահպանության համար:

Մրցույթի կազմակերպիչը պարտավոր է մրցույթին ներկայացված աշխատանքները գնահատել հայտարարության մեջ նշված ժամկետներում և կարգով, մրցույթի արդյունքների մասին մասնակիցներին հայտնել մրցույթի հայտարարությամբ սահմանված կարգով:

Աշխատանքները և այլ արդյունքները քննարկելու և գնահատելու համար մրցույթի կազմակերպիչն իրավասու է կազմավորել մրցութային հանձնաժողով /ժյուրի/: Մրցութային հանձնաժողովի նախագահը, որպես կանոն, նշանակվում է մրցույթի կազմակերպչի կողմից: Մրցույթի կազմակերպիչն իրավունք ունի լրացնել մրցութային հանձնաժողովի կազմը, եթե հանձնաժողովի անդամներից որևէ մեկը դուրս է եկել կազմից: Մրցութային հանձնաժողովի կազմը լրացնելը կարող է կատարվել նաև մրցութային հանձնաժողովի նախագահի նախաձեռնությամբ այն դեպքում, երբ հանձնաժողովի աշխատանքի ընթացքում անհրաժեշտություն է առաջանում մասնակից դարձնել այնպիսի մասնագետի, որը մրցութային հանձնաժողովի կազմում չի ընդգրկվել: Մրցույթի կազմակերպիչն իրավունք ունի նաև փոխել մրցութային հանձնաժողովի կազմը լրիվությամբ և նշանակել նոր կազմ, կամ փոխել հանձնաժողովի առանձին անդամներին: Մրցույթի կազմակերպիչն իր այդ իրավունքը կարող է իրացնել միայն բացառիկ և խիստ որոշակի հետևյալ դեպքերում, երբ առկա է՝

ա/ մրցույթի կազմակերպչի անհամաձայնությունը մրցութային հանձնաժողովի եզրակացությունների հետ՝ կապված ներկայացված

աշխատանքների գնահատման սկզբունքային տեսակետների հետ, բ/ մրցութային հանձնաժողովի անդամների անձեռնհասությունը՝ կապված ներկայացված աշխատանքների քննարկման և գնահատման հարցերի հետ,

գ/ մրցութային հանձնաժողովի անդամների անբարեխղճությունը՝ կապված նրանց ակնհայտ ոչ օբյեկտիվություն ցուցաբերելու կամ մրցութային առանձին մասնակիցներին խորհրդատվություն տալու հետ:

Մրցութային կազմակերպիչը պարտավոր է պահպանել նաև մրցութային հայտարարությամբ սահմանված փուլերի անցկացման ժամկետները, յուրաքանչյուր փուլի համար նախատեսված համեմատական գնահատման կարգը և չափանիշները, ինչպես նաև ամեն փուլի ավարտից հետո մրցութային մասնակիցներին հայտնել նրա արդյունքները:

Դրա հետ մեկտեղ մրցութային կազմակերպիչն իրավունք ունի երկարացնելու մրցութային ներկայացված աշխատանքների և այլ արդյունքների ներկայացման ժամկետը: Ժամկետը երկարացնելու հիմք կարող են լինել. 1/ մրցութային աշխատանքներին /այլ արդյունքներին/ ներկայացվող պահանջներում փոփոխություններ մտցնելը, 2/ երբ պարզվում է, որ հայտարարության մեջ նշված ժամկետը չի կարող ապահովել մրցութային առաջադրանքի որակյալ կատարումը, 3/ սահմանված ժամկետում մրցութային աշխատանքներ չներկայացնելը կամ մրցութում մասնակցելու առաջարկ չստանալը:

Մրցութային կազմակերպիչը պարտավոր է աշխատանքները գնահատելուց հետո որոշել հատուկ սահմանված պարզևի հարցը: Պարզև /մրցանակ/ շնորհելու մասին որոշումը կայացվում և նրա մասնակիցներին է հաղորդվում հայտարարությամբ սահմանված ժամկետում և կարգով:

Եթե հայտարարվել է գիտության, գրականության կամ արվեստի ստեղծագործություններ ստեղծելու մրցութային, ապա մրցութային կազմակերպիչը իրավունք ունի պարզևի արժանացած ստեղծագործություններն օգտագործելու դրանց հեղինակների հետ կնքված պայմանագրով նախատեսված եղանակով: Այդ ստեղծագործությունների հեղինակներն էլ իրավունք ունեն ստանալ վարձատրություն:

Մրցութային կազմակերպչի պարտականություններից է նաև պարզևի չարժանացած աշխատանքների հեղինակներին նրանց կողմից մրցութային ներկայացված աշխատանքները վերադարձնելը: Մրցութային կազմակերպիչը կարող է մերժել պարզևի չարժանացած աշխատանքները վերադարձնելը, եթե, աշխատանքի բնույթից ելնելով, վերադարձնելն անհնար է:

Մրցութային պարտավորությունը իրավունքներ և պարտականություններ է առաջացնում նաև նրանում մասնակցող անձանց /մասնակիցների/ համար: Մրցութային մասնակիցն իրավունք ունի մրցութային կազմակերպչից պահանջել ընդունելու մրցութային պայմաններին համապատասխանող աշխատանքը և այն գնահատելու հայտարարությամբ նշված կարգով: Եթե խախտվել են աշխատանքներն ընդունելու կարգը /օրինակ՝ դիժոզվ /նշանաբանով/ անցկացվող մրցութային որոշումն ընդունվել է վերձանունից հետո/, ապա մասնակիցն իրավունք ունի դատական կարգով վիճարկել կայացված որոշումը: Մրցանակ չափած մասնակիցը պարտավոր է աշխատանքը հանձնել մրցութային կազմակերպչին՝ հայտարարությամբ սահմանված եղանակով օգտագործելու համար: Եթե մրցանակ շնորհելու մասին որոշում չի կայացվում հայտարարության մեջ նշված ժամկետում՝, ապա մրցութային պայմաններին համապատասխանող աշխատանքը ժամանակին ներկայացրած մասնակիցն իրավունք ունի հետ պահանջել իր աշխատանքը, ինչպես նաև պահանջել վնասների հատուցում: Նման դեպքերում, մեր կարծիքով, մրցութային կազմակերպիչը պարտավոր է հատուցել մրցութային մասնակցին պատճառված իրական վնասը՝ ծախսված աշխատանքի և օգտագործած նյութերի արժեքը՝ գործող նորմերից և գնահատումներից ելնելով:

Եթե մրցութային կազմակերպիչը ժամանակին չի հանձնում մրցանակ չափած մասնակցի հատուկ վարձատրությունը, ապա վերջինս իրավունք ունի այն պահանջել դատական կարգով:

Եթե կատարված աշխատանքի բնույթն այնպիսին է, որ վերադարձնել անհնարին լինի, ապա մրցանակ չափած մասնակիցն իրավունք ունի պահանջել մրցութային կազմակերպչից խելամիտ ժամկետում հետ վերադարձնելու իր կատարած աշխատանքը: Աշխատանքը չվերադարձվելու դեպքում նա իրավունք ունի պահանջել վնասների փոխհատուցում:

Մրցութային մասնակիցն իրավունք ունի պատճառաբանված բացարկ հայտնել մրցութային հանձնաժողովի անդամներին, ինչպես նաև հիմնավորված բողոք ներկայացնել մրցութային հանձնաժողովի որոշման դեմ: Մրցութային մասնակիցն այդ սուբյեկտիվ իրավունքը կարող է իրացնել միայն այն դեպքում, եթե ապացուցի, որ, օրինակ, մրցութային հանձնաժողովի անդամը խորհրդատվություն է տվել մրցութային մասնա-

1. Այս հանգամանքն օրենսդրական կարգավորում չի ստացել: Հարցին կանոնադրապես անընդհատ 3-րդ պարագրաֆում:

կիցներից մեկին կամ այլ ձևով աջակցել է հայտարարությամբ նախատեսված արդյունքին հասնելուն ու դրանով իսկ ներկայացված աշխատանքների գնահատման հարցում չի կարող ցուցաբերել օբյեկտիվություն և անկողմնակալություն:

### § 3. Մրցութային աշխատանքները և այլ արդյունքները գնահատելը

Հրապարակային մրցութային հայտարարության հիման վրա մրցութային մասնակիցները ձեռնամուխ լինելով մրցութային աշխատանքների կատարմանը կամ այլ արդյունքների հասնելուն՝ նպատակ են հետապնդում ստանալու իրենց աշխատանքների կամ այլ արդյունքների արժանի գնահատականը՝ մրցութային հայտարարությամբ սահմանված պարզևը /վարձատրությունը/։ Մրցութային մասնակցի մոտ հայտարարությամբ պայմանավորված պարզևը /վարձատրությունը/ ստանալու իրավունքը ծագում է միայն նրա աշխատանքը /ստեղծած այլ արդյունքը/ լավագույն ճանաչվելու և /կամ/ մրցութային պայմաններին համապատասխան մրցանակի արժանանալու դեպքում:

Աշխատանքների կատարման կամ այլ արդյունքների հասնելու համար մրցութային հայտարարությամբ սահմանված ժամկետի ավարտից հետո մրցութային իրավահարաբերությունները թևակոխում են նոր փուլ, որն անվանվում է գնահատման փուլ:

Հրապարակային մրցութային ներկայացված աշխատանքները կամ այլ արդյունքները գնահատելու և պարզև վճարելու մասին որոշում ընդունելու համար մրցութային կազմակերպիչը սովորաբար ձևավորում է հատուկ մարմին՝ մրցութային հանձնաժողով կամ ժյուրի: Մրցութային հանձնաժողովի /ժյուրիի/ կազմի մեջ ընդգրկվում են գիտության, գրականության, արվեստի տվյալ բնագավառի բարձրորակ մասնագետներ: Մրցութային հանձնաժողովի անդամների ընտրությունը կախված է մրցութային աշխատանքների կամ այլ արդյունքների բնույթից: Չնայած օրենքը արգելք չի նախատեսում, սակայն բարոյական գիտակցության առունով ճիշտ չէր լինի, որ մրցութային հանձնաժողովի կամ ժյուրիի անդամները մասնակցություն ունենան մրցութային: Դա անընդունելի է նաև այն դեպքում, երբ մրցութային անց է կացվում դեկզմ /նշանաբանով/: Օրենքը չի պարտադրում մրցութային կազմակերպչին, որպեսզի պարտադիր կարգով ձևավորի մրցութային հանձնաժողով /ժյուրի/: Մրցութային աշխատանքների կամ այլ արդյունքների գնահատումը կարող է կատարվել նաև մրցութային կազմակերպչի կողմից: Որոշ

դեպքերում էլ մրցութային աշխատանքները /այլ արդյունքները/ գնահատելու համար դրանք կարող են հանձնվել այլ կազմակերպությունների: Աշխատանքների կամ այլ արդյունքների գնահատման արդյունքում ընդունվում է համապատասխան որոշում: Այդ որոշմամբ էլ ամփոփվում են հրապարակային մրցութային արդյունքները:

Մրցութային հանձնաժողովի իրավական վիճակը կանխորոշվում է մրցութային կազմակերպչի կողմից: Մրցութային հանձնաժողովը չի հանդիսանում մրցութային կազմակերպչի մշտական գործող մարմին: Այն կազմավորվում է մրցութային կազմակերպչի հանձնարարությամբ /որոշմամբ/ մրցութային աշխատանքների կամ այլ արդյունքները քննարկելու և լավագույնն ընտրելու նպատակով: Մրցութային հանձնաժողովի անդամները, ինչպես նաև հանձնաժողովի նախագահը նշանակվում է մրցութային կազմակերպչի կողմից: Մրցութային հանձնաժողովի անդամին ներկայացվում են որոշակի պահանջներ: Մասնավորապես, մրցութային հանձնաժողովի անդամ կարող է լինել միայն գործունեության այն բնագավառի կամ այն մասնագիտության բարձրագույն որակավորում ունեցող մասնագետը, որին վերաբերում է մրցութային հայտարարությամբ սահմանված առաջադրանքը: Պարտադիր չէ, որ մրցութային հանձնաժողովի անդամը լինի մրցութային կազմակերպչին պատկանող հիմնարկի, ձեռնարկության կամ կազմակերպության հաստիքային աշխատողը: Մրցութային կազմակերպչի հաստիքային աշխատող հանդիսացող մրցութային հանձնաժողովի անդամի իրավական վիճակը որոշվում է կազմակերպչի հետ աշխատանքային իրավահարաբերություններով, եթե նա կազմակերպչի հետ կնքել է անժամկետ աշխատանքային պայմանագիր: Բայց մրցութային հանձնաժողովի անդամը կարող է մրցութային կազմակերպչի մոտ աշխատել նաև համատեղությամբ: Մրցութային կազմակերպիչը կարող է նաև ՀՀ աշխատանքային օրենսգրքի համաձայն մրցութային հանձնաժողովի անդամի հետ կնքել աշխատանքային պայմանագիր որոշակի աշխատանքների կատարման ժամանակահատվածի, այսինքն՝ մրցութային հանձնաժողովի գործունեության ժամկետի համար:

Մրցութային հանձնաժողովի գործունեության համար իրավական հիմք է հանդիսանում կազմակերպչի կողմից հաստատված մրցութային պայմանները:

Վ.Ն.Սմիթնովի կարծիքով ավելի ճիշտ կլինի մրցութային հանձնաժողովի կազմը հաստատել մրցութային պայմանների սահմանման հետ միաժամանակ: Նա այդ պահանջը բացատրում է նրանով, որ մրցութային հանձնաժողովի անդամն առանձնանում է որոշակի իրավունք-

ներով և պարտականություններով: Մասնավորապես, նա պարտավոր է խորհրդատվություն չտալ մրցույթի ապագա մասնակիցներին: Այն դեպքում, երբ մրցույթի պայմանների և մրցութային հանձնաժողովի կազմի հաստատման միջև ընկած է լինում որոշակի ժամանակահատված, նշում է Վ.Ն.Սմիրնովը, հնարավոր է, որ մրցութային հանձնաժողովի ապագա անդամը օգնություն ցուցաբերի կամ խորհրդատվություն տա մրցույթի ապագա մասնակցին<sup>1</sup>:

Մեր կարծիքով, ճիշտ չէր լինի մրցութային հանձնաժողովի կազմը հաստատել մրցույթի պայմանների հաստատման հետ միաժամանակ, քանի որ նման դեպքում, տեղյակ լինելով մրցութային հանձնաժողովի անդամների մասին, մրցութում առաջնակարգ մրցանակային տեղ զբաղեցնելու համար մրցույթի մասնակիցները կարող են տարբեր եղանակներով մրցութային հանձնաժողովի անդամների վրա ազդեցություն ունենալ աշխատանքների քննարկման և գնահատման ժամանակ քվեարկելու իրենց օգտին: Ավելի նպատակահարմար է մրցութային հանձնաժողովի կազմը հաստատել մրցութային աշխատանքների գնահատման փուլում, և միջոցներ ձեռնարկել նրա անդամների անձնավորությունը գաղտնի պահելու համար:

Ինչ վերաբերում է Վ.Ն.Սմիրնովի այն կարծիքին, որ մրցութային հանձնաժողովի ապագա անդամը կարող է օգնություն ցուցաբերել կամ խորհրդատվություն տալ մրցույթի ապագա մասնակցին, ապա մրցույթի կազմակերպիչը մրցութային հանձնաժողովի կազմը հաստատելիս պարտավոր է բազմակողմանիորեն հաշվի առնել մրցութային հանձնաժողովի անդամին ներկայացվող բոլոր պահանջները, այդ թվում նաև մրցութային աշխատանքներում շահագրգռվածություն չունենալու հանգամանքը:

Մրցութային հանձնաժողովի գործունեության համար էական նշանակություն ունի նրա քանակական կազմը: Մրցութային հանձնաժողովի կազմում պետք է ընդգրկել ոչ ավելի, քան այն մասնագետներից մեկական ներկայացուցիչ, որոնք անհրաժեշտ են մրցույթի արդյունքների որակավորման և համակողմանի գնահատման համար: Ընթացակարգային տեսանկյունից մրցութային հանձնաժողովի կազմում պետք է լինեն այնքան քանակով անդամներ, որպեսզի քվեարկության ժամանակ ձայների բաժանման դեպքում առաջանա իրական մեծամասնություն:

Ղրա հետ միաժամանակ հնարավոր է իրավիճակ, երբ մրցութային հանձնաժողովի անդամներից մեկը չներկայանա հանձնաժողովի նիս-

տին կամ պարզապես հրաժարվի քվեարկությանը ծանակցելուց: Այդ դեպքում ձայների հավասարության պայմաններում, ըստ Վ.Ն.Սմիրնովի, նախապատվությունը ճիշտ կլինի տալ մրցութային առաջադրանքի լուծման այն տարբերակին, որի օգտին քվեարկել է հանձնաժողովի նախագահը<sup>1</sup>:

Մրցութային հանձնաժողովի որոշումը պետք է ընդունվի ձայների մեծամասնությամբ: Մրցույթի արդյունքների որոշման ժամանակ քվեարկությունը կարող է լինել կամ գաղտնի, կամ բաց: Կատարման վարպետության մրցույթի դեպքում քվեարկությունը, որպես կանոն, կատարվում է բաց: Գիտության, գրականության, արվեստի ստեղծագործական աշխատանքների կատարման մրցույթում մեծամասամբ քվեարկությունը կատարվում է գաղտնի: Այն դեպքում, երբ մրցութային աշխատանքները ներկայացվել են դեղորով /նշանաբանով/, երբեմն նպատակահարմար չի լինում գաղտնի քվեարկությամբ բարդացնել մրցութային հանձնաժողովի որոշումն ընդունելու ընթացակարգը:

Մրցութային հանձնաժողովը պարտավոր է մանրամասնորեն քննարկել մրցութային ներկայացված բոլոր աշխատանքները և նրանցից յուրաքանչյուրի որակի վերաբերյալ տալ եզրակացություն: Այնուհետև հանձնաժողովն առանձնացնում է այն աշխատանքները, որոնք կատարման որակով և ստացված արդյունքով արժանի են հայտարարված պարգևին: Մրցութային հանձնաժողովն իրավունք ունի որոշում ընդունել մրցանակ չչնորհելու մասին այն դեպքում, երբ մրցութային ներկայացված աշխատանքները չեն բավարարում մրցույթի հայտարարության պայմաններին:

Մրցութային հանձնաժողովն իր գործունեության համար հաշվետու է մրցույթի կազմակերպչին: Հանձնաժողովի առանձին անդամները, այդ թվում նաև մրցութային հանձնաժողովի ամբողջ կազմը կարող են փոփոխվել մրցույթի կազմակերպչի կողմից խիստ որոշակի պայմանների առկայության դեպքում, երբ հայտնաբերվում է նրանց անձեռնհասությունը, կամ ոչ օբյեկտիվությունը և շահագրգռվածությունը աշխատանքների կամ այլ արդյունքների քննարկման և գնահատման հարցում:

Քաղ. օր. 1045 հոդվածի 1-ին մասում սահմանված է, որ պարզ վճարելու մասին որոշումը պետք է կայացվի և հրապարակային մրցույթի մասնակիցներին հաղորդվի մրցույթի հայտարարության մեջ սահմանված ժամկետում և կարգով:

1. Տես Վ.Ն.Սմիրնովի նշվ. աշխ., էջ 44:

1. Տես Վ.Ն.Սմիրնովի նշվ. աշխ., էջ 45:

Այստեղից բխում է, որ մրցույթի մասնակիցները պետք է ծանուցվեն իրենց կողմից մրցույթին ներկայացված աշխատանքների կամ այլ արդյունքների գնահատման կարգի և ժամկետի մասին: Նրանք պետք է ծանուցվեն մրցութային հանձնաժողովի /ժյուրիի/ ձևավորման, այլ ոչ թե նրա պաշտոնական կազմի մասին:

Ինչպես արդեն ասվել է, պարզ կձարելու մասին որոշում ընդունելը միակողմ գործարք է, որը իրավունքներ և պարտականություններ է ստեղծում մրցութային իրավահարաբերության սուբյեկտների՝ մրցույթի կազմակերպչի և նրա մասնակիցների համար: Իսկ օրենքում պարզ կձարելու մասին որոշման ձևի վերաբերյալ որևէ նշում չկա:

Եվ քանի որ պարզ կձարելու մասին որոշումը մրցութային իրավահարաբերությունների զարգացման մեջ հանդիսանում է կարևոր իրավաբանական փաստ՝ մրցութային պարտավորության ծագման հիմքերից մեկը, մեր կարծիքով, այն պետք է կայացվի միայն գրավոր ձևով:

Օրենքը չի պահանջում, որ մրցույթի կազմակերպչի կամ նրա կողմից կազմված մրցութային հանձնաժողովի /ժյուրիի/ ընդունած որոշումը լինի պատճառաբանված: Այս հանգամանքը կարող է տարաբնույթ վեճերի տեղիք տալ՝ կապված աշխատանքների և այլ արդյունքների ոչ արդարացի և կողմնակալ գնահատման հետ: Չպատճառաբանված որոշում ընդունելը, մեր խորին համոզմամբ, չի կարող ապահովել աշխատանքների կամ այլ արդյունքների օբյեկտիվ գնահատման հնարավորությունը: Այս առումով ճիշտ կլիներ Քաղ. օր. 1045 հոդվածի 1-ին կետում սահմանվեր պարզ կձարելու վերաբերյալ որոշման պատճառաբանված լինելու մասին:

Մրցութային իրավահարաբերություններում հստակություն սահմանելու և հետագայում վիճահարույց իրավիճակներից խուսափելու համար առաջարկում ենք Քաղ. օր. 1045 հոդվածի 1-ին կետը վերախմբագրել հետևյալ ձևով. «Պարզ կձարելու մասին որոշումը պետք է պատճառաբանված լինի, կայացվի **գրավոր ձևով** և հրապարակային մրցույթի մասնակիցներին հաղորդվի մրցույթի հայտարարության մեջ սահմանված ժամկետում և կարգով»:

Համեմատական գնահատման ենթարկելով մրցութային ներկայացված աշխատանքները կամ այլ արդյունքները և ամփոփելով մրցույթի արդյունքները՝ մրցութային հանձնաժողովը /ժյուրիի/ կարող է ընդունել հետևյալ որոշումներից մեկը.

1/ յուրաքանչյուր մրցանակային տեղի համար պարզաների քանակին համապատասխան պարզ կձարելու մասին.

2/ առանձին մրցանակային տեղի համար պարզ և սահմանելը մերժելու կամ յուրաքանչյուր տեղի համար նախատեսվածից ավելի քիչ թվով պարզներ սահմանելու մասին.

3/ խրախուսական պարզներ սահմանելու և մրցանակային տեղերի համար պարզ և սահմանելու մասին.

4/ ընդհանրապես պարզ և սահմանելու մասին:

Մրցույթին ներկայացված աշխատանքների գնահատման մասին անօրինական որոշում ընդունվելու դեպքում մրցույթի մասնակիցն իրավունք ունի դատական կարգով վիճարկել այդ որոշումը: Կախված խախտման բնույթից՝ դատարանը կամ որոշումը ձանաչում է առջինը, որի դեպքում կազմակերպիչը պարտավոր է կրկնել գնահատման ընթացակարգը, կամ էլ, եթե դա հնարավոր չէ, պարտավորեցնում է կազմակերպչին հատուցելու մասնակցի կրած ծախսերը: Սահմանված կարգի ճշգրիտ պահպանմամբ կայացված որոշումը դատական կարգով վիճարկման ենթակա չէ:

Մրցույթի հայտարարությամբ կարող է նախատեսված լինել, որ մրցութային հանձնաժողովի /ժյուրիի/ որոշումը պետք է հաստատվի մրցույթի կազմակերպչի կողմից: Այդ դեպքում մրցույթի մասնակիցն իրավունք ունի բողոք ներկայացնել մրցույթի կազմակերպչին մրցութային հանձնաժողովի /ժյուրիի/ ընդունած որոշման դեմ: Իսկ եթե հայտարարության մեջ նման պայման նշված չէ, ապա մրցութային հանձնաժողովի որոշումը ձանաչվում է վերջնական:

Օրենքը նախատեսելով պարզ կձարելու մասին որոշումն ընդունելու և մրցույթի մասնակիցներին հաղորդելու կարգը և ժամկետը /Քաղ. օր. 1043 հոդվ. 3-րդ կետ/՝ միաժամանակ չի կարգավորել դրանք չպահպանելու հետևանքները, որը կարող է առաջացնել մրցույթի մասնակիցների սուբյեկտիվ իրավունքների և օրինական շահերի խախտում: Մրցույթի արդյունքների մասին նրա մասնակիցներին հաղորդելու կարգը և ժամկետը խախտելու դեպքում կարելի է կիրառել իրավունքների պաշտպանության Քաղ. օր. 14 հոդվածում նախատեսված եղանակներից որևէ մեկը, որը կհամապատասխանի իրավունքի խախտման բնույթին:

Քաղ. օր. 14 հոդվածի համաձայն քաղաքացիական իրավունքների պաշտպանությունն իրականացվում է իրավունքը ձանաչելու, մինչև իրավունքի խախտումը եղած դրությունը վերականգնելու, իրավունքը խախտող կամ դրա խախտման համար վտանգ ստեղծող գործողու-

1. Стн Хоффе О. С. Обязательственное право. М., 1975, т. 2 791:

թյունները կանխելու, առջինն գործարքի անվավերության հետևանքները կիրառելու, վիճահարույց գործարքն անվավեր ճանաչելու և դրա անվավերության հետևանքները կիրառելու, պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի ակտն անվավեր ճանաչելու, օրենքին հակասող ակտը չկիրառելու, պարտավորությունը բնեղենով կատարելուն հարկադրելու, վնասները հատուցելու, տուժանք բռնագանձելու, իրավահարաբերությունը դադարեցնելու կամ փոփոխելու և օրենքով նախատեսված այլ եղանակներով: Քաղաքացիական իրավունքների պաշտպանության նշված եղանակների վերլուծությունից կարելի է հանգել այն հետևության, որ մրցույթի արդյունքների մասին նրա մասնակիցներին ծանուցելու հայտարարությամբ սահմանված կարգը և ժամկետը խախտելու դեպքում կիրառելի է վնասների հատուցումը: Տ.Բարսեղյանի կարծիքով վնասների հատուցումը, որպես իրավունքների պաշտպանության ընդհանուր միջոց, կիրառվում է ցանկացած իրավախախտմամբ առաջացած գույքային /դրոշ դեպքերում նաև՝ անձնական ոչ գույքային/ կորուստները փոխհատուցելու համար<sup>1</sup>: Մեր կարծիքով, պաշտպանության այս եղանակը տվյալ խախտումը վերացնելու առավել արդյունավետ միջոց է, որը միաժամանակ բխում է մրցույթի մասնակիցների շահերից:

Մրցութային աշխատանքների /այլ արդյունքների/ գնահատման փուլում կարևոր նշանակություն ունի պարզների բաշխման կարգը:

Մրցույթի հայտարարությամբ սահմանված տվյալ մրցանակային տեղը զբաղեցրած աշխատանքների թվի և պարզների քանակի համապատասխանության դեպքում, կամ, եթե այս կամ այն մրցանակային տեղի համար սահմանված պարզների քանակը գերազանցում է աշխատանքների թվին, ապա մրցույթում հաղթողներից յուրաքանչյուրն ստանում է պարզ՝ սահմանված չափով: Իսկ եթե տվյալ տեղի համար սահմանված պարզների քանակը քիչ է պարզի արժանացած աշխատանքների թվից, ապա պարզները պետք է բաժանվեն նշված աշխատանքների թվին համամասնորեն: Առանց քանակը նշելու պարզների սահմանման դեպքում յուրաքանչյուր մրցանակային տեղի համար լրիվ չափով պարզ ստանալու իրավունք ունեն մրցույթի այն թուր մասնակիցները, որոնց աշխատանքները զբաղեցրել են համապատասխան տեղը:

Քաղ. օր. 1045 հոդվածի 2-րդ կետի համաձայն, եթե հայտարարության մեջ նշված արդյունքները ձեռք են բերվել երկու և ավելի անձանց համատեղ աշխատանքով, պարզ բաշխվում է նրանց միջև ձեռք բերված համաձայնությանը համապատասխան: Նման համաձայնության բացակայության դեպքում պարզը բաշխելու կարգը որոշում է դատարանը:

Ի.Բ.Նովիցկին և Լ.Ա.Լունցը հնարավոր են համարում այնպիսի իրավիճակ, երբ հայտարարությամբ պահանջվող արդյունքին հասնեն միմյանցից անկախ մեկ կամ մի քանի անձինք, այսինքն՝ երբ այդ անձինք մեկը մյուսի հետ չեն համագործակցել, այլ, յուրաքանչյուրը գործելով ինքնուրույն, հասել են համանման արդյունքի: Տվյալ դեպքում, ըստ նրանց, պարզը պետք է տալ արդյունքն առաջինը ներկայացրած անձին, իսկ արդյունքները միաժամանակ ներկայացնելու դեպքում՝ պարզը բաժանել նրանց միջև հավասարապես<sup>2</sup>:

Այս վիճելի իրավիճակի լուծման արդարացիությունը չժխտելով՝ Վ.Ն.Սմիռնովը նշում է, որ գործնականում այդպիսի իդեալական դեպքի առաջացում բացառվում է: Ոստ նրա, ո՛չ արվեստի, ո՛չ էլ արտադրության ոլորտում առաջադրված խնդրի ստեղծագործական լուծումը տարբեր կատարողների կողմից չի կարող հանգեցնել բացարձակապես ոչնչով չտարբերվող արդյունքների: Մրցութային հանձնաժողովը կամ ժյուրին ցանկացած դեպքում, հենվելով սկզբունքային գիտակցականության վրա, կարող են նախապատվություն տալ ներկայացված մի քանի աշխատանքներից մեկին<sup>3</sup>:

Մենք համամիտ ենք Վ.Ն.Սմիռնովի այն կարծիքին, որ միմյանցից անկախ տարբեր անձանց կողմից բացարձակապես ոչնչով չտարբերվող արդյունքների հասնելն օբյեկտիվորեն բացառվում է: Չնայած դրան, հնարավոր ենք համարում էական բազմաթիվ հատկանիշներով համանման արդյունքներ ստեղծելը միմյանցից անկախ երկու կամ ավելի անձանց կողմից: Այդ արդյունքներն իրենց որակական հատկանիշներով կարող են լինել այնպիսին, որ համեմատական գնահատման դեպքում միմյանց չգերազանցեն, արժանի լինեն միևնույն մրցանակային տեղին: Այդպիսի պարագայում մրցույթի մասնակիցները, որոնց աշխատանքները զբաղեցրել են մրցանակային միևնույն տեղը, կարող են հավակնել տվյալ մրցանակային տեղի համար սահմանված

1. Տե՛ս Բարսեղյան Տ.Կ. Գույքային պատասխանատվության ինստիտուտի էվոլյուցիան և արդիական հիմնահարցերը: Երևանի համալս. իրատ., Եր., 2006, էջ 145:

1. Տե՛ս Новацкий И.Б., Луиц Л.А. Обязанность. М., Госюриздат. 1950, էջ 185:

2. Տե՛ս Վ.Ն.Սմիռնովի նշվ. աշխ., էջ 48:

պարզակին: Նման իրավիճակում արդարացի կլինի այդ մասնակիցներից յուրաքանչյուրին տալ համապատասխան մրցանակը: Իսկ եթե դա հնարավոր չլինի, ապա այդ մրցանակը պիտի հավասարապես բաշխվի միևնույն մրցանակային տեղ զբաղեցրած աշխատանքների հեղինակներին՝ հաղթող մասնակիցների միջև:

Մրցույթի կազմակերպչի կողմից պարզև վճարելը լրիվ կամ մասնակի մերժելու, ինչպես նաև մրցույթում հաղթող ձանաչվածներին պարզև վճարելու ժամկետները խախտելու դեպքում հարցը կարող է վիճարկվել դատական կարգով:

Եթե մրցույթի առարկան հանդիսանում է գիտության, գրականության կամ արվեստի ստեղծագործություններ ստեղծելը, ապա մրցույթի կազմակերպիչը, ընդհանուր կանոնի համաձայն, ձեռք է բերում նախապատվության իրավունք՝ սահմանված պարզակին արժանացած ստեղծագործության հեղինակի հետ կնքելու այդ ստեղծագործությունն օգտագործելու պայմանագիր /հեղինակային պայմանագիր/: Մրցույթի կազմակերպիչն այդպիսի իրավունք ունի ոչ միայն մրցանակային առաջին տեղը զբաղեցրած աշխատանքի հեղինակի, այլ նաև մյուս հաղթողների /օրինակ՝ մրցանակային երկրորդ և երրորդ տեղը զբաղեցրածների, խրախուսական պարզակի արժանացած աշխատանքների հեղինակների/ նկատմամբ: Հեղինակային պայմանագիրը կարգավորում է մրցույթում հաղթող ձանաչված մասնակցի /հեղինակի/ ու մրցույթի կազմակերպչի /աշխատանքն օգտագործողի/ փոխհարաբերությունները և կողմերի համար հանդիսանում է իրավական երաշխիք: Հեղինակային պայմանագրում նշվում են ստեղծագործությունն օգտագործելու եղանակները, օգտագործման իրավունքի փոխանցման ժամկետն ու վարձատրության չափը կամ վարձատրության չափը որոշելու կարգը, վճարման ժամկետն ու կարգը, ինչպես նաև այլ պայմաններ, որոնք կողմերը կհամարեն էական: Ստեղծագործության օգտագործման յուրաքանչյուր եղանակի համար մրցույթի կազմակերպիչը պարտադիր կարգով պետք է ստանա հեղինակային իրավունքի իրավատիրոջ /մրցույթում հաղթող ձանաչված մասնակցի/ թույլտվությունը: Հեղինակային պայմանագրի պայմանները և ձևերը, հեղինակային պայմանագրով գույքային իրավունքների փոխանցումը, ինչպես նաև հեղինակային պայմանագրի խախտման դեպքում կողմերի պատասխանատվությունը կարգավորվում են Քաղ. օր. 1133-1138, «Հեղինակային և հարակից իրավունքների մասին» ՀՀ 1999թ. օրենքի 27-29 հոդվածներով: Բոլոր դեպքերում ստեղծագործության հեղինակին նրա ստեղծագործությունն օգտագործելու համար պետք է վճարվի

համապատասխան վարձատրություն անկախ այն գումարից, որը, որպես մրցույթի հաղթողի, տրվում է հեղինակին, եթե այլ բան նախատեսված չէ մրցույթի հայտարարության մեջ:

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով և «Հեղինակային ու հարակից իրավունքների մասին» ՀՀ օրենքով նախատեսվում են նաև հեղինակին վարձատրելու իրավունքը, վարձատրության կարգը, չափը և ժամկետները: Այսպես, «Հեղինակային ու հարակից իրավունքների մասին» ՀՀ օրենքի 12 հոդվածի 10-րդ մասում սահմանված է, որ հեղինակային իրավունքի իրավատերն իրավասու է իր ստեղծագործության օգտագործման դիմաց պահանջել վարձատրություն, բացառությամբ սույն օրենքի 13-18-րդ հոդվածներով նախատեսված դեպքերի, եթե չեն հակասում ստեղծագործության բնականոն օգտագործմանը և չեն ուղնահարում ստեղծագործության նկատմամբ հեղինակային իրավունքի իրավատիրոջ օրինական շահերը:

Հեղինակային վարձատրության հաշվարկման և վճարման կարգն ու ժամկետները սահմանվում են՝

ա/ հեղինակային պայմանագրով.

բ/ հեղինակի գույքային իրավունքներն անդամակցային հիմունքներով ապահովող կազմակերպությունների և օգտագործողների միջև կնքված պայմանագրով: Հեղինակային վարձատրության նվազագույն չափերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Առանց հեղինակային վարձատրության ու առանց հեղինակի համաձայնության, սակայն նրա անվան և սկզբնաղբյուրի պարտադիր նշումով ստեղծագործությունների ազատ օգտագործման հնարավորությունը սահմանված է «Հեղինակային և հարակից իրավունքների մասին» ՀՀ օրենքի 13-18-րդ հոդվածներով: Օրենքում նշված այդ դեպքերում մրցույթի կազմակերպիչը, առանց մրցույթում հաղթող ձանաչված մասնակցի համաձայնությունն ստանալու և նրան վարձատրելու, կարող է օգտագործել նրա ստեղծագործությունը՝ պահպանելով հեղինակի անվան իրավունքը և մյուս անձնական ոչ գույքային իրավունքները:

Մրցութային աշխատանքները և այլ արդյունքները գնահատելիս պետք է նաև որոշվի մրցանակային տեղ չզբաղեցրած կամ պարզակի չարժանացած աշխատանքների տնօրինման հարցը:

Քաղ. օր. 1047 հոդվածի համաձայն հրապարակային մրցույթ հայտարարած անձը պարտավոր է պարզակի չարժանացած աշխատանքները վերադարձնել մրցույթի մասնակիցներին, եթե այլ բան նախա-

տեսված չէ մրցույթի հայտարարության մեջ և չի բխում կատարված աշխատանքի բնույթից:

Մրցույթի կազմակերպչի կողմից տվյալ պարտականությունը չկատարելը մրցույթի մասնակիցներին իրավունք է տալիս պահանջել վերադարձնելու իրենց աշխատանքները: Այդ պահանջը մերժելու դեպքում մրցույթի մասնակիցներն իրավունք ունեն դիմել դատարան՝ մրցույթի կազմակերպչին իր այդ պարտականությունը կատարելուն հարկադրելու պահանջով: Իսկ աշխատանքների կորստի կամ վնասվելու դեպքում մրցույթի կազմակերպիչը պետք է հատուցի նաև մրցույթի մասնակիցներին պատճառված վնասները:

Քաղ. օր. 1047 հոդվածի իմաստից բխում է, որ մրցույթի պայմաններով կարող է նախատեսվել, որ մրցույթին ներկայացված աշխատանքները վերադարձման ենթակա չեն կամ վերադարձվում են միայն մրցույթի մասնակիցների պահանջով և այլն:

Հենվելով օրենքի /Քաղ. օր. 1047 հոդվ. / վրա՝ մրցույթի կազմակերպիչը ցանկացած դեպքում կարող է մրցույթի հայտարարության մեջ սահմանել, որ մրցույթին ներկայացված աշխատանքները վերադարձման ենթակա չեն, թեկուզև մրցույթում հաղթող չձանաչվեն: Հայտարարության մեջ նման պայման նախատեսելով՝ մրցույթի կազմակերպիչը հետագայում կարող է մերժել պարզևի չարժանացած աշխատանքները վերադարձնելը: Սա, մեր կարծիքով, մրցույթի մասնակիցների իրավունքների և օրինական շահերի էական խախտում է, որն օրենքի /Քաղ. օր. 1047 հոդվ. / թերության՝ ոչ ճիշտ ձևակերպման արդյունք է: Շնորհիվ, մրցույթի կազմակերպիչը կարող է մերժել պարզևի չարժանացած աշխատանքները մրցույթի մասնակիցներին վերադարձնելը, եթե աշխատանքների բնույթից բխում է դրանց վերադարձման անօրյալատրելիությունը:

Օրենքը չի նախատեսել նաև այն ժամկետը, որի ընթացքում պետք է վերադարձվեն պարզևի չարժանացած աշխատանքները: Ստացվում է այնպես, որ մրցույթի կազմակերպիչը, մի կողմից, չմերժելով պարզևի չարժանացած աշխատանքները մրցույթի մասնակիցներին վերադարձնելը, մյուս կողմից, անհիմն պատճառներով, շաքաթներով, նույնիսկ ամիսներով կարող է ձգձգել դրանք վերադարձնելը:

Սենք ճիշտ ենք համարում պարզևի չարժանացած աշխատանքները վերադարձնելը միայն այդ աշխատանքների հեղինակների պահանջով:

Օրենքի վերոնշյալ թերությունները վերացնելու նպատակով առաջարկում ենք Քաղ. օր. 1047 հոդվածի դիսպոզիցիայից հանել «եթե այլ

բան նախատեսված չէ մրցույթի մասին հայտարարության մեջ» ձևակերպումը և քննարկվող հոդվածը վերախմբագրել հետևյալ կերպ. «Հրապարակային մրցույթ հայտարարած անձը պարտավոր է խելամիտ ժամկետում մրցույթի մասնակիցների պահանջով նրանց վերադարձնել պարզևի չարժանացած աշխատանքները, եթե այլ բան չի բխում կատարված աշխատանքի բնույթից»:

#### § 4. Պայմանագիր կնքելու իրավունքով հրապարակային մրցույթի առանձնահատկությունները

Պայմանագիր կնքելու իրավունքով մրցույթը հանդիսանում է Քաղ. օր. 463-465, ինչպես նաև «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքի՝ /այսուհետ՝ ՀՍՕ/ 20-28 հոդվածներով անցկացվող հրապարակային սակարկությունների ձևերից մեկը: Տվյալ իրավական ինստիտուտը կարող է քննարկվել մրցույթ հայտարարելուց ծագող հարաբերություններն անմիջականորեն կարգավորող նորմի կոնտեքստում: Այդ դեպքում ուշադրություն պետք է դարձնել միայն մրցույթի տվյալ տեսակին յուրահատուկ հատկանիշին: Տվյալ մոտեցման համար հիմք է ծառայում Քաղ. օր. 1043 հոդվածի 4-րդ կետը, որը սահմանում է. «Մրցույթում հաղթածի հետ պայմանագիր կնքելու պարտավորություն պարունակող հրապարակային մրցույթի նկատմամբ կիրառվում են Քաղ. օր. 58 գլխի կանոնները, եթե այլ բան նախատեսված չէ Քաղ. օր. 463-465 հոդվածներով»:

Պայմանագիր կնքելու իրավունքով հրապարակային մրցույթի անցկացման մասին հայտարարությունը ենթարկվում է հատուկ կանոնների: Քաղ. օր. 464 հոդվածի 2-րդ կետի ուժով մրցույթի կազմակերպչի կողմից մրցույթի անցկացման մասին ծանուցումը պետք է կատարվի այն անցկացնելուց առնվազն երեսուն օր առաջ, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով: Նշված հայտարարությունը պետք է պարունակի Քաղ. օր. 1043 հոդվածի 3-րդ կետում թվարկված տեղեկությունները, ինչպես նաև՝ տեղեկություններ կազմակերպչի և մրցույթում հաղթողի միջև պայմանագիր կնքելու համար ներկայացման ժամկետի մասին /Քաղ. օր. 464 հոդվ. 2-րդ կետ 2-րդ մաս/: Եթե մրցույթի մասին հայտարարությունը չի պարունակում տեղեկություններ նշված ժամկետի մասին, ապա մրցույթը չի համարվում չհայտարարված, այլ կիրառվում է Քաղ. օր. 464 հոդվածի 6-րդ կետով նախատեսված քսանօրյա ժամկետը:

1. Ընդունվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից 2003թ.:



Մրցույթի մասին հրապարակային ծանուցումը պետք է պարունակի մրցույթի կազմակերպչի անվան /անվանման/, մրցույթի կազմակերպման վայրի, մրցույթի ձևի և անցկացնելու կարգի, մրցույթի պայմանների, մրցույթում հաղթողին որոշելու կարգի, մրցույթում մասնակցելու համար անհրաժեշտ փաստաթղթերի մասին տեղեկություններ: Մրցույթի մասին հրապարակային ծանուցման մեջ նշվում են նաև տեղեկություններ մրցույթում մասնակցելու նախավճարի չափի, այն վճարելու կարգի և ժամկետների, մրցույթում ծածկագրեր կիրառելու կարգի, մրցույթի կանոնակարգին ծանոթանալու վայրի, կանոնակարգի պատճենը տրամադրելու կարգի և այլնի մասին /ՀՍՕ 21 հոդվ. 2-րդ մաս/:

«Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի նորմերը հնարավորություն են տալիս մրցույթի կազմակերպչին մրցույթի պայմանների փոփոխման դեպքում համապատասխան փոփոխություններ կատարելու մրցույթի հրապարակային ծանուցման մեջ: Սակայն, եթե հրապարակային ծանուցման փոփոխությունը կատարվել է մինչև մրցույթի հաղթողին որոշելու օրը՝ երեսուն օրվա ընթացքում, ապա կազմակերպիչը կրում է մասնակիցների կրած իրական վնասների ռիսկը, եթե դրանով չեն փոփոխվում մրցույթի մասին հրապարակային ծանուցման մեջ նշված էական պայմանները /ՀՍՕ 22 հոդվ. կետ 3/:

Մրցույթին մասնակցելի ցանկացող անձինք /մասնակիցները/ մրցույթի մասին հրապարակային ծանուցման պահանջներին համապատասխան, մրցույթի կազմակերպչին են ներկայացնում մրցույթի հայտերը: Հայտը մրցույթին մասնակցելու ցանկության մասին մրցույթի մասնակցի գրավոր դիմումն է մրցույթի կազմակերպչին: Մրցույթի կանոնակարգով սահմանվում է մրցույթի հայտում ներառվող տեղեկությունների և փաստաթղթերի ցանկը: Մրցույթին ներկայացվող հայտերի նկատմամբ օրենքն առաջադրում է որոշակի պահանջներ: ՀՍՕ 24 հոդվածի 3-րդ կետի համաձայն մրցույթի հայտերը պետք է ներկայացվեն սոսնձված, կնքված և /կամ/ ստորագրված ծրարով: Ծրարում ներառված փաստաթղթերը պետք է կազմված լինեն բնօրինակից և մրցույթի մասին հրապարակային ծանուցման մեջ նշված թվով կրկնօրինակներից, որոնց վրա համապատասխանաբար գրվում են «բնօրինակ» և «կրկնօրինակ» բառերը: Մրցույթի կանոնակարգով նախատեսված դեպքում ծրարի վրա կարող են կատարվել որոշակի գրառումներ մրցույթի հայտի ներկայացման վայրի, մրցույթի ծածկագրի և այլնի մասին: Մրցույթի հայտը գրանցվում է առանձին գրանցամատյանում ըստ ստացման հերթականության՝ ծրարի վրա նշելով գրանց-

ման համարը, տարին, ամիսը, ամսաթիվը և ժամը: Կազմակերպիչը մասնակցին տալիս է տեղեկանք՝ մրցույթի հայտն ընդունելու մասին: Օրենքի պահանջները չբավարարող, ինչպես նաև ժամկետանց հայտերը առանց գրանցելու մերժվում են և վերադարձվում ներկայացնողին: Ի դեպ, մրցույթի մասնակիցը չի զրկվում հայտի թերությունները վերացնելուց հետո հայտը կրկին մրցույթին ներկայացնելու հնարավորությունից:

Մրցույթի մասնակիցներն իրավունք ունեն փոփոխել կամ հետ վերցնել ներկայացված հայտերը միայն մինչև դրանք ներկայացնելու վերջնական ժամկետի ավարտը: Մրցույթի հայտի փոփոխությունը կատարվում է մրցույթի հայտ ներկայացնելու համար նախատեսված կարգով՝ ծրարի վրա ավելացնելով «փոփոխում» բառը:

Մրցույթի մասնակիցները կարող են մրցույթի հայտերը կազմակերպչին ուղարկել պատվիրված նամակով և այդ նույն կարգով էլ հետ վերցնել մրցույթի հայտը:

Քաղ. օր. 464 հոդվածի 4-րդ կետի, «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքի 24 հոդվածի 8-րդ կետի համաձայն մրցույթի մասնակիցները հրապարակային ծանուցմամբ նախատեսված կարգով, չափով և ժամկետներում մուծում են նախավճար: Եթե մրցույթը չի կայանում կամ անվավեր է ճանաչվում, ապա նախավճարը վերադարձվում է մասնակիցներին: Նախավճարը վերադարձվում է նաև մրցույթում չհաղթած մասնակիցներին:

Առանձին դեպքերում պայմանագիր կնքելու իրավունքով մրցույթ չի կարող հայտարարվել մրցույթի կազմակերպչի կողմից առանց համապատասխան տեսակի նախկինում կնքված պայմանագրերի մասին տեղեկություններ նշելու: Այդպիսի վիճակը բնութագրական է կապալի պայմանագրին /Քաղ. օր. 700-727 հոդվածներ/: Կապալի պայմանագրով կողմերի հարաբերությունները կրում են տևական բնույթ: Այդ դեպքում պատվիրատուն իրավունք ունի մինչև նախկինում կնքված պայմանագրի գործողության ժամկետի ավարտը նոր կապալի պայմանագրի կնքման իրավունքով հայտարարել մրցույթ: Մրցույթում հաղթողի հետ կնքված պայմանագիրը չի կարող ուժի մեջ մտնել մինչև սկզբնական պայմանագրի գործողության ժամկետի ավարտը: Մրցույթի հավանական մասնակիցներն այդ մասին պետք է նախապես ծանուցված լինեն: Բացի այդ, անհրաժեշտ է հաշվի առնել, որ իր վրա դրված պարտականությունները կատարող կապալառուն կապալի պայմանագրի գործողության ժամկետի ընթացքում նոր ժամկետով կապալի պայմանագիր կնքելու նախապատվության իրավունք ունի:

Կապալի նոր պայմանագիր կնքելու իրավունքով մրցույթի հայտարարման պահին պատվիրատու-կազմակերպիչը կարող է չիմանալ, որ կապալառուն օգտվում է պայմանագիր կնքելու իր իրավունքից: Ընդ որում, նա պարտավոր է մրցույթի հավանական մասնակիցներին նախազգուշացնել սկզբնական կապալառուի մոտ համապատասխան իրավունքի առկայության մասին: Վերջինիս հետ կապալի նոր պայմանագիր կնքելը մերժելու դեպքում կապալառուն իրավունք ունի դիմել դատարան և պահանջել իրեն փոխանցելու մրցույթում հաղթողի հետ կնքված պայմանագրով նրա ձեռք բերած իրավունքները և ստանձնած պարտականությունները:

Պայմանագիր կնքելու իրավունքով մրցույթը որոշակի առանձնահատկություններ ունի նաև մրցույթի պայմանները փոփոխելու և մրցույթը վերացնելու դեպքում: Եթե Քաղ. օր. 1044 հոդվածի 1-ին կետով սահմանված ընդհանուր կանոնի համաձայն հրապարակային մրցույթ հայտարարած անձն իրավունք ունի փոփոխել մրցույթի պայմանները կամ վերացնել մրցույթը միայն աշխատանքները ներկայացման համար սահմանված ժամկետի առաջին կեսի ընթացքում, ապա պայմանագիր կնքելու իրավունքով մրցույթի նկատմամբ գործում են այլ կանոններ: Այսպես, Քաղ. օր. 464 հոդվածի 3-րդ կետի համաձայն բաց մրցույթի կազմակերպիչը, կատարելով ծանուցում, իրավունք ունի վերացնել մրցույթը ոչ ոչ. քան մրցույթն անցկացնելուց երեսուն օր առաջ: Մրցույթի կազմակերպչի կողմից նշված պարտականությունը խախտելը հանգեցնում է մասնակիցների առջև պատասխանատվության՝ վերջիններիս կողմից կրած իրական վնասը հատուցելու ձևով:

Մրցույթի մասնակիցների կրած իրական վնասը հատուցելու պարտականություն կազմակերպչի վրա դրվում է նաև պայմանագիր կնքելու իրավունքով փակ մրցույթը վերացնելու դեպքում՝ անկախ համապատասխան ծանուցումն ուղարկելու ժամանակից: Այդպիսի մրցույթը, ինչպես հետևում է Քաղ. օր. 464 հոդվածի 3-րդ կետի 3-րդ մասի վերլուծությունից, լինելով հայտարարված, ընդհանրապես չի կարող վերացվել: Մրցույթի կազմակերպչի կողմից նրա պայմաններն անօրինական փոփոխելու կամ մրցույթը վերացնելու համար պատասխանատվության միակ ձևը հանդիսանում է մրցույթի մասնակիցների կրած իրական վնասի հատուցումը: Պայմանագիր կնքելու իրավունքով մրցույթ հայտարարելուց ծագող հարաբերություններում Քաղ. օր. 1044 հոդվածի 4-րդ կետով նախատեսված սանկցիայի կիրառումը հակասում է մրցույթի տվյալ տեսակի էությանը:

Քաղ. օր. 464 հոդվածի 3-րդ կետում խոսքը բացառապես վերա-

բերվում է պայմանագիր կնքելու իրավունքով հրապարակային մրցույթը վերացնելուն: Նշված նորմը չի պարունակում տվյալ մրցույթի պայմանների փոփոխման կարգը սահմանող հատուկ կանոններ:

Օրենքի նման բացը կարող է տարբեր մեկնաբանությունների տեղիք տալ: Այսպես, մի կողմից նորմի վերլուծությունից կարելի է եզրակացնել, որ մրցույթի կազմակերպիչը չի կարող փոփոխել պայմանագիր կնքելու իրավունքով մրցույթի պայմանները, իսկ մյուս կողմից, մրցույթի պայմանները փոփոխելը չի հակասում Քաղաքացիական օրենսդրության ընդհանուր սկզբունքներին և իմաստին: Ուստի, ելնելով «թույլատրելի է այն ամենը, ինչ արգելված չէ օրենքով» սկզբունքից, մրցույթի կազմակերպիչը կարող է փոփոխել պայմանագիր կնքելու իրավունքով մրցույթի պայմանները: Բայց, քանի որ օրենքը չի կարգավորել պայմանագիր կնքելու իրավունքով մրցույթի պայմանները փոփոխելու կարգը և ժամկետը, ապա մրցույթի կազմակերպիչը կարող է ցանկացած ժամանակ փոփոխել մրցույթի պայմանները և դրանով իսկ գույքային վնաս հասցնել մրցույթի մասնակիցների օրինական շահերին:

Ինչ վերաբերվում է անալոգիայի միջոցով Քաղ. օր. 1044 հոդվածի 1-ին մասի կիրառմանը, ըստ որի մրցույթի պայմանները կարող են փոփոխվել միայն մրցույթին աշխատանքները ներկայացնելու համար սահմանված ժամկետի առաջին կեսի ընթացքում, ապա, մեր կարծիքով, նշված նորմի կիրառումը հակասում է պայմանագիր կնքելու իրավունքով մրցույթի էությանը:

Քաղ. օր. 9-րդ հոդվածի համաձայն, այն դեպքերում, երբ քաղաքացիական հարաբերություններն ուղղակիորեն կարգավորված չեն օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, և բացակայում է դրանց նկատմամբ կիրառելի գործարար շրջանառության սովորույթը, ապա նման հարաբերությունների նկատմամբ, եթե դա չի հակասում դրանց էությանը, կիրառվում են համանման հարաբերությունները կարգավորող օրենսդրության նորմերը /օրենքի անալոգիա/:

Մեր կարծիքով, ճիշտ կլինի օրենքի այս բացը լրացնելու համար պայմանագիր կնքելու իրավունքով մրցույթի պայմանները փոփոխելու կարգը սահմանող նորմ նախատեսել Քաղ. օր. 464 հոդվածի տակ:

Պայմանագիր կնքելու իրավունքով մրցույթի արդյունքները պետք է ձևակերպվեն օրենքով սահմանված ընթացակարգի պահպանմամբ: Մրցույթում հաղթածի հետ պայմանագիր կնքելու պարտավորություն նախատեսող մրցույթի արդյունքների ամփոփումն ունի որոշակի առանձնահատկություններ: «Հրապարակային սակարկությունների մա-

սին» ՀՀ օրենքի 25 հոդվածը սահմանում է մրցույթի հայտերի բացման և արդյունքների ամփոփման ընթացակարգը: Ըստ այդ հոդվածի 1-ին կետի՝ մրցույթի հայտերը բացվում են մրցույթի մասին հրապարակա-  
յին ծանուցմամբ նախատեսված օրը և ժամին, մրցութային հանձնաժողովի հատուկ նիստում: Մրցույթի հայտերի բացման նիստում հրապարակվում են՝ 1/ մրցույթի հայտ ներկայացրած յուրաքանչյուր անձի ծածկանունը, իսկ եթե տվյալ անձը չի առարկում, ապա նաև՝ նրա անունը /անվանումը/: 2/ մրցույթի հայտեր ներկայացնելու համապատասխանությունը օրենքի և մրցույթի հայտարարության ծանուցման պահանջներին: 3/ ամփոփ տվյալներ՝ մրցույթի հայտերում փոփոխություններ կատարելու վերաբերյալ: Մրցույթի մասնակիցները և նրանց ներկայացուցիչները կարող են ներկա գտնվել մրցույթի հայտերի բացման և ամփոփման նիստերին: Մրցույթի կանոնակարգով նախատեսված կարգով նրանք կարող են ծանոթանալ մրցույթի նիստերի արձանագրություններին: Մրցույթի հայտերը ամփոփելու օրը մրցութային հանձնաժողովը կազմում է մրցույթի արդյունքների մասին արձանագրություն: Մրցույթի արդյունքների ամփոփման արձանագրության մեջ նշվում են.

1/ մրցույթի հայտերի բացման և ամփոփման վայրը, ամսաթիվը և ժամը, մրցութային հանձնաժողովի անդամների անունները և ազգանունները.

2/ մրցույթի մասնակիցների անունները /անվանումները/ և բնակության /գտնվելու/ վայրը.

3/ տեղեկություններ՝ մրցույթի հայտերի վերաբերյալ հարցումների և դրանց պատասխանների մասին.

4/ մրցութում հաղթողի անունը /ազգանունը.

5/ այլ անհրաժեշտ տեղեկություններ:

Մրցութային հանձնաժողովի անդամի հատուկ կարծիքը ներկայացվում է գրավոր, որը կցվում է արձանագրությանը և համարվում է դրա անբաժանելի մասը: Մրցույթի արդյունքները ամփոփելու և մրցութում հաղթողին ձանաչելու օրը մրցույթի կազմակերպիչը և մրցույթի հաղթող ձանաչված մասնակիցը ստորագրում են մրցույթի արդյունքների մասին արձանագրությունը: Եթե հրապարակային սակարկությունների /տվյալ դեպքում՝ մրցույթի/ առարկան միայն պայմանագիր կնքելու իրավունք է, ապա կողմերը նման պայմանագիրը պետք է ստորագրեն սակարկությունների /մրցույթի/ ավարտից և արձանագրության ձևակերպումից քսան օրվանից կամ ծանուցման մեջ նշված այլ ժամկետից ոչ ուշ /Քաղ. օր. 464 հոդվ. 6-րդ կետ/:

Պայմանագիր կնքելուց կողմերից մեկի խուսափելու դեպքում մյուս կողմն իրավունք ունի դիմել դատարան՝ պայմանագիր կնքելուն հարկադրելու, ինչպես նաև դրա կնքումից խուսափելու հետևանքով պատճառված վնասները հատուցելու պահանջով /Քաղ. օր. 464 հոդվ. 7-րդ կետ/:

Նախքան մրցույթի մասին ծանուցումը հրապարակելը, մրցույթի կազմակերպիչը ստեղծում է առնվազն երեք անձից բաղկացած մրցութային հանձնաժողով: Մրցութային հանձնաժողովի անդամ չեն կարող լինել օրենքով սահմանված կարգով անգործունակ կամ սահմանափակ գործունակ ձանաչված անձինք /ՀՍՕ 23 հոդվ. 1-ին կետ/: Պայմանագիր կնքելու իրավունքով մրցույթի կազմակերպիչ կողմից ձևավորված մրցութային հանձնաժողովը հաստատում է մրցույթի մասին հրապարակային ծանուցման տեքստը, բացում և գնահատում է մրցույթի հայտերը, ինչպես նաև որոշում է մրցույթի հաղթողին: Եթե մրցույթի կանոնակարգով այլ կարգ սահմանված չէ, մրցութային հանձնաժողովը որոշումները ընդունում է ձայների պարզ մեծամասնությամբ:

Քաղ. օր. 463 հոդվածի 4-րդ կետի համաձայն պայմանագիր կնքելու իրավունքով մրցութում հաղթող է ձանաչվում այն անձը, որը **մրցութային հանձնաժողովի եզրակացությամբ** առաջարկել է լավագույն պայմաններ: Եթե, ըստ ընդհանուր կանոնի, մրցութային աշխատանքների գնահատումը որոշվում է բացառապես մրցույթի կազմակերպչի հայեցողությամբ, ապա տվյալ դեպքում օրենքը մրցույթի կազմակերպչից պահանջում է կազմավորել մրցութային հանձնաժողով: Մրցույթի արդյունքների մասին նշված պահանջի խախտմամբ կայացված որոշումն իրավաբանական ուժ չունի: Բացի այդ, համապատասխան որոշում կայացնելու ընթացակարգը չպահպանելը վերջնական արդյունքում կարող է հանգեցնել մրցույթի հայտարարության մեջ որոշում կայացնելու համար սահմանված ժամկետի խախտմանը՝ այստեղից բխող բոլոր հետևանքներով:

**Գ Լ ՈՒ Խ 6. ԱՌԱՆՑ ՀԱՆՁՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ,  
Ի ԵԱՀ ՈՒՐԻՇԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ԾԱԳՈՂ  
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

**§ 1. Առանց հանձնարարության, ի շահ ուրիշի  
գործողություններից ծագող պարտավորության  
հասկացությունը և պատմությունը**

Կյանքում երբեմն առաջանում են այնպիսի իրավիճակներ, երբ անձինք, չունենալով այլ անձանց կողմից տրված լիազորություններ, ի շահ նրանց կամավոր կատարում են որոշակի գործողություններ: Ամենից առաջ դրանք կատարվում են բարոյական նկատառումներով՝ նպատակ ունենալով կանխել /նվազեցնել/ այն անձանց գույքային շահերին սպառնացող վնասը, որոնք ժամանակավորապես բացակայում են, կամ այլ պատճառներով չեն կարող անձամբ հոգ տանել իրենց շահերի պահպանությանը: Օրինակ՝ սեփականատիրոջ բացակայության դեպքում նրան պատկանող ընտանի կենդանիների նկատմամբ հոգ տանել, բնական աղետների ժամանակ ուրիշի գույքը անվտանգ վայր տեղափոխել, կամավոր մասնակցել հարևան տան հրդեհի մարմանը և այլն: Որոշ դեպքերում էլ ի շահ ուրիշ անձի կատարվում են ոչ միայն փաստական, այլ նաև իրավաբանական գործողություններ, օրինակ, այլ անձանց համար անհրաժեշտ գույքի իրացման նպատակով կատարվում են գործարքներ, կամ էլ՝ երրորդ անձանց հանդեպ ունեցած պարտավորություններ: Անձը, որն առանց հանձնարարության գործում է ի շահ ուրիշի, որոշակի պայմանների առկայության դեպքում ձեռք է բերում իր կրած ծախսերի հատուցման իրավունք, իսկ երբեմն էլ՝ վարձատրվում է իր կատարած գործողությունների դիմաց:

Պարտավորության այս տեսակը հայտնի է եղել դեռևս Հռոմեական իրավունքին, որն անվանվում էր «negotiorum gestio»: Այն թարգմանաբար նշանակում է «առանց հանձնարարության ուրիշի գործերը վարել»: Ի դեպ, «առանց հանձնարարության» բնառակապակցությունն ավելացվել է «negotiorum gestio» հռոմեական եզրույթին ոչ թե հռոմեական իրավաբանների կողմից, այլ հետագա իրավաբանական գրականության մեջ, որպեսզի ընդգծվի տվյալ պարտավորության էական հատկանիշը՝ պայմանագրի բացակայությունը<sup>1</sup>:

1. Стів Новицкий И.Б. Римское право. М., 1993, էջ 209:

Հայկական ցիվիլիստիկական իրավունքում առանց հանձնարարության, ի շահ ուրիշի գործողություններից ծագող ինքնուրույն պարտավորություն երկար ժամանակ բացակայել է, չնայած այդպիսի գործողությունների առանձին տարրեր պարունակում էին ինչպես Հայկ. ԽՍՀ 1923թ., այնպես էլ Հայկ. ԽՍՀ 1964թ. քաղաքացիական օրենսգրքերում:

Այսպես, Հայկ. ԽՍՀ 1923թ. քաղաքացիական օրենսգրքի 269 հոդվածը սահմանում էր. «Փոխանորդի գործողությունները փոխանորդյալի համար ստեղծում են անմիջական իրավունքներ և պարտականություններ, եթե այդ գործողությունները կատարվել են լիազորագրի համաձայն կամ հետագայում փոխանորդյալն իր հավանությունը տվել է»: Ներկայացվողի կողմից այդ գործողություններին հետագայում հավանություն տալն ուներ հետադարձ ուժ<sup>2</sup>:

Առանց հանձնարարության, ի շահ ուրիշի գործողությունների առանձին տարրեր պարունակում էին նաև Հայկ. ԽՍՀ 1964թ. քաղ. օր. 63 հոդվածում, որը կարգավորում էր չլիազորված ներկայացուցչի կամ լիազորությունների սահմանազանցումով կնքված գործարքի հետևանքները, իսկ նույն օրենսգրքի 474 հոդվածը նվիրված էր սպառնացող վտանգից սոցիալիստական սեփականությունը փրկելուց ծագող պարտավորությանը: Ընդ որում, եթե առանց հանձնարարության, ի շահ ուրիշի գործունեության առարկան հանդիսանում էր շահագրգռված անձի կողմից հավանության արժանացած գործարքը, ապա կողմերի միջև ծագած հարաբերությունների նկատմամբ կիրառվում էին Հայկ. ԽՍՀ 1964թ. քաղ. օր. 63 հոդվածի կանոնը և հանձնարարության պայմանագիրը կարգավորող նորմերը: Այլ կերպ ասած՝ առանց հանձնարարության, ի շահ ուրիշի իրավաբանական գործողություններից ծագած հարաբերությունների նկատմամբ կիրառվում էին Հայկ. ԽՍՀ քաղ. օր. վերը նշված նորմերը: Իսկ երբ առանց հանձնարարության, ի շահ ուրիշի կատարվում էին փաստական գործողություններ, ապա օրենքի /Հայկ. ԽՍՀ քաղ. օր. 4-րդ հոդված/ անալոգիայի միջոցով կիրառվում էին անհիմն գույք ձեռք բերելու կամ գույք խնայելու հետևանքով ծագող պարտավորությունները կարգավորող նորմերը<sup>3</sup>:

«Հ 1998թ. քաղ. օր-ը առանց հանձնարարության, ի շահ ուրիշի փաստական և իրավաբանական գործողությունների կատարումից

1. Стів Հայատտանի Հանրապետության քաղաքացիական իրավունք, երկրորդ մաս, եր., 2001, էջ 589:

2. Стів Советское гражданское право. Т.2. М., 1985, էջ 316:

ծագող քաղաքացիական հարաբերությունները կարգավորելու նպատակով նախատեսել է 59-րդ գլուխը /1048-1057 հոդվածներ/:

Այսպես, Քաղ. օր. 1048 հոդվածի 1-ին կետը սահմանում է. «Առանց շահագրգիռ անձի հանձնարարության, նրա այլ ցուցումի կամ նախապես տրված համաձայնության, գործողությունները, որոնք նպատակ են հետապնդել կանխել այդ անձին կամ նրա գույքին պատճառվելիք վնասը, կատարել նրա պարտավորությունները կամ պաշտպանել նրա այլ օրինաչափ շահերը /ի շահ ուրիշի գործողություններ/, պետք է կատարվեն գործի հանգամանքների համար անհրաժեշտ հոգատարությամբ և շրջահայացությամբ՝ ելնելով շահագրգիռ անձի ակնհայտ օգուտից կամ շահից ու նրա իրական կամ հավանական մտադրություններից»:

Այստեղ օրենսդիրն օգտագործում է «օրինաչափ շահեր» բառակապակցությունը, որը սխալ իմաստ է հաղորդում վերոնշյալ նորմի բովանդակությանը: Իրավաբանական նշանակություն ունի «օրինական կամ իրավական շահ» հասկացությունը, որն էապես տարբեր իմաստ ունի: Ուսաստանի Ղաշնության քաղ. օր. 980 հոդվածի 1-ին մասում, որտեղ տրված է առանց հանձնարարության, ի շահ ուրիշի գործողությունների հասկացությունը, օգտագործվում է «непротивоправные интересы» բառակապակցությունը, որը հայերեն թարգմանությամբ նշանակում է «ոչ հակահրավական շահեր» կամ «օրինական /իրավական/ շահեր»: Մինչդեռ, «օրինաչափ» բառը ռուսերեն թարգմանությամբ նշանակում է «законмерное»:

Օրենքի տարաբնույթ մեկնաբանություններից խուսափելու համար առաջարկում ենք Քաղ. օր. 1048 հոդվածի 1-ին կետը շարադրել հետևյալ կերպ. «Առանց շահագրգիռ անձի հանձնարարության, նրա այլ ցուցումի կամ նախապես տրված համաձայնության, գործողությունները, որոնց նպատակն է կանխել այդ անձին կամ նրա գույքին պատճառվելիք վնասը, կատարել նրա պարտավորությունները կամ պաշտպանել նրա այլ **օրինական** շահերը /ի շահ ուրիշի գործողություններ/, պետք է կատարվեն գործի հանգամանքների համար անհրաժեշտ հոգատարությամբ և շրջահայացությամբ՝ ելնելով շահագրգիռ անձի ակնհայտ օգուտից կամ շահից ու նրա իրական կամ հավանական մտադրություններից»:

Պրոֆեսոր Գ. Ղարախանյանի կարծիքով ճիշտ կլիներ քննարկվող պարտավորությունն անվանել «առանց հանձնարարության, ուրիշի օգտին կատարվող գործողություններից ծագող պարտավորու-

թյուն», քանի որ առանց հանձնարարության, ուրիշի օգտին գործողություն կատարողը երբեք չի հետապնդում շահ ստանալու նպատակ<sup>1</sup>:

Առանց հանձնարարության, ի շահ ուրիշի գործողությունները թույլատրելի են միայն այն դեպքում, երբ անհրաժեշտ է՝

ա/ կանխել շահագրգիռ անձին /նրա կյանքին կամ առողջությանը/ կամ նրա գույքին պատճառվելիք վնասը, օրինակ՝ անցորդը նկատելով, որ դանդաղ ընթացող մեքենան մոտենում է անդունդին, կանգնեցնում է այն և մեքենային վնաս չի պատճառվում:

բ/ կատարել շահագրգիռ անձի պարտավորությունները, օրինակ՝ վճարել հեռախոսային կապի ծառայությունից օգտվելու հետ կապված շահագրգիռ անձի պարտքը, որպեսզի նա հետագայում տույժ չվճարի:

գ/ պաշտպանել շահագրգիռ անձի այլ օրինական շահերը:

Իրավաբանական գրականության մեջ առանց հանձնարարության, ի շահ ուրիշի գործողությունների վերաբերյալ հեղինակներն արտահայտել են տարբեր կարծիքներ: Այսպես, Ե.Ա.Սուխանովը գտնում է, որ ի շահ ուրիշի գործողությունները գույքային հարաբերությունների շրջանակներից դուրս են և դասվում են մարդու կյանքի և առողջության փրկության հետևանքով ծագող պարտավորությունների շարքին<sup>2</sup>: Ա.Պ.Սերգեևի կարծիքով դա այնպիսի արտապայմանագրային պարտավորություն է, որը ծագում է մի անձի /հետտորի/ կանավոր, գիտակցորեն կատարվող փաստական կամ իրավաբանական գործողությունների ուժով՝ ելնելով մյուս անձի /դոմինուսի/ ակնհայտ օգուտից, և վերջինիս մոտ առաջացնում է հետտորին համապատասխան վարձատրություն տալու պարտականություն<sup>3</sup>:

Առանց հանձնարարության, ի շահ ուրիշի գործողություններն առաջացնում են համապատասխան պարտավորություն ոչ բոլոր դեպքերում, այլ միայն այն ժամանակ, երբ առկա են լինում օրենքով նախատեսված մի շարք պայմաններ: Ամենից առաջ քննարկվող պարտավորության ծագման համար անհրաժեշտ նախադրյալ է հանդիսանում այն, որ ի շահ ուրիշ անձի /դոմինուսի/ գործողությունները ձեռնարկ-

1. Տես Հայաստանի Հանրապետության քաղաքացիական իրավունք, Երկրորդ մաս, Եր., 2001, էջ 590:

2. Տես Гражданский кодекс. Ч. 2. Комментарий под ред. О.М.Козырь, А.Л.Маковского, С.А.Хохлова, М., 1996, 512-513 էջերը:

3. Տես Гражданское право. Учебник под ред. Ю.К.Толстого, А.Л.Сергеева, Т. 2. М., 1997, 637, 674 էջերը:

վում են դրանք կատարող անձի /հետտորի/ սեփական հայեցողությանը, այսինքն՝ ոչ միայն հանձնարարության կամ այլ պայմանագրի, այլ նաև շահագրգռված անձի որևէ ցուցումի կամ նախապես խոստացված հանձնարարության բացակայությամբ: Հետտորը նաև չպետք է ի շահ ուրիշի գործողություն կատարելու պարտականություն ստանձնի օրենքի ուժով: Դրա համար քննարկվող պարտավորության կանոնները չեն կիրառվում, օրինակ, ի շահ խնամարկյալի գործող խնամակալի, կամ էլ ի շահ մյուս ժառանգների ժառանգական գույքի պահպանության համար միջոցներ ձեռնարկող ժառանգի նկատմամբ: Օրենքն ուղղակիորեն նշում է, որ պարտավորության այս տեսակը չի ծագում նաև այն դեպքում, երբ ի շահ ուրիշ անձանց գործողությունները կատարում են պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինները, որոնց համար այդպիսի գործողությունները համարվում են նրանց գործունեության նպատակներից մեկը /Քաղ. օր. 1048 հոդվ. 2-րդ կետ/: Օրինակ՝ հրշեջ ծառայության աշխատակիցների կողմից հրդեհը մարելը, սոցիալական ապահովության մարմինների պաշտոնատար անձանց կողմից կենսաթոշակ և այլ նպաստներ փոխանցելը և այլն: Իրավաբանական գրականության մեջ նշվում է, որ տվյալ բացառությունը գործում է նաև այն հասարակական կազմակերպությունների հարաբերություններում, որոնք ունեն այլ անձանց իրավունքների և օրինական շահերի իրականացմանն ու պաշտպանությանն աջակցելու կանոնադրությամբ ամրագրված խնդիրներ<sup>1</sup>: Դրա հետ մեկտեղ ի շահ ուրիշի գործելու բարոյական պարտականության առկայությունն ինքնուստիճյան չի առաջացնում տվյալ պարտավորությունը, օրինակ, հրդեհի մարման ժամանակ օգնություն ցույց տալ, կամ ջրում խեղդվողին փրկել և այլն:

Ի շահ ուրիշի գործողություններն առաջացնում են համապատասխան պարտավորություն միայն այն դեպքում, երբ դրանք կատարվում են՝ ելնելով շահագրգռված անձի ակնհայտ օգուտից կամ շահից, ինչպես նաև նրա իրական կամ հավանական մտադրություններից /Քաղ. օր. 1048 հոդվ. 1-ին կետ/: Դա նշանակում է՝

1. ՀՀ Քաղաքացիական օրենսգիրքը և այլ իրավական ակտերը «դոմինուս» և «հետտոր» եզրույթները չեն օգտագործում: Դրանք օգտագործվում են իրավաբանական գրականության մեջ: Ընդ որում, այդ հասկացությունները մեզ են հասել Հին հռոմեական մասնավոր իրավունքից:

2. *Sto v Гражданское право. Учебник под ред. Ю.К.Толстого, А.П.Сергеева, Т. 2., М., 1999, էջ 677:*

1/ հետտորի գործողությունները պետք է շահագրգռված անձի համար օբյեկտիվորեն շահավետ լինեն: Օգուտը կարող է արտահայտվել դոմինուսի գույքը ոչնչացումից, կորստից կամ վնասվածքից պաշտպանելու, ավելի մեծ գույքային վնասները կանխելու, կամ երրորդ անձանց հանդեպ ունեցած նրա պարտավորությունների կատարման մեջ: Այդ պատճառով օգուտը պետք է լինի ակնհայտ, այսինքն՝ պարզ լինի քաղաքացիական շրջանառության ցանկացած խելամիտ մասնակցի համար: Սովորաբար, այն կախված է անհրաժեշտ կորուստների չափի և վնասի այն ծավալի հարաբերակցությունից, որը սպառնում է շահագրգռված անձին՝ համապատասխան միջոցներ չձեռնարկելու դեպքում:

2/ գործելով ի շահ ուրիշի՝ հետտորը պետք է հաշվի առնի շահագրգռված անձի իրական կամ հավանական մտադրությունները և ակնհայտ հակասությունների մեջ չմտնի դրանց հետ: Այդ պատճառով, եթե կոնկրետ դեպքում հանգամանքները թույլ են տալիս հանգելու այն եզրակացության, որ շահագրգռված անձը չի ցանկանում իր շահերի պահպանության համար միջոցներ ձեռնարկել՝ փրկել իր գույքը ոչնչացումից, կատարել երրորդ անձի հանդեպ ունեցած պարտավորությունը, ապա հետտորը չպետք է գործի նրա կամքին հակառակ: Օրենքը թույլատրում է այդ կանոնից բացառություն անել երկու դեպքերում: Համաձայն Քաղ. օր. 1051 հոդվածի 2-րդ կետի, այն գործողությունները, որոնց նպատակն է կանխել անձի կյանքին սպառնացող վտանգը, թույլատրվում է նաև այդ անձի կամքին հակառակ, իսկ որևէ մեկի նկատմամբ հոգածության պարտականություններ կատարելն այն անձի կամքին հակառակ, որի վրա դրված է այդ պարտականությունը: Օրինակ՝ փոքրահասակի, զառամյալ կամ հիվանդ մարդու նկատմամբ հոգ տանել նրանց խնամող անձանց կամքին հակառակ:

Մեր կարծիքով, այս նորմի շարադրանքը թերի է: Ինչպես կարելի է հոգ տանել փոքրահասակի նկատմամբ, եթե նրա ծնողը, որդեգրողը կամ խնամակալը պատշաճ կատարում են իրենց պարտականությունները և չեն ցանկանում, որ որևէ մեկը հոգ տանի իրենց խնամարկյալի նկատմամբ: Ուստի, Քաղ. օր. 1051 հոդվածի 2-րդ կետը պետք է ձևակերպել հետևյալ կերպ. «Գործողությունները, որոնց նպատակն է կանխել անձի կյանքին սպառնացող վտանգը, թույլատրվում են նաև այդ անձի կամքին հակառակ, իսկ որևէ մեկի նկատմամբ հոգածության պարտականություններ կատարելը՝ այն անձի կամքին հակառակ, որի վրա դրված է այդ պարտականությունը, եթե վերջինս չի կատարում կամ ոչ պատշաճ է կատարում նշված պարտականությունը»:

Բննարկվող պարտավորության ծագման հաջորդ պայմանը հանդիսանում է այն, որ հետտորը պետք է գրկված լինի ի շահ դոմինուսի գործողություններ կատարելու համար նրա համաձայնությունը ստանալու հնարավորությունից: Սովորաբար, դա պայմանավորված է լինում շահագրգռված անձի ժամանակավոր բացակայությամբ կամ էլ՝ նրա համաձայնությունը ստանալու այլ անհնարինությամբ, օրինակ, շահագրգռված անձի անօգնական վիճակի մեջ գտնվելը: Այնուամենայնիվ, իրավիճակը պահանջում է անհետաձգելի գործողությունների կատարում, որոնց դանդաղ կատարումն սպառնում է շահագրգռված անձին՝ կրելու լրացուցիչ գույքային վնասներ: Եթե այդպիսի գործողությունների անհապաղ կատարման անհրաժեշտություն չի եղել, և հետտորը հնարավորություն է ունեցել, մինչև դրանց կատարելը, ստանալ շահագրգռված անձի կարծիքը, ապա առանց հանձնարարության, ի շահ ուրիշի գործողություններից ծագող պարտավորություն չի առաջանում:

**Վերջապես**, ի շահ ուրիշի կատարված գործողություններն առաջացնում են համապատասխան պարտավորություն միայն այն դեպքում, երբ այդ գործողությունները կատարող անձը գիտակցում է դրանց ուղղվածությունը և չի հետապնդում որևէ այլ քաղաքացիաիրավական հարաբերություն առաջացնելու նպատակներ: Հենց այս հատկանիշով որոշվում է քննարկվող պարտավորության և նվիրատվության պայմանագրից ու անհիմն հարստացման հետևանքով ծագող պարտավորությունների միջև առկա տարբերությունը<sup>1</sup>: Այսպես, եթե անձն, ի շահ ուրիշի կատարելով գործողություններ, սխալմամբ ենթադրել է, որ գործել է ի շահ իրեն /մարել է իր պարտքը, իր գույքը փրկել է ոչնչացումից և այլն/, և դա երկրորդ անձի մոտ առաջ է բերել անհիմն հարստացում, ապա կողմերի հարաբերություններում պետք է կիրառվեն ոչ թե ի շահ ուրիշի գործողություններից ծագող, այլ անհիմն հարստացման հետևանքով ծագող պարտավորության մասին կանոնները /Քաղ. օր. 1056 հոդվ./:

Նշված հոդվածի իմաստից բխում է, որ անհիմն հարստացում կարող են առաջացնել նաև այն գործողությունները, որոնք կատարելով, անձը գիտակցաբար մտնում է ուրիշի իրավական ոլորտը՝ ամենից առաջ հետապնդելով իր սեփական շահերը: Եթե այդ դեպքում միաժամանակ դրական արդյունքի է հասնում այլ անձի գույքային ոլորտում, ապա նա պետք է ստացված օգուտը վերադարձնի առաջին անձին:

1. Ств Флейшман Е. А. Обязательства из причинения вреда и из неосновательного обогащения. М., 1951, էջ 231:

Անհիմն հարստացման հետևանքով և ի շահ ուրիշի գործողություններից ծագող պարտավորությունները տարբերվում են նաև իրենց բովանդակությամբ: Առաջին պարտավորությունում, որպես կանոն, պարտապանի պարտականությունը կայանում է նրանում, որ անհիմն ծեռք բերածը կամ պարտատիրոջ գույքի հաշվին խնայածը պետք է վերադարձնի նրան: Պարտապանի կողմից գույքը բնեղենով վերադարձնելու անհնարինության դեպքում նա պարտավոր է հատուցել ծեռք բերման պահին այդ գույքի իրական արժեքը /Քաղ. օր. 1095 հոդվ., 1-ին կետ/: Ինչ վերաբերվում է ի շահ ուրիշի գործողություններից ծագող պարտավորություններին, ապա պարտապանը /դոմինուսը/ պարտավոր է պարտատիրոջը /հետտորին/ հատուցել նրա կողմից կրած անհրաժեշտ ծախսերը և այլ իրական վնասը /Քաղ. օր. 1052 հոդվ. 1-ին կետ/:

Այսպիսով, ի շահ ուրիշի կատարված գործողություններից և անհիմն հարստացման հետևանքով ծագող պարտավորությունները գոյություն ունեն ոչ թե առանձին, այլ փոխադարձաբար լրացնում են մեկը մյուսին<sup>1</sup>: Մինչդեռ, տվյալ պարտավորությունների ծագման հիմքերը և բովանդակությունը չեն համընկնում: Այդ պատճառով էլ օրենսդրի համար և դատական պրակտիկայում շատ կարևոր է որոշել տվյալ պարտավորությունների գործողության ոլորտները սահմանազատող առանձնահատկությունները:

Ֆրանսիական ցիվիլիստիկական գրականության մեջ նշվում է «Առանց հանձնարարության ուրիշի գործերը վարելու» ինստիտուտի ոչնչով չարդարացված, քավականին լայն կիրառման մասին: Մինչև 19-րդ դարը ներառյալ, Ֆրանսիական քաղաքացիական իրավունքում գոյություն ուներ այն ավանդույթը, որ ցանկացած դեպքում կիրառվում էր ուրիշի գործերը վարելու մասին օրենքը, եթե մի անձն, առանց օրինական հիմքերի, հարստացել է ուրիշ անձի հաշվին: Մորանոյերը նշում է, որ «առանց հանձնարարության ուրիշի գործերը վարելու» ինստիտուտի տարբերակող հատկանիշ պետք է ծառայի հենց դրա սուբյեկտիվ պահը՝ ուրիշի գործերը վարելու մտադրությունը, իսկ անհիմն հարստացման դեպքում, ընդհակառակը, գերակշռող նշանակություն ուներ օբյեկտիվ պահը՝ ուրիշի գույքի հաշվին մեկ այլ անձի գույքի ավելացումը<sup>2</sup>:

1. Ств Эрн. Կ. Տրյատր, Ա. Պ. Սերգել, նշված աշխատությունը, էջ 679:

2. Ств Жюлио де ла Морандьер, Гражданское право Франции. Т. 2. М., 1960, 475-476 էջերը:

Առանց հանձնարարության, ի շահ ուրիշի կատարելով գործողություններ՝ հետտորը պետք է գիտակցի դրանց ուղղվածությունը: Դրա համար անհրաժեշտ է հետևյալ երկու պայմանների միաժամանակյա առկայությունը.

1/ անհրաժեշտ է, որպեսզի հետտորը գիտակցի, որ իր կողմից կատարվող գործողությունները օբյեկտիվորեն օգտակար են ուրիշի համար և ծառայում են նրա շահերին.

2/ ի շահ ուրիշի գործող անձի մոտ չպետք է շահագրգռված անձին նվիրատվություն անելու մտադրություն լինի: Եթե, օրինակ, պարտապանին երրորդ անձի հանդեպ ունեցած գույքային պարտականություններից ազատող անձի վարքագծից հետևում է, որ նա դա կատարում է անհատուցելիության հիմքով, ապա ակնհայտ է նվիրատվություն կատարելու նրա ցանկությունը: Ընդհակառակը, հետտորը, չնայած գործում է ի շահ ուրիշի, սակայն ոչ թե իր հաշվին, այլ այն անձի, ի շահ որի կատարվում են համապատասխան գործողությունները:

Քաղ. օր. նորմերում բացակայում է ցուցում այն մասին, որ հետտորի գործողությունները բացառապես պետք է կատարվեն ի շահ ուրիշի: Այստեղից հետևում է, որ եթե հետտորի գործողությունները ապահովում են ոչ միայն ուրիշների, այլ միաժամանակ նաև սեփական շահերը, ապա հնարավոր է առաջանա ի շահ ուրիշի գործողություններից ծագող պարտավորություն:

Այսպիսով, «Առանց հանձնարարության ի շահ ուրիշի գործողություններ» հասկացությունն իր մեջ ներառում է նաև այնպիսի գործողությունները, որոնք շոշափում են այդ գործողությունները կատարող անձի շահերը: Այդ դեպքում, նշված անձը պետք է գիտակցի, որ իր կողմից սեփական շահերը պաշտպանելու համար կատարվող գործողությունները ծառայում են նաև ուրիշ անձանց շահերին: Այս իրավիճակը պարզ հասկանալու համար բերենք օրինակ:

Քաղաքացի Ա-ի անփութության հետևանքով նրան պատկանող ամառանոցում հրդեհ է բռնկվել: Հարևան հողամասի սեփականատերը՝ քաղաքացի Բ-ն, նկատելով իր տնօրինության տակ գտնվող շինությանը մոտիկացող կրակը, սկսում է հնարավոր բոլոր միջոցներով հրդեհը մարել: Արդյունքում նրա կողմից ձեռնարկված գործողություններով հնարավոր է լինում հանգսնել հրդեհը, իսկ քաղաքացի Բ-ին պատկանող շինությանը վնաս չի պատճառվում: Սակայն, վերջինս կրում է գույքային վնաս, որն արտահայտվում է՝

ա/ հրդեհը մարելու ժամանակ իր հագուստը փչանալու.

բ/ հրդեհը մարելու ժամանակ ստացած այրվածքների պատճառով բուժման համար կրած ծախսերի մեջ:

Քաղաքացի Բ-ն, արդյոք, իրավունք ունի՞ քաղաքացի Ա-ից պահանջել՝ հատուցելու իրեն պատճառված գույքային վնասը, և եթե՞ այո, ապա ո՞ր իրավահարաբերության տարրն է հանդիսանում տվյալ սուբյեկտիվ իրավունքը:

Եթե հաշվենք, որ հետտորի գործողությունները պետք է բացառապես կատարվեն ի շահ ուրիշի, ապա դժվար թե այս դեպքում կողմերի հարաբերություններում թույլատրելի կլինի կիրառել քննարկվող պարտավորության նորմերը: Ակնհայտ է, որ քաղաքացի Բ-ի գործողություններն անենից առաջ կատարվել են իր գույքին սպառնացող վնասը կանխելու, այսինքն՝ սեփական շահերը պաշտպանելու նպատակով:

Չի կարելի պահանջել հասցված վնասի հատուցում Քաղ. օր. 17 հոդվածի համաձայն, քանի որ ծախսերը, որն ստիպված է եղել կատարել քաղաքացի Բ-ն, նշված հոդվածի իմաստից ելնելով, չեն հանդիսանում վնաս: Քաղ. օր. 17 հոդվածի համաձայն խոսքը վերաբերվում է այնպիսի ծախսերին, որոնք պայմանավորված են եղել անձին պատկանող սուբյեկտիվ իրավունքի խախտմամբ: Քաղաքացի Ա-ն միայն պոտենցիալ սպառնալիք է ստեղծել քաղաքացի Բ-ի իրավունքների խախտմանը, դրա համար էլ բացակայում է պատճառական կապը պատճառված վնասի և քաղաքացի Բ-ի վարքագծի միջև: Հենց այդ պատճառով էլ, տվյալ դեպքում, չի առաջանում վնաս պատճառելու հետևանքով առաջացող պարտավորություն, քանի որ պատճառական կապը հակահրավակյան գործողության և վրա հասած վնասի միջև համարվում է վնաս պատճառելու հետևանքով առաջացող /դելիկտային/ պարտավորության առաջացման պայմաններից մեկը:

Կողմերի հարաբերություններում անհիմն հարստացման հետևանքով ծագող պարտավորությունների նորմերը կիրառել նույնպես սխալ կլինի, քանի որ բացակայում է տուժողի գույքի հաշվին շահագրգռված անձի հարստացման փաստը, որը հանդիսանում է տվյալ պարտավորության առաջացման անհրաժեշտ պայմաններից մեկը: Եթե քաղաքացի Բ-ի կողմից ձեռնարկվեին համապատասխան գործողություններ՝ կանխելու իր գույքին սպառնացող վնասը, ապա վնասն անխուսափելիորեն կպատճառվեր, և քաղաքացի Ա-ի՞ որպես վնաս պատճառողի վրա կդրվեր այն հատուցելու պարտականություն: Այդ դեպքում վնաս պատճառողի գույքի կազմը կնվազեր պատճառված վնաս

1. См. Гримдаикос право. Учебник под ред. Ю.К.Толстого, А.П.Сергеева, Т. 2., М., 1999, т. 679:



սին համաչափ: Բայց, ինչպես կարելի է տվյալ դեպքում որոշել անհիմն խնայածի չափը, երբ բացակայում է վնասի պատճառման փաստը, ուստի նաև՝ դրա հատուցման պարտականությունը:

Արդյունքում կարելի է եզրակացնել, որ քաղաքացի Ա-ի և քաղաքացի Բ-ի միջև ծագում է առանց հանձնարարության, ի շահ ուրիշի գործողություններից ծագող պարտավորություն: Քննարկվող պարտավորության նորմերի կիրառման համար բավարար է որոշել, թե ինչ աստիճանով են մի անձի գործողությունները ծառայում մեկ այլ անձի շահերին: Օրենքով նախատեսված մնացած պայմանների առկայության դեպքում ծագում է առանց հանձնարարության, ի շահ ուրիշի գործողություններից ծագող պարտավորություն: Հակառակ տեսակետը կհանգեցնեք նրան, որ ի շահ ուրիշի գործողություններ ձեռնարկող անձի իրավունքը կմնար անպաշտպան:

Տվյալ խնդրի լուծման այլ մոտեցում գոյություն ունեւ Հռոմեական իրավունքում: Եթե հետտորը կարողանար առանձնացնել իր սեփական շահը ուրիշ անձի շահից և վարեր միայն իր անձնական գործը, ապա իր շահի միախառնումը ուրիշի գործերը վարելու հետ չի առաջացնի *negotiorum gestio* /ի շահ ուրիշի գործողություններից ծագող/ պարտավորություն: Ընդհակառակը, սեփական շահն ուրիշի շահից առանձնացնելու անհնարինության դեպքում քննարկվող պարտավորության մասին խոսք լինել չի կարող: Այսպես, հետտորը չէր դիտարկվում որպես իր պարտապանի գույքի կառավարումն իրականացնող պարտատեր /*missio possessionem*/: Կառավարելով ուրիշի գույքը՝ նա ի վիճակի չէր առանձնացնելու սեփական շահը ուրիշ պարտատերերի և իր պարտապանի շահերից: Այս և համանման դեպքերում հետտորը կստանար հայցի իրավունք՝ իր գույքային շահերի պաշտպանության համար<sup>1</sup>:

Ի շահ ուրիշի գործողությունները չեն սահմանափակվում գույքային հարաբերությունների ոլորտով: Դրանք կարող են առաջացնել համապատասխան պարտավորություն նաև այն ժամանակ, երբ ուղղված են անձնական ոչ գույքային շահերի պահպանությանը, օրինակ, մարդու կյանքը փրկել, առողջությունը, անձնական անձեռնմխելիությունը պաշտպանել և այլն:

Ինչպես արդեն նշվեց, ի շահ ուրիշի կատարվող գործողությունները հանդիսանում են քննարկվող պարտավորության ծագման հիմքը: Նշված գործողությունների կատարման պահին հետտորը և դոմինուսը

միմյանց հետ որևէ իրավահարաբերության մեջ չեն գտնվում: Ասվածն, ի դեպ, չի նշանակում, որ հետտորը ի շահ ուրիշի գործողությունների կատարման ժամանակ ընդհանրապես ազատ է պարտականություններից: Օրենքը նրա վարքագծի նկատմամբ ներկայացնում է որոշակի պահանջներ, որոնց չպահպանելը հետտորի համար առաջ է բերում անշահավետ գույքային հետևանքներ: Այդ պահանջներն արտահայտվում են հետևյալում.

1/ հետտորը պետք է գործի տվյալ դեպքում գործի հանգամանքների համար անհրաժեշտ հոգատարությամբ և շրջահայացությամբ /Քաղ. օր. 1048 հոդվ./: Այլ կերպ ասած՝ օրենքը պահանջում է, որպեսզի հետտորը գործի որպես հոգատար սեփականատեր, դրսևորի պարտադիր ուշադրություն և կոպիտ սխալներ թույլ չտա: Այդ պատճառով, եթե հետտորի գործողությունների հետևանքով շահագրգռված անձին վնաս պատճառվի, ապա հետտորի վարքագծում դիտավորյալ կամ կոպիտ անգոյություն ձևով մեղքի առկայության դեպքում քննարկվող պարտավորությունը չի առաջանում, այլ ծագում է վնաս պատճառելու հետևանքով առաջացող պարտավորություն, որը կարգավորվում է ՀՀ քաղ. օր. իններորդ բաժնի 60 գլխի նորմերով /Քաղ. օր. 1058-1091 հոդվածներ/.

2/ հետտորը պարտավոր է առաջին իսկ հնարավորության դեպքում շահագրգռված անձին հայտնել ի շահ նրա կատարված գործողությունների մասին և խելամիտ ժամկետի ընթացքում սպասել ձեռնարկված գործողություններին հավանություն տալու կամ չտալու մասին նրա որոշմանը /Քաղ. օր. 1049 հոդվ. 1-ին կետ/: Հետտորը կազատվի այդ պարտականությունից միայն այն դեպքում, երբ

ա/ ի շահ ուրիշի գործողությունները ձեռնարկվում են շահագրգռված անձի ներկայությամբ.

բ/ դոմինուսի կամքի արտահայտմանն սպասելը կարող է վերջինիս լուրջ գույքային վնաս հասցնել:

Քաղ. օր. 1049 հոդվածի 2-րդ կետը սահմանում է. «Շահագրգիռ քաղաքացուն ի շահ նրա գործողություններ կատարելու մասին հայտնելը պարտադիր չէ, եթե այդ գործողությունները ձեռնարկվում են նրա ներկայությամբ»:

Այստեղ «քաղաքացի» եզրույթն օգտագործելը ճիշտ չէ: Նորմի իմաստից հետևում է, որ օրենքի պահանջը չի տարածվում օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց վրա: «Քաղաքացի» եզրույթն ավելի է նեղ հասկացություն է, քան «անձ», «ֆիզիկական անձ» եզրույթները:

1. Տես Յու. Կ. Տոլստոյի, Ա. Պ. Սերգեյևի խմբ., *Նշված աշխատությունը*, էջ 681:

Ուստի, Քաղ. օր. 1049 հոդվածի 2-րդ մասը անհրաժեշտ է վերախմբագրել հետևյալ ձևով. «Շահագրգիռ **անձին** ի շահ նրա գործողություններ կատարելու մասին հայտնելը պարտադիր չէ, եթե այդ գործողությունները ձեռնարկվում են նրա ներկայությամբ»: Ընդ որում, օրենքն այս դեպքում ևս շահագրգռված անձին իրավունք է վերապահում հավանություն տալ կամ հավանություն չտալ ի շահ իրեն կատարված գործողություններին:

Հետևորդի վրա դնելով նման պարտականություն՝ օրենսդիրը ելնում է նրանից, որ հետևորդի գործողությունները պետք է համապատասխանեն դոմինուսի մտադրություններին: Այդ պատճառով, ձեռնարկելով ի շահ ուրիշի անենասանհետաձգելի և անհրաժեշտ միջոցները, հետևորդը պետք է կապ պաշտպանի շահագրգռված անձի հետ և հարցնի նրա կամքը: Հետագայում հետևորդը պարտավոր է իր քայլերը խստիվ կերպով համաձայնեցնել դոմինուսի իրական կամքի հետ: Հակառակ դեպքում հետևորդը կրում է այն հետևանքների ռիսկը, որ իր կատարած գործողությունները շահագրգռված անձի համար չեն հանգեցնի ո՛չ իր՝ հետևորդի, ո՛չ էլ՝ երրորդ անձանց հանդեպ պարտականությունների /Քաղ. օր. 1051 հոդվ. 1-ին կետ/.

3/ ի շահ ուրիշի գործողությունները կատարելուց հետո հետևորդը պարտավոր է շահագրգռված անձին ներկայացնել հաշվետվություն ստացված եկամուտների, կրած ծախսերի և այլ վնասների նշումով /Քաղ. օր. 1057 հոդվ./: Տվյալ պարտականության առկայությունը բնութագրական է այն բոլոր պարտավորություններին, որոնց օբյեկտը ի շահ ուրիշի, սակայն նրա հաշվին կատարված գործողություններն են: Այսպես, հանձնարարության պայմանագրով հանձնակատարը հանձնարարությունը կատարելուց հետո պարտավոր է հանձնարարողին ներկայացնել հաշվետվություն, որը կարող է ներկայացվել ինչպես բանավոր, այնպես էլ գրավոր ձևով: Կոմիսիայի պայմանագրով կոմիսիոները պարտավոր է կոմիսիոն հանձնարարությունը կատարելուց հետո կոմիտենտին հաշվետվություն ներկայացնել և նրան հանձնել կոմիսիայի պայմանագրով ամբողջ ստացածը: Գույքի հավատարմագրային կառավարման պայմանագրով հավատարմագրային կառավարիչն իր գործունեության մասին հաշվետվություն է ներկայացնում կառավարման էիմնադրին կամ շահառուին:

Հետևորդի նշված պարտականությունը չի մտնում առանց հանձնարարության, ի շահ ուրիշի գործողություններից ծագող պարտավորության բովանդակության մեջ, սակայն, նախքան դրա կատարումը, այդ պարտավորությունը ծագել չի կարող: Հետևորդի հաշվետվություն

անհրաժեշտ է՝ որոշելու համար, թե ինչ չափով է ենթակա հատուցման նրա կրած վնասները, որոնք կապված են եղել ի շահ ուրիշի կատարած անհրաժեշտ ծախսերի և այլ իրական վնասի հետ:

Այսպիսով, ի շահ ուրիշի գործողությունները կարող են առաջացնել համապատասխան պարտավորություն հետևյալ պայմանների առկայության դեպքում.

1/ այդ գործողությունները պետք է կատարվեն առանց շահագրգիռ անձի /ի շահ որի կատարվում են այդ գործողությունները/ հանձնարարության, այլ ցուցումի կամ նախապես խոստացված համաձայնության: Հակառակ դեպքում ի շահ ուրիշի գործողությունների վրա կատարվեն այն պայմանագրերի /կապալ, ծառայությունների մատուցում, պահատվություն, հանձնարարություն, կոմիսիա և այլն/ մասին կանոնները, որոնցով միջնորդավորվում են այդ գործողությունները.

2/ պահանջվում է, որպեսզի նշված գործողությունները կատարվեն ի շահ ուրիշի, այսինքն՝ օբյեկտիվ շահավետ լինեն այդ անձի համար.

3/ պահանջվում է, որ ի շահ ուրիշի կատարված գործողությունները չհետապնդեն հակաիրավական նպատակներ և չկրեն հակաիրավական բնույթ՝.

4/ ի շահ ուրիշի գործողությունները չպետք է հակասեն շահագրգռված անձի իրական կամ հավանական մտադրություններին.

5/ պահանջվում է, որպեսզի այդ գործողությունները կատարվեն անհրաժեշտ հոգատարությամբ և շրջահայացությամբ, այսինքն՝ դրանք չպետք է ուղեկցվեն կոպիտ սխալներով կամ այն կատարող անձի ակնհայտ անփութությամբ:

## § 2. Առանց հանձնարարության, ի շահ ուրիշի գործողություններից ծագող պարտավորության տարրերը

Ինչպես ցանկացած պարտավորական իրավահարաբերություն, այնպես էլ առանց հանձնարարության, ի շահ ուրիշի գործողություններից ծագող պարտավորությունն ունի իր տարրերը՝ սուբյեկտները, օբյեկտը և բովանդակությունը:

Օրենքը հատուկ պահանջներ չի առաջադրում քննարկվող պարտավորության սուբյեկտիվ կազմին: Առանց հանձնարարության, ի շահ ուրիշի գործողություններից ծագող պարտավորություններում պարտատեր է հանդիսանում ի շահ ուրիշի գործողություններ կատարած

1. См. Комментарий к Гражданскому кодексу Российской Федерации. М., 1998, էջ 571:

անձը՝ հետտորը, իսկ պարտապան՝ այն անձը, ի շահ որի կատարվել են այդ գործողությունները, այսինքն՝ դոմինուսը: Որպես հետտոր և դոմինուս կարող են հանդես գալ ցանկացած ֆիզիկական և իրավաբանական անձ: Օրենքը բացառություն է նախատեսում միայն պետական և տեղական ինքնակառավարման /մունիցիպալ/ մարմինների համար, քանի որ ի շահ ուրիշի գործողությունները համարվում են նրանց գործունեության նպատակներից մեկը:

Առանց հանձնարարության, ի շահ ուրիշի գործողությունները միասեռ չեն և կարող են կրել ինչպես փաստական /ուրիշի գույքը ոչնչացումից փրկել, անհետաձգելի վերանորոգման աշխատանքներ կատարել և այլն/, այնպես էլ իրավաբանական բնույթ /գործողություններ՝ ուղղված գործարքներ, իսկ երբեմն էլ այլ իրավաբանական ակտեր կնքելուն և կատարելուն/: Այդ ոչ միասեռության պատճառով միատեսակ չեն նաև նրանց ներկայացվող պահանջները: Այսպես, փաստական գործողությունները կարող են կատարել գործունակ, երբեմն էլ անգործունակ քաղաքացիները: Ինչ վերաբերվում է իրավաբանական գործողություններին, ապա դրանց կատարումը ենթարկվում է գործունակության մասին ընդհանուր կանոններին: Այսպես, անգործունակ քաղաքացիներն, ընդհանրապես, իրավաբանական գործողություններ կատարել չեն կարող, իսկ մասնակի գործունակ<sup>2</sup>, սահմանափակ գործունակ քաղաքացիները՝ իրենց գործունակության բնույթից և ծավալից ելնելով:

Այստեղ «Քաղաքացիներ» եզրույթի տակ պետք է հասկանալ ինչպես ՀՀ քաղաքացիները, այնպես էլ օտարերկրյա քաղաքացիները և քաղաքացիություն չունեցող անձինք:

Քննարկվող պարտավորության օբյեկտ են հանդիսանում դոմինուսի գործողությունները, որոնք ուղղված են հետտորի կողմից կրած անհրաժեշտ ծախսերի և նրան պատճառված այլ իրական վնասի հատուցմանը, իսկ օրենքով նախատեսված դեպքում նաև՝ հետտորին վարձատրություն տալուն /Քաղ. օր. 1053 հոդվ./: Ի շահ ուրիշի գործողությունները չեն հանդիսանում համապատասխան պարտավորության օբյեկտ, այլ հանդես են գալիս որպես այդ պարտավորության ծագման հիմք: Ընդ որում, ցանկացած պարտավորական իրավահա-

րաբերություն հանդիսանում է քաղաքացիական իրավահարաբերություն: Իսկ ցանկացած քաղաքացիական իրավահարաբերության օբյեկտ հանդիսանում է այն, ինչի վրա ներգործում է տվյալ իրավահարաբերությունը:

Պարտավորական իրավահարաբերությունների օբյեկտ է համարվում այն, որ իրավագոր անձը /պարտատերը/, իր շահերից ելնելով, իրավունք ունի պարտավոր անձից /պարտապանից/ պահանջել հոգուտ իրեն կատարելու որոշակի ակտիվ գործողություններ: Այդ պատճառով էլ առանց հանձնարարության, ի շահ ուրիշի գործողություններից ծագող պարտավորության օբյեկտ միշտ էլ հանդիսանում են պարտապանի գործողությունները: Հետտորի կողմից հոգուտ իրեն որոշակի գործողությունների կատարում պահանջելու իրավունքով դոմինուսն օժտված չէ: Հետտորն ի շահ ուրիշի գործողությունները ձեռնարկում է սեփական հայեցողությամբ՝ դոմինուսի օգտին գործելու իրավաբանական պարտականության բացակայության դեպքում:

Առանց հանձնարարության, ի շահ ուրիշի գործողություններից ծագող պարտավորությունը, ինչպես ցանկացած պարտավորություն, ունի նաև իր բովանդակությունը:

Ընդհանրապես, պարտավորության բովանդակությունն այն իրավունքների և պարտականությունների ամբողջությունն է, որը ձեռք են բերում պարտավորության սուբյեկտներ հանդիսացող պարտատերն ու պարտապանը:

Առանց հանձնարարության, ի շահ ուրիշի գործողություններից ծագող պարտավորության բովանդակությունն են կազմում այդ գործողությունների կատարման հետ կապված, իր կողմից կրած անհրաժեշտ ծախսերի և պատճառված այլ իրական վնասի հատուցում պահանջելու հետտորի իրավունքը ու դրան համապատասխան դոմինուսի պարտականությունը: Վերջինս չի ազատվում տվյալ պարտականությունը կատարելուց նաև այն դեպքերում, երբ ի շահ ուրիշի գործողությունները չեն հանգեցրել ենթադրվող արդյունքին, կամ չեն արժանացել դոմինուսի հավանությանը, սակայն քննարկվող պարտավորության ծագման համար ունեցել են բոլոր անհրաժեշտ պայմանները: Եթե ձեռնարկված գործողությունների արդյունքում հետտորն, այնուամենայնիվ, չի հասել ենթադրվող արդյունքին, ապա ինքը՝ այդ փաստը վկայում է այն մասին, որ հետտորի գործողությունները դոմինուսի համար օբյեկտիվորեն շահավետ չեն: Ենթադրվող արդյունքին չհասնելը որոշ դեպքերում կարող է պայմանավորված լինել հետտորի կամքից անկախ վրա հասած պատահական պատճառներով, չնայած վերջինս ի

1. Տես Ա. Պ. Սերգեյևի, Յու. Կ. Տոլստոյի խմբ., նշված աշխատությունը, էջ 682:

2. «Մասնակի գործունակ» եզրույթը ՀՀ քաղաքացիական օրենսգրքը չի օգտագործում: Մասնակի գործունակ են համարվում վեցից մինչև տասնութ տարեկան անչափահասները:

շահ ուրիշի գործողությունները կատարելիս ցուցաբերել է գործի հանգամանքների համար անհրաժեշտ հոգատարություն և շրջահայացություն: Երբեմն էլ հետտորի կողմից ուրիշի շահերի ապահովման նպատակով ձեռնարկված գործողությունները կարող են անբավարար լինել, նույնիսկ այդ շահերի ապահովումն իր ուժերից վեր լինել: Տվյալ դեպքում նույնպես առկա են բոլոր պայմանները՝ քննարկվող պարտավորության առաջացման համար: Ինչ վերաբերվում է ձեռնարկված գործողություններին դոմինուսի կողմից հավանություն չտալու հետևանքներին, ապա դոմինուսն ազատվում է հետտորի կողմից կատարված անհրաժեշտ ծախսերը և այլ իրական վնասը հատուցելու պարտականությունից միայն այն դեպքում, եթե հետտորի կողմից այդ գործողությունները կատարվել են հավանություն չտալուց հետո՝ իր կամքին հակառակ:

Քննարկվող պարտավորության երկու սուբյեկտների շահերի պաշտպանության համար կարևոր նշանակություն ունի Քաղ. օր. 1052 հոդվածի 1-ին կետով նախատեսված նորմը, համաձայն որի ուրիշի գույքին սպառնացող վնասի կանխման դեպքում հատուցման չափը չպետք է գերազանցի գույքի իրական արժեքը: Իրավաբանական գրականության մեջ նշվում է, որ այդ նորմը տվյալ պարտավորությունում ինքնատիպ երաշխիք է ծառայում պարտապանի շահերին, քանի որ գործնականում բացառվում է այնպիսի իրավիճակ, երբ գույքը տիրապետող պարտապանն ստիպված լինի հատուցել տվյալ գույքը փրկելու հետևանքով ուրիշ անձանց կրած ծախսերը, որոնք գերազանցել են այդ գույքի արժեքը: Պրոֆ. ֆետոր Ա. Պ. Սերգեևի կարծիքով հետտորի կողմից դոմինուսի անձնական ոչ գույքային շահերի պաշտպանությանն ուղղված գործողություններ կատարելու հետևանքով կատարած անհրաժեշտ ծախսերը և այլ իրական վնասն, առանց որևէ սահմանափակման, ենթակա է հատուցման<sup>2</sup>:

Առանձին դեպքերում քննարկվող պարտավորությունն ունի բարդ բովանդակություն: Խոսքը վերաբերվում է այն դեպքերին, երբ հետտորի կրած անհրաժեշտ ծախսերի և այլ իրական վնասի հատուցման դոմինուսի պարտականությանը միանում է նաև հետտորին վարձատրություն տալու պարտականությունը:

Քաղ. օր. 1053 հոդվածի համաձայն դոմինուսի մոտ նշված պարտականությունը ծագում է հետևյալ երկու պայմանների միաժամանա-

կյա առկայության դեպքում.

ա/ անհրաժեշտ է, որ ի շահ ուրիշի գործողությունները շահագրգռված անձի համար հանգեցնեն դրական արդյունքի: Եթե հետտորի կողմից ակնհայտ խելամիտ ձեռնարկված գործողություններն անարդյունք են եղել, ապա դոմինուսի պարտականությունը սահմանափակվում է միայն անհրաժեշտ ծախսերի և այլ իրական վնասի հատուցմամբ.

բ/ վարձատրություն վճարելը պետք է նախատեսված լինի կոնկրետ հարաբերությունը կարգավորող օրենքով, շահագրգռված անձի հետ համաձայնությամբ, կամ գործարար շրջանառության սովորույթներով: Օրինակ՝ եթե հանձնարարության պայմանագրով, ընդհանուր կանոնի համաձայն, վարձատրությունը պարտադիր չէ, ապա առևտրային ներկայացուցչության պայմանագրով վարձատրությունը միշտ վճարվում է, բացառությամբ, եթե չվճարելը նախատեսված է պայմանագրով:

Վարձատրություն վճարելու մասին համաձայնությունը կարող է կնքվել միայն շահագրգռված անձի կողմից ի շահ իրեն կատարված գործողություններին հավանություն տալուց հետո: Տվյալ դեպքում կողմերի հարաբերություններում կիրառվում են պայմանագրային պարտավորությունների մասին նորմերը: Օրինակ՝ անձի կողմից իր օգտին կատարված աշխատանքներին հավանություն տալու դեպքում կողմերի հարաբերությունների նկատմամբ կիրառվում է կապալի պայմանագրի, այդ թվում նաև՝ տվյալ պայմանագրի հատուցանելիության մասին նորմը /Քաղ. օր. 707 հոդվ./: Շահագրգռված անձի կողմից հավանություն տալու պահից սկսած իր օգտին կատարված գործողություններից ծագած կողմերի հարաբերությունների նկատմամբ կիրառվում են հանձնարարության պայմանագրի կամ ձեռնարկված գործողությունների բնույթին համապատասխան այլ պայմանագրի մասին կանոնները /Քաղ. օր. 1050 հոդվ./: Այդ դեպքում բավարար է շահագրգռված անձի բանավոր տված հավանությունը: Որքանով ի շահ ուրիշի գործող անձը՝ հետտորն իր գործողություններով պարտահայտում է սեփական կամքը, իսկ շահագրգռված անձը՝ դոմինուսն այդ գործողություններին հավանություն տալով, պարտահայտում է հանդիպական կամք, ապա, հավանություն տալու պահից սկսած, համապատասխան պայմանագրում կողմերը համարվում են կայացած: Ձեռնարկված գործողությունների օգտակարության, օբյեկտիվ շահավետության

1. *Стн Гражданское право. Учебник под ред. Ю. К. Толстого, А. П. Сергеева, М., 1999, էջ 683:*

2. *Стн նույն տեղում, 683-684 էջերը:*

1. *Стн Комментарий к Гражданскому кодексу Российской Федерации. М., 1998, էջ 572:*

հարցն այստեղ որևէ նշանակություն չունի: Այժմ արդեն անհրաժեշտություն չկա գնահատել նշված գործողությունները շահագրգռված անձի մտադրություններին համապատասխան օգտակարության, շահավետության տեսանկյունից: Հավանություն տալով ի շահ իրեն կատարված գործողություններին՝ դոմինուսը դրանով իսկ ընդունել է դրանց օգտակարությունը, իր շահագրգռվածությունն այդ գործողություններում, այնպես, ինչպես որ դրանք կկատարվեին իր հանձնարարությամբ: Հռոմեական իրավունքում հավանություն տալու ակտի այդպիսի նշանակությունն իր արտահայտությունն է գտել «*ratihabitio mandato comparatur*» /երաշխսավորումը հավասարազոր է հանձնարարությանը/ կանոնում:

### **§ 3. Առանց հանձնարարության, ի շահ ուրիշի կատարված իրավաբանական գործողությունների առանձնահատկությունները**

Առանց հանձնարարության, ի շահ ուրիշի գործողություններից ծագող պարտավորությունն իր էության մեջ ընդգրկում է երկու բավականին տարասեռ պարտավորական հարաբերությունների խմբեր՝

1/ մի անձի կողմից ուրիշ անձի կյանքին, առողջությանը և գույքին սպառնացող վնասը կանխելուն ուղղված գործողություններ կատարելուց ծագող պարտավորություններ:

2/ մի անձի կողմից մեկ այլ անձի օգտին, առանց վերջինիս հանձնարարության գործարք կնքելուց և կատարելուց ծագող պարտավորություններ:

Առաջին դեպքում խոսքը վերաբերվում է մի անձի կողմից ի շահ ուրիշ անձի և առանց նրա հանձնարարության կատարված անհետաձգելի և անհրաժեշտ փաստական բնույթի գործողություններին: Երկրորդ դեպքում առնչվում ենք ի շահ ուրիշ անձի և առանց նրա հանձնարարության կատարված գործարքների հետևանքների հետ: Վերջին դեպքում խոսքը վերաբերվում է ի շահ ուրիշի կատարված իրավաբանական գործողություններին:

Այս երկու խումբ պարտավորությունները, որոշակի տարբերություններով հանդերձ, ունեն նաև ընդհանուր գծեր: Դրանք են՝

- 1/ մի անձ գործում է ի շահ ուրիշ անձի գույքային շահերի:
- 2/ բացակայում է շահագրգռված անձի գույքային շահերի ներկայացման կամ դրանց պահպանության վերաբերյալ նրա համաձայնությունը:

3/ ի շահ ուրիշի գործողությունների կատարման արդյունքում շահագրգռված անձի մոտ նշված գործողությունները կատարած անձի հանդեպ ծագում են քաղաքացիաիրավական պարտականություններ:

Այս ընդհանուր առանձնահատկություններից ելնելով՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգիրքը «ուրիշի կյանքը, առողջությունը և գույքը փրկելը» և «առանց հանձնարարության ուրիշի գործերը վարելը» քաղաքացիաիրավական այս երկու ինստիտուտները միավորել է մեկ՝ «առանց հանձնարարության, ի շահ ուրիշի գործողություններ» ինստիտուտի մեջ՝ նրան նվիրելով 59-րդ գլուխը:

Ինչպես արդեն նշեցինք, քննարկվող պարտավորությունը կարող է ծագել ոչ միայն ի շահ ուրիշի կատարված փաստական, այլև իրավաբանական գործողություններից /միակողմանի գործարքներից/:

Իսկ այժմ ներկայացնենք ի շահ ուրիշի կատարված իրավաբանական գործողությունների քաղաքացիաիրավական կարգավորման առանձնահատկությունները:

Ի շահ ուրիշի կատարված իրավաբանական գործողությունների կատարման դեպքում հավանություն տալու ակտն անհրաժեշտ է համապատասխան գործարքով իրավունքները և պարտականությունները շահագրգռված անձին անցնելու համար: Հակառակ դեպքում, Քաղ. օր. 1054 հոդվածի իմաստից ելնելով, իրավունքները և պարտականությունները պետք է կրի գործարքը կնքող անձը:

Առանց հանձնարարության, ի շահ ուրիշի կատարված իրավաբանական գործողություններից ծագող պարտավորության որոշակի տարրեր էր պարունակում նաև նախկին օրենսդրությունը /Հայկ. ԽՍՀ 1964թ. քաղ. օր. 63 հոդվ./: Նշված հոդվածը սահմանում էր ուրիշ անձի համար նրա անունից, սակայն առանց հանձնարարության կամ լիազորությունների սահմանազանցումով կնքված գործարքների հետևանքների մասին կանոններ: Նման գործարքներն առաջացնում, փոփոխում կամ դադարեցնում էին այն անձի իրավունքները և պարտականությունները, որի անունից կատարվել են գործողությունները, եթե վերջինս հավանություն էր տալիս այդ գործարքներին: Հավանությունը, որի անունից կատարվել են գործողությունները: Նման դեպքում առաջանում էր լիազորագրում արտահայտված անձի կամահայտության ուժով ծագող, ներկայացուցչությանը համանման հարաբերություն: Ներկայացվողի համար նրա անունից, սակայն առանց հանձնարարության կամ լիազորությունների սահմանազանցումով կնքված գործարքը նրա կողմից հավանություն չտալու դեպքում պար-

տականություններ չէր առաջացնում:

Որոշակի տարբերություններով հանդերձ՝ համանման նորմեր նախատեսվել են նաև ՀՀ գործող քաղաքացիական օրենսդրությամբ:

Այսպես, Քաղ. օր. 319 հոդվածի 1-ին կետը սահմանում է. «Այլ անձի անունից գործելու լիազորության բացակայությամբ կամ նման լիազորությունների սահմանազանցմամբ գործարքը կնքված է համարվում այն կնքած անձի անունից և ի շահ նրա, եթե մյուս անձը /ներկայացվողը/ հետագայում ուղղակի հավանություն չի տալիս տվյալ գործարքին»: Իսկ նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն հետագայում ներկայացվողի կողմից գործարքին հավանություն տալը տվյալ գործարքով նրա համար քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ է ստեղծում, փոփոխում և դադարեցնում այն կնքելու պահից:

Ի տարբերություն Քաղ. օր. 319 հոդվածի, ի շահ իրեն կնքած գործարքով իրավունքները և պարտականությունները շահագրգռված անձին անցնելը պահանջում է ոչ միայն շահագրգռված անձի կողմից տվյալ գործարքին հավանություն տալը, այլև մյուս կողմի համաձայնությունը: Քաղ. օր. 319 հոդվածը կոչված է կանխելու, այսպես կոչված, «կարծեցյալ ներկայացուցչությունը», երբ անձը դիտավորյալ կամ սխալմամբ իրեն ներկայացնում է որպես մյուս կողմի ներկայացուցիչ, կամ էլ գործում է իր լիազորությունների սահմանազանցումով: Այդ դեպքերում երրորդ անձը, որի հետ «կարծեցյալ ներկայացուցիչը» կատարում է գործարքը, իրավունք ունի ստուգել նրա լիազորությունները: Ղրա համար «կարծեցյալ ներկայացուցիչ» կողմից կնքված գործարքը պետք է որակել որպես իրավաբանական փաստ, որն իրավական կապ է ստեղծում երրորդ անձի և ներկայացվողի միջև: Վերջինս կարող է, իր կողմից տվյալ գործարքին հավանություն տալով, այդ կապը վերածել պարտականության:

Քաղ. օր. 319 հոդվածի 2-րդ կետի հիման վրա կարելի է եզրակացնել, որ ներկայացվողի կողմից հավանություն տալը գործում է հետադարձության ուժով: Տվյալ գործարքով ծագած իրավունքները և պարտականությունները նրա կողմից ձեռք են բերվում դրա կնքման պահից: Եթե «կարծեցյալ ներկայացուցչի» կողմից կնքվել է գործարք /պայմանագիր/, ապա ներկայացվողի կողմից նրան հավանություն տալու հետևանքով վերջինս դառնում է տվյալ գործարքի /պայմանագրի/ մասնակիցը: Այդ իրավիճակը պահանջում է բացատրություն: Պայմանագիրն իրենից ներկայացնում է երկու և ավելի անձանց կամքի

արտահայտություն: Ղրա համար էլ նրա մասնակիցներ կարող են լինել միայն այն անձինք, որոնց կամքն իրավաբանորեն արտահայտված է պայմանագրում: Այդ դեպքում պայմանագրի մասնակիցներից յուրաքանչյուրը պայմանագրի կնքման պահին պետք է արտահայտի իր կամքը: Սա նախատեսում է բացառություն: Ներկայացվողը ձեռք է բերում այն իրավունքները և պարտականությունները, որոնք, մինչև հավանություն տալը, որպես համապատասխան գործարքի մասնակցի, պատկանել են «կարծեցյալ ներկայացուցչին»: Այդ օրինակով, եթե քննարկվող գործարքը պարտականություններ է առաջացնում երրորդ անձի համար, ապա, մինչև ներկայացվողի կողմից նրան հավանություն տալը, երրորդ անձը համարվում է առանց պայմանի պարտավոր «կարծեցյալ» ներկայացուցչի հետ հարաբերություններում և պայմանով պարտավոր՝ ներկայացվողի հետ հարաբերություններում:

Ինչ վերաբերվում է ի շահ ուրիշի կնքված գործարքներին, ապա դրանք կատարող անձը գործում է իր անունից: Այդ դեպքում երրորդ անձը կարող է և չիմանալ, թե գործարքի մյուս կողմն ում օգտին է կատարում գործարքը: Եթե վերջինիս վրա տվյալ գործարքով որոշակի պարտականություններ են դրվում, ապա դրանք այլ անձի փոխանցելու համար պահանջվում է երրորդ անձի համաձայնությունը: Այս կանոնը բխում է պարտքի փոխանցման մասին Քաղ. օր. 406 հոդվածի նորմից: Եվ ընդհակառակը, այդպիսի համաձայնություն չի պահանջվում, եթե գործարքը կատարող անձն օժտված է միայն իրավունքներով, որոնց փոխանցումն այլ անձի /պահանջի գիշում/ հնարավոր է նաև առանց պարտավոր անձի համաձայնության /Քաղ. օր. 397 հոդվ. 2-րդ կետ/: Այն դեպքում, երբ երրորդ անձը գիտեր կամ պարտավոր էր իմանալ, որ գործարքը կնքված է ի շահ ուրիշի, ապա նրա համաձայնությունը նույնպես չի պահանջվում տվյալ գործարքով պարտականությունների փոխանցման համար /Քաղ. օր. 1054 հոդվ.:/

Հետևաբար, շահագրգռված անձի կողմից ի շահ իրեն կատարված իրավաբանական գործողություններին հավանություն տալու ակտի նշանակությունը կայանում է նրանում, որ այդ գործողությունները շոշափում են երրորդ անձանց իրավական ոլորտը: Շահագրգռված անձանց և երրորդ անձանց հարաբերություններում ի շահ ուրիշի գործող անձի ով լինելը որևէ նշանակություն չունի<sup>2</sup>:

1. *Stu Советское гражданское право. Т. 1. М., 1979, էջ 214:*

1. *Stu Բարսեղյան Տ.Վ., 2000թ. իրատ. նշված աշխատությունը, էջ 409:*

2. *Stu Саватье Р. Теория обязательств. М., 1972, էջ 368:*

Ա. ՆՈՐՄԱՏԻՎ ԱԿՏԵՐ

1. Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն /1995թ. հուլիսի 5/
2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն՝ փոփոխություններով և լրացումներով /2005թ. նոյեմբերի 27/
3. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Սահմանադրություն /2006թ. դեկտեմբերի 10/
4. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգիրք /1998թ. մայիսի 5/ ՀՀ պաշտոնական տեղեկագիր, 1998, թիվ 17 (50)
5. Հայկական ՍՍՀ քաղաքացիական օրենսգիրք /1923թ./
6. Հայկական ՍՍՀ քաղաքացիական օրենսգիրք /1964թ./, Հայկական ՍՍՀ Պետգույն սովետի տեղեկագիր, 1964թ., N 17, հոդված 84,
7. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգիրք /1998 թ. հունիսի 17/, ՀՀ պաշտոնական տեղեկագիր, 1998, թիվ 20 (53)
8. Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգիրք /9 նոյեմբերի 2004թ./, ՀՀ պաշտոնական տեղեկագիր, 2005թ., թիվ 4 (376)
9. Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգիրք /2 նոյեմբերի 2004թ./, ՀՀ պաշտոնական տեղեկագիր, 2004թ., թիվ 69 (368)
10. Հայաստանի Հանրապետության դատարանների նախագահների խորհրդի որոշումների ժողովածու, թիվ 1-27, Ե., 2000թ., թիվ 1-46, Ե., 2001թ.
11. Հայաստանի Հանրապետության վճարելի դատարանի քաղաքացիական և տնտեսական գործերի պալատի որոշումների ժողովածու, հատ. IV, V, VI, VII, VIII, IX, Ե., 2002
12. «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգիրքը գործողության մեջ դնելու մասին» ՀՀ օրենք /17 հունիսի 1998թ./, ՀՕ-229
13. «Եղիմակային և հարակից իրավունքների մասին» ՀՀ օրենք /1999թ./, ՀՕ-28
14. «Եղիմակային և հարակից իրավունքների մասին ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենք /2001թ./, ՀՕ-269
15. «Եղիմակային և հարակից իրավունքների մասին ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենք /2002թ./, ՀՕ-416
16. «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենք /2003թ./, ՀՕ-15
17. «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենք /2000թ./, ՀՕ-112
18. «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենք
19. «Դատական ծառայության մասին» ՀՀ օրենք /2006թ. հուլիսի 7/, ՀՕ-159-Ն
20. «Վիճակախաղերի մասին» ՀՀ օրենք /2004թ./, ՀՕ-3
21. «Հայաստանի Հանրապետության 1998թ. քաղաքացիական օրենսգիրքը Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում կիրարկման մեջ դնելու մասին» ԼԴՀ օրենք /18 մայիսի 2001թ./, ՀՕ-144
22. «Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում Հայաստանի Հանրապետության 1998թ. քաղաքացիական դատավարության օրենսգիրքը կիրարկման մեջ դնելու մասին» ԼԴՀ օրենք /14 փետրվարի 2002թ./ ՀՕ-185
23. Մարդու իրավունքների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության մասնակ-

- ցության միջազգային պայմանագրեր /պաշտոնական թարգմանություն/: Փաստաթղթերի ժողովածու, գիրք Ա, Եր., 2001
24. Гражданский кодекс Российской Федерации. Часть первая. - М.: 21 октября 1994г., № 51-ФЗ
  25. Федеральный закон о введении в действие части первой гражданского кодекса Российской Федерации. - М.: 21 октября 1994г., № 52-ФЗ
  26. Гражданский кодекс Российской Федерации. Часть вторая. - М.: 22 декабря 1995г., № 14-ФЗ
  27. Федеральный закон о введении в действие части второй гражданского кодекса Российской Федерации. - М.: 22 декабря 1995г., № 15-ФЗ
  28. Гражданский кодекс Российской Федерации. Часть третья. - М.: 1 ноября 2001г., № 146-ФЗ
  29. Федеральный закон о введении в действие части третьей гражданского кодекса Российской Федерации. - М.: 1 ноября 2001г., № 147-ФЗ
  30. Гражданский кодекс РСФСР (Ведомость Верховного Совета РСФСР, 1964, № 24, ст. 406), М., 11 июня 1964г.
  31. Гражданский кодекс Грузии. 26 июня 1997 г.
  32. Основы гражданского законодательства Союза и Союзных республик (Ведомости Верховного Совета СССР, 1961, № 13), М., 1961г.

Բ. ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԵՐԵՆ ԼԵԶՎՈՎ

33. Բարսեղյան Տ.Կ., Հայաստանի Հանրապետության քաղաքացիական իրավունք: Առաջին մաս, ԵՊՀ իրատ., Եր., 2000
34. Բարսեղյան Տ.Կ., Հայաստանի Հանրապետության քաղաքացիական իրավունք: Առաջին մաս, ԵՊՀ իրատ., Եր., 2004
35. Բարսեղյան Տ.Կ., Հայաստանի Հանրապետության քաղաքացիական իրավունք: Առաջին մաս, ԵՊՀ իրատ., Եր., 2006
36. Բարսեղյան Տ.Կ., Գույքային պատասխանատվության ինստիտուտի էվոլյուցիան և արդիական հիմնահարցերը: Երևանի համալս. հրատ., Եր., 2006
37. Բարսեղյան Տ.Կ., Հոմեոսի մասնավոր իրավունք: ԵՊՀ իրատ., Եր., 2000
38. Թովմասյան Մ.Թ., Անձի պատվի և արժանապատվություն իրավական պաշտպանությունը ՍՍՀՄ-ում: «Միտք» հրատ., Եր., 1968
39. Խրոպանյուկ Վ.Ն., Պետության և իրավունքի տեսություն: Երևանի «Գիտակ» համալսարանի հրատ., Եր., 1997
40. Հայկական ԽՍՀ քաղաքացիական իրավունք: Հատոր 1, Երևանի համալսարանի հրատ., Եր., 1978
41. Հայկական ԽՍՀ քաղաքացիական իրավունք: Հատոր 2, Երևանի համալսարանի հրատ., Եր., 1982
42. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական իրավունք: Երկրորդ մաս, խմբ. Գ.Հ.Ղարախանյանի, Ռ.Գ.Պետրոսյանի, ԵՊՀ իրատ., Եր., 2001
43. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական իրավունք: Երրորդ մաս, խմբ. Գ.Հ.Ղարախանյան, ԵՊՀ իրատ., Եր., 2003
44. Ղարախանյան Գ.Հ., Պարտավորության սուբյեկտները: «Պետություն և իրավունք», թիվ 1, 2005թ., էջ 20-29

45. Ղարախանյան Չ.Հ., Ֆրանսիայի քաղաքացիական օրենսգրքի մասին: «Գեղարքյուն և իրավունք», թիվ 1, 2001թ.,
46. Ղարախանյան Չ.Հ., Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի որպես շուկայական հարաբերությունները կարգավորող օրենսգրք: «Հուն» նիտար գիտությունների հրատապ հիմնախնդիրները հասարակության անցումային փուլում» գիտաժողովի նյութեր, Եր., 1998թ.,
47. Նազարյան Վ., Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի գիտագործնական մեկնաբանություններ: Եր., 2000
48. Գեղարքյան Ռ.Չ., Հայաստանի քաղաքացիական դատավարություն: Եր., 2003
49. Գեղարքյան Ռ.Չ., Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարություն, Գիրք Բ, Եր., 2000
50. Գեղարքյան Ռ.Չ., Իրավաբանական փաստերի դատական հաստատումը Երևանի համալսարանի հրատ., Եր., 1974

### Չ. ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՈՒՄԵՐԵՆ ԼԵԶՎՈՎ

51. Агарков М.М. Обязательство по советскому гражданскому праву. М., ВИОН, вып. 3, 1940
52. Алексеев С.С. Односторонние сделки в механизме гражданско-правового регулирования. Сборник научных трудов. Вып. 13, Свердловск. 1970
53. Алексеев С.С. Проблемы теории права. Т. 1. М., 1972
54. Антипин Б.С., Флейшц Е.А. Авторское право. Госюриздат, М., 1957
55. Белов Б.А. Гражданское право. Ч. 2. М., изд. «ЦЕНТР ЮРИНФОР», 2002
56. Брагинский М.И. Общее учение о хозяйственном договоре. Минск, 1967
57. Вердников В.Г., Кабалкин А.Ю. Новые гражданские кодексы союзных республик. М., 1965
58. Варшавский К.М. Обязательства, возникающие вследствие причинения другому вреда. М., 1992
59. Вакман Е.Л., Грингольд И.А. Авторские права художников. Изд. "Советский художник", М., 1962
60. Гордон М.В. Система договоров в советском гражданском праве. М., 1954
61. Гордон М.В. Советское авторское право. Госюриздат, М., 1957
62. Грибанов В.П. Пределы осуществления и защиты гражданских прав. М., изд. «Юрид. лит.», 1972
63. Грибанов В.П. Осуществления и защита гражданских прав. Изд. "Статут", М., 2000
64. Грибанов В.П. Ответственность за нарушение гражданских прав. М., 1973
65. Гражданский кодекс Российской Федерации. Комментарий, под ред. В.Д. Карповича. М., изд. «Спарк», 1995
66. Гражданский кодекс Российской Федерации. Ч. 2. Комментарий, под ред. О.М. Козырь, А.Л. Маковского, С.А. Хохлова, М., 1996
67. Гражданское право. Часть 1. Санкт-Петербург, изд. «Тейс», 1996
68. Гражданское право. Т. 2. Отв. ред. Е.А. Суханов. М., 1993
69. Гражданское право России. Курс лекций. Ч. 2, под ред. О.Н. Садинова. М., 1997

70. Гражданское право. Т. 1. М., изд. «БЕК», 1996
71. Гражданское право. Часть 1. Отв. ред. Калпин А.Г., Масляев А.И. М., изд. «Юристы», 1997
72. Гражданское право. Т.1. Учебник под ред. Ю.К.Толстого, А.П.Сергеева, М., изд. «Проспект», 2000
73. Гражданское право. Т. 2. Учебник под ред. Ю.К.Толстого, А.П.Сергеева, М., изд. «Проспект», 1997
74. Гражданское право. Т. 2. Учебник под ред. Ю.К.Толстого, А.П.Сергеева, М., изд. «Проспект», 1999
75. Гражданское право. Т. 2. Учебник под ред. Ю.К.Толстого, А.П.Сергеева, М., изд. «Проспект», 2004
76. Гражданское право. Т. 3. Учебник под ред. Ю.К.Толстого, А.П.Сергеева, М., изд. «Проспект», 1999
77. Гражданское право. Т. 2. отв. ред. Суханов Е.А. М., 2000
78. Гражданское право. Часть 2. Под ред. В.А. Рясенцева. М., 1999
79. Гражданское право. Отв. ред. Залеский В.В., Рассолова М.М. М., 2003
80. Гражданское право. Ч. 2. Под ред. А.Г.Калпина, М., 2000
81. Гуев А.Н. Постатейный комментарий к части второй Гражданского кодекса Российской Федерации. М., изд. «ИНФРА-М», 2000
82. Гуев А.Н. Гражданское право.Т. 1. М., изд. «ИНФРА-М», 2003
83. Гуев А.Н. Гражданское право.Т. 2. М., изд. «ИНФРА-М», 2003
84. Гуев А.Н. Гражданское право.Т. 3. М., изд. «ИНФРА-М», 2003
85. Годме Е. Общая теория обязательств. М., изд. «Юрид. лит.», 1948
86. Дзедорайтис А.Б. Понятие конкурса в советском гражданском праве. // Правоведение, N 6, М., 1968
87. Егоров Н.Д. Гражданско-правовое регулирования общественных отношений. Л., 1988
88. Жюлли де ла Морандьер. Гражданское право Франции. Т. 2. М., 1960
89. Иоффе О. С. Обязательственное право. М., изд. «Юрид. лит.», 1975
90. Иоффе О. С. Советское гражданское право. Ки. 1. М., изд. «Юрид. лит.», 1958
91. Иоффе О. С. Советское гражданское право. Л., изд. «Юрид. лит.», 1961
92. Иоффе О. С. Советское гражданское право. Ч. 3. Л., изд. «Юрид. лит.», 1965
93. Иоффе О. С. Советское гражданское право. М., изд. «Юрид. лит.», 1967
94. Иоффе О.С. Ответственность по советскому гражданскому праву. Изд. ЛГУ, Л., 1955
95. Иоффе О.С., Толстой Ю.К. Основы гражданского законодательства. Изд. ЛГУ, Л., 1962
96. Красавчиков О.А. Юридические факты в советском гражданском праве. М., 1958
97. Красавчиков О.А. Система отдельных видов обязательств // Советская юстиция, 1960, N 5
98. Красавчикова Л.О. Личная жизнь граждан под охраной закона. М., 1983
99. Красавчикова Л.О. Понятие и система личных неимущественных прав граждан в гражданском праве Российской Федерации. Екатеринбург. 1994
100. Комментарий к Гражданскому кодексу РСФСР. М., изд. «Юрид. лит.», 1970
101. Комментарий к Гражданскому кодексу РСФСР. Под ред. С.Н.Братуса, О.Н.Садинова. М., 1982



102. Комментарий к Гражданскому кодексу Российской Федерации, части второй (постатейный), М., 1998
103. Комментарий к Гражданскому кодексу Российской Федерации. Часть вторая. М., изд. «Проспект», 2006
104. Конкурс в советском трудовом праве. Учебник. Изд.. ЛГУ, Л., 1960
105. Магазинер Я.М. Объекты права. Л., 1957
106. Мейер Д.И. Русское гражданское право. Ч. 2. М., 1997
107. Менглиев М. Возмещение морального вреда. Душанбе. 1998
108. Новицкий И.Б. Основы римского гражданского права. М., 1960
109. Новицкий И.Б. Римское право. М., 1993
110. Новицкий И.Б. Римское право. М., 1997
111. Новицкий И.Б., Лунц Л.А. Общее учение об обязательстве. М., изд. «Госюриздат», 1950
112. Отдельные виды обязательств. Курс советского гражданского права. Госюриздат. М., 1954
113. Покровский И.А. Основы проблемы гражданского права. Изд. "Статут", М., 2001
114. Пиляева В.В. Комментарий к Гражданскому кодексу Российской Федерации. Часть вторая. М., 2005
115. Рахмилович В.А. Обязательства, возникающие вследствие объявления конкурса. //Советская юстиция. N 14, 1970
116. Римское частное право. Учебник под ред. И.Б.Новицкого. И.С. Перегерского. М., 1994
117. Рясанцева В.А. Сделки по советскому гражданскому праву. ВЮЗИ, М., 1951
118. Рабинович Н.В. Недействительность сделок и ее последствия. Изд. ЛГУ, Л., 1960
119. Саватье Р. Теория обязательств. М., изд. «Прогресс», 1972
120. Серебровский В.И. Вопросы советского авторского права. Изд. АН СССР, М., 1956
121. Стависский П. Р. Возмещение вреда при спасании социалистического имущества, жизни и здоровья граждан. М., 1974
122. Смирнов В.Н. Конкурс в советском гражданском праве. Л., 1964
123. Смирнов В.Т., Собчак А.А. Общее учение о деликтных обязательствах в советском гражданском праве. Л., 1983
124. Советское гражданское право. Т. 1. Под ред. В.П.Грибанова, С.М. Корнсева. М., изд. «Юрид. лит.», 1979
125. Советское гражданское право. Т. 2. Отв. ред. Красавчиков О.А. М., изд. «Высшая школа», 1985
126. Советское гражданское право. Л., изд. ЛГУ, 1983
127. Советское гражданское право. Отв. ред. О.Н. Садилов. М., 1983
128. Советское гражданское право. Т. 1. Под ред. В.А. Рясанцева. М., 1986
129. Толстой Ю.К. К теории правоотношения. Л., 1959
130. Толстой В.С. Понятие и значение односторонних сделок в советском гражданском праве. Т. 5. М., 1966
131. Торхов В.А. Гражданское право. Чебоксары, 1997
132. Черепанин Б.Б. Правонаречение по советскому гражданскому праву. М., изд. «Юрид. лит.», 1962

133. Флейшиц Е.А. Обязательства из причинения вреда и из неосновательного обогащения. М., 1951
134. Эрделевский А.М. Возмещение морального вреда в России и за рубежом. М., 1997
135. Яковлев В.Ф. Основы советского права. Т. 2. М., изд. «Юрид. лит.», 1986

## Դ. ԱՏԵՆԱՆՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՍԵՂՄԱԳՐԵՐ

### Հայերեն լեզվով

136. Հակոբյան Ջեննա Հակոբի, «Իրավունքի գործառնությունը և զարգացման հիմնական միտումները անցումային ժամանակաշրջանում» իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության սեղմագիր, Եր., 2002
137. Բեքմեզյան Գրիգոր Հովհաննեսի, «Անձի կյանքին կամ առողջությանը պատճառված վնասի հատուցումը» իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության սեղմագիր, Եր., 2002
138. Համբարձումյան Կարեն Կաչիկի, «Անվավեր գործարքների քաղաքացիաիրավական կարգավորումը ՀՀ օրենսդրությամբ» իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսություն, Եր., 2001, 136 էջ

### Ռուսերեն լեզվով

139. Аветисян Ваграм Давидович Административные и гражданско-правовые средства защиты личных неимущественных прав граждан. Автореферат диссертации на соискание ученой степени кандидата юридических наук. М., 2001
140. Дзегорайтис А.Б. Конкурс в советском гражданском праве. Автореферат кандидатской диссертации. Л., 1969
141. Михно Е.А. Компенсация морального вреда во внедоговорных обязательствах. Автореферат диссертации на соискание ученой степени кандидата юридических наук. Санкт Петербург, 1998
- Оганесян С.А. Недействительность сделок по ст. ст. 32 и 33 Гражданского кодекса. Диссертация на соискание ученой степени кандидата юридических наук. Ер., 1995, 219 с.
142. Оганесян С.А. Недействительность сделок по ст. ст. 32 и 33 Гражданского кодекса. Диссертация на соискание ученой степени кандидата юридических наук. Ер., 1995, 219 с.

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ .....	3
ԱՈՍՋԱԲԱՆ .....	5
ԳՆՈՒՄ 1. ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՀԱՍԿԱԳՈՒԹՅՈՒՆԸ, ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ ԵՎ ԾԱԳՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ .....	9
§ 1. Պարտավորության հասկացությունը .....	9
§ 2. Պարտավորությունների դասակարգման հասկացությունը և նշանակությունը .....	17
§ 3. Պարտավորությունների դասակարգման խնդիրները .....	23
§ 4. Պարտավորությունների ծագման հիմքերը .....	25
ԳՆՈՒՄ 2. ՄԻԱԿՈՂՄԱՆԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ԾԱԳՈՂ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ, ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՏԵՍԱԿՆԵՐԸ .....	29
§ 1. Միակողմանի գործողություններից ծագող պարտավորության պատմությունը .....	29
§ 2. Միակողմանի գործողություններից բխող պարտավորության հասկացությունը և ծագման հիմքերը .....	31
§ 3. Միակողմանի գործողություններից ծագող պարտավորու- թյունների տեսակների համառոտ բնութագիրը .....	37
ԳՆՈՒՄ 3. ՊԱՐԳԵՎ ՎՃԱՐԵԼՈՒ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԽՈՍՏՈՒՄ .....	40
§ 1. Պարզև վճարելու հրապարակային խոստման հասկացությունը և պայմանները .....	40
§ 2. Պարզև վճարելու հրապարակային խոստումից և նրան ուղղված արծագանքից ծագող պարտավորության հասկացությունը և տարրերը .....	45
§ 3. Պարզև վճարելու հրապարակային խոստումից և նրան ուղղված արծագանքից ծագող պարտավորության թվանդակությունը .....	50
ԳՆՈՒՄ 4. ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՄՐՑՈՒՅԹ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼԸ .....	58
§ 1. Հրապարակային մրցույթի հասկացությունը, նշանակությունը և հատկանիշները .....	58
§ 2. Հրապարակային մրցույթ հայտարարելու պայմանները	

և հայտարարության ձևը .....	70
§ 3. Հրապարակային մրցույթի պայմանները փոփոխելը և մրցույթը վերացնելը .....	81

ԳՆՈՒՄ 5. ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՄՐՑՈՒՅԹ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒՑ ԲԵՈՂ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ .....	89
§ 1. Մրցության պարտավորության հասկացությունը և ծագման հիմքերը .....	89
§ 2. Մրցության պարտավորության սուբյեկտները, օբյեկտները և թվանդակությունը .....	101
§ 3. Մրցության աշխատանքները և այլ արդյունքները գնահատելը .....	112
§ 4. Պայմանագիր կնքելու իրավունքով հրապարակային մրցույթի առանձնահատկությունները .....	123

ԳՆՈՒՄ 6. ԱՈՍՆՑ ՀԱՆՁՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ, Ի ՇԱՀ ՈՒՐԻՇԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ԾԱԳՈՂ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ...	130
§ 1. Առանց հանձնարարության, ի շահ ուրիշի գործողություններից ծագող պարտավորության հասկացությունը և պատմությունը .....	130
§ 2. Առանց հանձնարարության, ի շահ ուրիշի գործողություննե- րից ծագող պարտավորության տարրերը .....	143
§ 3. Առանց հանձնարարության, ի շահ ուրիշի կատարվող իրավաբանական գործողությունների առանձնահատկությունները .....	148

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ .....	152
-------------------------------------	-----

**ԹԱՂԵՎՈՍՅԱՆ ԱՆԱՏՈՒԻ ՎԼԱԴԻՄԻՐԻ  
ТАДЕВОСЯН АНАТОЛИЙ ВЛАДИМИРОВИЧ**

**ՄԻԱԿՈՂՄԱՆԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ԾԱԳՈՂ  
ՊԱՐՏԱԿՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ  
ОБЯЗАТЕЛЬСТВА, ВОЗНИКАЮЩИЕ ИЗ  
ОДНОСТОРОННИХ ДЕЙСТВИЙ**

Խմբագիր՝ իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր	Գ.Հ. Ղարախանյան
Սրբագրիչ՝	Արմինե Հայրապետյան
Համակարգչային	
էջադրումը՝	Անժելա Խաչատրյանի

Հանձնված է շարվածքի 17. 01. 2007թ., ստորագրված է տպագրության՝  
19. 02. 2007թ., թուղթը՝ օֆսեթ, տպագրությունը՝ օֆսեթ,  
չափսը՝ 60x84/16, ծավալը՝ 10 տպ. մամուլ:

**Տպագրվել է «ԴԻՋԱԿ ՊԼՅՈՒՄ» հրատարակչությունում  
ք. Ստեփանակերտ, Հ. Հակոբյանի, 25  
2007թ.**